ՎՐԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

**Մ. Ջ. ԳՈԳԻՏԻՁԵ, Գ. Ա. ԲԵԺԻՏԱՇՎԻԼԻ,
Մ. Ի. ԳՈԳՈԼԱՁԵ, Դ. Ռ. ՄՃԵԴԼԻՁԵ,
Գ. Է. ՆԱԻՐԱՇՎԻԼԻ, Մ. Ռ. ՍԱՄԽԱՐԱՁԵ**



# ՀԱՅ ԳԵՆԵՐԱԼՆԵՐ ԵՎ ԱԴՄԻՐԱԼՆԵՐ ՎՐԱՍՏԱՆԻՑ

«Մծիգնոբարի» հրատարակչություն
Թբիլիսի, 2024

ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԳԻՐ
**Նիկո Ջավախիշվիլի**
Ակադեմիկոս, Լատվիայի Գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՌԱԶՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ
**Թենգիզ Շուբլաձե**
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, պահեստազորի գեներալ-մայոր

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
**Վան Բայբուրթ**
Թբիլիսիի պատվավոր քաղաքացի, Վրաստանի վաստակավոր ժուռնալիստ, Վրաստանի ռազմական պատմության ընկերության պատվավոր անդամ

**Գուրամ Նիկոլաիշվիլի**
Պահեստազորի գեներալ-լեյտենանտ

**Նիկոլոզ Գոգիտիձե**
Պահեստազորի արդարադատության գեներալ-մայոր

Վրացերենից թարգմանությունը՝
**Գիաանե Հովսեփյանի**

Հայերեն տեքստի խմբագիր՝
**Մարինա Թորոսյան**

Էջադրող՝
**Սեդա Աբովյան**

Թարգմանությունն արվել է ՀԱԵ Վիրահայոց թեմում՝
օրհնությամբ Վիրահայոց թեմի առաջնորդ
**Գերաշնորհ Տեր Կիրակոս եպիսկոպոս Դավթյանի**:

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքի որևէ հատված չի կարող օգտագործվել առանց հեղինակային իրավունք ունեցող անձանց գրավոր համաձայնության:

© Մ. Գոգիտիձե, Մ. Գոգոլաձե, Գ. Բեժիտաշվիլի, Դ. Մճեդլիձե, Գ. Նաիբաշվիլի, Մ. Սամխարաձե

ISBN 978-9941-514-59-3

ՀԵՂԻՆԱԿՆԵՐՆ ԻՐԵՆՑ
ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ԵՆ
ՀԱՅՏՆՈՒՄ ԲԱՐԵՐԱՐ

**ՌԱՖԻԿ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ**

ԳՐՔԻ ՏՊԱԳՐՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ
ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՆՅՈՒԹԱԿԱՆ
ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

---

THE AUTHORS EXPRESS
THANK YOU MECENAT

**RAFIK AGAJANIAN**

TO WHICH FINANCIAL
A BOOK WAS PUBLISHED WITH THE
SUPPORT

# ԵՂԲԱ՛ՅՐ, ԴՈՒ ՈՒԺԵՂ ԵՍ ՔՈ ԵՂԲՈՐՈՎ

300 տարի առաջ, 1723 թվականի սեպտեմբերի 16-ին Ռուսաստանի կայսր Պետրոս I-ի կողմից արձակվեց «գերագույն հրովարտակ» Ռուսաստանում հոծ բնակվող վրացիներին և հայերին ռուսական բանակի կազմում ներգրավելու մասին: Սկզբնական շրջանում նրանց թիվը 700-ի էր հասնում: Հետագայում այս թիվը մի քանի հարյուրով ավելացավ:

1730 թվականին նշված հարյուրյակները տեղափոխվել են Դերբենդի ամրոց, 1733 թվականին՝ Սուրբ Խաչի ամրոց (Հյուսիսային Կովկասում), իսկ ավելի ուշ՝ Ղզլար:

1747-1749 թվականներին Ղզլարի վրացական հարյուրյակի վրացիներն ու հայերը բանակից ազատվում էին Ղզլարում բնակություն հաստատելու պայմանով: Վրաց-հայկական գաղութը աջակցում էր Ռուսաստանի կառավարությանը Քարթլ-Կախեթիի թագավորության և, ընդհանրապես, Կովկասի հետ սերտ հարաբերություններ ամրապնդելու գործում:

XVIII-XX դարերի ընթացքում Վրաստանում ծնված հայերը, ովքեր Վրաստանն իրենց հայրենիքն էին համարում (այսօր էլ է այդպես), իրենց վրացի եղբայրների հետ անձնվիրաբար ծառայել են Ռուսական կայսրության բանակում, մասնակցել կայսրության բոլոր ռազմական արշավներին:

Այս մարդիկ և նրանց ժառանգները մասնակցել են ռուս-պարսկական (1806-1812 և 1826-1828), ռուս-թուրքական (1828-1829), Ղրիմի (Արևելյան, 1853-1856) և ռուս-թուրքական (1877-1878) պատերազմներին, իսկ XX դարի սկզբին՝ ռուս-ճապոնական (1904-1905) և Առաջին համաշխարհային (1914-1918) պատերազմներին, ավելի ուշ՝ Երկրորդ համաշխարհային (1939-1945) և Խորհրդային Միության Հայրենական մեծ (1941-1945) պատերազմներին:

Հարկ է նշել նաև, որ զինվորական ծառայությունը բազմաթիվ վրաստանցի հայազգի գեներալների և ադմիրալների իրենց մասնագիտական ներուժը լիարժեքորեն իրացնելու, անվանի ռազմական առաջնորդներ, ռազմագիտության տեսաբաններ և պրակտիկոսներ դառնալու հնարավորություն է տվել:

Առ այսօր, ցավոք, ռազմական այս գործիչների մասին տվյալների հավաքագրմամբ և համակարգմամբ ոչ ոք չի զբաղվել:

Ներկա գրքի նախակարապետը լույս տեսավ 2014 թվականին: Աշխատությունը տպագրվեց երկու լեզվով (վրացերեն և ռուսերեն), բայց ինչպես հատկանշական է, հեղինակները (Մ. Գոգիտիձե, Գ. Բեժիտաշվիլի) չկարողացան խուսափել մի շարք կարևոր բացթողումներից, որոնք միշտ ուղեկցում են այս կամ այն աշխատությանը, և քանի որ վրաց և հայ հասարակությունը գիրքն ընդունեց և մեծ ուշադրությամբ ծանոթացավ դրան, հեղինակների նոր կազմը միանգամայն ճիշտ որոշում կայացրեց՝ վրացի և հայ ընթերցողներին առաջարկելով գրքի նոր տարբերակը՝ վրաց և հայոց լեզուներով, վերանայելով այն և հավելելով հասանելի նոր նյութերով: Հուսով ենք, որ մեր նոր աշխատությունը պատշաճ ներդրում կունենա վրաց և հայ ժողովուրդների ռազմական համագործակցության պատմության մեջ:

Աշխատության մեջ անդրադարձ է արվում Ռուսական կայսրության կայսերական բանակի (69), Ռուսաստանի Հանրապետության ժամանակավոր կառավարության (1917) (8), Ռուսաստանի «Սպիտակ բանակի» (1), Հայաստանի Դեմոկրատական Հանրապետության բանակի (1918-1920) (4), Խորհրդային Միության բանակի և նավատորմի և դրանց կից անձանց (41 գեներալ և 2 կոնտր-ադմիրալ), ժամանակակից Հայաստանի Հանրապետության բանակի (7), Վրաստանի (1) և արտասահմանյան երկրների (5) ծագումով վրաստանցի հայ գեներալների կենսագրությանը: Ընդհանուր առմամբ 138 անձ է:

Գրքում ներկայացված է ռազմական գործիչների 99 լուսանկար, որոնց մի մասը հրատարակվում է առաջին անգամ: Մնացած 39 գործիչների լուսանկարները որոնման-հետազոտման գործընթացում են:

**Կազմող հեղինակներ**





# ՄԱՍ I

# ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ

# (1801 - 1917)



**ԱՐՏԵՄ ԴԱՎԻԹԻ ԱԲԱՄԵԼԻՔՈՎ**
**(ԱԲԱՄԵԼԻՔ), ԻՇԽԱՆ**
**(20.10.1823 - 1884)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (20.08.1869)**

Գեներալ Դավիթ Աբամելիքովի (Աբամելիք) որդին է:

Ծնվել է Մոսկվայում: 1843 թվականին ավարտել է գվարդիական ենթապրապորշչիկների և հեծելազորի յունկերական ուսումնարանը և անցել է զինվորական ծառայության Վյուրտեմբերգի թագավորի անվան հուսարական գնդում:

Եղել է Մոսկվայի գեներալ-նահանգապետի ադյուտանտ:

Մասնակցել է 1853-1856 թվականների Ղրիմի (Արևելյան) պատերազմին Ելիզավետգրադի հուսարների 3-րդ գնդի կազմում:

1861 թ. ապրիլի 23-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1863 թվականին նշանակվել է Կովկասի հեծելազորային դիվիզիայի 1-ին բրիգադի հրամանատար:

1863-1864 թվականներին մասնակցել է լեհական ապստամբության ճնշմանը:

1866 թվականին ղեկավարել է Մալոռոսիայի 14-րդ վիշապազունդը:

1869 թվականից հաշվառվել է տեղի զորքերում:

Մարտական վաստակի համար պարգևատրվել է **«Ոսկե զենք»**-ով («Արիության համար» գրությամբ, 1864) և Ռուսաստանի **«Սուրբ Աննայի»** III աստիճանի (1854), II աստիճանի (սրերով, 1864), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (1867), III աստիճանի (1881), **«Սուրբ Ստանիսլավի»** II աստիճանի (1856) շքանշաններով:

Ստացել է նաև արտասահմանյան՝ **«Մարտական վաստակի համար»** II աստիճանի (Մեքլենբուրգ-Շվերին, 1878) և **«Վաստակի համար»** (Պրուսիա, 1878) շքանշաններ:

**ԴԱՎԻԹ ՍԻՄՈՆԻ ԱԲԱՄԵԼԻՔՈՎ (ԱԲԱՄԵԼԻՔ), ԻՇԽԱՆ**
**(10.03.1774 - 23.10.1833)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (30.08.1818)**



Ծնվել է Թիֆլիսում*, գեներալ Իվան Սիմոնի Աբամելիքովի (Աբամելիք) կրտսեր եղբայրն է:

1421 թվականին Վրաստան ներգաղթած հնագույն հայկական տոհմերից մեկի ներկայացուցիչներից է:

1800 թվականի հունվարի 9-ին, այն բանից հետո, երբ Քարթլ-Կախեթիի պալատական հոգևորական Սիմոն Հովհաննեսի Աբամելիքի դուստրը՝ Էլենեն (1770-1836), դարձավ արքայազն Դավիթի՝ Գիորգիի որդու կինը, այս տոհմի թիֆլիսյան ճյուղը հասցվեց ազնվականների 3-րդ աստիճանի: 1797 թվականին Դավիթն իր եղբոր՝ Իվանի հետ ընդունվում է գվարդիական հրետանային կազմում՝ որպես ռոտմիստր:

1798-1812 թվականներին ծառայել է հուսարական լեյբ-գվարդիայի գնդում: Սպայի զինվորական աստիճան ստանալուց հետո իր կյանքի մեծ մասն անցկացրել է զինվորական ծառայության մեջ:

Մասնակցել է 1805-1807 թվականների ռուս-ֆրանսիական պատերազմին: Կռվել է Աուստերլիցի, Գուտշտադտի, Գելսբերգի մոտ: Ֆրիդլանդի ճակատամարտում ցուցաբերած խիզախության համար 1807 թվականի հունիսի 2-ին Պրուսիայի կայսրը Դավիթ Աբամելիքովին պարգևատրել է «**Վաստակի համար**» շքանշանով և «**Ոսկե զենք**»-ով (արիության համար):

**1808 թվականի մայիսի 20-ին պարգևատրվել է «Սուրբ Գեորգիի» IV աստիճանի շքանշանով:**

---

** Թիֆլիս - այստեղ և այսուհետ՝ Թբիլիսին մինչև 1936 թվականը, 1936 թվականից հետո՝ Թբիլիսի, ծթ.՝ հեղինակների:*

Մասնակցել է 1812 թվականի Ռուսաստանի Հայրենական պատերազմին: Ղեկավարելով հուսարական լեյբ-գվարդիայի հեծելավաշտը, 1812 թվականի հունիս-հուլիս ամիսներին մասնակցել է ֆրանսիացիների դեմ Վոլկոմիրի, Օստրովնոյի, Կուկլովիցի, Յանկովի մարտերին, իսկ Բորոդինոյի ճակատամարտից հետո թշնամու դեմ կռվել է Տարուտինոյի, Մալոյարոսլավլի և Դորոգոբուժի մոտ:

Առաջխաղացում է ունեցել ռուսական բանակի արտասահմանյան արշավանքներում Եվրոպայում, մասնավորապես՝ Սաքսոնիայում, Լյուցենի և Բաուտցենի մոտ:

1812 թվականի հունվարի 26-ին ստացել է գնդապետի զինվորական կոչում:

1814 թվականի մարտի 18-ին եղբոր հետ մտել է Փարիզ:

1815 թվականի դեկտեմբերի 30-ին նշանակվել է Տագանրոգի ուլանների գնդի հրամանատար:

1816 թվականից ղեկավարել է Բորիսոգլեբսկի ուլանների գունդը:

1818 թվականին նշանակվել է ուլանների 2-րդ դիվիզիայի 2-րդ բրիգադի հրամանատար, սակայն առողջական խնդիրների պատճառով Դավիթ Աբամելիքովը 1824 թվականին ստիպված է եղել դուրս գալ զինվորական ծառայությունից:

Ազատ տիրապետել է հայերենին, վրացերենին, պարսկերենին, ռուսերենին, բավական լավ իմացել է նաև թուրքերեն:

1824 թվականին նա տուն է գնել Մոսկվայում, Բասմանի փողոցում:

1826-1828 թվականների ռուս-պարսկական պատերազմի ժամանակ կրկին վերադարձել է բանակ և ղեկավարել է հեծելազորի պահեստային IV կորպուսի պահեստազորային բրիգադը: Ավելի ուշ մասնակցել է նաև 1828-1829 թվականների ռուս-թուրքական պատերազմին:

Այս երկու ռազմական արշավներում ունեցած մարտական վաստակի համար նա պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Վլադիմիրի»** III աստիճանի և **«Սուրբ Աննայի»** III աստիճանի (ալմաստակուռ) շքանշաններով:

Մահացել է Դրեզդեն քաղաքում: Թաղված է Սանկտ Պետերբուրգում, Սմոլենսկի Քրիստոսի Հարության եկեղեցու հայկական գերեզմանոցում:



**ՍԻՄՈՆ ԴԱՎԻԹԻ ԱԲԱՄԵԼԻՔՈՎ (ԱԲԱՄԵԼԻՔ), ԻՇԽԱՆ**
**(1873 Թ. - ԱԲԱՄԵԼԻՔ-ԼԱԶԱՐԵՎ)**
**(15.10.1815 - 25.04.1888)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (06.12.1859)**

Գեներալ Դավիթ Աբամելիքովի (Աբամելիք) որդին և Արտեմ Աբամելիքովի (Աբամելիք) եղբայրն է: Ծնվել է Սանկտ Պետերբուրգում:

Ծառայել է լեյբ-գվարդիայի հուսարական գնդում:

1859 թվականին անցել է պահեստազոր և 1862 թվականից դարձել է կնոջ և աներոջ կալվածքների և գործարանների գլխավոր կառավարիչը:

Հրամանատարի զինվորական փորձն օգնել է Սիմոն Աբամելիքովին նաև տնտեսությունը վարելու պատասխանատու գործում: Նա իր կալվածքներում բազմաթիվ նոր եկեղեցիներ է կառուցել, վերականգնել է հին տաճարները: Հայտնի է եղել որպես բարեգործ և բարերար: Զբաղվել է նաև գեղանկարչությամբ, ստեղծել է բավականին լավ կտավներ, նկարել է դիմանկարներ: 1865 թվականին Ռուսաստանի նկարիչների ակադեմիան նրան շնորհել է նկարչի կոչում: Ստեղծել է պատմական թեմայով կտավներ, նկարել է իր իսկ կառուցած տաճարներում:

Թաղված է Սանկտ Պետերբուրգում, Սմոլենսկի Քրիստոսի Հարության եկեղեցու հայկական գերեզմանոցում:




Իշխան Ս. Դ. Աբամելիքովի շիրմաքարը հայերեն և ռուսերեն տապանագրով



**ԻՎԱՆ ՍԻՄՈՆԻ ԱԲԱՄԵԼԻՔՈՎ**
**(ԱԲԱՄԵԼԻՔ), ԻՇԽԱՆ**
**(07.01.1768 - 23.08.1828)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (1817)**

Ծնվել է Թիֆլիսում, գեներալ Դ. Ս. Աբամելիքովի (Աբամելիք) ավագ եղբայրն է:

1797 թվականին Իվանը իր եղբոր՝ Դավիթի հետ ծառայել է գվարդիական հրետանային կազմում, եղել է ռոտմիստր:

Մասնակցել է 1805-1807 թվականների ռուս-ֆրանսիական պատերազմին:

1810 թվականին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

Մասնակցել է 1812 թվականի Ռուսաստանի Հայրենական պատերազմին: Առաջխաղացում է ունեցել ռուսական բանակի արտասահմանյան արշավանքներում Եվրոպայում, մասնավորապես՝ Սաքսոնիայում, Լյուցենի և Բաուտցենի մոտ:

1814 թվականի մարտի 18-ին եղբոր հետ մտել է Փարիզ:

Մարտական վաստակի համար 1808 թվականի ապրիլի 12-ին պարգևատրվել է **«Ոսկե զենք»** (արիության համար) շքանշանով, 1821 թվականի դեկտեմբերի 16-ին՝ **«Սուրբ Գեորգիի»** IV աստիճանի շքանշանով:

Մահացել է ժառանգներ չթողնելով:

Թաղված է Սանկտ Պետերբուրգում, Սմոլենսկի հայկական գերեզմանոցում, Քրիստոսի Հարության եկեղեցու Լազարյանների տոհմական դամբարանում:

Նրա գերեզմանի վրա մինչ օրս պահպանվում է տոհմական զինանշանը՝ ռուսերեն գրությամբ.

*«Князь Иванъ Семеновичъ Абамеликъ артиллерии генералъ-майоръ и разныхъ орденовъ кавалеръ. Родился 1768 года генваря 7-го дня – скончался 1828 года августа 23-го дня».*



Գեներալ-մայոր Ի. Ս. Աբամելիքովի շիրմաքարը



**ՍՈՂՈՄՈՆ ՀՈՎՍԵՓԻ ԱԲԱՄԵԼԻՔՈՎ (ԱԲԱՄԵԼԻՔ), ԻՇԽԱՆ**
**(20.11.1853 - 20.11.1913)**

**ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ (1913)**

Ծնվել է Թիֆլիսում:

1871 թվականին ավարտել է Մոսկվայի 2-րդ ռազմական գիմնազիան, այնուհետև սովորել է Ալեքսանդրովյան 3-րդ ռազմական ուսումնարանում (1871) և Միխայիլովյան հրետանու ուսումնարանում, որն ավարտել է 1874 թվականին 1-ին կարգով: Ավելի ուշ ավարտել է սպայական հրետանային դպրոցի դասընթացները:

1874-1876 թվականներին ծառայել է 13-րդ հրետանային բրիգադում, եղել է դասակի և վաշտի հրամանատար:

1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմի ժամանակ եղել է Ալեքսանդրովյան պահակային հրետանու տնտեսական բաժնի ղեկավարի աղյուտանտ:

1892-1894 թվականներին ղեկավարել է Կարսի պահակային հրետանու 3-րդ հրետանային մարտկոցը:

1898-1899 թվականներին ղեկավարել է Բրեստ-Լիտովսկի պահակային հրետանու 1-ին մարտկոցը:

1899 թվականի դեկտեմբերի 6-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1901-1902 թվականներին ղեկավարել է Դվինսկի պահակային հրետանու պաշարման դիվիզիոնը:

1902-1906 թվականներին ղեկավարել է պաշարման հրետանային 1-ին գունդը:

**1907 թվականի մայիսի 31-ին նրան շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում:**

1906-1913 թվականներին ղեկավարել է Կովնոյի պահակային հրետանին:

1913 թվականին տարիքի բերումով, մունդիրով և թոշակի ապահովմամբ դուրս է եկել զինվորական ծառայությունից:

Մարտական վաստակի համար պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Աննայի»** III աստիճանի (սրերով և ժապավենով, 1877), II աստիճանի (սրերով և ժապավենով,1891), **«Սուրբ Ստանիսլավի»** II աստիճանի (1886) և I աստիճանի (1909), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (1895) և III աստիճանի (1904) շքանշաններով:



Իշխան Աբամելիքովների տոհմական զինանշանը



**ՎԱՍԻԼԻ ԴԱՎԻԹԻ ԱԲԵԼՈՎ**
**(25.10.1835 - 24.01.1905)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (01.05.1891)**

Ծնվել է Թիֆլիսում:

Կրթություն ստացել է մասնավոր հաստատությունում:

Զինվորական ծառայությունը սկսել է 1850 թվականին Դաղստանի հետևակային գնդում՝ որպես շարքային:

1852 թվականից ծառայել է վրացական գնդում՝ որպես ենթասպա:

Մասնակցել է 1853-1856 թթ. Ղրիմի (Արևելյան) պատերազմին:

1853 թվականից եղել է սպա:

Պատերազմից հետո ղեկավարել է Անդրկասպյան 8-րդ հրաձգային գումարտակը:

1872-1885 թվականներին ղեկավարել է Ղուբայի 155-րդ հետևակային գունդը:

1885 թվականի հոկտեմբերի 12-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1879-1880 թվականներին եղել է Կարսի նահանգի Օլթիսի գավառի կառավարիչ:

1880-1891 թվականներին եղել է պահեստազորային հրաձգային 8-րդ գումարտակի հրամանատար:

1891 թվականին առողջական խնդիրների պատճառով դուրս է եկել զինվորական ծառայությունից:

Մարտական վաստակի համար պարգևատրվել է **«Ոսկե զենք»**-ով (արիության համար, 1864) և Ռուսաստանի **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (ժապավենով, «Սպայի կոչումով XXV-ամյա ծառայության

համար», 1876), **«Սուրբ Ստանիսլավի»** III աստիճանի (սրերով և ժապավենով, 1862) և II աստիճանի (սրերով, 1879), **«Սուրբ Աննայի»** IV աստիճանի (արիության համար, 1859) և III աստիճանի (1869) շքանշաններով:

Թաղվել է Թիֆլիսում, Կուկիայի գերեզմանոցում:

Въ понедѣльникъ **24**-го января, скоропостижно скончался отставной генералъ-**майоръ**

**Василій Давидовичъ Абеловъ,**

о чемъ извѣщаютъ супруга Елисавета Ивановна и **дѣти**. Выносъ тѣла въ четвергъ, **27**-го января, въ 10 часовъ утра, въ Тандоевскую церковь, что противъ реальнаго училища. Панихида **26**-го января, въ 7 часовъ вечера, въ домѣ на Михайловскомъ проспектѣ, № 90.

Գեներալ-մայոր Վ. Դ. Աբելովի մահազդը «Կավկազ» թերթից



**ՎԼԱԴԻՄԻՐ ՆԻԿՈԼԱՅԻ**
**ԱԿԻՄՈՎ (ԱՎԱԿԻՄՈՎ)**
**(18.05.1856 - 1914 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (18.07.1912)**

Ծնվել է Թիֆլիսում:

1876 թվականից ծառայել է բանակում: 1878 թվականին ավարտել է Նիկոլաևյան հեծելազորային ուսումնարանը (1-ին աստիճանով): Ծառայել է Սևերսկի 17-րդ վիշապազնդում՝ որպես Կովկասյան ռազմական օկրուգի զորքերի հրամանատարի ադյուտանտ, ադյուտանտի օգնական:

1901 թվականից ծառայել է Կովկասյան ռազմական օկրուգի զորքերում:

1910-1911 թթ. հաշվառվել է բանակի հեծելազորային պահեստազորում՝ որպես արտահաստիքային զինվորական Թիֆլիսի նահանգում:

1911 թվականին վերադարձել է զինվորական կյանքին, ծառայության է անցել բանակի հեծելազորում, Գլխավոր շտաբի պետի ենթակայության ներքո:

1912 թվականին մունդիրով և թոշակի ապահովմամբ դուրս է եկել զինվորական ծառայությունից:

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից ևեթ՝ 1914 թվականին, նշանակվել է Դաղստանի օկրուգի ռազմական նահանգապետի հատուկ հանձնարարություններով պաշտոնատար անձ:

1916 թվականին եղել է Պետրոգրադի բուժհաստատությունների տեսուչ:

Պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** III աստիճանի (1887) և II աստիճանի (1898), **«Սուրբ Աննայի»** III աստիճանի (սրերով, 1896) և II աստիճանի (1906), **«Սուրբ Վլադիմիրի»** III աստիճանի (1916) շքանշաններով:



**ԱԼԵՔՍԱՆԴՐ ԻՎԱՆԻ**
**ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ-ԴՈԼԳՈՐՈՒԿՈՎ**
**(ԱՐՂՈՒԹՅԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿ),**
**ԻՇԽԱՆ**
**(ՄԱՀԱՑԵԼ Է 10.08.1882)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (02.08.1882)**

Ծնվել է Թիֆլիսում:

1839 թվականին ավարտել է Մոսկվայի կադետական I կորպուսը և զինվորական ծառայության է անցել Պոլոցկի եգերական գնդում:

1849 թվականին մասնակցել է հունգարական հեղափոխության ճնշմանը:

1856 թվականից ծառայել է Կովկասում, որտեղ մինչև 1876 թվականը ղեկավարել է վրացական հետևակային ջոկատը:

1876-1878 թվականներին ղեկավարել է Կովկասյան 2-րդ կանոնավոր գումարտակը:

Մասնակցել է 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմին: Պատերազմի ժամանակ Գագրայի մոտ ղեկավարել է ռուսական զորքերի շարասյունը հրետանու հետ:

1878-1882 թվականներին ղեկավարել է Ղուբայի 155-րդ հետևակային գունդը:

1882 թվականին հիվանդության պատճառով մունդիրով և թոշակով դուրս է եկել զինվորական ծառայությունից:

Մարտական վաստակի համար պարգևատրվել է **«Ոսկե զենք»**-ով (արիության համար, 1877) շքանշանով, Ալեքսանդր II կայսեր փակագրով ադամանդե մատանիով:

Մահացել է Թիֆլիսում: Թաղվել է Խոջիվանքի հայկական գերեզմանատան տոհմական դամբարանում (*գերեզմանատունը ավերվել է խորհրդային իշխանության օրոք, 1934 թվականին: Հեղինակային ծանոթագրություն*):

**Княжна Софія Васильевна Аргутинская-Долгорукова** съ душевнымъ прискорбіемъ извѣщая о кончинѣ дяди своего отставного генералъ-маіора **князя Александра Ивановича Аргутинскаго-Долгорукова**, проситъ родныхъ и знакомыхъ пожаловать на панихиду по усопшемъ, имѣющую быть въ среду, въ 7 час. вечера, въ домѣ Читахова на Сергіевской улицѣ. Выносъ тѣла въ четвергъ, 13-го іюля, въ 9 часовъ утра, въ Могнинскую церковь, а оттуда на Ходживанкское кладбище. 163 (2) 1.

Իշխան Ա. Ի. Արգուտինսկի-Դոլգորուկովի մահազդը «Կավկազ» թերթից



**ԱԼԵՔՍԱՆԴՐ ՌՈՄԱՆԻ ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ-ԴՈԼԳՈՐՈՒԿՈՎ (ԱՐՂՈՒԹՅԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿ), ԻՇԽԱՆ**
**(1831 - 1886)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (07.12.1886)**

Ծնվել է Թիֆլիսում: Սովորել է Մոսկվայի I կադետական կորպուսում:

1848 թվականին ավարտելով կորպուսը զինվորական ծառայության է անցել Վյուրտեմբերգի արքայազնի անվան Նիժեգորոդյան վիշապազնդում՝ որպես պրապորշչիկ:

Մասնակցել է 1853-1856 թվականների Ղրիմի (Արևելյան) պատերազմին: Ծառայել է Կովկաս-Օսմանյան կայսրություն սահմանին գործող կորպուսում՝ որպես հեծելազորի պետի ադյուտանտ:

1875-1877 թվականներին ղեկավարել է լեյբ-գվարդիայի կազակական գնդի 2-րդ դիվիզիոնը:

1877 թվականի հոկտեմբերի 4-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1878 թվականին դուրս է եկել զինվորական ծառայությունից գնդապետի կոչումով, մունդիրով և թոշակի լրիվ ապահովմամբ:

1879 թվականին նա կրկին վերադարձել է բանակ և ծառայության է նշանակվել V բանակային կորպուսի հեծելազորում:

Ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** III աստիճանի (սրերով և ժապավենով, 1863), **«Սուրբ Աննայի»** IV աստիճանի (արիության համար, 1851), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (ժապավենով) շքանշաններով, ռումինական **«Երկաթե խաչով»** (ի հիշատակ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Դանուբ գետն անցնելու մարտավարական գործողության): Պահեստազոր անցնելուց հետո ապրել է Սանկտ Պետերբուրգում: Թաղված է Մոսկվայի Վագանկովոյի հայկական գերեզմանոցում:



**ԴԱՎԻԹ ԼՈՒԱՐՍԱԲԻ**
**ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ-ԴՈԼԳՈՐՈՒԿՈՎ**
**(ԱՐՂՈՒԹՅԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿ),**
**ԻՇԽԱՆ**
**(01.05.1843 - 1909)**

**ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ (02.05.1903)**

Ծնվել է Թիֆլիսում:

Ավարտել է Նիկոլաևյան ինժեներական ուսումնարանը (1861) և Նիկոլաևյան ինժեներական ակադեմիան (1862):

Զինվորական ծառայության է անցել 1857 թվականին:

Մասնակցել է 1863 թվականի լեհական ապստամբության ճնշման գործողությանը և 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմին:

1877 թվականի դեկտեմբերի 18-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1879-1892 թվականներին եղել է սակրավորների 2-րդ գումարտակի վաշտի հրամանատար:

1892-1894 թվականներին ղեկավարել է Սարատովի 108-րդ հետևակային գունդը:

**1894 թվականի մարտի 28-ին նրան շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում:**

1894-1895 թվականներին ղեկավարել է 28-րդ հետևակային դիվիզիայի 1-ին բրիգադը:

1895-1900 թվականներին ղեկավարել է լեյբ-գվարդիայի Կեկսգոլմի գունդը:

1900 թվականին նշանակվել է գվարդիական 3-րդ հետևակային դիվիզիայի 1-ին բրիգադի հրամանատար:

1900-1901 թվականներին ղեկավարել է 3-րդ գվարդիական հետևակային դիվիզիայի 2-րդ բրիգադը:

1901-1903 թվականներին կրկին նշանակվել է 3-րդ գվարդիական հետևակային դիվիզիայի 1-ին բրիգադի հրամանատար:

1903 թվականին անցել է պահեստազոր: Բանակում ծառայել է 45 տարի:

Մարտական վաստակի համար պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** III աստիճանի (1876), II աստիճանի (սրերով, 1878) և I աստիճանի (1897), **«Սուրբ Աննայի»** III աստիճանի (սրերով և ժապավենով, 1878) և II աստիճանի (1882), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (XXV-ամյա անբասիր ծառայության համար, 1886) և III աստիճանի (1887) շքանշաններով:

Ստացել է արտասահմանյան երկրների պարգևներ, այդ թվում՝ պարսկական **«Առյուծի և արևի»** II աստիճանի (1879), ավստրո-հունգարական «**Ֆրանց Հովսեփի**» (1896) և **«Երկաթե թագի»** I աստիճանի (1899), **«Ռումինիայի թագի»** I աստիճանի (1899) շքանշաններ:

Մահացել և թաղվել է Թիֆլիսում, Խոջիվանքի գերեզմանատան տոհմական դամբարանում (*ավերվել է խորհրդային իշխանությունների կողմից 1934 թվականին: Հեղինակային ծանոթագրություն*):



## ՄՈՎՍԵՍ ԶԱՔԱՐԻ ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ-ԴՈԼԳՈՐՈՒԿՈՎ (ԱՐՂՈՒԹՅԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿ), ԻՇԽԱՆ

**(1797 - 20.02.1855)**

**ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ (1845)**
**ԳԵՆԵՐԱԼ-ԱԴՅՈՒՏԱՆՏ (1848)**

Ծնվել է Թիֆլիսում: Հովսեփ Արղության-Երկայնաբազուկ արքեպիսկոպոսի մերձավոր ազգականներից է եղել: Ռուսաստանի Պավել I կայսեր օրոք հայոց Հովսեփ Արղության-Երկայնաբազուկ արքեպիսկոպոսին, նրա եղբայրներին ու եղբոր որդիներին շնորհվել է իշխանական կոչում: Պատրաստվելով պետական ծառայության՝ Մովսես Արգուտինսկի-Դոլգորուկովը սովորել է Թիֆլիսի ազնվականական ուսումնարանում, որն ավարտել է 1816 թվականին: Այս ընթացքում նա հայտնվել է գեներալ Ա. Երմոլովի ուշադրության կենտրոնում, և վերջինս խնդրել է նրա հորը՝ որդուն ուղարկել զինվորական ծառայության:

1816-1827 թվականներին ծառայել է լեյբ-գվարդիայի հեծելազորային գնդում:

1827-1832 թվականներին ծառայել է վրացական գրենադերների գնդում:

1832-1839 թվականներին ղեկավարել է Թիֆլիսի գրենադերների գունդը:

Մասնակցել է 1826-1828 թվականների ռուս-պարսկական, 1828-1829 թվականների ռուս-թուրքական, 1853-1856 թվականների Ղրիմի (Արևելյան) պատերազմներին և կովկասյան ռազմական արշավներին: 1830 թվականից սկսած 23 տարի շարունակ Արգուտինսկի-Դոլգորուկովը զբաղեցրել է հրամանատարական պաշտոններ:

1830 թվականի նոյեմբերի 14-ից եղել է գումարտակի հրամանատար: Այս ընթացքում Զաքաթալայի մոտ ջախջախել է լեկերին:

1831 թվականի դեկտեմբերի 11-ից Կասփս-Դարա հովտում մասնակցել է լեռնաբնակների դեմ արշավանքին:

1833 թվականին մասնակցել է տարբեր մարտական գործողությունների, այս թվում՝ Լիեշ աուլի համար մղվող ճակատամարտին (Դաղստանում) և դեպի Խսագ-Մազի կիրճ արշավանքին:

1837 թվականին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1839 թվականին նշանակվել է Ախալցիխեի գավառի կառավարիչ, վրացական կանոնավոր գումարտակների բրիգադի հրամանատար և ժանտախտի դեմ պայքարի հանձնաժողովի ղեկավար:

1841 թվականին ճնշել է Գուրիայի ապստամբությունը:

1842 թվականին ղեկավարել է Սամուրի ջոկատը, արշավանք է կատարել Կազի-Կումուխի շրջան և հաղթանակներ տարել Կորտալի աուլի, Քուլյուլի և Շաուրլուի մոտ:

**1843 թվականի հուլիսի 15-ին նրան շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում:**

1844 թվականին նշանակվել է Հյուսիսային Դաղստանի, Ղուբայի և Դերբենդի գավառներում տեղակայված զորքերի հրամանատար:

1847 թվականին նշանակվել է Հյուսիսային և Հարավային Դաղստանում տեղակայված զորքերի հրամանատար, Դերբենդի զինվորական նահանգապետ և անդրկասպյան զորքերի հրամանատար: Գրոհով գրավել է Գերգեբիլ և Սալթա աուլները: **Զորքերի վերախմբավորման ժամանակ նա առաջին անգամ կիրառել է ոչ թե առանձին մարտական ստորաբաժանումների, այլ ամբողջ շարասյուների նահանջը, ինչը նորություն էր Կովկասում մարտական գործողությունների ռազմավարության մեջ:**

1848 թվականին նրա հրամանատարության ներքո գտնվող զորքերը ետ են գրավել Գերգեբիլ աուլը և գլխովին ջախջախել են լեկերին Միսկինջի աուլի մոտ:

1850 թվականին նրա գլխավորած զորքերը գրավել են Չոխ ամրությունը, Արչիբ և Շալիբ աուլները, Տաբասարանի մարզում ետ են մղել Հաջի-Մուրադի և Շամիլի արշավանքները:

1853 թվականին նրա առողջական վիճակը կտրուկ վատացել է, ինչի պատճառով նա թողել է պաշտոնը և բուժման նպատակով մեկնել է Պյատիգորսկի առողջարան: Շատ շուտով սակայն նորից վերադարձել է բանակ և նույն տարվա ձմռանը, Գուդուրին անցնելով, ձմեռային անցում է կատարել գլխավոր Կովկասյան լեռնանցքով դեպի Շամիլի

թիկունք, ով լեկերի բանակին օգնելու նպատակով ներթափանցել էր լեկերի սահմանային գիծ և Զաքաթալայի շրջան: Ճանապարհին նա իրեն վատ է զգացել: Բժիշկները խորհուրդ են տվել հիմնավոր բուժում ստանալ, ինչի պատճառով նա բանակից հեռանալու մասին խնդրագիր է ներկայացրել: Նիկոլայ I կայսրը բավարարել է նրա խնդրանքը: 1853 թվականի վերջին նա ընդմիշտ հեռացել է Դաղստանից:

1855 թվականին նա կաթված է ստացել: Ծանր հիվանդությունից հետո մահացել է Թիֆլիսում: Թաղվել է Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի Սանահին գյուղում, Սանահինի վանքի Սուրբ Աստվածածին եկեղեցու բակում (*1921 թվականից ընդգրկվել է Հայկական ԽՍՀ կազմում: Հեղինակային ծանոթագրություն*):

Կովկասյան պատերազմի ընթացքում ռուսական զորքերի հաղթանակները շատ դեպքերում գրանցվել են հենց Արգուտինսկի-Դոլգորուկովի շնորհիվ. նա քաջ ծանոթ էր Կովկասին և լեռնային պատերազմի մարտավարությանը: Լեռնաբնակները նրան «Սամուրի վարազ» անունն են տվել՝ ելնելով նրա ղեկավարած Սամուրի զինվորական ջոկատի անվանումից: Նրա համարձակ անցումը դեպի Կովկասյան լեռնանցք ժամանակակիցները համեմատում էին Սուվորովի՝ Ալպերով հայտնի անցման հետ: **Լինելով փոխգնդապետ՝ «Օլթիսի բերդի գրավման համար» 1831 թվականի փետրվարի 21-ին պարգևատրվել է «Սուրբ Գեորգիի» IV աստիճանի շքանշանով:**

**«1842 թվականի հունիսի 2-ին Կուլուլու գյուղի մոտ լեռնաբնակների դեմ ցուցաբերած փայլուն հաղթանակի և խիզախության համար» 1842 թվականի դեկտեմբերի 3-ին պարգևատրվել է «Սուրբ Գեորգիի» III աստիճանի շքանշանով**:

Պարգևատրվել է նաև **«Ոսկե զենք»**-ով (արիության համար, ադամանդակուռ) և **«Ոսկե զենք»**-ով (արիության համար, ալմաստակուռ, «Ակուշի աուլի և Ցուդախարի մոտ մարտերում ցուցաբերած գերազանց մարտավարության համար», 1844), Ռուսաստանի **«Սուրբ Վլադիմիրի»** III աստիճանի (Գուրիայի ապստամբությունը ճնշելու համար, 1841), II աստիճանի (Շամիլի լեռնաբնակների դեմ գործողությունների համար, 1846) և I աստիճանի, **«Սուրբ Ալեքսանդր Նևսկու»** (Միսկինջի աուլի մոտ Շամիլի ջոկատների ջախջախման համար, 1850) շքանշաններով, **«Սպիտակ արծիվ»** (Գերգեբիլ աուլի և Սալթայի գրոհով գրավման համար, 1847), **«Սուրբ Աննայի»** I աստիճանի (Դուվեկ աուլի և Մարգայի մոտ լեռնաբնակներին պարտության մատնելու, Սոգրատլիի և Տիլիտլիի

զրավման և Դուկուլ-Բարի մոտ լեկերին պարտության մատնելու համար, 1843), I աստիճանի (կայսերական թագով, 1844) և II աստիճանի (Նուխի առման ժամանակ դրսևորած հաջողության համար,1838) շքանշաններով:

1878 թվականին Թեմիր-Խան-Շուրա քաղաքում (1922 թվականից՝ Բույնակսկի) կանգնեցվել է իշխան Մովսես Արգուտինսկի-Դոլգորուկովի հուշարձանը, որն ավերվել է բոլշևիկների կողմից 1921 թվականին: Նրա անունով է կոչվել Թեմիր-Խան-Շուրայի կենտրոնական փողոցը (հետագայում՝ Լենինի փողոց), որը տանում էր դեպի գեներալնահանգապետի նստավայր (այժմ՝ Բույնակսկու մանկավարժական ուսումնարան): Մոսկվայի Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտում մինչև 1917 թվականը հատկացվել է նրա անվան կրթաթոշակ:



Իշխան Մ. Զ. Արգուտինսկի-Դոլգորուկովի արձանը Թեմիր-Խան-Շուրայում (1878-1921)



Արգուտինսկի-Դոլգորուկովների տոհմական զինանշանը



**ՏԻԳՐԱՆ ԴԱՆԻԵԼԻ**
**ԱՐՈՒԹՅՈՒՆՈՎ**
**(01.06.1858 - 10.01.1916)**

**ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ (06.12.1915)**

Ծնվել է Թիֆլիսի նահանգում, ազնվականի ընտանիքում:

1875 թվականին ավարտել է Մոսկվայի ռազմական 1-ին գիմնազիան, 1877 թվականին՝ Ալեքսանդրովյան ռազմական 3-րդ ուսումնարանը և սպայական հեծելազորային դպրոցը:

Մասնակցել է 1877-1878 թվականների ռուս-թուրքական և 1914-1918 թվականների Առաջին համաշխարհային պատերազմներին: Ծառայել է Թերեքի կազակական բանակի Վոլգայի 1-ին գնդում:

1904-1907 թվականներին ղեկավարել է Թերեքի կազակական բանակի Սունժա-Վլադիկավկազի 2-րդ գունդը, օսական ջոկատը:

1906 թվականի հունվարի 1-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1907-1912 թվականներին ղեկավարել է Թերեքի կազակական բանակի Մոզդոկի 1-ին գունդը:

**1912 թվականի նոյեմբերի 5-ին նրան շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում:**

1912-1914 թվականներին ղեկավարել է Կովկասյան կազակական 1-ին դիվիզիայի 2-րդ բրիգադը:

1914 թվականի հուլիսի 29-ին նշանակվել է Թերեքի կազակական 1-ին դիվիզիայի հրամանատար:

Մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին:

Մահացել է գործող բանակում, հիվանդության պատճառով (Նովոսելիցա գյուղում):

Թաղվել է Թիֆլիսում: Թաղման վայրը հայտնի չէ (*հեղինակային ծանոթագրություն*):

Մարտական վաստակի համար պարգևատրվել է **«Գեորգիևյան զենք»**-ով (10 նոյեմբերի, 1915 թվական), **«Սուրբ Գեորգիի»** IV աստիճանի (10 հունիսի, 1916 թվական, հետմահու) շքանշանով և Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** III աստիճանի (սրերով և ժապավենով, 1878) և I աստիճանի (սրերով, 1915), **«Սուրբ Աննայի»** III աստիճանի (1891), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (ժապավենով, «Սպայի կոչմամբ XXV-ամյա անբասիր ծառայության համար», 1903) և III աստիճանի (1913) շքանշաններով:



**ՖԻԼԻՊ ԱՐՏԵՄԻ ԱՐՈՒԹՅՈՒՆՈՎ**
**(23.08.1855 - 1916 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (18.02.1916)**

Ծնվել է Թիֆլիսում: Ընդհանուր կրթությունը ստացել է տանը:

1879 թվականից ծառայել է բանակում:

Ավարտել է Պավլովսկի 1-ին զինվորական ուսումնարանը:

Ծառայել է Կովկասի 1-ին հրաձգային գումարտակում:

Ավարտել է Ալեքսանդրովյան ռազմաիրավական ակադեմիան (2-րդ աստիճանով):

1908-1916 թվականներին եղել է Սանկտ Պետերբուրգի ոստիկանապետ:

1908 թվականի դեկտեմբերի 6-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1916 թվականին հիվանդության պատճառով, մունդիրով և թոշակով ազատվել է զինվորական ծառայությունից:

Պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** II աստիճանի (1902), **«Սուրբ Աննայի»** II աստիճանի (1906), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (1913) շքանշաններով:



**ԵՐԵՄԻԱ ԳԵՎՈՐԳԻ ԱՐԾՐՈՒՆԻ**
**(1804 - 15.11.1877)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (01.02.1860)**

Ծնվել է Վան քաղաքում (Օսմանյան կայսրություն):

1813 թվականին նրա ընտանիքը տեղափոխվել է Թիֆլիս: Այստեղ նա ավարտել է գիմնազիան, այնուհետև սովորել է Սանկտ Պետերբուրգի ռազմական ուսումնարանում:

1823 թվականից ծառայել է լեյբ-գվարդիայի ուլանների գնդում՝ որպես կոռնետ:

Մասնակցել է 1826-1828 թվականների ռուս-պարսկական և 1828-1829 թվականների ռուս-թուրքական պատերազմներին: Պատերազմների ժամանակ մասնակցել է Սարդարապատի, Աբասաբադի և Երևանի մարտերին:

1829 թվականից եղել է գեներալ Մովսես Արգուտինսկի-Դոլգորուկովի ադյուտանտը և նրա հետ գործուղվել է Պարսկաստան: Մասնակցել է Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքմանը, այնուհետև Խամադանում հանդիպել է Պարսկաստանի շահին:

1830 թվականին նշանակվել է Կովկասյան բանակի գլխավոր ինտենդանտ:

1831 թվականից գեներալ Ֆ. Պասկևիչի ադյուտանտն է եղել, իսկ նրա տեղափոխությունից հետո ծառայել է Կովկասի առանձին կորպուսի հրամանատարի մոտ, նույն պաշտոնում:

Նույն թվականի հունվարի 12-ին ընտրվել է Թիֆլիսի հայոց Ներսիսյան հոգևոր դպրոցի հոգաբարձուների խորհրդի անդամ:

Մասնակցել է լեռնաբնակների դեմ մարտական գործողություններին: Զինվորական ծառայությանը զուգահեռ 1836 թվականին Արծրու-

նին փոխգնդապետի կոչումով աշխատանքի է անցել Ֆինանսների նախարարությունում: Քանի որ նա լավ է տիրապետել պարսկական տնտեսությանը, սկսել է ուսումնասիրել Կովկասի և Պարսկաստանի միջև առևտրական հարաբերությունների զարգացման ուղիները, միևնույն ժամանակ նրան է վստահվել Անդրկովկասի բոլոր մաքսակետերի կառավարումը:

1838 թվականին նա իր մի քանի համախոհների հետ փորձում է ստեղծել խոշոր առևտրային ընկերություն:

1839 թվականին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում և նշանակվել է Կովկասի առանձին կորպուսի ինտենդանտական վարչության ղեկավար: Այս հաստատությունում, որտեղ շրջանառվում էին պետական ամենամեծ միջոցները, նա հաստատում է խիստ կարգուկանոն՝ հանդես գալով որպես գանձարանի պետական շահերի անշահախնդիր նվիրյալ: Այս սկզբունքով աշխատել է մինչև պաշտոնից հեռանալը:

1840-ական թվականների առաջին կեսին Արծրունին հրաժարվում է զինվորական ծառայությունից և տեղափոխվում է Մոսկվա, որտեղ ապրում է մինչև 1850-ականների վերջը:

1853 թվականին, երբ սկսվում է Ղրիմի (Արևելյան) պատերազմը, Արծրունին ճեպագիր է ստանում ռազմական նախարարից այն մասին, որ Նիկոլայ I կայսեր համաձայնությամբ նա նշանակվելու է Ղրիմում ռուսական գործող բանակի գլխավոր ինտենդանտ, սակայն Արծրունին հրաժարվում է այս բարձր պաշտոնից:

1855 թվականի ամռանը Թիֆլիսում Սիոնի տաճարի հետ այրվում է Արծրունու քարվանսարան (այն Թիֆլիսի հայազգի 14 վաճառականների քարվանսարանների շարքում 2-րդ տեղն էր զբաղեցնում): Խանութների կորուստը միլիոնների էր հասնում: Լսելով այս պատահարի մասին՝ Արծրունին մեկնում է Սանկտ Պետերբուրգ և խնդրում է իշխանություններին հետաքննել գործը: Շուտով նա սկսում է վերակառուցել քարվանսարան, 4-5 ամսում ավարտում է աշխատանքները և սկսում է նոր առևտրային համալիր կառուցել:

Մինչև 1865 թվականը ընդգրկված է եղել Կովկասյան բանակում:

1865 թվականին հիվանդության պատճառով, մունդիրով և թոշակի կեսի ապահովմամբ ազատվել է զինծառայությունից:

1867 թվականին Թիֆլիսում ուժի մեջ է մտնում քաղաքային իշխանության նոր կանոնադրությունը, ինչը համընկնում է Արծրունու քա-

ղաքագլուխ ընտրելու հետ: Նրա՝ քաղաքագլուխ լինելու շրջանում, 1862 թվականի սեպտեմբերի 1-ին Թիֆլիսում հիմնադրվում է յունկերական ուսումնարանը, իսկ 1867 թվականի հունվարի 2-ին բացվում է Կովկասի թանգարանը:

1868 թվականին առողջական վիճակի վատթարացման պատճառով Արծրունին հրաժարական է տալիս, բայց շարունակում է մնալ քաղաքային խորհրդի անդամ և Թիֆլիսի քաղաքային հասարակական կառավարման նախագահ:

Նրա գրչին է պատկանում *«Вопрос о железной дороге в Индию»* (1872) աշխատությունը, որը նա կարդացել է տեխնիկական ընկերության նիստերից մեկի ընթացքում:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Աննայի»** IV աստիճանի (1827) և II աստիճանի (1842), **«Սուրբ Ստանիսլավի»** III աստիճանի (1836), II աստիճանի (1838) և I աստիճանի (1865), պարսկական **«Արևի և առյուծի»** II աստիճանի (ալմաստակուռ, 1813) շքանշաններով:

Թաղվել է Թիֆլիսում, Վերեի հին գերեզմանոցում: Ցավոք, նրա շիրիմը չի պահպանվել (*հեղինակային նշում*):



Արծրունիների տոհմական զինանշանը



**ԱԼԵՔՍԱՆԴՐ ԵՍԱՅՈՒ**
**ԱԽՎԵՐԴՈՎ (ՀԱԽՎԵՐԴՅԱՆ)**
**(1758/1760 - 1810)**

**ԲՐԻԳԱԴԻՐ (10.12.1800)**

Ծնվել է Ղզլար քաղաքում (Դաղստան), սեկունդ-մայոր Եսայի Վասիլիի Ախվերդովի ազնվականական ընտանիքում: Մայրը Աննա Գերասիմի Չոլողաշվիլին է եղել:

1774 թվականին զինվորական ծառայության է անցել Մոզդոկի դաշտային գումարտակում՝ որպես շարքային:

1783-1788 թվականներին ծառայել է Կովկասի եգերյան 4-րդ գումարտակում:

1788-1794 թվականներին ծառայել է Կովկասի հրացանակիրների գնդում:

Մասնակցել է 1787-1791 թվականների ռուս-թուրքական պատերազմին:

1794-1798 թվականներին ծառայել է Ղզլարի կայազորային գնդում:

1798-1800 թվականներին եղել է Կազանի հրացանակիրների գնդի հրամանատար:

1799 թվականի հոկտեմբերի 31-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1800 թվականի դեկտեմբերի 10-ին անձնական խնդրագրի հիման վրա նա ազատվում է զինվորական ծառայությունից և անցնում է քաղաքացիական ծառայության:

1801 թվականի օգոստոսի 19-ին նա կրկին վերադարձել է բանակ և նշանակվել է Ղզլարի պարետ:

1802 թվականի հունվարի 16-ին նշանակվել է Ղզլարի կայազորային գնդի հրամանատար:

1804 թվականի օգոստոսի 16-ին նշանակվել է Կալմիկիայի ժողովուրդների գլխավոր պրիստավ:

1806 թվականի հունիսի 22-ին նշանակվել է չեչեն ժողովրդի հսկիչ:

Բարեխիղճ և անբասիր ծառայության համար Ալեքսանդր I կայսրը նրան ադամանդե մատանի է շնորհել (10.10.1807):

Պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (1796) և **«Սուրբ Աննայի»** II աստիճանի (1800) շքանշաններով:

Նրա որդին՝ Նիկոլայ Ախվերդովը (1800-1876), եղել է ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ:



**ՆԻԿՈԼԱՅ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԱԽՎԵՐԴՈՎ (ՀԱԽՎԵՐԴՅԱՆ)**
**(1800 - 1876)**

**ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ (13.08.1855)**

Բրիգադիր Ա. Ե. Ախվերդովի որդին է:

Ծնվել է Հյուսիսային Կովկասում, ստանիցա Նաուրսկայայում, որտեղ ծառայել է նրա հայրը: Հոր՝ Կաբարդայի գնդի նախկին հրամանատարի մահվան պատճառով նրա կրթությամբ և դաստիարակությամբ զբաղվել է հորեղբայրը՝ Ֆյոդոր Ախվերդովը:

8 տարեկան հասակում, 1809 թվականից սովորել է պաժերի կորպուսում, որն ավարտելուց հետո, 1818 թվականից ծառայել է Սևերսկի հեծելազորային եգերական գնդում:

Մասնակցել է 1826-1828 թվականների ռուս-պարսկական պատերազմին:

1828 թվականին նշանակվել է 20-րդ հետևակային դիվիզիայի պետի ադյուտանտ:

1829 թվականին տեղափոխվել է Պավլովսկի լեյբ-գվարդիայի գունդ, իսկ 1830 թվականին՝ Մոսկվայի լեյբ-գվարդիայի գունդ:

1832 թվականի դեկտեմբերի 6-ին, 32 տարեկան հասակում նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում և ծառայության է կոչվել Սելենգինի հետևակային գնդում:

1834 թվականին նշանակվել է Մոսկվայի հետևակային գնդի հրամանատար:

1836-1839 թվականներին ընտանեկան հանգամանքների բերումով եղել է պահեստազորում:

1839 թվականին նա վերադարձել է զինվորական ծառայության և փոխել է իր գործունեության ոլորտը:

**1844 թվականի դեկտեմբերի 6-ին նրան շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում** և նշանակվել է ժանդարմերիայի կորպուսի պետին կից հանձնարարությունների գծով գեներալ, հետաքննել է բազմաթիվ քրեական հանցագործություններ:

1848-1850 թվականներին ղեկավարել է ժանդարմերիայի կորպուսի VII բաժինը:

1852-1859 թվականներին եղել է Սմոլենսկի նահանգապետ:

1859 թվականին հեռացել է զինվորական ծառայությունից և նշանակվել է սենատոր:

Մահացել է Սանկտ Պետերբուրգում: Թաղված է Սանկտ Պետերբուրգի Վոլկովոյի ուղղափառ գերեզմանոցի տոհմական դամբարանում (*շիրիմը պահպանվում է, հեղինակային նշում*):

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է **«Սուրբ Գեորգիի»** IV աստիճանի շքանշանով (XXV-ամյա անբասիր զինվորական ծառայության համար, 03.12.1839), **«Ոսկե զենք»**-ով (արիության համար, 1828), Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** II աստիճանի (թագով) և I աստիճանի (1850), **«Սուրբ Աննայի»** IV աստիճանի (արիության համար), III աստիճանի (ժապավենով), II աստիճանի (ժապավենով, 1865) և I աստիճանի (սրերով, 1855), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (ժապավենով, 1826), III աստիճանի (1848), II աստիճանի (սրերով, 1858), **«Սպիտակ արծիվ»** (1867) շքանշաններով, պարսկական **«Արևի և առյուծի»** II աստիճանի (ալմաստակուռ, 1813) և **Virtuti Militari** IV աստիճանի շքանշաններով:

1868 թվականին գերագույն հրամանագրով 12 տարի ժամկետով որպես վարձավճար նրան հատկացվում է տարեկան 2500 ռուբլի, Սմոլենսկի ազնվականությունը նրան նվիրում է «Սմոլենսկի տեսարան» կտավը, իսկ կազակները և մեշչանները՝ Սմոլենսկի «Օդիգիտրիա» Սուրբ Աստվածամոր սրբապատկեր:



Գեներալ-լեյտենանտ Ն. Ա. Ախվերդովի տապանաքարը



**ՎԼԱԴԻՄԻՐ ՆԻԿՈԼԱՅԻ ԱԽՎԵՐԴՈՎ (ՀԱԽՎԵՐԴՅԱՆ)**
**(30.05.1847 - 24.02.1908)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (06.12.1908)**

Գեներալ-լեյտենանտ Ն. Ա. Ախվերդովի (1800-1876) որդին և գեներալ-մայոր Ն. Ն. Ախվերդովի (1841-1898) եղբայրն է:

1867 թվականին ավարտել է պաժերի կորպուսը: Ծառայել է լեյբգվարդիայի վիշապագնդում, Սանկտ Պետերբուրգի մարզային ինտենդանտական վարչությունում:

1903 թվականին մայիսի 16-ին նրան շնորհվել է գնդապետի կոչում:

1904 թվականին նշանակվել է գվարդիական կորպուսի ինտենդանտ:

Թաղված է Սանկտ Պետերբուրգում, Վոլկովոյի ուղղափառ գերեզմանոցում, Դոլգոբորոդովի ճանապարհի կողքին, Քրիստոսի անձեռակերտ սրբապատկերի անունը կրող տաճարի արևելյան պատի մոտ:



**ՆԻԿՈԼԱՅ ՆԻԿՈԼԱՅԻ
ԱԽՎԵՐԴՈՎ (ՀԱԽՎԵՐԴՅԱՆ)
(15(27).10.1841 - 1902)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (23.03.1898)**

Գեներալ-լեյտենանտ Ն. Ա. Ախվերդովի (1800-1876) որդին է:

Ծնվել է Մոսկվայում, որտեղ հայրը զինվորական ծառայության մեջ է եղել: Ավարտել է պաժերի կորպուսը:

1860 թվականից ծառայել է Վլադիմիրյան ուլանների գնդում:

1863 թվականից ծառայել է լեյբ-գվարդիայի վիշապազնդում:

Մասնակցել է 1863 թվականի լեհական ապստամբության ճնշմանը:

1877-1878 թվականներին պատերազմի ժամանակ ծառայել է Պլևնի ջոկատի, իսկ ավելի ուշ՝ գեներալ Գուրկոյի արևմտյան ջոկատի կազմում: Պատերազմի ժամանակ ծանր վիրավորվել է:

1881 թվականի ապրիլի 23-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1887 թվականին նշանակվել է հեծելազորի 11-րդ պահեստային կադրերի հրամանատար:

1898-1901 թվականներին ղեկավարել է հեծելազորային պահեստային 6-րդ բրիգադը:

1901-1902 թվականներին ղեկավարել է հեծելազորային պահեստային 1-ին բրիգադը:

Մահացել և թաղվել է Վորոնեժի նահանգի Բորիսոգլեբսկ քաղաքում:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է **«Սուրբ Գեորգիի»** IV աստիճանի (XXV-ամյա անբասիր զինվորական ծառայության համար, 03.12.1839) շքանշանով, **«Ոսկե զենք»**-ով (արիության համար, 1828), Ռուսաստանի **«Սուրբ Ստա-**

**նիսլավի»** II աստիճանի (սրերով և ժապավենով, 1878) և I աստիճանի (1901), **«Սուրբ Աննայի»** IV աստիճանի (արիության համար, 1863), III աստիճանի (սրերով և ժապավենով, 1878) և II աստիճանի (սրերով, 1878), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (սրերով և ժապավենով, 1896), III աստիճանի (1896) շքանշաններով, **Ռումինիայի խաչով** (Դանուբն անցնելու համար, 1879):



**ՖՅՈԴՈՐ ԵՍԱՅՈՒ ԱԽՎԵՐԴՈՎ (ՀԱԽՎԵՐԴՅԱՆ)**
**(1773 - 1820)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (1808)**

Ծնվել է Ղզլար քաղաքում (Դաղստան), սեկունդ-մայոր Եսայի Ախվերդովի (Հախվերդյան) ազնվականական ընտանիքում: **Մայրը Աննա Գերասիմի Չոլողաշվիլին է եղել:**

1788 թվականին ընդունվել է հրետանային կադետական կորպուս: 1791 թվականին դարձել է շտիկ-յունկեր (յունկերի կոչում հրետանու և ինժեներական զորքերում), իսկ 1793 թվականին՝ աուդիտոր (ռազմական իրավաբանի կոչում նախահեղափոխական Ռուսաստանում) և ընդունվել է «կանոնիրների» (գերմ.՝ Kanonier - հրետանավոր, գնդացրորդ) 1-ին գունդ: Նույն թվականին Ախվերդովը տեղափոխվել է գեներալ Պ. Զուբովի շտաբ՝ որպես ֆլիգել-ադյուտանտ:

1796 թվականին հասցվել է հրետաձիգների 1-ին գնդի կապիտանի աստիճանի: 1797 թվականին նշանակվել է հրետանային գումարտակում: 1798 թվականին ստացել է փոխգնդապետի, 1799 թվականին՝ գնդապետի կոչում: 1800 թվականին տեղափոխվել է կամրջանավային վաշտ:

1800 թվականին Կաբարդայի հպատակեցման համար նրան շնորհվել է **«Սուրբ Երուսաղեմցու»** շքանշան:

1803 թվականին տեղափոխվել է 9-րդ հրետանային գումարտակ: 1804 թվականին մասնակցել է Գյանջայի (Գանձակ) բերդի գրավմանը:

1806 թվականին եղել է 4-րդ հրետանային գնդում, իսկ դրա լուծարումից հետո, 1806 թվականին նշանակվել է 9-րդ հրետանային գումարտակի բրիգադի հրամանատար:

1807 թվականին, ռուս-թուրքական պատերազմի ընթացքում մասնակցել է Յուսուփ փաշայի դեմ հաղթական ճակատամարտին:

1807 թվականին Ախվերդովը նշանակվել է Վրաստանի կառավարիչ: Պարգևատրվել է **«Սուրբ Գեորգիի»** IV աստիճանի շքանշանով (1808):

1811 թվականին ազատվել է այդ պաշտոնից և ընդունվել է հրետանակազմ:

1812 թվականին նշանակվել է Կովկասում գործող 19-րդ հետևակային դիվիզիայի հրամանատար, գործուղվել է Թուրքիա՝ խաղաղության համաձայնագիր կնքելու համար:

1816 թվականին դարձել է վրացական կորպուսի հրետանու ավագ հրամանատար: 1796 թվականին մասնակցել է Շամախիի և Գյանջայի (Գանձակ) գրավմանը: 1798-1799 թվականներին գտնվել է Սիբիրի մարզերում՝ նիտրատ (սելիտրա) արդյունահանելու նպատակով:

Թաղվել է Թիֆլիսում, Խոջիվանքի հայկական գերեզմանատան տոհմական դամբարանում (*ավերվել է խորհրդային իշխանության օրոք, 1934 թվականին: Հեղինակային ծանոթագրություն*):



## ՆԻԿՈԼԱՅ ՖՅՈԴՈՐԻ ԱԽՎԵՐԴՈՎ (ՀԱԽՎԵՐԴՅԱՆ)
**(20.06.1829 - 27.09.1896)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (22.12.1879)**

Ծնվել է Թիֆլիսում: Կովկասի փոխարքա Միխայիլ Վորոնցովի անձնական բժշկի՝ Յուրի Ախվերդովի եղբայրն է:

1847 թվականին ավարտել է կադետական 2-րդ կորպուսը: Ծառայել է Լոլիվանի եգերական գնդում: 1849 թվականին մասնակցել է Հունգարիայի հեղափոխության ճնշմանը:

Ծառայել է հրետանային 11-րդ բրիգադի 3-րդ թեթև մարտկոցում, այնուհետև եղել է նույն բրիգադի քառորդավար:

1852 թվականին ծառայության է կոչվել հրետանային 19-րդ բրիգադի 4-րդ մարտկոցում, մասնակցել է կովկասյան լեռնաբնակների դեմ ռազմական գործողություններին:

1857 թվականին ծառայել է կովկասյան գրենադերների հրետանային բրիգադի 2-րդ մարտկոցում:

1861 թվականին նշանակվել է կովկասյան պահակային հրետանու 7-րդ վաշտի հրամանատար:

1864 թվականին նշանակվել է 38-րդ հրետանային բրիգադի 4-րդ մարտկոցի հրամանատար:

1873 թվականի սեպտեմբերի 9-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

Մասնակցել է 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմին, որտեղ ղեկավարել է Կովկասի պաշարման-հրետանային զորամասը:

1879 թվականի դեկտեմբերի 11-ին մունդիրով և թոշակի ապահովմամբ դուրս է եկել զինվորական ծառայությունից:

Մահացել է կարճատև հիվանդությունից հետո: Թաղվել է Թիֆլիսում, Խոջիվանքի հայկական գերեզմանատան տոհմական դամբարանում (*ավերվել է խորհրդային իշխանության տարիներին, 1934 թվականին: Հեղինակային ծանոթագրություն*):

Մարտական վաստակի համար պարգևատրվել է **«Ոսկե զենք»**-ով (արիության համար, 20.07.1877), Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** III աստիճանի (1862) և II աստիճանի (1867), **«Սուրբ Աննայի»** III աստիճանի (1864) և II աստիճանի (1876), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (ժապավենով, «Սպայական կոչմամբ XXV-ամյա անբասիր ծառայության համար», 1872) շքանշաններով:



## ՆԻԿՈԼԱՅ ԵՍԱՅՈՒ ԱԽՎԵՐԴՈՎ (ՀԱԽՎԵՐԴՅԱՆ)
**(20.09.1754 - 08.07.1817)**

**ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ (12.12.1807)**

Ծնվել է Ղզլարում, վրացական հուսարական գնդի սպա Եսայի Վասիլիի Ախվերդովի ընտանիքում, ով վրաց Վախթանգ VI թագավորի շքախմբի կազմում եկել էր Ռուսաստան և 1739 թվականից զինվորական ծառայության էր անցել այստեղ: **Նրա մայրը՝ Աննա Գերասիմի Չոլողաշվիլին, իշխանական տոհմից էր սերում:**

1764 թվականից սովորել է Շլյախտային ցամաքային կադետական կորպուսում, որն ավարտել է 1776 թվականին պորուչիկի կոչումով և **Ոսկե մեդալով**: Կադետական կորպուսի երեք շրջանավարտների հետ ուղարկվել է արտերկիր: Եղել է Գերմանիայում, Անգլիայում, Ֆրանսիայում և Իտալիայում, որտեղ զբաղվել է արվեստի հուշարձանների ուսումնասիրությամբ:

1779 թվականին վերադարձել է Ռուսաստան և նշանակվել է կադետական կորպուսի կուրսանտների դաստիարակ:

1782 թվականից աշխատել է պետական եկամուտների արշավախմբում, 1788 թվականից ծառայության է կոչվել Կոլիվանի փոխարքայության վարչությունում, մեծ ներդրում է ունեցել Կոլիվանի հանքավայրերի կառավարման կազմակերպման գործում:

1797 թվականի դեկտեմբերի 31-ից մինչև 1798 թվականի սեպտեմբերի 1-ը եղել է Արխանգելսկի նահանգի քաղաքացիական կառավարիչ:

**1799 թվականին նրան շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում:**

Նույն թվականին նշանակվել է մեծ իշխաններ Նիկոլայ Պավլովիչի և Միխայիլ Պավլովիչի դաստիարակ: 1802 թվականից նրանց դաստա-

վանդել է ռուսաց լեզու, պատմություն և աշխարհագրություն, իսկ 1804 թվականից՝ թվաբանություն:

1806 թվականին ընտրվել է Ռուսաստանի Գեղարվեստի ակադեմիայի պատվավոր անդամ, իսկ 1811 թվականից՝ «Ռուս գրականության սիրահարների զրույցներ» ընկերության պատվավոր անդամ:

«Գայլը՝ դատավոր» (Волк-судья) առակի հեղինակն է (1790), թարգմանել է Մենգսի «Նամակ դոն Անտոնիո Պոնզին» (Письмо к дону Антонио Понзу) տրակտատը, Հելլերտի «Դաստիարակության մասին» (О воспитании) և «Կոստանդնուպոլսի նկարագիրը» (Описание Константинополя) (1789) ստեղծագործությունները: Մտերիմ է եղել ռուս բանաստեղծներ Գ. Դերժավինի (1743-1816) և Դ. Խվոստովի (1757-1835) հետ:

Պարգևատրվել է **«Սուրբ Աննայի»** I աստիճանի շքանշանով:

Մահացել է Սանկտ Պետերբուրգում:

Գեներալ Ախվերդովի դիմանկարը, որը 1817 թվականին նկարել է գեղանկարիչ Ա. Վառնեկը (1782-1843), Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահի սեփականությունն է հանդիսանում:



Ախվերդովների տոհմական զինանշանը



## ԴՄԻՏՐԻ ԻՎԱՆԻ ԱԽՇԱՐՈՒՄՈՎ
**(11(22).10.1785 - 13(25).01.1837)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (19.02.1820)**

Նրա պապը՝ Գեորգի Ախշարումովը, վրաց ազնվականական խավից էր, եղել է Վախթանգ VI թագավորի պալատական թարգմանիչը և 1725 թվականին թագավորական շքախմբի կազմում հասել է Ռուսաստան, բնակություն է հաստատել Աստրախանում, որպես թարգմանիչ ծառայել է Ղզլար քաղաքում, որը հոծ բնակեցված էր վրացիներով ու հայերով: Մահացել է 1773 թվականին:

Դմիտրի Ախշարումովն ավարտել է կադետական 1-ին կորպուսը: Ծառայել է Չեռնիգովյան հետևակային գնդում, մասնակցել է 1806-1807 թվականների արշավին Արևելյան Պրուսիայի դեմ և 1808-1811 թվականների օսմանցիների դեմ պատերազմին:

Այնուհետև ծառայել է նախ եգերական 20-րդ գնդում, իսկ հետո՝ եգերական լեյբ-գվարդիայի գնդում, մասնակցել է 1812 թվականի Ռուսաստանի Հայրենական պատերազմին: Առաջխաղացում է ունեցել Սմոլենսկի, Բորոդինոյի, Տարուտինոյի և հատկապես՝ Մալոյարոսլավեցի մոտ մարտերում: Հետագայում, 1813-1814 թվականներին հաջողություններ է գրանցել նաև Եվրոպայում, ռուսական բանակի արտասահմանյան արշավներում:

1813 թվականի հոկտեմբերի 20-ին, 28 տարեկանում նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1814 թվականին նա դաշնակից բանակներին ուղեկցել է մինչև Փարիզ, իսկ ռազմական գործողությունների ավարտին մնացել է արտասահմանում՝ որպես ռուսական բանակի կորպուսի հերթապահ շտաբի սպա:

1819 թվականին լույս է տեսել նրա «1812 թվականի պատերազմի պատմական ակնարկ» գիրքը: Այս աշխատությունը իր ժամանակին մեծ արժեք է ունեցել:

1820 թվականի փետրվարին նշանակվել է 17-րդ հետևակային դիվիզիայի 2-րդ բրիգադի հրամանատար, բայց արդեն նույն թվականի դեկտեմբերի 8-ին անցել է քաղաքացիական ծառայության, 1821 թվականի նոյեմբերի 8-ին նշանակվել է կոմիսարիատի բաժնի փոխտնօրեն:

Այստեղ նա կազմել է «Զինվորական օրենքների մեթոդական ձեռնարկ»:

Նման օրենսգրքի պահանջ զգացվում էր վաղուց, սակայն այդ ուղղությամբ քայլեր չեն ձեռնարկվել մինչև Դմիտրի Ախշարումովի նախաձեռնությունը, մինչև 1826 թվական:

1827 թվականին Դմիտրի Ախշարումովը ծառայության է կոչվել Գլխավոր շտաբում: Նիկոլայ I կայսեր անձնական հանձնարարությամբ նա ստեղծել է փոքր աշխատակազմ՝ օրենսգրքի ստեղծման աշխատանքներն իրականացնելու համար:

8 տարի նա նվիրել է տքնաջան այս աշխատանքին, բայց չի հասցրել տպագրված տեսնել կապիտալ այս աշխատությունը:

Մահացել է 52 տարեկան հասակում: Թաղված է Սանկտ Պետերբուրգում, Բոլշեոխտինսկոյե (Գեորգևյան) գերեզմանոցում:

Եթե նկատի ունենանք, որ իր կյանքի 52 տարիներից 11-ը Դ. Ախշարումովը նվիրել է այս աշխատության ստեղծմանը, ապա պետք է խոստովանենք, որ անասելի մեծ է նրա վաստակը ռազմական կանոնակարգերի կոդիֆիկացման ամուր հիմքերի ստեղծման առումով:

Ախշարումովի կոդիֆիկացման աշխատանքների գնահատականը չափազանցված չի թվա, եթե հիշենք, որ XIX դարում զինվորական օրենքների ժողովածու չէր կարող հրատարակվել և չի հրատարակվել (ամբողջական տեսքով), մինչդեռ Ախշարումովը կարողացավ ավարտին հասցնել այս աշխատանքը 1827-1835 թվականներին, ընդամենը 8 տարվա ընթացքում:

Մարտական վաստակի համար պարգևատրվել է **«Սուրբ Գեորգիի»** IV աստիճանի շքանշանով (20.10.1813), **«Ոսկե զենք»**-ով (արիության համար, 13.02.1813), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (ժապավենով) շքանշանով:



**ԲԵՆԻԱՄԻՆ ԻՎԱՆԻ**
**ԱԽՇԱՐՈՒՄՈՎ**
**(18(30).12.1826 - 06(19).08.1907)**

**ԻՆԺԵՆԵՐ-ԳԵՆԵՐԱԼ (09.04.1889)**

1839 թվականից ծառայել է բանակում:

1845 թվականին ավարտել է Մոսկվայի կադետական 1-ին կորպուսը և սկսել է զինվորական ծառայությունը լեյբ-գվարդիայի Պավլովսկի գնդում:

1847 թվականին ավարտել է Նիկոլաևյան ինժեներական ակադեմիան:

1849 թվականին մասնակցել է հունգարական հեղափոխության ճնշմանը:

1854 թվականից ղեկավարել է լեյբ-գվարդիայի սակրավորների գումարտակի վաշտը:

1856 թվականի դեկտեմբերի 6-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1859 թվականին նշանակվել է երկրաբաշխների գրասենյակի նախագահ և կայսրուհի Մարիա Ֆյոդորովնայի հաստատությունների հոգաբարձուների խորհրդի պատվավոր հոգաբարձու:

**1863 թվականի դեկտեմբերի 6-ին նրան շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում:**

**1873 թվականի փետրվարի 26-ին նրան շնորհվել է գեներալ-լեյտենանտի զինվորական կոչում:**

Մահացել է Մոսկվայում, թաղված է Մոսկվայի Ալեքսեևյան մայրավանքի գերեզմանոցում:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** II աստիճանի (1857) և I աստիճանի (1865), **«Սուրբ Աննայի»** III աստիճանի (1853), II աստիճանի (1861), I աստիճանի (1867), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (1872), III աստիճանի (1864), II աստիճանի (1871) և I աստիճանի (1899), **«Սպիտակ արծիվ»** (1877), **«Սուրբ Ալեքսանդր Նևսկու»** (1884, ադամանդակուռ՝ 1895) շքանշաններով:



**ԱՐՍԵՆ ԻՎԱՆԻ ԲԵԲՈՒԹՈՎ (ԲԵՀԲՈՒԹՅԱՆ), ԻՇԽԱՆ**
**(16.06.1834 - 10.02.1913)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (06.12.1893)**

Ծնվել է Թիֆլիսում:

Ավարտել է Թիֆլիսի ազնվականական գիմնազիան: Ծառայել է քաղաքացիական ոլորտում:

1856 թվականից եղել է հրետանային 21-րդ բրիգադի պրապորշչիկ:

1868-1869 թվականներին ծառայել է Դաղստանի ռազմական օկրուգում՝ որպես կապիտան:

1874 թվականին հրետանու փոխգնդապետի կոչումով նշանակվել է Դաղստանի օկրուգի կառավարչի գրասենյակի ղեկավարի օգնական:

1875-1877 թվականներին եղել է Դաղստանի օկրուգի Թեմիր-Խան-Շուրա մարզի կառավարիչ:

Մասնակցել է 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմին:

1882 թվականի դեկտեմբերի 6-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1883-1884 թվականներին եղել է Դաղստանի օկրուգի Անդի մարզի կառավարիչ:

1885-1888 թվականներին եղել է Անդրկասպյան օկրուգի Մանգիշլակի գավառային վարչության ղեկավար:

1888-1890 թվականներին եղել է Անդրկասպյան օկրուգի Կրասնովոդսկի գավառային վարչության ղեկավար: Եղել է Թիֆլիսի հայոց Ներսիսյան հոգևոր դպրոցի հոգաբարձուների խորհրդի անդամ և Թիֆլիսի քաղաքային վարկային ընկերության դիտորդական խորհրդի անդամ:

1897-1907 թվականներին ընտրվել է Թիֆլիսի քաղաքային խորհրդի անդամ: Եղել է «Անապահովների տան» շինարարական հանձնաժողովի նախագահ:

Մահացել է Թիֆլիսում: Թաղվել է Խոջիվանքի գերեզմանատան տոհմական դամբարանում (*ավերվել է խորհրդային իշխանության օրոք, 1934 թվականին: Հեղինակային ծանոթագրություն*):



**ԴԱՎԻԹ ԳՐԻԳՈՐԻ ԲԵԲՈՒԹՈՎ (ԲԵՀԲՈՒԹՅԱՆ), ԻՇԽԱՆ**
**(15.12.1855 - 1931)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (1913)**

Ծնվել է Թիֆլիսում: Գեներալ Վասիլի Բեբութովի ազգակիցն է:

Ավարտել է Թիֆլիսի գիմնազիան և Ստավրոպոլի յունկերական կազակական ուսումնարանը:

1872 թվականից ծառայել է բանակում: 1878 թվականից եղել է սպա: Մասնակցել է 1877-1878 թվականների ռուս-թուրքական և 1914-1918 թվականների Առաջին համաշխարհային պատերազմներին:

1910 թվականի դեկտեմբերի 6-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

Մինչև 1913 թվականը եղել է Կովկասյան բանակային II կորպուսի, Կովկասյան հեծելազորային դիվիզիայի, Տվերի 16-րդ վիշապազնդի հրամանատար:

1913 թվականին մունդիրով և թոշակով դուրս է եկել զինվորական ծառայությունից:

1914 թվականին, Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին զորակոչվել է բանակ և նշանակվել է Կովկասյան 4-րդ պահեստային բրիգադի հրամանատար:

Պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** II աստիճանի (1909) և **«Սուրբ Աննայի»** III աստիճանի (1899) շքանշաններով:



## ՎԱՍԻԼԻ (ԲԱՐՍԵՂ) ՀՈՎՍԵՓԻ ԲԵԲՈՒԹՈՎ (ԲԵՀԲՈՒԹՅԱՆ), ԻՇԽԱՆ

**(01.01.1791 - 10.03.1858)**

**ՀԵՏԵՎԱԿԱԶՈՐԻ ԳԵՆԵՐԱԼ (06.01.1857)**

Ծնվել է Թիֆլիսում: 1783 թվականին Քարթլ-Կախեթիի թագավոր Էրեկլե II-ի հրամանագրով Բեբութովների տոհմին շնորհվել է իշխանական կոչում: Նրա հայրը՝ Հովսեփը, 1805 թվականին ստացել է ռուսական ծառայության գնդապետի զինվորական կոչում:

Իշխան Պավլե Ցիցիանովի (Ցիցիշվիլի, 1754-1806) ցուցմամբ իշխան Բեբութովը 1807-1809 թվականներին սովորել է Սանկտ Պետերբուրգի կադետական 1-ին կորպուսում, որտեղ, ընթերցասրահում փակցված է եղել նրա՝ որպես գերազանցիկ կադետի դիմանկարը:

Զինվորական ծառայությունը սկսել է 1809 թվականին՝ որպես Խերսոնի գրենադերների գնդի պրապորշչիկ: Գունդը գտնվում էր Վրաստանում: Որոշ ժամանակ ծառայել է որպես գեներալ Տորմասովի ադյուտանտ, մասնակցել 1806-1812 թվականների ռուս-թուրքական պատերազմին:

1812 թվականին, որպես մարկիզ Պաուլուչիի ադյուտանտ, մասնակցել է Մակդոնալդի զորքերի հետապնդմանը Ռիգայից մինչև Մեմել, իսկ դեկտեմբերի 15-ին՝ Մեմելի գրավմանը:

1813 թվականին տեղափոխվել է լեյբ-գվարդիայի Սեմյոնովսկի գունդ:

1816 թվականին Բեբութովը վերադարձել է Կովկաս և նշանակվել է տարածաշրջանի նոր կառավարիչ գեներալ Ա. Երմոլովի ադյուտանտ: Այդ ժամանակվանից նրա ծառայությունը մերթ զուտ ռազմական, մերթ վարչական բնույթ է կրել:

1817 թվականին, գեներալ Ա. Երմոլովի՝ արտակարգ դեսպանորդության ընթացքում,Վ. Բեբութովը ուղեկցել է  նրան Թեհրան, որտեղ ծանոթացել է եվրոպականացված պարսկական բանակի կառուցվածքին:

Դիվանագիտական առաքելության ընթացքում կատարել է ռազմական կցորդի պարտականություն, եղել է Թավրիզ և Թեհրան քաղաքներում, ծանոթացել է պաշտպանական ամրությունների համակարգին: Փայլուն տիրապետել է հայերենին, վրացերենին, թուրքերենին, պարսկերենին, ռուսերենին և ֆրանսերենին:

Պարսկաստանից վերադառնալուց հետո մասնակցել է երկու արշավանքների դեպի Դաղստան: Մասնավորապես՝ 1819 թվականին մասնակցել է Կաչելիքիսի և Ակուշելիքսի (Դաղստանի աուլներ) արշավանքին, իսկ 1820 թվականին՝ Կազիկումուխի խանության հպատակեցմանը: Իշխան Մադաթովի ջոկատի կազմում մասնակցել է Խոզրեխ աուլի գրոհին:

1821 թվականի հունվարի 4-ին Բեբութովը հաշվառվել է լեյբգվարդիայի Մոսկվայի գնդի ցուցակներում:

1821 թվականի հունվարի 14-ին, 30 տարեկան հասակում նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

Նույն թվականին նա տեղափոխվել է կարաբինների 7-րդ գունդ, իսկ նույն թվականի հուլիսի 23-ին նշանակվել է Մինգրելյան եգերական գնդում, որի հրամանատար է եղել մինչև 1825 թվականը:

Այնուհետև գլխավորել է 22-րդ հետևակային դիվիզիայի 2-րդ բրիգադը, միաժամանակ նշանակվել է Իմերեթիի կառավարիչ և Իմերեթիում տեղակայված զորքերի հրամանատար:

Թուրքիա արշավը սկսելուց առաջ, **1828 թվականի մարտի 25-ին, 37 տարեկանում նրան շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում** և նշանակվել է 22-րդ հետևակային դիվիզիայում՝ ղեկավարի հրամանատարության ներքո:

Հուլիսի 24-ին իշխան Բեբութովը որոշակի թվով զորք է բերում Ախալքալաքիի ճամբար և արշավում է դեպի Ախալցիխե, հուլիսի 9-ին նրա ստորաբաժանումները մեծապես նպաստում են 30-հազարանոց օսմանյան կորպուսի ջախջախմանը, իսկ օգոստոսի 15-ին նա դառնում է նաև Ախալցիխեի գրոհով գրավման գլխավոր մասնակիցներից մեկը:

1829 թվականին Ախալցիխե են ներխուժում թուրքերը, որոնք աջարացի Ահմեդ-բեգի (*Խիմշիաշվիլի, ծթ.՝ հեղինակների*) աջակցությամբ գրոհում են բերդի վրա: Գրոհը հետ է մղվում իշխան Բեբութովի հնարամտության և նրա զորքերի բացառիկ քաջության շնորհիվ: Կայազորը կարողանում է վերահսկել տարածքը, մինչև որ օգնության է հասնում գեներալ Ն. Մուրավյովի ջոկատը:

Շրջափակումը վերացվում է և նահանջող հակառակորդին հետապնդելով՝ Բեբութովը կարողանում է նրանից խլել 2 թնդանոթ և 2 դրոշ, ապա հետապնդելով աջարացի Ահմեդ-բեգին, գեներալ Բուրցևի ջոկատը ապրիլի 30-ին Ծուրծղաբի գյուղի մոտ գլխովին ջախջախում է նրան:

1830 թվականի փետրվարի 13-ին Բեբութովը նշանակվում է նոր կազմավորված Հայկական մարզի ղեկավար: Պաշտոնը նա ղեկավարում է ութ տարի, ստեղծում է վարչություն, ճիշտ կազմակերպում գանձապետական եկամուտների բաշխումը և ընդհանուր առմամբ կարողանում է ժամանակավոր կանոններ մտցնել մարզի կառավարման գործում: Բեբութովն ավարտին է հասցնում Պարսկաստանի և Ռուսական կայսրության միջև վերջնական սահմանագծման ու սահմանազատման աշխատանքները:

1830 թվականի օգոստոսի 17-ին Բեբութովը նշանակվում է Ախալցիխեի փաշայության ղեկավար: Բեբութովի այս նշանակումը պայմանավորված էր այն բանով, որ նա լավ ծանոթ էր տեղի ավանդույթներին և տեղական կյանքին: Նա կարողացավ խաղաղություն հաստատել վերագրաված տարածաշրջանում:

Մարտական վաստակի համար պարգևատրվել է **«Ոսկե զենք»**-ով (արիության համար) և **«Սուրբ Գեորգիի»** IV աստիճանի (1830 թվականի դեկտեմբերի 18-ին) շքանշանով:

1838 թվականին իշխան Բեբութովը նշանակվել է Անդրկովկասյան տարածաշրջանի գլխավոր վարչության խորհրդի անդամ, իսկ 1840 թվականի մայիսի 2-ին գործող բանակի Գլխավոր շտաբի կազմում տեղափոխվել է Լեհաստանի թագավորություն:

1842 թվականին նշանակվել է Զամոստիե ամրոցի պարետ:

**1843 թվականի հոկտեմբերի 10-ին նրան շնորհվել է գեներալ-լեյտենանտի զինվորական կոչում:** Նույն թվականի դեկտեմբերի 5-ին ծառայության է կոչվել Կովկասի առանձին կորպուսում, իսկ 1844 թվականի փետրվարի 13-ին նշանակվել է Հյուսիսային և Լեռնային Դաղստանի զորքերի հրամանատար:

1845 թվականին Բեբութովը մասնակցում է Շամիլի մուրիդների դեմ արշավանքին, նրանցից ազատագրում է Անդի և Գումբեթ աուլները, այնտեղ խանութ է հիմնում և արշավանքին մասնակցող զորքերին սննդամթերք է մատակարարում: Զորքերի ետ շարժվելու ընթացքում, երբ լեռնաբնակները իրենց հաջողությամբ ուրախացած հետապնդում էին նրա թիկունքային պահազորին, նա ոչ մի հրետասայլ չի կորցնում:

1846 թվականի աշնանը Շամիլը ներխուժում է Դարգոյի մարզ, բայց իշխան Բեբութովը նրան ժամանակ չի տալիս ո՛չ ապստամբությունը զարգացնելու և ո՛չ էլ գրավված տարածքում ամրապնդվելու համար:

Հոկտեմբերի 13-ին Բեբութովը գրոհով գրավում է Աիմիակի աուլը, որն աջակցում էր Շամիլին: Նույն օրը Կուտիշի գյուղի մոտ նա պարտության է մատնում Շամիլին: Շամիլի զորքը, որը ճակատամարտի սկզբում հասնում էր 20 հազարի, փախուստով փրկվում է՝ 1200 զոհ և վիրավոր տալով: Ռուսները գերի են վերցնում 300 հոգու, ռազմավար են տանում թնդանոթային արկղեր և իշխանության խորհրդանիշ հանդիսացող սակրը: Մարտի դաշտում Բեբութովին, իբրև հնազանդության նշան, ուղեկցում էին Դարգոյի մարզի գյուղերի պատգամավորները, և նույն գիշեր մարզում այլևս ոչ մի մուրիդ չի մնում: Նույն եռանդով ոչնչացվում են հակառակորդի ուժերը Ցուդախարի և Խուջալ-Մախի մոտ:

Անձնազոհության համար Բեբութովը 1846 թվականի նոյեմբերի 5-ին պարգևատրվել է **«Սուրբ Գեորգիի»** III աստիճանի շքանշանով:

1847 թվականին Բեբութովը Դաղստանի ջոկատի հետ մասնակցել է Գերգեբիլ գյուղի պաշարմանը և գրոհին:

Նույն թվականի նոյեմբերի 8-ին նշանակվել է Անդրկովկասի քաղաքացիական վարչության պետ և Խորհրդի գլխավոր վարչության նախագահ:

1852 թվականի օգոստոսի 22-ին 12 տարի ժամկետով նրան շնորհվում է տարեկան 2000 ռուբլի վարձավճար:

1853-1856 թվականների Ղրիմի (Արևելյան) պատերազմի ժամանակ, 1853 թվականի սեպտեմբերի 19-ին իշխան Բեբութովին հանձնարարվում է հատուկ կորպուսի հրամանատարությունը, որը տեղակայված էր Օսմանյան կայսրության հետ սահմանին՝ Ախալքալաքիից մինչև Երևանը ներառյալ:

Իշխան Բեբութովը անցնելով Արփաչայ գետը (*ներկայումս այստեղով է անցնում Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև պետական սահմանը: Հեղինակային ծանոթագրություն*), 7000 հոգուց բաղկացած հետևակով և 2800 հոգուց բաղկացած հեծելազորով, 32 թնդանոթով նոյեմբերի 10-ին Բաշքյադըքլար գյուղի մոտ գլխովին ջախջախում է ռեիս Աիմեդ փաշայի 36-հազարանոց կորպուսը և ռազմավար է վերցնում 24 թնդանոթ, 10 արկղ զինամթերք, դրոշը, 10 զինվորական տարբերանշան, ամբողջ ճամբարը և պաշարները:

Անատոլիայի բանակի ոչնչացման և այս փայլուն հաղթանակի համար 1853 թվականի դեկտեմբերի 6-ին իշխան Բեբութովը պարգևատրվում է **«Սուրբ Գեորգիի»** 2-րդ աստիճանի շքանշանով (շքանշանի խաչն ու ժապավենը նրան անձամբ գահաժառանգ Ալեքսանդր Նիկոլաևիչն է ուղարկում):

Իշխան Բեբութովի զինվորական գործունեության հաջողությունների գագաթնակետ կարելի է համարել 1854 թվականի հուլիսի 24-ի ճակատամարտը Քյուրուկ-Դարա գյուղի մոտ, որտեղ նա 18-հազարանոց ջոկատով ջախջախում է թուրքերի 60-հազարանոց բանակը՝ Մուշիր Զարիֆ Մուստաֆա փաշայի հրամանատարությամբ: Հակառակորդը փախուստով է փրկվում՝ մարտի դաշտում թողնելով 15 թնդանոթ, 16 արկղ զինամթերք, 2 դրոշ, 4 շտանդարտ, 20 զինանշան և 2000 գերի:

Այս փառահեղ հաղթանակը գովերգում էին բանակն ու ժողովուրդը, իսկ Նիկոլայ I կայսրը, ինչպես կովկասցի զինվորականներն են հիշում, երբ ստանում է հաղթանակի լուրը, այսպես է ասում. «Իշխան Բեբութովն ուզում է զարմացնել ինձ իր հաղթանակներով, իսկ ես կզարմացնեմ նրան իմ պարգևներով»:

**Քյուրուկ-Դարա գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտը հիշարժան օր դարձավ ռուսական հրթիռային ուժերի ապագա պատմության համար: Հատուկ կայանքներից արձակված հրթիռները, որոնք երկար փետրահետք էին թողնում իրենց հետևից, ահազանգ էին դառնում թուրք զինվորների համար: «Պոչավոր» հրթիռների պայթյունից հետո կորուստներին ավելանում էին բարոյական կորուստները: Հաղթանակն ուղեկցվում էր հրթիռների հանկարծակի կիրառմամբ և հրետանավորների բարձր վարպետությամբ:** Այս ճակատամարտում Բեբութովն աչքի ընկավ իսկական զորահրամանատարի արվեստով, բանակի և գործողությունների կառավարման բացառիկ հմտությամբ:

1854 թվականի օգոստոսի 9-ին Քյուրուկ-Դարայի մոտ ճակատամարտի համար Բեբութովին շնորհվել է Ռուսաստանի բարձրագույն պարգև՝ **«Սուրբ Անդրեաս Նախավկայի»** շքանշան (*սա առանձնահատուկ պարգև էր գեներալ-լեյտենանտի կոչում ունեցող զինվորականի համար: Հեղինակային ծանոթագրություն*), զենքով շքանշան նրան շնորհվել է 1855 թվականի օգոստոսի 5-ին:

1854 թվականի նոյեմբերի 29-ին իշխան Բեբութովին վստահվում

է զորքերի քաղաքացիական մասի կառավարումը, որոնք գործող կորպուսի մաս չէին հանդիսանում:

Մահից մեկ ամիս առաջ, փետրվարի 8-ին նա նշանակվում է Ռուսական կայսրության Պետական խորհրդի անդամ: Բացի այդ, նա ընտրվում է Կովկասի գյուղատնտեսական ընկերության փոխնախագահ և Ռուսական կայսերական աշխարհագրական ընկերության կովկասյան բաժանմունքի նախագահ:

Բեբութովն ապրել է Թիֆլիսում, որտեղ և մահացել է ստամոքսի քաղցկեղից: Թիֆլիսցիները մի ամբողջ շաբաթ հրաժեշտ էին տալիս նրան: Թաղվել է Խոջիվանքի հայկական գերեզմանատան Բեհբութովների տոհմական դամբարանում (*ավերվել է խորհրդային իշխանության օրոք, 1934 թվականին: Հեղինակային ծանոթագրություն*):

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Աննայի»** IV աստիճանի (արիության համար, 1813), II աստիճանի (ալմաստներով) և I աստիճանի (կայսերական թագով, 1851), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (ժապավենով, 1820), III, II (1845) և I աստիճանների շքանշաններով, **«Սպիտակ արծիվ»** (ադամանդակուռ, 1847) շքանշանով, **«Սուրբ Ալեքսանդր Նևսկու»** (1849, ադամանդակուռ՝ 1851) շքանշաններով:

Անբասիր ծառայության համար արժանացել է **«Սուրբ Գեորգիի»** ժապավենով XXV (1834) և XXX (1839) գերազանցության նշանների:

Ստացել է Պարսկաստանի **«Առյուծի և արևի»** II (1817), I աստիճանների (ալմաստներով, 1851) և **Շահ Նասր-էդ-Դինի դիմանկարով** (ալմաստազարդ, 1851) կրծքի աջ կողմի ժապավենով շքանշաններ:



**ԴԱՎԻԹ ՀՈՎՍԵՓԻ ԲԵԲՈՒԹՈՎ (ԲԵՀԲՈՒԹՅԱՆ), ԻՇԽԱՆ**
**(11.01.1793 - 11.03.1867)**

**ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ (26.08.1856)**

Ծնվել է Թիֆլիսում: Գեներալ Վասիլի Բեբութովի (1791-1858) կրտսեր եղբայրն է:

Սովորել է Թիֆլիսի ազնվականական դպրոցում: Երիտասարդ տարիքում մասնակցել է ավանդական ձեռնամարտերի՝ «մուշտի-կռիվների» մրցույթների: XIX դարի I կեսին այս խաղը թիֆլիսցի-ների շրջանում ամենատարածված ժողովրդական զվարճանքներից է եղել:

1811 թվականին զինվորական ծառայության է անցել Նարվայի վիշապազնդում, որն այդ ժամանակ Կախեթիում էր գտնվում և գործում էր լեռնաբնակների դեմ:

1812 թվականից եղել է սպա, մասնակցել է Բրեստ-Լիտովսկի արշավանքին, իսկ 1814 թվականին՝ Կրակովի արշավանքին:

1820 թվականին նա արդեն հեծելավաշտի առաջնորդ է եղել: Շուտով նրան տեղափոխել են Կովկասի առանձին կորպուս, իսկ 1830 թվականին մասնակցել է Ճար-Բելաքանի լեկերի ու օսերի դեմ արշավանքին: Նրան հանձնարարվել է վերահսկել մի շարք միջոցառումների իրականացումը, որոնք կապված էին Ադրիանապոլսի պայմանագրից (1829) հետո Օս-մանյան կայսրությունից քրիստոնյաների տեղահանման հարցերով կոմիտեի հետ: Այս առաջադրանքը նա բարեխղճորեն կատարել և 1831, 1832 թվականներին դարձել է Ղազի-Մուլլայի մուրիդների դեմ արշավանքի ամենաեռանդուն գործիչներից մեկը: Շարժվելով դեպի Չումկեսկենտի ամրոց, որը գրավել էր Ղազի-Մուլլան, Բեբութովը գրոհով գրավել է ամրոցը, ինչի համար պարգևատրվել է **«Սուրբ**

**Գեորգիի» IV աստիճանի շքանշանով (1834 թվականի դեկտեմբերի 3-ին)**, ավելի ուշ՝ 1832 թվականի հոկտեմբերի 17-ին, ղեկավարելով մահմեդական հեծելազորի 2-րդ գունդը, կազակներին և վրացական միլիցիան, առաջխաղացում է ունեցել Գիմրի աուլի դեմ գրոհելիս: Այստեղ է գտնվել Ղազի-Մուլլան 3 հազար լեռնաբնակների հետ: Վերջինս զոհվել է ռուսական բանակի հետ բախման ժամանակ:

1833 թվականին Բեբիութովը ստանձնում է Ճար-Բելաքանի մարզի կառավարչի և Նոր Զաքաթալա ամրոցի պարետի պաշտոնները, իսկ 1834 թվականին գեներալ Ֆ. Պասկևիչը նրան հանձնարարում է ստեղծել մահմեդական հեծելազորային գունդ և նրանց տեղափոխել Լեհաստանի թագավորություն:

1835 թվականի մարտի 2-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

Վարշավա մեկնելուց անմիջապես հետո, Պասկևիչի մահից առաջ Բեբութովը շատ բան է անում իր գունդը կազմավորելու և այն պատշաճ մակարդակի հասցնելու համար:

1846 թվականի փետրվարին նա իր գնդի հետ արշավում է դեպի Կրակով՝ օգնելու կոմս Ռիդիգերի զորքերին, որոնք կռվում էին լեհերի դեմ: Նույն թվականի փետրվարի 19-ին Բեբութովը մտնում է քաղաք, իսկ հետո իշխան Բարյատինսկու հետ հետապնդում է ապստամբ լեհերին մինչև Պրուսիայի սահման, որտեղ նրանք հանձնվում և վայր են դնում զենքերը:

**1846 թվականի մայիսի 17-ին նրան շնորհվում է գեներալ-մայորի զինվորական կոչում**, և նա մնում է իր գնդի հրամանատար:

1849 թվականի հունգարական արշավի ժամանակ մասնակցել է Վայցենի և Դեբրեցենի ճակատամարտերին, ինչի համար պարգևատրվել է **«Սուրբ Գեորգիի» III աստիճանի շքանշանով (1 սեպտեմբերի, 1849)**:

1853-1856 թվականների Ղրիմի (Արևելյան) պատերազմի սկսվելուց հետո, 1854 թվականի ապրիլին Ռուսաստանի կայսր Նիկոլայ I-ի հրամանով իշխան Բեբութովին հանձնարարվում է լինել իշխան Ֆ. Պասկևիչի մոտ, ով այդ ժամանակ նշանակվել էր Դանուբյան բանակի գլխավոր հրամանատար: Կալարամ գյուղ հասնելուն պես Բեբութովը 100 մուսուլմանների, կանոնավոր կազակական վաշտի և լեռնաբնակների կես վաշտի հետ մասնակցում է Սիլիստրիայի մոտ մղվող մարտերին:

Մայիսի 22-ին Բեբութովը մասնակցել է Արաբիե ամրոցի մոտ թուրքական զրոհը հետ մղելուն, իսկ մայիսի 28-ին՝ Պասկևիչի ուժեղացված հետախուզությանը՝ 10 գումարտակից կազմված ջոկատով, 1 հեծելազորային բրիգադով, 1 կազակական գնդով և 3 մարտկոցով: Բեբութովը մեծ հաջողությամբ գործում և ամեն կերպ խանգարում է հակառակորդին օգնություն ուղարկել Սիլիստրիա:

Այնուհետև Օլտենիցկի ջոկատի գլուխն անցած հետևել է հակառակորդին Տուրտուկայի Գրակ գյուղից մինչև Մաստիշ լիճ և Դանուբ գետի վրա ոչնչացրել է նրա 300 բեռնատար նավերը: Դանուբյան արշավի համար արժանացել է **«Ոսկե զենք»**-ի (ադամանդներով, արիության համար):

Պասկևիչի մահից և մուսուլմանների գնդի՝ Կովկաս վերադառնալուց հետո Բեբութովը վերադարձել է Վարշավա՝ որպես I բանակի գլխավոր հրամանատար: 1861-1867 թվականներին եղել է Վարշավայի պարետ:

Մահացել է Վարշավայում: Թաղված է Վարշավայի Վոլսկիի գերեզմանոցում:

Իշխան Բեբութովը ինքնակենսագրական «նոթեր» է գրել, որոնք մշակել և տպագրության է պատրաստել «Զինվորական ժողովածուի» աշխատակիցներից մեկը:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է **«Ոսկե զենք»**-ով (արիության, XXV-ամյա անբասիր ծառայության համար, 1857), **«Ոսկե զենք»**-ով (արիության, L-ամյա անբասիր ծառայության համար, 1865), Ռուսաստանի **«Սուրբ Աննայի»** II աստիճանի և I աստիճանի (կայսերական թագով և սրերով, 1851), **«Սուրբ Ստանիսլավի»** II աստիճանի (1848) և I աստիճանի, **«Սուրբ Վլադիմիրի»** III աստիճանի և II աստիճանի (1849), **«Սպիտակ արծիվ»** (1862), **«Սուրբ Ալեքսանդր Նևսկու»** (1849, ադամանդակուռ՝ 1865) շքանշաններով:

Ստացել է նաև արտասահմանյան պարգևներ՝ պարսկական **«Առյուծի և արևի»** II աստիճանի (աստղով, 1857) շքանշան, պրուսական **«Կարմիր արծիվ»** (1864) շքանշան, ավստրոհունգարական **«Սուրբ Լեոպոլդ»** (1850) շքանշան:

Բացի նշվածից, պարգևատրվել է նաև Ալեքսանդր II կայսեր անվանագրով ոսկե գլանակատուփով:



**ՆԻԿՈԼԱՅ ՎԱՍԻԼԻԻ ԲԵԲՈՒԹՈՎ (ԲԵՀԲՈՒԹՅԱՆ), ԻՇԽԱՆ**
**(08.05.1839 - 09.02.1904)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (04.06.1895)**

Գեներալ Վասիլի Բեբութովի (1791-1858) որդին է, ծնվել է Թիֆլիսում:

1858 թվականին ավարտել է պաժերի կորպուսը, որտեղ ծառայել է որպես հանձնարարությունների գծով պաժ: Նույն թվականից ծառայության է անցել գվարդիայում:

1877-1904 թվականներին ծառայել է Կովկասի ռազմական օկրուգի զորքերի բանակային հետևակային շարքերում:

Մասնակցել է 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմին:

1883 թվականի դեկտեմբերի 6-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1904 թվականի փետրվարի 9-ին կաթվածահար է եղել: Մահացել է առանց գիտակցության գալու: Ժամանակակիցների հուշերի համաձայն՝ եղել է մարդասեր, պարկեշտ անձնավորություն:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Աննայի»** III աստիճանի (1896), **«Սուրբ Ստանիսլավի»** III աստիճանի (սրերով և ժապավենով, 1864), II աստիճանի (1906) և I աստիճանի, **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (XXV-ամյա անբասիր ծառայության համար, 1895) և III աստիճանի (1889) շքանշաններով:

Ստացել է Պարսկաստանի **«Առյուծի և արևի»** III, II և I աստիճանների շքանշաններ:

Թաղվել է Թիֆլիսում, Խոջիվանքի գերեզմանատան Բեբութովների տոհմական դամբարանում (*ավերվել է խորհրդային իշխանության օրոք, 1934 թվականին: Հեղինակային նշում*):

Княгиня Софія Васильевна Гуріели съ дѣтьми извѣщаетъ съ глубокимъ прискорбіемъ родныхъ и знакомыхъ о кончинѣ дорогого брата своего, генералъ-майора

**князя Николая Васильевича Бебутова.**

Панихиды ежедневно въ 7 часовъ вечера. Выносъ тѣла послѣдуетъ въ субботу, 14-го февраля, въ 11 часовъ утра, въ Ванкскій каѳедральный соборъ, а оттуда на Ходжеванкское кладбище. 181 (5) 1.

Իշխան Ն. Վ. Բեբութովի մահազդը «Կավկազ» թերթից



Բեբութովների իշխանական տոհմի զինանշանը



**ԻՍԱՀԱԿ ԱԲՐԱՀԱՄԻ ԵՎԱՆԳՈՒԼՈՎ (ԵՎԱՆԳՈՒԼՅԱՆ)**
**(1814 - 1875)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (24.03.1860)**

Ծնվել է Թիֆլիսում, հայ ազնվականի ընտանիքում:

Մասնակցել է 1853-1856 թվականների Ղրիմի (Արևելյան) պատերազմին:

1856-1860 թվականներին զորակոչվել է Կովկասյան բանակ: Ծառայել է Կովկասյան ռազմական օկրուգի Գլխավոր շտաբում: Հաշվառվել է բանակի հետևակում, իսկ ավելի ուշ՝ բանակային հեծելազորում:

1875 թվականին դուրս է եկել զինվորական ծառայությունից մունդիրով և լրիվ թոշակի ապահովմամբ:

Թաղվել է Թիֆլիսում, Վերեի գերեզմանատանը:



## ԱՐՏԵՄ ՍՈՂՈՄՈՆԻ ՎԱՐԴԱՆՈՎ
**(15.02.1855 - 25.10.1937)**

**ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ (31.05.1913)**

Ծնվել է Թիֆլիսում, հայ ազնվականի ընտանիքում:

1872 թվականին ավարտել է Թիֆլիսի ռեալական ուսումնարանը, 1875 թվականին՝ Միխայիլովյան հրետանային ուսումնարանը, 1882 թվականին՝ Միխայիլովյան հրետանային ակադեմիան, 1895 թվականին՝ սպայական հրետանային դպրոցը:

1872 թվականից ծառայել է բանակում, 1875 թվականից եղել է սպա:

Մասնակցել է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին, երկու անգամ վիրավորվել է: Պատերազմից հետո նշանակվել է Կովկասյան ռազմական օկրուգի ուսումնահրետանային հրաձգարանի պետի օգնական:

1895-1898 թվականներին եղել է 39-րդ հրետանային բրիգադի 1-ին մարտկոցի հրամանատար:

1898-1904 թվականներին եղել է Կովկասյան ռազմական օկրուգի 2-րդ ուսումնական հրետանային հրաձգարանի պետ:

1904-1905 թվականներին եղել է 59-րդ հրետանային բրիգադի 1-ին դիվիզիոնի պետ:

1905-1907 թվականներին եղել է ականանետների 3-րդ հրետանային դիվիզիոնի հրամանատար:

1907-1908 թվականներին եղել է 16-րդ հրետանային բրիգադի հրամանատար:

1908-1912 թվականներին եղել է 27-րդ հրետանային բրիգադի հրամանատար:

1900 թվականի դեկտեմբերի 6-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

**1907 թվականի մայիսի 31-ին նրան շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում:**

1912-1916 թվականներին եղել է XIV բանակային կորպուսի հրետանու տեսուչ:

Մասնակցել է 1914-1918 թվականների Առաջին համաշխարհային պատերազմին:

1916 թվականի ապրիլի 16-ին նշանակվել է 1-ին բանակի հրետանու տեսուչ:

1919 թվականի հուլիսի 2-ից ընդգրկվել է Հյուսիսային Ռուսաստանի զինված ուժերի գլխավոր հրամանատարի շտաբի պահեստազորում, այնուհետև՝ Սևծովյան օկրուգի զորքերի պահեստազորում:

1919 թվականի դեկտեմբերից ղեկավարել է Խերսոն քաղաքի միջգերատեսչական ռեկվիզիցիոն հանձնաժողովը:

1920 թվականից մինչև Ղրիմի ամբողջական տարհանումը ծառայել է գլխավոր հրամանատար Վրանգելի «Ռուսական բանակի» շտաբի տպագրության բաժնում:

«Իստեռն-Վիկտոր» նավով տարհանվել է Կոտոր (Հարավսլավիա): 1929 թվականին հիվանդության պատճառով կորցրել է երկու ոտքերը, բայց առողջ դատողությունը պահպանվել է մինչև կյանքի վերջ:

Մահացել է Բանյա Լուկա քաղաքում (Հարավսլավիա), այնտեղ էլ թաղվել է զինվորական պատիվներով:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Աննայի»** IV աստիճանի (արիության համար, 1877), III աստիճանի (սրերով և ժապավենով, 1879), II աստիճանի (1895) և I աստիճանի (սրերով, 1915) շքանշաններով, **«Սուրբ Ստանիսլավի»** III աստիճանի (սրերով ու ժապավենով, 1878), II աստիճանի (1890) և I աստիճանի (1910) շքանշաններով, **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (1895), III աստիճանի (1904) և II աստիճանի (սրերով, 1915) շքանշաններով, **«Սպիտակ արծիվ»** (սրերով, 1916) շքանշանով:



**ՄԻԽԱՅԻԼ ՆԻԿՈԼԱՅԻ ԶՈՒՐԱԲՈՎ**
**(01.02.1868 - 1918 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (06.12.1916)**

Ծնվել է Թիֆլիսի նահանգում, ազնվականի ընտանիքում:

Ավարտել է Թիֆլիսի կադետական կորպուսը, Միխայիլովյան հրետանային ուսումնարանը և Միխայիլովյան հրետանային ակադեմիան՝ 1894 թվականին (1-ին աստիճանով):

1886 թվականից ծառայել է բանակում:

1895-1900 թվականներին աշխատել է Սանկտ Պետերբուրգի փամփուշտների գործարանում՝ որպես պետի ավագ օգնական:

1900-1907 թվականներին եղել է նույն գործարանի արտադրամասերի վարիչ:

1906 թվականի հոկտեմբերի 7-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1907-1909 թվականներին եղել է պահեստազորում:

1909-1910 թվականներին ծառայել է Իժևսկի զենքի և պողպատաձուլական գործարանում՝ որպես արտադրամասերի վարիչ:

1911-1916 թվականներին եղել է Լուգանսկի փամփուշտների գործարանի ղեկավարի օգնական՝ տեխնիկական ոլորտում:

Ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Աննայի»** II աստիճանի (1913) և **«Սուրբ Ստանիսլավի»** II աստիճանի (1911) շքանշաններով:



**ՎԱՍԻԼԻ ՄԻԽԱՅԻԼԻ**
**ԹԱՄԱՄՇԵՎ (ԹԱՄԱՄՇՅԱՆ)**
**(26.07.1859 - 01.03.1932)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (06.12.1913)**

Ծնվել է Թիֆլիսում: Հայտնի հասարակական գործիչ, 1-ին գիլդիայի վաճառական, առևտրային հարցերով խորհրդական Միխայիլ (Միքայել) Թամամշևի (Թամամշյան) որդին է:

1878 թվականին ավարտել է Թիֆլիսի հետևակային յունկերական ուսումնարանը:

1877-1878 թվականներին մասնակցել է ռուս-թուրքական պատերազմին: Պատերազմի տարիներին եղել է 140-րդ հետևակային գնդի սպա:

1882-1890 թվականներին ծառայել է Կովկասյան ռազմական օկրուգի զորքերի հրամանատարի մոտ՝ որպես հանձնարարությունների գծով սպա:

1899-1901 թվականներին ծառայել է Կովկասյան ռազմական օկրուգի զորքերի հրամանատարի մոտ՝ որպես հանձնարարությունների գծով օբեր-սպա:

1903-1909 թվականներին ծառայել է Կովկասյան ռազմական օկրուգի շտաբում, իսկ 1908 թվականից զուգահեռաբար Թիֆլիսի գանձապետական թատրոնի տնօրենն է եղել:

1907 թվականի դեկտեմբերի 6-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1909-1913 թվականներին եղել է Կովկասյան ռազմական օկրուգի փոխարքային կից հանձնարարությունների գծով շտաբս-սպա:

1914-1917 թվականներին ծառայել է Կովկասի փոխարքային կից Առաջին համաշխարհային պատերազմի ռազմական գործողությունների կովաբեմից փախստականների բնակեցման հարցերով վարչու-

թյան գլխավոր լիազոր:

1916 թվականից ծառայել է կովկասյան բանակի գլխավոր հրամանատարի մոտ՝ որպես հանձնարարությունների գծով գեներալ:

1910 թվականից եղել է Թիֆլիսի նահանգի բանտերի հոգաբարձուների կոմիտեի պատվավոր անդամ-տնօրեն, Թիֆլիսի ձիասպորտային ընկերության վարչության անդամ և Կովկասյան կերպարվեստի ընկերության փոխնախագահ:

Մարտական վաստակի համար պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Աննայի»** II աստիճանի (1912) շքանշանով, **«Սուրբ Ստանիսլավի»** III աստիճանի (1888) և II աստիճանի (1910) շքանշաններով, **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (XXV-ամյա անբասիր ծառայության համար, 1908) շքանշանով:

Ստացել է Պարսկաստանի **«Առյուծի և արևի»** I աստիճանի շքանշան, Բուխարայի **«Ծագող արևի»** II աստիճանի (1893), Իտալիայի թագի **«Ասպետական խաչ»** (1891) շքանշաններ:

1918 թվականից վտարանդու կարգավիճակով գտնվել է Ֆրանսիայում: Թաղված է Ֆրանսիայում:



**ԻՍԱՀԱԿ ԱՐՏԵՄԻ ԹՈԽԱԹԵԼՈՎ**
**(08.02.1853 - 19.10.1918)**

**ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ (06.12.1910)**

Ծնվել է Թիֆլիսում: 1873 թվականին ավարտել է Թիֆլիսի ռեալական ուսումնարանը, իսկ 1875 թվականին՝ Կոնստանդինյան 2-րդ ռազմական վարժարանը 1-ին աստիճանով:

Զինվորական ծառայությունը սկսել է Ախալցիխեի պահակային հրետանուց: Մասնակցել է 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմին:

1884-1896 թվականներին եղել է վաշտի հրամանատար:

1896-1898 թվականներին ղեկավարել է Միխայիլովյան պահակային հրետանու (քաղաք Բաթոմի, այժմ՝ Բաթումի) 1-ին հրետանային գումարտակը:

1898 թվականին նշանակվել է Կերչի պահակային հրետանու գործնական վարժանքների ղեկավար:

1898-1906 թվականներին եղել է Գուանդունի պահակային հրետանու գործնական վարժանքների ղեկավար:

Մասնակցել է 1900-1901 թթ. ռուսական բանակի չինական արշավանքին և 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմին: Պատերազմի ժամանակ նա իր անձնակազմով գերի է ընկել հակառակորդին:

1906 թվականի դեկտեմբերի 6-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1906 թվականին նշանակվել է Վիբորգի պահակային հրետանու հրամանատար:

1906 թվականի հոկտեմբերին նշանակվել է Վլադիվոստոկի պահակային հրետանային 2-րդ բրիգադի հրամանատար:

1906 թվականից ապրել է Պետերբուրգում:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է **Մարտական շքանշանի IV աստիճանի Պատվո նշանով** (1878), **«Սուրբ Գեորգիի»** IV աստիճանի (24 հոկտեմբերի, 1904) շքանշանով, Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** III աստիճանի (1888) և II աստիճանի (1894) շքանշաններով, **«Սուրբ Աննայի»** II աստիճանի (1883) շքանշանով, **«Սուրբ Վլադիմիրի»** III աստիճանի (1901) շքանշանով:

Արժանացել է մի շարք արտասահմանյան պարգևների:

Զոհվել է Պյատիգորսկ քաղաքում 1918 թվականի հոկտեմբերի 19-ին, «Կարմիր ահաբեկչության» ժամանակ:



## ՍԻՄՈՆ ԳՐԻԳՈՐԻ ԿԱՐՏԱՇՈՎ
## (01.02.1856 - 1917 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ)

## ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (30.11.1916)

Ծնվել է Թիֆլիսում: Սովորել է Թիֆլիսի գիմնազիայում:

1876 թվականից անցել է զինվորական ծառայության: Ավարտել է Թիֆլիսի հետևակային յունկերական ուսումնարանը և նշանակվել է Ախալցիխեի 162-րդ հետևակային գնդում:

Մասնակցել է 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմին: Պատերազմից հետո ավարտել է սպայական հրաձգության դպրոցը: Եղել է վաշտի հրամանատար: Մասնակցել է ռուս-ճապոնական պատերազմին (1904-1905): Պատերազմի ընթացքում վիրավորվել և վերագրվել է 2-րդ կարգի վիրավորների շարքին:

1906 թվականի հոկտեմբերի 27-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում: Առաջին համաշխարհային պատերազմից առաջ եղել է պահեստազորրում: Պատերազմի սկսվելուն պես նշանակվել է գեներալ՝ Կիևի ռազմական օկրուգի շտաբի ենթակայության ներքո:

1915 թվականի նոյեմբերի 28-ին նշանակվել է 22-րդ պահեստազորային հետևակային բրիգադի պետ:

1917 թվականի մայիսի 20-ին ժամանակավոր կառավարության կողմից ազատվել է պաշտոնից:

Մարտական վաստակի համար պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Աննայի»** IV աստիճանի (արիության համար, 1878) և II աստիճանի (սրերով, 1905), **«Սուրբ Ստանիսլավի»** II աստիճանի (1897), II աստիճանի (սրերով, 1905) և I աստիճանի (1916), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (XXV-ամյա անբասիր ծառայության համար, 1902) և III աստիճանի (1915) շքանշաններով:



**ԳԵՈՐԳԻ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ**
**ԿԵԹԽՈՒԴՈՎ**
**(24.10.1868 - 1916 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (06.12.1916)**

Ծագումով Թիֆլիսի նահանգի ազնվականական տոհմից է:

Զինվորական ծառայության է անցել 1887 թվականից:

1889 թվականին ավարտել է Պավլովսկի 1-ին ռազմական ուսումնարանը (1-ին աստիճանով): Զինվորական ծառայությունը սկսել է Եկատերինոսլավի լեյբ-գրենադերների 1-ին գնդում:

Նրան հաջորդաբար շնորհվել են պոդպորուչիկի (1888), գվարդիայի պոդպորուչիկի (1889), պորուչիկի (1893), շտաբս-կապիտանի (1899) և կապիտանի (1901) զինվորական կոչումներ: Եղել է գնդի ադյուտանտ, վաշտի և գումարտակի հրամանատար:

1906 թվականին ծառայության է ընդունվել կայսերական շքախմբում:

1909 թվականի մարտի 29-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1911-1915 թվականներին եղել է լեյբ-գվարդիայի 3-րդ հրաձգային գնդի շտաբի սպա: Իր գնդով մասնակցել է 1914-1918 թվականների Առաջին համաշխարհային պատերազմին:

1915-1916 թվականներին եղել է Հելսինգֆորսի պարետ:

Պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** III (1896), II (1906) և II աստիճանների (սրերով, 1915), **«Սուրբ Աննայի»** III (1900), II աստիճանների (1910, սրերով՝ 1915), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (սրերով և ժապավենով, 1913) շքանշաններով: Ստացել է նաև արտասահմանյան երկրների պարգևներ, այս թվում՝ Բուլղարիայի **«Սուրբ Ալեքսանդրի»** V աստիճանի (1896) շքանշան, Ֆրանսիայի «**Պատվո լեգեոնի ասպետական խաչ**» (1897), **«Ռումինական աստղի»** IV աստիճանի (1898) շքանշան, **«Իտալական թագի սպաների խաչ»** (1902):



**ԱԴԱՄ ՍՈՂՈՄՈՆԻ ԿՈՐԳԱՆՈՎ (ՂՈՐՂԱՆՅԱՆ)**
**(19.06.1846 - 14.10.1914)**

**ՀԵԾԵԼԱԶՈՐԻ ԳԵՆԵՐԱԼ (10.08.1911)**

Ծնվել է Թիֆլիսում, գեներալ Սողոմոն Կորգանովի (Ղորղանյան) որդին է: Ավարտել է կադետական 2-րդ կորպուսը և Պավլովսկի 1-ին ռազմական ուսումնարանը:

Զինվորական ծառայության է անցել 1863 թվականից:

Ծառայել է Կովկասյան ուսումնական վաշտում, հեծելազորային ուսումնական էսկադրոնում: Եղել է հեծելավաշտի և դիվիզիոնի առաջնորդ:

Մասնակցել է 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմին և ռուսական բանակի միջինասիական Ախալ-Թեքեի արշավանքին: Եղել է մերձկասպյան տարածաշրջանի զորքերի հրամանատարի մոտ:

1889 թվականի փետրվարի 15-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1889-1891 թվականներին եղել է հեծելազորային կադրային պահեստազորի պետ:

1891-1899 թվականներին ղեկավարել է Աստրախանի 22-րդ վիշապագունդը:

1899-1904 թվականներին ղեկավարել է հեծելազորային 3-րդ դիվիզիայի 1-ին բրիգադը:

1904-1905 թվականներին ղեկավարել է հեծելազորային 11-րդ դիվիզիան:

**1905 թվականի ապրիլի 17-ին նրան շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում:**

1905-1908 թվականներին եղել է հեծելազորային 9-րդ դիվիզիայի պետ:

**1908 թվականի ապրիլի 17-ին նրան շնորհվել է գեներալ-լեյտենանտի զինվորական կոչում:**

1908-1913 թվականներին ղեկավարել է Կիևի ռազմական օկրուգի XII բանակային կորպուսը:

1913 թվականին տարիքի բերումով, մունդիրով և թոշակի ապահովմամբ ազատվել է զինվորական ծառայությունից:

Թաղվել է Թիֆլիսում, Վերեի գերեզմանոցի տոհմական դամբարանում:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** II աստիճանի (1878), I աստիճանի (1902), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի և III աստիճանի (1895) շքանշաններով:



**ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԿՈՐԳԱՆՈՎ (ՂՈՐՂԱՆՅԱՆ)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (14.07.1884)**

Ծնվել է Թիֆլիսում:

1853 թվականին ավարտել է Պավլովսկի կադետական կորպուսը, 1858 թվականին՝ Գլխավոր շտաբի ակադեմիան: Ծառայել է Գլխավոր շտաբում:

1871 թվականից եղել է գնդապետ: Ծառայել է Մերձամուրյան ռազմական օկրուգում՝ որպես շտաբի պետ:

Մասնակցել է 1853-1856 թվականների Ղրիմի (Արևելյան) և 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմներին:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Աննայի»** IV աստիճանի (արիության համար, 1855), II աստիճանի (1873) և I աստիճանի (1889), **«Սուրբ Ստանիսլավի»** I աստիճանի (1886) և **«Սուրբ Վլադիմիրի»** III աստիճանի (սրերով, 1879) շքանշաններով:



**ԳԱԲՐԻԵԼ ԻՎԱՆԻ ԿՈՐԳԱՆՈՎ (ՂՈՐՂԱՆՅԱՆ)**
**(12.01.1806 - 04.06.1879)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (15.05.1862)**

Ծնվել է Թիֆլիսում, գեներալներ Սողոմոն և Հովսեփ Կորգանովների (Ղորղանյան) եղբայրն է:

Ավարտել է Թիֆլիսի ազնվականական ուսումնարանը և Սանկտ Պետերբուրգի ինժեներական ուսումնարանը: Ինժեներական ուսումնարանն ավարտելուց հետո վերադարձել է Վրաստան և ծառայության է կոչվել 21-րդ հրետանային բրիգադում:

Մասնակցել է 1826-1828 թվականների ռուս-պարսկական, 1828-1829 թվականների ռուս-թուրքական և 1853-1856 թվականների Ղրիմի (Արևելյան) պատերազմներին: Վերջին պատերազմի ժամանակ ղեկավարել է Կարսի բերդի զինաթափման ռազմական գործողությունը: Եղել է Քութաիսիի նահանգի կանոնավոր գումարտակների տեսուչ:

1851-1853 թվականներին ղեկավարել է հրետանային լեռնային բրիգադը: Ընդհանուր առմամբ նա 40 տարի ծառայել է բանակում՝ անցնելով ֆոյերվերկերից մինչև Կովկասյան բանակի հրետանու պետ ճանապարհը: 1862 թվականին մունդիրով և թոշակի ապահովմամբ անցել է պահեստազոր: Մարտական վաստակի համար պարգևատրվել է **«Սուրբ Գեորգիի» IV աստիճանի շքանշանով (18 նոյեմբերի, 1849)**:

Լուսավոր հետք է թողել որպես հասարակական գործիչ և բարերար:

XIX դարի 30-ական թվականների վերջին նա որոշում է Թիֆլիսի բնակչությանը խմելու ջրով ապահովելու համար ջրամատակարարման ջրմուղ կառուցել: Իր միջոցներով նա Եկատերինբուրգում գնում է տասնյակ տոննաներով թուջե մեծ տրամագծով խողովակներ, իսկ Ցարիցինում՝ ջրի թանկարժեք պոմպ:

1843 թվականին Թիֆլիսում նա կառուցում է Անդրկովկասի թուջի առաջին ձուլարանը, որտեղ ձուլվել են ջրամատակարարման համար անհրաժեշտ խողովակները: 15 կմ երկարությամբ ջրատար խողովակներով խմելու ջուր էր մատակարարվում Ալեքսանդրյան այգուն ու բազմաթիվ այլ այգիների ու պուրակների, ինչպես նաև գանձապետական ու մասնավոր տների: Գտնելով Տղիբուլիի ածխի հանքավայրերը, 1850 թվականին նա ածուխ է հասցնում Թիֆլիս՝ այն ներդնելով հանրային տնտեսության ծառայության մեջ: Նույն թվականին նա առաջին անգամ Քուռ գետով Բորջոմիի անտառներից Թիֆլիս է հասցնում փայտանյութ՝ Թիֆլիսի շինարարներին ազատելով Ռուսաստանի հեռավոր քաղաքներում փայտանյութ գնելու հետ կապված դժվարություններից:

Նրա միջոցներով են կառուցվել Կովկասի ռազմական սանիտարական վարչության շենքը (այժմ՝ Լերմոնտովի փողոց), Կովկասի I բանակային կորպուսի շտաբի շենքը (այժմ՝ Գրիբոյեդովի փողոց), Թիֆլիսի ֆիլհարմոնիկ ընկերությանը կից երաժշտական դպրոցի շենքը (այժմ՝ Ախվլեդիանիի փողոց), մի շարք դպրոցներ և գրադարաններ: Մինչև 1921 թվականը իր անունը կրող փողոցում (այժմ՝ Քիաչելիի փողոց) նա կառուցել է բնակելի տների մի ամբողջ թաղամաս: Թիֆլիսցիները դառն արցունքներով սգացել են գեներալ Կորգանովի մահը: Այս առիթով քաղաքում մեկշաբաթյա սուգ է հայտարարվել: Քաղաքագլուխ Ա. Մատինովը բազմահազարանոց սգո արարողության ժամանակ այս խոսքերով է դիմել համաքաղաքացիներին. **«Գաբրիել Իվանովիչը Թիֆլիսի պատվավոր քաղաքացի էր, քաջ զորավար և գեներալ, ով ոչ միայն իր ողջ հսկայական հարստությունը, այլև իր կյանքի լավագույն օրերն ու տարիները նվիրեց իր սիրելի քաղաքի բնակիչների կյանքն ու կենցաղը բարելավելու գործին»:**


Наталія Аветовна и Григорій Гавріиловичъ **Коргановы**, съ душевнымъ прискорбіемъ извѣщая о кончинѣ: первая мужа, второй отца, артиллеріи генералъ-маіора Гавріила Ивановича **Корганова**, просятъ родныхъ и знакомыхъ пожаловать на выносъ тѣла въ четвергъ, 7 іюня, въ $9^{1}/_{2}$ часовъ утра, изъ собственнаго дома на Ольгинской улицѣ, въ Зиркинандскую церковь, около „Кружка“. 908 (2) 1.

Գեներալ-մայոր Գ. Ի. Կորգանովի մահազդը «Կավկազ» թերթից



**ԳՐԻԳՈՐ ԳԱԲՐԻԵԼԻ ԿՈՐԳԱՆՈՎ (ՂՈՐՂԱՆՅԱՆ)**
**(03.12.1844 - 07.07.1914)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (15.03.1906)**

Ծնվել է Թիֆլիսում, գեներալ Գաբրիել Կորգանովի (1806-1879) որդին է:

1866 թվականին ավարտել է Թիֆլիսի ռազմական գիմնազիան: 1868 թվականին սպայական քննություն է հանձնել Միխայիլովյան հրետանային ուսումնարանում:

1872-1874 թվականներին եղել է պահեստազորում:

1881-1892 թվականներին եղել է Կովկասյան ռազմական օկրուգի հրետանային վարչության հրետանային զինամթերքի վերանորոգող:

1891-1892 թվականներին եղել է Կովկասյան ռազմական օկրուգի Թիֆլիսի նահանգի հրետանային արտադրամասերի ղեկավարի օգնական:

1892-1899 թվականներին եղել է Թիֆլիսի նահանգի հրետանային արտադրամասերի ղեկավար:

1895 թվականի դեկտեմբերի 6-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1899-1906 թվականներին ծառայության է նշանակվել գլխավոր հրետանային վարչությունում:

1906-1914 թվականներին ծառայել է գլխավոր հրետանային վարչության տնօրինության ներքո:

1914-1918 թվականներին Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ղեկավարել է Պերեյասլավի վիշապագունդը, ապա՝ Տվերի 43-րդ վիշապագունդը:

1890-1910 թվականներին եղել է Թիֆլիսի նահանգի բանտերի հոգաբարձուների կոմիտեի տնօրենների խորհրդի անդամ-տնօրեն:

1902-1904 թվականներին եղել է Թիֆլիսի քաղաքային ժողովի անդամ:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** III աստիճանի (1885), **«Սուրբ Աննայի»** III աստիճանի (1893) շքանշաններով:

Պարգևատրվել է նաև պարսկական **«Առյուծի և արևի»** III աստիճանի շքանշանով (1873):



7-го іюля, въ 2 часа ночи, послѣ тяжкой и продолжительной болѣзни, скончался генералъ-майоръ въ отставкѣ

**Григорій Гавріиловичъ Коргановъ,**

о чемъ съ глубокимъ прискорбіемъ извѣщаютъ жена, дѣти и внукъ покойнаго. Панихида на квартирѣ (Ольгинская, 7), во вторникъ и въ среду, въ 8 час. вечера. Выносъ тѣла въ четвергъ, 10-го іюля, въ 10 ч. утра, въ Зиркинянскую церковь (Грибоѣдовская ул.), а оттуда на Верійское армяно-григоріанское кладбище.

Գեներալ-մայոր Գ. Գ. Կորգանովի մահազդը «Կավկազ» թերթից



**ՀՈՎՍԵՓ ԻՎԱՆԻ ԿՈՐԳԱՆՈՎ (ՂՈՐՂԱՆՅԱՆ)**
**(1811 - 02.1870)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (21.01.1860)**

Ծնվել է Թիֆլիսում: Գեներալ Սողոմոն Կորգանովի (Ղորղանյան) եղբայրն է:

1834 թվականից ծառայել է բանակում:

Մարտական վաստակի համար պարգևատրվել է **«Սուրբ Գեորգիի» IV աստիճանի շքանշանով (25 հունվարի, 1842 թ.)**:

1852 թվականին, Նուխու գավառապետի պաշտոնը զբաղեցնելիս սպանել է Շամիլի օգնական Հաջի Մուրադին, ինչի համար շնորհակալության է արժանացել անձամբ Նիկոլայ I կայսեր կողմից:

Մասնակցել է 1853-1856 թվականների Ղրիմի (Արևելյան) պատերազմին:

1852 թվականի դեկտեմբերի 6-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1852-1860 թվականներին եղել է Աբխազիայի զորքերի հրամանատար:

1862 թվականին մունդիրով և թոշակի ապահովմամբ դուրս է եկել զինվորական ծառայությունից:

Թաղվել է Թիֆլիսում, Վերեի գերեզմանոցի տոհմական դամբարանում:



## ՍՈՂՈՄՈՆ ԻՎԱՆԻ
## ԿՈՐԳԱՆՈՎ (ՂՈՐՂԱՆՅԱՆ)

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (21.01.1860)**

Գեներալներ Ադամ (1846-1914) և Հովսեփ (1811-1870) Կորգանովների (Ղորղանյաններ) եղբայրն է: Ծնվել է Թիֆլիսում:

Մասնակցել է 1853-1856 թվականների Ղրիմի (Արևելյան) պատերազմին:

1859 թվականից ղեկավարել է լեկերի սահմանագծի ձախ եզրը:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** I աստիճանի (սրերով, 1860) շքանշանով:

Թաղվել է Թիֆլիսում, Վերեի գերեզմանոցի տոհմական դամբարանում:



## ԳԵՈՐԳԻ ՌԱՖԱՅԵԼԻ ԿՈՒԶԱՆՈՎ

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (08.08.1798)**

Ծնվել է ազնվական Ռաֆայել Կուզանովի ընտանիքում, ով Վրաստանից Ռուսաստան է տեղափոխվել 1724 թվականին Քարթլիի թագավոր Վախթանգ VI-ի շքախմբի հետ:

Ծնվել է Ռուսաստանում: 1757 թվականից ծառայել է բանակում, ինտենդանտական գերատեսչությունում:

1790 թվականից եղել է գնդապետ: Զինվորական ծառայության մեջ է եղել մինչև 1799 թվականի նոյեմբերը:



**ԱԼԵՔՍԱՆԴՐ ԻՎԱՆԻ ԼԱԶԱՐԵՎ**
**(06.05.1858 - 29.01.1913)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (06.12.1910)**

Գեներալ-լեյտենանտ Իվան Լազարևի (1820-1879) որդին է: Ծնվել է Թիֆլիսում:

1876 թվականին ավարտել է Մոսկվայի 1-ին ռազմական գիմնազիան, 1878 թվականին՝ Նիկոլաևյան հեծելազորային ուսումնարանը (1-ին աստիճանով):

1879 թվականին հոր հետ մասնակցել է ռուսական զորքերի արշավանքին դեպի Միջին Ասիա (Ախալ-Թեքեի արշավանք): Ծառայել է կայսերական լեյբ-գվարդիայի ուլանների գնդում:

1881-1884 թվականներին ծառայել է Թիֆլիսի հետևակային յունկերական ուսումնարանում, եղել է յունկերների դաստիարակ-սպա:

1884-1886 թվականներին ծառայել է Թիֆլիսի հետևակային յունկերական ուսումնարանում՝ որպես 2-րդ վաշտի դաստիարակ-սպա:

1886 թվականին եղել է սպա Ելիզավետպոլի գավառի ռազմական պետի մոտ:

1886-1887 թվականներին եղել է Ելիզավետպոլի գավառի ռազմական ղեկավար:

1887-1893 թվականներին ընդգրկվել է Կովկասյան ռազմական օկրուգի շտաբի բանակային հեծելազորում:

1893-1906 թվականներին միացել է Կովկասյան ռազմական օկրուգի զորքերին:

1904 թվականի դեկտեմբերի 6-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1906-1910 թվականներին ծառայել է Կովկասի փոխարքայի ռազմական-ժողովրդական վարչակազմում՝ որպես հանձնարարությունների գծով գեներալ:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Աննայի»** III աստիճանի, **«Սուրբ Ստանիսլավի»** II աստիճանի (1909), **«Սուրբ Վլադիմիրի»** III աստիճանի (1912) շքանշաններով:

XIX դարի 80-ականների կեսերից հայտնի է եղել որպես ձիաբույծ և մարզիկ: 25 տարի եղել է Մոսկվայի կայսերական ձիասպորտի ընկերության ավագ և իսկական անդամ՝ զբաղեցնելով հատուկ պաշտոններ այս ընկերության կազմում: Մահից առաջ առաջադրվել է Թիֆլիսի ձիասպորտի ընկերության փոխնախագահի պաշտոնում: Մահացել է Թիֆլիսում, պլևրիտից:

Թաղվել է Թիֆլիսում, զինվորական պատիվներով, Վանքի հայոց տաճարի գերեզմանատան տոհմական դամբարանում (*այժմ՝ Աթոնելի փողոց, տաճարն ու գերեզմանատունը ավերվել են խորհրդային շրջանում, 1934 թվականին: Այժմ այդ տարածքում են գտնվում Թբիլիսիի թիվ 104 հայկական հանրային դպրոցը*, «Վրաստան» թերթի խմբագրությունը և Վրաստանի Մշակույթի նախարարությունը: Հեղինակային ծանոթագրություն*):

---

* *Այսօրվա դրությամբ Վրաստանում գործում է 119 հայկական դպրոց, ծթ.՝ հեղինակների:*

**ԻՎԱՆ ԵԳՈՐԻ (ԳԵՈՐԳԻԻ)**
**ԼՈՌԻՍ-ՄԵԼԻՔՈՎ**
**(1834 - 27.02.1878)**



**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (24.03.1873)**

Հեծելազորի գեներալ կոմս Միխայիլ Լոռիս-Մելիքովի (1824-1888) եղբոր որդին է:

Ծնվել է Թիֆլիսում: 1852 թվականին ավարտել է Սանկտ Պետերբուրգի գվարդիական ենթապրապորշչիկների և հեծելազորային յունկերների դպրոցը:

1852 թվականից ծառայել է որպես սպա Գրոդնոյի լեյբ-գվարդիայի հուսարական գնդում, բանակային հեծելազորում, Կուբանի կազակական բանակում և Տվերի 15-րդ վիշապազնդում:

1867-1876 թվականներին եղել է Դանիայի Քրիստիան IX թագավորի անվան Սևերսկի 17-րդ վիշապազնդի հրամանատար:

1862 թվականի հոկտեմբերի 17-ին, 28 տարեկան հասակում նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

Մինչև 1876 թվականի մայիս եղել է Կովկասյան հեծելազորային դիվիզիայի 1-ին բրիգադի հրամանատար:

1877 թվականից ղեկավարել է հեծելազորային կազակական 2-րդ հավաքական դիվիզիան:

Մասնակցել է 1853-1856 թվականների Ղրիմի (Արևելյան) պատերազմին:

Մահացել է վերքերից: Թաղված է Ալեքսանդրապոլի (*այժմ՝ Գյումրի, Հայաստանի Հանրապետություն: Հեղինակային ծանոթագրություն*) զինվորական գերեզմանոցում:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է «**Ոսկե զենք**»-ով (արիության համար, 1865), Ռուսա-

տանի **«Սուրբ Աննայի»** II աստիճանի (1868), **«Սուրբ Ստանիսլավի»** I աստիճանի (1859) շքանշաններով:

Ստացել է նաև արտասահմանյան երկրների՝ Պարսկաստանի **«Առյուծի և արևի»** II աստիճանի (աստղով, 1862) և Դանիայի **«Դան-նեբրոգի»** (1867) շքանշաններ:



**ՄԻԽԱՅԻԼ ՏԱՐԻԵԼԻ ԼՈՌԻՍ-ՄԵԼԻՔՈՎ, ԿՈՄՍ**
**(21.10.1824 - 12.12.1888)**

**ԳԵՆԵՐԱԼ-ԱԴՅՈՒՏԱՆՏ (13.08.1865)**
**ՀԵԾԵԼԱԶՈՐԻ ԳԵՆԵՐԱԼ (17.04.1875)**

Միխայիլ Լոռիս-Մելիքովը ծնվել է Թիֆլիսում, Տարիել Զուրաբի Լոռիս-Մելիքովի և Եկատերինա Ախվերդովայի ընտանիքում:

1836 թվականին Միխայիլ Լոռիս-Մելիքովն ընդունվել է Մոսկվայի Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտ: 1841 թվականից ուսումը շարունակել է Սանկտ Պետերբուրգի գվարդիական ենթապրապորշչիկների և հեծելազորի յունկերական դպրոցում: Ուսման տարիներին մտերմացել է այն ժամանակ դեռ քիչ հայտնի բանաստեղծ Նիկոլայ Նեկրասովի (1821-1877) հետ և մի քանի ամիս ապրել է նրա տանը:

1843 թվականի օգոստոսի 2-ին ծառայության է կոչվել Գրոդնոյի լեյբ-գվարդիայի հուսարական գնդում, որտեղ ծառայել է մինչև 1847 թվականը: 1847 թվականին անձնական խնդրագրի հիման վրա նա տեղափոխվել է Կովկաս և նշանակվել է հատուկ հանձնարարությունների գծով սպա՝ Կովկասյան առանձին կորպուսի գլխավոր հրամանատար կոմս Վորոնցովի մոտ: Նույն թվականին մասնակցել է չեչենական արշավանքին կովկասյան լեռնաբնակների դեմ:

1848 թվականին զորագրվել է իշխան Մովսես Արգուտինսկի-Դոլգորուկովի ջոկատում, որը գործում էր Դաղստանում: Մասնակցել է Գերգեբիլ աուլի գրավմանը:

1851 թվականին մասնակցել է կովկասյան գծի ձախ թևի (Մեծ Չեչնիայում) ձմեռային մեծ արշավանքին՝ ընդդեմ հայտնի Հաջի-Մուրադի, իսկ նույն թվականի գարնանից, Բելայա գետի վրա ամրոցների կառուցման և Մահոմեդ Էմինի զորքերի նահանջի ժամանակ եղել է նույն գծի աջ թևում: Նրա կյանքի այս դրվագը ներկայացված է ռուս գրող Լև Տոլստոյի «Հաջի-Մուրադ» պատմվածքում:

1853-1856 թվականների Ղրիմի (Արևելյան) պատերազմը օսմանցիների հետ լեռնաբնակների մոտ բուռն ատելություն առաջ բերեց Ռուսաստանի նկատմամբ, և նրանք հարձակումներ սկսեցին ողջ կովկասյան գծի երկայնքով: Այդ հարձակումների դեմ Կուրինսկի ամրության մոտ իշխան Բարյատինսկու հրամանատարությամբ հատուկ ջոկատ է ստեղծվում, այդ թվում՝ Լոռիս-Մելիքովը: Ջոկատը շարժվում է դեպի Մեչիկ գետ և Իստիսու աուլ: Լոռիս-Մելիքովը բազմիցս աչքի է ընկնում ռուսական ջոկատին հալածող լեռնաբնակների հետ բախումներում:

1852 թվականին, 28 տարեկան հասակում նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

Դրանից հետո Մ. Լոռիս-Մելիքովը միացել է կովկասյան սահմանին օսմանյան թուրքերի դեմ գործող զորքերին և առաջ է անցել երկու նշանավոր՝ Բայանդուրի և Բաշքադըքլարի ճակատամարտերում, որտեղ Աբդի-փաշայի գլխավորած օսմանյան զորքերը գլխովին ջախջախվել են:

1854 թվականին նրան վստահվել է «Որսորդների» առանձին ջոկատի ստեղծումը, որը կազմված էր վրացիներից, հայերից, քրդերից և Կովկասի այլ ժողովուրդներից (այստեղ, ինչպես միշտ Լոռիս-Մելիքովին օգնել է արևելյան մի քանի լեզուների իմացությունը): Այնուհետև Լոռիս-Մելիքովը գրոհել է օսմանյան հեծելազորի վրա և 1855 թվականի ապրիլի 13-ին մեծ կորուստներ է պատճառել նրանց: Դրանից հետո մասնակցել է Քուրուկ-Դարայի ճակատամարտին:

1855 թվականի օգոստոսին Մ. Լոռիս-Մելիքովը ծառայության է անցնում նորանշանակ գլխավոր հրամանատար կոմս Ն. Մուրավյովի մոտ՝ որպես հանձնարարությունների գծով սպա: Շարունակելով առաջնորդել «Որսորդներին»՝ Լոռիս-Մելիքովը վերահսկել է Կարսի բերդի հետ կապված ճանապարհները և հետևել հակառակորդին անառիկ բերդը շրջապատելիս: Կարսի բերդի առման ժամանակ՝ 1855 թվականի նոյեմբերին, նշանակվել է Կարսի նահանգի կառավարիչ և 9-ամսյա կառավարման ընթացքում իր խելամիտ ու հեռատես մոտեցմամբ շահել է տեղի բնակչության բարեհաճությունը: Փարիզի հաշտության պայմանագրից հետո Կարսի բերդը վերադարձվեց թուրքերին:

**1856 թվականին, 32 տարեկան հասակում Լոռիս-Մելիքովին շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում:**

1858 թվականին նա նշանակվել է Աբխազիայի զորքերի առաջնորդ և Քութաիսիի գլխավոր նահանգապետի կանոնավոր գումարտակների տեսուչ: Նույն ժամանակաշրջանում նրա հրամանագրով դրվեցին Ծեբելդա ամրոցի հիմքերը՝ լեռնաբնակների արշավանքներից պաշտպանվելու և լեռնաբնակների մաքսանենգ առևտուրը կասեցնելու համար: Այս ճանապարհով լեռնաբնակները հիմնականում հրազեն, վառոդ և ռազմական այլ միջոցներ էին ձեռք բերում:

1859 թվականին Լոռիս-Մելիքովը գործուղվում է Օսմանյան Թուրքիա՝ Թերեքի մարզից Թուրքիայի ասիական հատված լեռնաբնակների վերա-

բնակեցման հարցերը լուծելու և օսմանյան կառավարության հետ բանակցելու համար:

1860 թվականի օգոստոսի 18-ից վարել է Դերբենդի նահանգի կառավարչի և զինվորական նահանգապետի պաշտոնները: Լոռիս-Մելիքովը ինքնամոռաց լծված է եղել լեռնաբնակների կյանքում նոր կանոններ մտցնելու գործին:

1863 թվականի մարտին նա նշանակվել է Թերեքի մարզպետ, Թերեքի կազակների բանակի ատաման և Թերեքի մարզում տեղակայված զորքերի հրամանատար:

**1863 թվականի մայիսի 5-ին Լոռիս-Մելիքովին շնորհվել է գեներալ-լեյտենանտի զինվորական կոչում:**

1863 թվականի օգոստոսի 19-ին նշանակվել է Դերբենդի գլխավոր կառավարիչ և Հյուսիսային Դաղստանի ռազմական կառավարիչ:

Մինչև 1875 թվականը Լոռիս-Մելիքովը զբաղեցրել է Թերեքի մարզպետի պաշտոնը: Նրան հանձնարարված է եղել պատշաճ կարգուկանոն հաստատել մարզի լեռնային բնակչության շրջանում: Ճիշտ է, կովկասյան պատերազմն ավարտվեց 1864 թվականին, բայց լեռնաբնակները շարունակում էին ժամանակ առ ժամանակ բացահայտորեն ընդդիմանալ իշխանություններին:

1870 թվականին նշանակվել է Թերեքի մարզի կառավարիչ:

1873 թվականից եղել է Կովկասի ամրոցների պաշտպանության կոմիտեի փոխնախագահ:

1875 թվականին լարված աշխատանքը խաթարում է Լոռիս-Մելիքովի առողջությունը, և նա արձակուրդ գնալու թույլտվություն է խնդրում՝ բուժման համար արտասահման մեկնելու նպատակով: Փոխարքա մեծ դուքս Միխայիլ Նիկոլաևիչը 1875 թվականի մայիսի 15-ին բավարարում է նրա խնդրանքը՝ Կովկասյան ռազմական օկրուգին տրված հատուկ հրամանագրով. «Մեծ մտահոգությամբ լսեցի Լոռիս-Մելիքովի խնդրանքը և հատուկ կարիքներից ելնելով բավարարում եմ այն»... Միաժամանակ Լոռիս-Մելիքովը նույն թվականին ընդգրկվում է Թերեքի կազակական բանակում և ծառայության է կոչվում փոխարքայի՝ մեծ դուքս Միխայիլ Նիկոլաևիչի մոտ:

Թուրքերի դեմ ռազմական գործողությունների, Թուրքիայի հետ պատերազմի նախապատրաստմամբ էր պայմանավորված զորքերի առանձին կորպուսի ստեղծումը Փոքր Ասիայում: Այս

կորպուսի հրամանատարությունը վստահվում է Լոռիս-Մելիքովին:

1877 թվականի ապրիլի 12-ին 4 շարասյունով նա հատում է Օսման-յան կայսրության սահմանը և մայիսի 5-6-ը գրոհով գրավում է Արդա-հանը: Շուտով նա հասնում է Կարս, որն ավելի ամուր էր, և ավելի լավ էր պաշտպանվում, քան 1853-1856 թվականների պատերազմի ժամա-նակ: Գեներալ Ա. Տեր-Ղուկասովին նա առանձին ջոկատով ուղարկում է Էրզրում:

Այդ ժամանակ օսմանյան զորքերը Մուխթար փաշայի հրամանա-տարությամբ հասել էին Սողանլուղի լեռնանցք, Զիվին գյուղի մոտ (Կար-սից Էրզրում տանող ճանապարհին): Ճակատամարտը լավ սկսվեց ռուս-ների համար, սակայն թուրքերը շուտով լրացուցիչ մեծ ուժեր ստացան: Ռուսները, որոնք ճանապարհին դեմ առան մեծ ձորի, զգալի կորուստներ կրեցին և ստիպված եղան նահանջել Զիվինից, իսկ Մուխթար փաշան իր զորքերի մի մասը տեղավորեց Ալաջայի բարձունքներում ու Ղարադաղի լեռներում:

1877 թվականի հունիսի 28-ի գիշերը Լոռիս-Մելիքովը օժանդակ ուժեր է ստանում, շրջապատում է Կարսի բերդը, իսկ սեպտեմբերի 20-22-ին միաժամանակ՝ ճակատից և թիկունքից հարձակվում է թշնամու վրա Ալաջայի բարձունքներին և գլխովին ջախջախում նրան: Գերեվարում է ավելի քան 7 հազար թուրք զինվոր և սպա: Հետագայում, հոկտեմբերի 2-ին և 3-ին՝ Ավլիար-Ալաջայի և հոկտեմբերի 23-ին՝ Դեվե-Բոյնուի ճակա-տամարտերում Մուխթար փաշայի և Իզմայիլ փաշայի միացյալ ուժերը կրկին ջախջախվում են Լոռիս-Մելիքովի կողմից:

Վերոհիշյալ մարտերից հետո Լոռիս-Մելիքովը վերադառնում է Կարսի բերդ, որն անառիկ բերդի համբավ ուներ: Կարսի բերդին մոտե-նալուն պես, նոյեմբերի 6-ի գիշերը նա կայծակնային արագությամբ հարձակվում և գրավում է Կարսը՝ գերեվարելով 17 հազար զինվոր ու սպա և ավար տանելով 303 թնդանոթ: Սրանով նա փաստորեն ավարտում է ռազմական գործողությունները կովկասյան ճակատում:

Կարսի բերդը գրավելուն պես, նույն թվականի ձմռանը Լոռիս-Մելիքովը նախաձեռնում է Էրզրումի բերդ-ամրոցի շրջափակումը: Տեղի բնակչության և զենք մատակարարողների՝ իր նկատմամբ դրական տրամադրվածության շնորհիվ Լոռիս-Մելիքովը հակառակորդի տա-րածքում վարկային միջոցներով ռազմական գործողություններ է իրա-կանացնում և դրանց հաշվարկը կատարում է ռուսական ռուբլիով՝ այդ-

պիսով մի քանի տասնյակ միլիոնի խնայողություն անելով պետական գանձարանի օգտին: Կարսի բերդի ամրոցներից մեկը՝ «Չախմախը», նրա պատվին «Լոռիս-Մելիքովի ամրոց» անունն է ստանում:

Օսմանցիների հետ զինադադարից հետո Ռուսական կայսրության համապատասխան ակտով Լոռիս-Մելիքովին տրվում է **Ռուսական կայսրության կոմսի կոչում**՝ ժառանգության իրավունքով: **«Պատերազմի ողջ ընթացքում ունեցած բացառիկ վաստակի և փայլուն գործողությունների համար» (1878 թվականի ապրիլի 16-ին)** միաժամանակ նա ծառայության է կոչվում Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար մեծ դուքս Միխայիլ Նիկոլայևիչի ենթակայության ներքո:

1879 թվականին Լոռիս-Մելիքովը նշանակվել է Աստրախանի, Սարատովի և Սամարայի գեներալ-նահանգապետ՝ անսահմանափակ լիազորություններով: Նա ակտիվ միջոցառումներ է իրականացրել վերոնշյալ մարզերում ժանտախտի տարածման կանխարգելման ուղղությամբ:

Նրա վերադարձը Սանկտ Պետերբուրգ համընկավ ժամանակավոր գեներալ-նահանգապետությունների ստեղծման հետ (Եվրոպական Ռուսաստանը բաժանվեց 6 գեներալ-նահանգապետությունների), որոնց համարյա անսահմանափակ լիազորություններ էին տրվում, ինչը արվեց կայսրությունում մի շարք հանցավոր գործողություններով դրսևորվող պետական խռովարարությունը (ահաբեկչությունը) կանխելու համար:

1879 թվականի ապրիլի 7-ին Լոռիս-Մելիքովը նշանակվում է Խարկովի նահանգի գեներալ-նահանգապետ, որտեղ մինչ այդ սպանվել էր նրան նախորդող նահանգապետը՝ իշխան Կրոպոտկինը: Նույն թվականի ապրիլի 17-ին Լոռիս-Մելիքովը նշանակվում է Խարկովի ռազմական օկրուգի զորքերի հրամանատար: Ստանձնելով Խարկովի գեներալ-նահանգապետի պաշտոնը՝ Լոռիս-Մելիքովը վաստակում է խարկովցիների հարգանքն ու սերը՝ այսպիսով խուսափելով նահանգում ռեպրեսիվ գործողություններ իրականացնելուց: Հաշվի առնելով բնակչության նկատմամբ նման վերաբերմունքը՝ նարոդնիկները նրա անունը չեն ներառել մահապատժի դատապարտված գեներալ-նահանգապետերի ցուցակում:

1880 թվականի փետրվարի 5-ին Ձմեռային պալատում տեղի ունեցած պայթյունից հետո Լոռիս-Մելիքովին կանչում են Սանկտ Պետերբուրգ՝ հեղափոխական շարժման դեմ պայքարի միջոցառումների հարցերով:

1880 թվականի փետրվարի 11-ին նա նշանակվում է Պետական խորհրդի անդամ:

1880 թվականի փետրվարի 14-ին նա նշանակվում է Գերագույն գործադիր հանձնախմբի գլխավոր ղեկավար մեծագույն լիազորություններով, իսկ նույն թվականի մարտի 3-ին նշանակվում է Ալեքսանդր II կայսեր գրասենյակի III բաժանմունքի ժամանակավոր ղեկավար:

1880 թվականի փետրվարի 20-ին նրա դեմ մահափորձ է կատարում մի ոմն Մոլոդեցկի, սակայն, չնայած դրան, Լոռիս-Մելիքովը շարունակում է խստորեն պայքարել հեղափոխական շարժման դեմ:

1880 թվականի ամռան վերջին նա բարձրացնում է Գերագույն գործադիր հանձնախմբի կողմից իր գործունեության դադարեցման հարցը: Նույն թվականի օգոստոսի 6-ին հանձնախումբը դադարեցնում է իր գործունեությունը:

1880 թվականի օգոստոսի 6-ին Լոռիս-Մելիքովը նշանակվում է Ռուսական կայսրության ներքին գործերի նախարար:

1880 թվականի դեկտեմբերի 5-ին նա ընտրվում է Պետերբուրգի Գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամ:

1881 թվականի հունվարին նա Ալեքսանդր II կայսրին ներկայացնում է պետական կառուցվածքում վարչական և տնտեսական բարեփոխումների ընդարձակ մի ծրագիր (այսպես կոչված՝ «Լոռիս-Մելիքովի սահմանադրությունը»), որը կայսեր կողմից դրական գնահատականի է արժանանում և հավանություն է գտնում լիբերալ շրջանակներում: Նրա 6-ամսյա ղեկավարության ընթացքում Ներքին գործերի նախարարությունը Ռուսաստանում իրականացրել է 32 քաղաքական դատավարություն և կայացրել 18 մահապատժի դատավճիռ: Նրա նախարարության օրոք, 1881 թվականի մարտի 1-ին Սանկտ Պետերբուրգում հարձակման է ենթարկվում Ալեքսանդր II կայսրը, ով մահանում է ստացած վերքերից: Այդ կապակցությամբ Լոռիս-Մելիքովը հրաժարական է տալիս ներքին գործերի նախարարի պաշտոնից: Որպես պատճառ նշվում է վատ առողջական վիճակը: Նրա խնդրանքն ընդունվել է մայիսի 4-ին և տրվել է աշխատանքից ազատելու հրաման՝ տարեկան 26 հազար ռուբլի թոշակով: Լոռիս-Մելիքովը մեկնել է արտասահման և հիմնականում ապրել է Նիցցայում (Ֆրանսիա):

1882 թվականի նոյեմբերի 1-ին նա նշանակվել է Թերեքի կազակական զորքի Սունժա-Վլադիկավկազի 1-ին գնդի պետ:

1882 թվականին նշանակվել է Անդրկովկասի տարանցման հետ կապված հարցերի լուծման հատուկ խորհրդի անդամ:

1883 թվականի մայիսի 29-ին ուղարկվել է անժամկետ արձակուրդ՝ Պետական խորհրդի անդամ մնալու իրավունքով:

Զբաղվել է գրական գործունեությամբ: Մի քանի պատմական աշխատությունների հեղինակ է:

Լոռիս-Մելիքովը փայլուն հրամանատար և տեղային մարտավարական ադմինիստրատոր էր: Նա հատուկ ուշադրություն է դարձրել հանրակրթության զարգացմանը: Նրա օրոք ուսումնական հաստատությունների թիվը մի քանի տասնյակից հասել է 300-ի:

Նրա մահախոսականում ասվում է. «**Ո՛չ ներկա և ո՛չ էլ ապագա սերունդները չեն մոռանա նրա վաստակը ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքացիական ասպարեզում**»:

Մահացել է Նիցցայում: Աճյունը Թիֆլիս է բերվել 1889 թվականի հունվարի 15-ին, հուղարկավորվել է փետրվարի 8-ին, Թիֆլիսի Վանքի հայոց տաճարի տոհմական դամբարանում (*այժմ՝ Աթոնելի փողոց, 1936 թվականին, տաճարը քանդելու ժամանակ նրա աճյունը և տապանաքարը տեղափոխվել են Թբիլիսիի հայոց Սուրբ Գևորգ առաջնորդանիստ եկեղեցու բակ: Նրա շիրիմը պահպանվում է պետության կողմից: Հեղինակային ծանոթագրություն*):

Ի պատիվ Լոռիս-Մելիքովի՝ նրա անունով են կոչվել Թիֆլիսի փողոցներից մեկը (այսօրվա Լ. Գուդիաշվիլու փողոցը), Ռուսաստանի մի քանի բնակավայրեր և Օմսկի նահանգում գտնվող գյուղերից մեկը:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է «**Ոսկե զենք**»-ով (արիության համար, 1847 և 1854), «**Սուրբ Գեորգիի**» III (14 մայիսի, 1877) և II աստիճանների (3 հոկտեմբերի, 1877) շքանշաններով, Ռուսաստանի «**Սուրբ Անդրեաս Նախավկայի**» (1880), «**Սուրբ Ալեքսանդր Նևսկու**» (1869, ալմաստազարդ՝ 1871), «**Սպիտակ արծիվ**» (1865), «**Սուրբ Աննայի**» IV աստիճանի (արիության համար, 1838), III աստիճանի (սրերով և ժապավենով, 1839), II աստիճանի (սրերով, 1841), II աստիճանի (կայսերական թագով, 1852) և I աստիճանի (1860), «**Սուրբ Վլադիմիրի**» IV (ժապավենով, 1854), III (սրերով և ժապավենով, 1855), II (սրերով, 1861) և I աստիճանների (սրերով, 1877), «**Սուրբ Ստանիսլավի**» I աստիճանի (1859) շքանշաններով:

Ստացել է նաև արտասահմանյան՝ **«Մարտական վաստակի համար»** II աստիճանի (Մեկլենբուրգ-Շվերին, 1878) և **«Վաստակի համար»** (Պրուսիա, 1878) շքանշաններ:

Հայտնի է Հովի. Այվազովսկու (1817-1900) վրձնին պատկանող Մ. Տ. Լոռիս-Մելիքովի դիմանկարը (1888):



Կոմս Մ. Տ. Լոռիս-Մելիքովի զինանշանը




Կոմս Մ. Տ. Լոռիս-Մելիքովի շիրիմը մինչև 1936 թվականը




Կոմս Մ. Տ. Լոռիս-Մելիքովի շիրմաքարն այսօր



**ՊԱՎԵԼ ԴԱՎԻԹԻ ՄԱՆՈՒՉԱՐՈՎ**
**(25.01.1858 - 1916 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (05.07.1910)**

Ծնվել է Թիֆլիսի նահանգում: **Նրա կինը՝ Թամարը, գեներալ-մայոր Թոմա Չոմարջիձեի (1838-1907) դուստրն է եղել**:

Ընդհանուր կրթությունը ստացել է Վլադիկավկազի ռեալական դպրոցում:

Զինվորական ծառայության է անցել 1874 թվականից:

Ավարտել է Ելիսավետգրադի հեծելազորային յունկերական ուսումնարանը: Ծառայել է Սևերսկի 17-րդ վիշապագնդում:

Մասնակցել է 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմին:

1909 թվականի մայիսի 30-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1910 թվականին մունդիրով դուրս է եկել զինվորական ծառայությունից և հաշվառվել է Թիֆլիսի նահանգի հետևակային գնդում:

1916 թվականին, Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ վերադարձել է բանակ:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** III աստիճանի (1886), **«Սուրբ Աննայի»** III աստիճանի (1894), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (1908) շքանշաններով:



## ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱԿՈԲԻ ՄԱՐԴԱՆՈՎ
**(25.10.1852 - 1919 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (22.02.1904)**

Ծնվել է Թիֆլիսում: 1874 թվականին ավարտել է Կովկասի զինվորական երկրաբաշխների և զինվորական տեղագիրների դպրոցը, 1882 թվականին՝ Գլխավոր շտաբի ակադեմիան:

Մասնակցել է 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմին:

1878-1882 թվականներին որպես հարյուրապետ ծառայել է Ալեքսանդրապոլի 161-րդ հետևակային գնդում:

1882-1884 թվականներին եղել է 20-րդ հետևակային դիվիզիայի շտաբի ավագ ադյուտանտ:

1884-1888 թվականներին ծառայել է Կովկասի II բանակային կորպուսի շտաբում՝ որպես հանձնարարությունների գծով սպա:

1888-1889 թվականներին եղել է հանձնարարությունների գծով սպա՝ 22-րդ տեղական բրիգադի պետի հրամանատարության ներքո:

1889-1890 թվականներին եղել է Կերչի ամրոցի շտաբի շինարարական բաժնի վարիչ:

1892 թվականի դեկտեմբերի 6-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1890-1894 թվականներին ծառայել է Կովկասի պահեստազորի բրիգադի վարչությունում՝ որպես շտաբի սպա:

1894-1896 թվականներին եղել է Միխայիլյան ամրոցի (ք. Բաթոմի, այժմ՝ Բաթումի) շտաբի պետ:

1896-1898 թվականներին եղել է 2-րդ հետևակային դիվիզիայի շտաբի պետ:

1898-1900 թվականներին եղել է 36-րդ հետևակային դիվիզիայի շտաբի պետ:

1900-1904 թվականներին եղել է Մոժայսկի 141-րդ հետևակային գնդի հրամանատար:

1904-1905 թվականներին եղել է Արևելյան Սիբիրի 3-րդ հրաձգային դիվիզիայի 1-ին բրիգադի հրամանատար:

1904-1905 թվականների ռուս-ճապոնական պատերազմի ժամանակ առաջխաղացում է ունեցել Լիանդանսան գյուղի մոտ ճակատամարտում (Մանջուրիայում):

1905-1907 թվականներին եղել է Մերձամուրյան ռազմական օկրուգի գեներալ-զորաբնակարանապետ:

1906-1907 թվականներին եղել է գրենադերների 3-րդ դիվիզիայի 1-ին բրիգադի հրամանատար:

1907 թվականից ծառայել է որպես սիբիրյան 3-րդ պահեստազորի հետևակային բրիգադի հրամանատար:

Նույն թվականին դուրս է եկել զինվորական ծառայությունից:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է **«Ոսկե զենք»**-ով (արիության համար, 1906), Ռուսաստանի **«Սուրբ Աննայի»** III աստիճանի (1888) և II աստիճանի (1901), **«Սուրբ Ստանիսլավի»** III աստիճանի (1884), II աստիճանի (1895) և I աստիճանի (սրերով, 1905), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (1900) և III աստիճանի (սրերով) շքանշաններով:

Թաղված է Օդեսայի նոր գերեզմանոցի զինվորական տեղամասում:



**ՎԼԱԴԻՄԻՐ ԼԱԶԱՐԻ ՄԱՐԴԱՆՈՎ**
**(26.11.1847 - 1916 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (06.12.1916)**

Ծնվել է Թիֆլիսում:

1869 թվականից ծառայել է բանակում:

Մասնակցել է 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմին:

1879-1881 թվականներին ծառայել է Թիֆլիսի զինվորական գիմնազիայում:

1883-1894 թվականներին ծառայել է Թիֆլիսի կադետական կորպուսում:

1896 թվականի մարտի 24-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում և նշանակվել է Թիֆլիսի կադետական կորպուսի դասարանների տեսուչ:

1916 թվականին եղել է Կիևի կադետական կորպուսի տնօրեն:

Պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Աննայի»** III աստիճանի (1888), II աստիճանի (1897), **«Սուրբ Ստանիսլավի»** III աստիճանի (1883), II աստիճանի (1893) շքանշաններով:



**ՊՅՈՏՐ ԻՎԱՆԻ ՄԱՆՍՎԵՏՈՎ**
**(26.08.1864 - 1917 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (19.04.1913)**

Ծնվել է Թիֆլիսի նահանգում, ազնվականական ընտանիքում: Սովորել է Թիֆլիսի 1-ին գիմնազիայում, 1885 թվականին՝ Թիֆլիսի կադետական կորպուսում, 1888 թվականին՝ Թիֆլիսի հետևակային յունկերական ուսումնարանում, 1898 թվականին՝ Ալեքսանդրովյան ռազմաիրավաբանական ակադեմիայում:

1888 թվականից ծառայել է Կովկասի 4-րդ հրաձգային գնդում:

1898-1902 թվականներին ծառայել է որպես զինվորական դատավորի թեկնածու:

1902-1904 թվականներին եղել է Թուրքեստանի զինվորական օկրուգի զինվորական հետաքննիչ:

1904-1907 թվականներին եղել է Թուրքեստանի զինվորական օկրուգի զինվորական դատախազի օգնական:

1907-1913 թվականներին եղել է Թուրքեստանի զինվորական օկրուգի զինվորական հետաքննիչ:

1907 թվականի ապրիլի 22-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1913-1917 թվականներին եղել է Թուրքեստանի զինվորական օկրուգի դատարանի զինվորական դատավոր:

Ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Աննայի»** II աստիճանի (1912), **«Սուրբ Ստանիսլավի»** II աստիճանի (1910) շքանշաններով:



**ԱԲԵՍԱԼՈՄ (ԱԲԵԼ) ԻՎԱՆԻ ՄՂԵԲՐՈՎ**
**(20.12.1845 - 1916 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ)**

**ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ (06.04.1914)**

Ծնվել է Թիֆլիսում:

1866 թվականից ծառայել է բանակում: 1868 թվականին ավարտել է Նիկոլաևյան ինժեներական ուսումնարանը և Սանկտ Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտը:

1868 թվականից ծառայել է կովկասյան սակրավորների 1-ին գումարտակում:

Մասնակցել է 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմին (պաշտպանել է Սև ծովի ափամերձ տարածքները):

1887-1890 թվականներին ծառայել է որպես Անդրկասպյան բեռների և զորքերի փոխադրման վարչության պետի ավագ օգնական:

1890-1892 թվականներին ծառայել է Գլխավոր շտաբում՝ ղեկավարելով նորաստեղծ Անդրկասպյան երկաթուղու շահագործումը:

1895 թվականի դեկտեմբերի 6-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

**1903 թվականի դեկտեմբերի 6-ին նրան շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում:**

1903-1914 թվականներին ծառայել է Գլխավոր շտաբի ռազմատրանսպորտային բաժնում՝ որպես ենթաբաժնի վարիչ:

1914-1916 թվականներին ծառայել է գլխավոր ռազմատեխնիկական վարչությունում՝ որպես հանձնարարությունների գծով գեներալ:

Զինվորական ծառայությունից թոշակի է անցել 1916 թվականին տարիքի բերումով:

Մահացել և թաղվել է Պետրոգրադում:

Մարտական վաստակի համար պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Աննայի»** III աստիճանի (1883), II աստիճանի (1898), I աստիճանի (1914), **«Սուրբ Ստանիսլավի»** III աստիճանի (1880), II աստիճանի (1894) և I աստիճանի (սրերով, 1906), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (1896), III աստիճանի (1900) և II աստիճանի (1915), **«Սպիտակ արծիվ»** (1916) շքանշաններով:

Ջրահատեխնիկայի և զենքերի հայտնի գյուտարար և նախագծող Վլադիմիր Մղեբրովը (1886-1915) նրա որդին է:



**ԱՎԵՏԻՍ ԳԵՐԱՍԻՄԻ ՄԵԼԻՔՈՎ**
**(19.03.1838 - 1897 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (30.07.1897)**

Ծնվել է Թիֆլիսի նահանգում:

1857 թվականից անցել է զինվորական ծառայության: Մասնակցել է մի շարք մարտական արշավների, 13 տարի շարունակ ղեկավարել է Երևանյան լեյբ-գրենադերների գնդի վաշտը:

Մասնակցել է 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմին: Ռազմական գործողություններում ունեցած հատուկ վաստակի համար պարգևատրվել է **«Սուրբ Գեորգիի» IV աստիճանի (01.01.1878) շքանշանով**:

1887 թ. մարտի 26-ին ստացել է գնդապետի զինվորական կոչում և նշանակվել է Անդրկասպյան հրաձգային գումարտակի հրամանատար:

1889 թվականին նշանակվել է Կովկասյան ռազմական օկրուգի տեղական զորքերի Կովկասյան 4-րդ պահեստազորի հետևակային գումարտակի հրամանատար: 1890 թվականին նշանակվել է Կովկասյան ռազմական օկրուգի տեղական զորքերի Գրոզնիի պահեստային հետևակային գումարտակի հրամանատար:

1897 թվականին թոշակի լրիվ ապահովմամբ ազատվել է զինվորական ծառայությունից: Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է **«Ոսկե զենք»**-ով (արիության համար, 26.08.1880), Ռուսաստանի **«Սուրբ Աննայի»** III աստիճանի (1871) և II աստիճանի (սրերով, 1878), **«Սուրբ Ստանիսլավի»** III աստիճանի (1865) և II աստիճանի (սրերով, 1877), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (ժապավենով, XXV-ամյա զինվորական ծառայության համար, 1882) շքանշաններով:



**ԻՍԱՀԱԿ ՀՈՎՍԵՓԻ**
**ՄԵԼԻՔ-ՀԱՅԿԱԶՈՎ**
**(18.12.1838 - 02.02.1899)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (23.08.1895)**

Ծնվել է Թիֆլիսում:

Ավարտել է Թիֆլիսի կադետական կորպուսը:

1857 թվականից ծառայել է բանակում:

1862 թվականից եղել է սպա:

Մասնակցել է 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմին:

1878-1895 թվականներին ծառայել է որպես հրետանային 38-րդ բրիգադի 4-րդ մարտկոցի հրամանատար:

1895-1898 թվականներին եղել է հրետանային 38-րդ բրիգադի 2-րդ դիվիզիոնի հրամանատար:

1898-1899 թվականներին եղել է Արևելյան Սիբիրի հրետանային 2-րդ բրիգադի հրամանատար:

1882 թվականի օգոստոսի 30-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Աննայի»** III աստիճանի (1869) և II աստիճանի (1874), **«Սուրբ Ստանիսլավի»** III աստիճանի (1866) և II աստիճանի (1871), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (սրերով և ժապավենով, 1877) և III աստիճանի (1886) շքանշաններով:

Ստացել է նաև պարսկական **«Առյուծի և արևի»** (III աստիճանի, 1865) շքանշան:

Զինվորական պատիվներով թաղվել է Թիֆլիսում, Վերեի գերեզմանոցում:

«Կավկազ» թերթը գրել է.

*„Гроб с останками генерал-майора Мелик-Гайказова везли на лафете, шествие замыкали войска в составе 4-го стрелкового батальона со знаменем и хором музыки и полубатарея артиллерии. При опускании гроба в могилу, войска отдали установленные воинские почести троекратным залпом из ружей и орудий".*


Бригадный командиръ, генералъ-майоръ
**Исаакъ Іосифовичъ Меликъ - Гайказовъ**
скончался сего 2-го февраля, о чемъ вдова Варвара Іосифовна съ дѣтьми и родственниками съ глубокимъ прискорбіемъ извѣщаютъ родныхъ, знакомыхъ и сослуживцевъ покойнаго. Панихида будетъ совершена въ пятницу, 5-го февраля, въ 7 часовъ вечера, въ домѣ Анановыхъ, на Головинскомъ проспектѣ, а выносъ тѣла состоится въ субботу, 6-го февраля, въ 10 час. утра, въ Ванкскій соборъ. 96 1.

Գեներալ-մայոր Ի. Հ. Մելիք-Հայկազովի մահազդը «Կավկազ» թերթից



**ՍԻՄՈՆ ՌՈՄԱՆԻ**
**ՄԵԼԻՔ-ՄՆԱՑԱԿԱՆՈՎ**
**(ՄԱՀ. 23.02.1893)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ**

Ծնվել է Թիֆլիսում:

Մասնակցել է 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմին:

1878-1879 թվականներին ծառայել է որպես 41-րդ հետևակային դիվիզիայի, Ախալցիխեի հետևակային 162-րդ գնդի հրամանատար:

1879-1882 թվականներին եղել է Մեփիսծղարոյի զինվորական հոսպիտալի ղեկավար (*այժմ՝ ք. Դեդոփլիսծղարո, հեղինակային ծանոթագրություն*):

1882-1893 թվականներին եղել է Մոգիլյովի դիվիզիայի հրամանատար: Մահացել է Թիֆլիսում, թաղվել է Խոջիվանքի գերեզմանատանը (*ավերվել է խորհրդային իշխանության օրոք, 1934 թվականին: Հեղինակային ծանոթագրություն*):



**ԹՈՎՄԱՍ ԻՎԱՆԻ ՆԱԶԱՐԲԵԿՈՎ**
**(04.04.1855 - 19.02.1931)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (06.12.1906)**

Ծնվել է Թիֆլիսում, ազնվականական ընտանիքում:

Սովորել է նախ Վորոնեժի ռազմական գիմնազիայում, այնուհետև՝ 1874 թվականին՝ Մոսկվայի 2-րդ ռազմական գիմնազիայում, 1876 թվականին՝ Ալեքսանդրովյան 3-րդ ռազմական ուսումնարանում:

Մասնակցել է 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմին: Ծառայել է լեյբ-գվարդիայի Երևանի 13-րդ և վրաց գրենադերների 14-րդ գնդերում:

1894-1902 թվականներին ղեկավարել է Անդիջանի 4-րդ պահեստազորային գումարտակը:

Մասնակցել է 1904-1905 թվականների ռուս-ճապոնական պատերազմին: Պատերազմի ժամանակ ղեկավարել է Կիրսանովյի 286-րդ հետևակային գունդը:

1902 թվականի փետրվարի 9-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1905-1906 թվականներին ղեկավարել է Օլոնեցի 14-րդ հետևակային գունդը:

1906 թվականին անցել է պահեստազոր:

1914 թվականի նոյեմբերին, Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուն պես կրկին զորակոչվել և նշանակվել է 66-րդ հետևակային դիվիզիայի հրամանատար: 1915 թվականի ապրիլին նրա հրամանատարության տակ գտնվող ռուսական զորքերի ստորաբաժանումները Դիլմանի ճակատամարտում ծանր պարտության են մատնել թուրքական զորքերին:

1915-1916 թվականներին ղեկավարել է Կովկասի 2-րդ հրաձգային բրիգադը, որը 1915 թվականի նոյեմբերի 19-ին ընդլայնվել է դիվիզիայի, միաժամանակ նշանակվել է նաև ադրբեջանական ջոկատի պետ:

1914 թվականի հուլիսի 9-ի թուրքական հարձակման սկզբում գործել է շատ դանդաղ, չի աջակցել Կովկասի IV բանակային կորպուսին: Հետագայում նաև՝ Եփրատի ռազմագործողության ողջ ընթացքում, Նազարբեգովը նախաձեռնություն չի ցուցաբերել, ինչը դարձել է պատճառներից մեկը, որ հնարավոր չի եղել ամբողջապես ոչնչացնել թուրքական խմբավորումը: 1916 թվականին նա ղեկավարել է Վան Կոպի ուղղությամբ գործող զորախմբավորումը:

1917 թվականի հունվարին նշանակվել է Պարսկաստանում գործող կովկասյան նորաստեղծ բանակի VII առանձին կորպուսի հրամանատար:

Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարի՝ 1917 թվականի դեկտեմբերի 26-ի հրամանի համաձայն սկսվել է ազգային կորպուսների կազմավորումը: Հայկական կորպուսի հրամանատար է նշանակվել գեներալ Նազարբեգովը: Կորպուսի կազմում ընդգրկված են եղել գեներալ Անդրանիկ Օզանյանի 1-ին և 2-րդ կամավորական հետևակային դիվիզիաները, հեծելազորային 1 բրիգադ, տարածքային 4 գունդ, տարածքային 5 գումարտակ և 1 քայլարշավային բրիգադ, ընդհանուր առմամբ՝ մոտ 17 000 մարդ:

1918-1920 թվականներին եղել է Հայաստանի Հանրապետության զորքերի գլխավոր հրամանատար: Նա չի անդամակցել ոչ մի կուսակցության, շարունակել է ծառայել բանակում և իր ողջ գիտելիքներն ու փորձառությունն ուղղել է Հայաստանի կանոնավոր բանակի ստեղծմանը: Ղեկավարել է հայկական բանակը Ադրբեջանի հետ պատերազմում: Զինված ուժերի կազմակերպման գործում ունեցած անձնական ավանդի համար **1919 թվականի հուլիսի 15-ին նրան շնորհվել է հայկական բանակի գեներալ-լեյտենանտի զինվորական կոչում**: Նրա ընդհանուր ղեկավարությամբ հայկական բանակը և կամավորները Ղարաքիլիսայի և Սարդարապատի ճակատամարտերում ծանր պարտության են մատնել թուրքական զորքերին և կասեցրել են թշնամու առաջխաղացումը: Լոյալ վերաբերմունք է ունեցել խորհրդային իշխանության նկատմամբ: Հայաստանի՝ Խորհրդային Ռուսաստանին բռնակցումից հետո, 1921 թվականին ձերբակալվել և տեղափոխվել է Երևան, ապա՝ Բաքու և հետո՝ Ռյազանի համակենտրոնացման ճամբար:

Մահացել և թաղվել է Թիֆլիսում (*թաղման վայրն անհայտ է: Հեղինակային ծանոթագրություն*):

Պահպանվել են նրա անտիպ հուշագրությունները 1914-1918 թվականների կովկասյան ռազմաճակատի ռազմական գործողությունների մասին:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է **«Ոսկե զենք»**-ով (արիության համար, 18 հունիսի, 1906), **«Սուրբ Գեորգիի»** IV աստիճանի շքանշանով (7 հունվարի, 1916), Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** III աստիճանի (սրերով ու ժապավենով, 1877, «Արդահանի բերդը գրոհով գրավելու ժամանակ դրսևորած արիության համար») և II աստիճանի (1893), **«Սուրբ Աննայի»** III աստիճանի (սրերով և ժապավենով, 1878, «Էրզրումի մոտ դրսևորած արիության համար») և II աստիճանի (1895), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (ժապավենով, XXV-ամյա անբասիր ծառայության համար, 1901), III աստիճանի (սրերով, 1905) և II աստիճանի (սրերով, 1916) շքանշաններով:

Ֆրանսիայի նախագահի կողմից պարգևատրվել է ռազմական **«Médaille militaire»** մեդալով՝ բարձրագույն զինվորական պարգև, որն, ըստ կարգավիճակի, շնորհվել է միայն բանակի հրամանատարներին (*վրացիներից նման պատվի արժանի է դարձել կապիտան* ***Տարաս Վաշակիձեն*** *(1876-1937), ով այս պարգևը ստացել է 1915 թվականի հուլիսի 31-ին: Հեղինակային ծանոթագրություն*):



**ԴՄԻՏՐԻ ԱՆԴՐԵՅԻ ՕԳԱՆԵԶՈՎ**
**(ՄԱՀԱՑԵԼ Է 09.12.1898)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ**

Ծնվել է Թիֆլիսում:

Մասնակցել է 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմին: Մահացել է Սվեաբորգ ամրոցում (Ֆինլանդիայի մեծ իշխանություն), ծառայողական պարտավորությունների կատարման ժամանակ:

Թաղվել է Թիֆլիսում, Կուկիայի գերեզմանոցում:



Константинъ Цезаревичъ и Елена Дмитріевна Буткевичъ извѣщаютъ родныхъ и знакомыхъ, что во вторникъ, 19-го января, въ сороковой день кончины тестя перваго и отца второй, послѣдовавшей въ крѣпости Свеаборгѣ, генералъ-майора

**Дмитрія Андреевича Оганезова,**

во 2-й Миссіонерской церкви, на углу Андреевской, и Молоканской улицъ, будетъ отслужена заупокойная литургія, а затѣмъ панихида. Начало литургіи въ $9^1/_2$ час. утра. 48 1.

Գեներալ-մայոր Դ. Ա. Օգանեզովի մահազդը «Կավկազ» թերթից



**ԿՈՆՍՏԱՆԴԻՆ ԱՆԴՐԵՅԻ ՊԻՐԱԴՈՎ**
**(29.11.1855 - 19.10.1918)**

**ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ (01.01.1913)**

Ծնվել է Թիֆլիսի նահանգում, ազնվականական ընտանիքում: Զինվորական կրթությունը ստացել է Մոսկվայի 2-րդ ռազմական գիմնազիայում, որն ավարտելուց հետո ընդունվել է Ալեքսանդրովյան 3-րդ ռազմական ուսումնարան:

Մասնակցել է 1877-1878 թվականների ռուս-թուրքական և 1904-1905 թվականների ռուս-ճապոնական պատերազմներին:

1872 թվականից ծառայել է որպես մարտկոցի հրամանատար մեծ դուքս Միխայիլ Նիկոլաևիչի անվան կովկասյան գրենադերների հրետանային բրիգադում:

1904-1910 թվականներին ղեկավարել է 34-րդ հրետանային բրիգադի 3-րդ դիվիզիոնը: 1910-1911 թվականներին ղեկավարել է ականանետային 7-րդ հրետանային դիվիզիոնը:

1911-1913 թվականներին ղեկավարել է 44-րդ հրետանային բրիգադը:

Զոհվել է Պյատիգորսկում 1918 թվականի հոկտեմբերի 18-19-ին, «Կարմիր ահաբեկչության» ժամանակ:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** III աստիճանի (սրերով և ժապավենով), II աստիճանի (սրերով, 1878) և I աստիճանի (1912), **«Սուրբ Աննայի»** III աստիճանի (սրերով և ժապավենով, 1877) և II աստիճանի (1889), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (սրերով և ժապավենով, 1879) և III աստիճանի (1908) շքանշաններով:



**ԳԵՈՐԳԻ ԱՎԵՏԻՔԻ ՊՈՂՈԵՎ**
**(20.10.1858 - 1918 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (08.05.1915)**

Գեներալներ Լ. և Ռ. Պոզոևների եղբայրն է, ծնվել է Ախալցիխե քաղաքում:

1876 թվականին ավարտել է Մոսկվայի 2-րդ ռազմական ուսումնարանը, 1878 թվականին՝ Ալեքսանդրովյան 3-րդ ռազմական ուսումնարանը և հրետանու սպայական դպրոցը:

Ծառայել է պահեստազորային հրետանային 3-րդ բրիգադում:

Մասնակցել է 1877-1878 թվականների ռուս-թուրքական և 1914-1918 թվականների Առաջին համաշխարհային պատերազմներին:

1901-1910 թվականներին ղեկավարել է գրենադերների 3-րդ հրետանային բրիգադի 2-րդ դիվիզիոնի մարտկոցը:

1910 թվականի օգոստոսի 1-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1910-1916 թվականներին ղեկավարել է գրենադերների 3-րդ հրետանային բրիգադի 2-րդ դիվիզիոնը:

1917 թվականին նշանակվել է 33-րդ բանակային կորպուսի հրետանային տեսուչ:

1916-1917 թվականներին ղեկավարել է 46-րդ հրետանային բրիգադը: 1918 թվականից եղբոր հետ ծառայել է Կարմիր բանակում:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է **«Սուրբ Գեորգիի»** IV աստիճանի (27 հունվարի, 1917) շքանշանով, Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** II աստիճանի (1896), **«Սուրբ Աննայի»** II աստիճանի (1901), **«Սուրբ Վլադիմիրի»** III աստիճանի (1912) և III աստիճանի (սրերով, 1914) շքանշաններով:



**ԼԵՈՆ ԱՎԵՏԻՔԻ ՊՈԶՈԵՎ**
**(06.01.1855 - 1918 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ)**

**ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ (31.05.1913)**

Գեներալներ Գ. և Ռ. Պոզոևների եղբայրն է: Ծնվել է Ախալցիխե քաղաքում:

1872 թվականին ավարտել է Մոսկվայի 2-րդ ռազմական գիմնազիան, նույն թվականից ուսումը շարունակել Միխայիլովյան հրետանային ուսումնարանում, որտեղից 1875 թվականին զորակոչվել է հրետանային 30-րդ բրիգադ:

Մասնակցել է 1877-1878 թվականների ռուս-թուրքական և 1904-1905 թվականների ռուս-ճապոնական պատերազմներին:

1882 թվականին տեղափոխվել է 38-րդ հրետանային բրիգադ, իսկ 1887 թվականին, Միխայիլովյան հրետանային ակադեմիան ավարտելուց հետո ծառայել է Կովկասի գրենադերների հրետանային բրիգադում:

1893-1895 թվականներին ղեկավարել է ականանետային 2-րդ հրետանային գնդի 2-րդ մարտկոցը:

1895-1897 թվականներին ղեկավարել է 27-րդ հրետանային բրիգադի 3-րդ մարտկոցը:

1897-1904 թվականներին եղել է Թուրքեստանի ռազմական օկրուգի ուսումնական հրետանային պոլիգոնի պետ:

1904-1906 թվականներին ղեկավարել է 41-րդ հրետանային բրիգադի 1-ին դիվիզիոնը:

1910 թվականի օգոստոսի 1-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1906-1907 թվականներին ղեկավարել է 5-րդ հրետանային պահեստազորային բրիգադի 1-ին դիվիզիոնը:

1907-1910 թվականներին ծառայել է որպես Թուրքեստանի 1-ին բանակային կորպուսի հրետանու պետ, ղեկավարել է Թուրքեստանի 1-ին հրետանային բրիգադը:

1910-1916 թվականներին եղել է Թուրքեստանի 1-ին բանակային կորպուսի հրետանու տեսուչ:

Մասնակցել է 1914-1918 թվականների Առաջին համաշխարհային պատերազմին:

**1907 թվականի մայիսի 31-ին նրան շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում:**

1914-1917 թվականներին եղել է Թուրքեստանի ռազմական օկրուգի հրետանու տեսուչ: Հետագայում ծառայել է Կարմիր բանակում:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է «**Ոսկե զենք**»-ով (արիության համար, 1905), Ռուսաստանի «**Սուրբ Ստանիսլավի**» III աստիճանի (սրերով և ժապավենով, 1879), II աստիճանի (1889) և I աստիճանի (1915), «**Սուրբ Աննայի**» II աստիճանի (1894), «**Սուրբ Վլադիմիրի**» III աստիճանի (1901) և III աստիճանի (սրերով, 1905) շքանշաններով:



**ՌՈՒԲԵՆ ԱՎԵՏԻՔԻ ՊՈԶՈԵՎ**
**(16.11.1856 - 1916 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (11.08.1915)**

Գեներալներ Գ. և Լ.Պոզոևների եղբայրն է: Ծնվել է Ախալցիխե քաղաքում:

1875 թվականին ավարտել է Մոսկվայի 2-րդ ռազմական գիմնազիան, 1878 թվականին՝ Միխայիլովյան հրետանային ուսումնարանը և հրետանու սպայական դպրոցը:

Մասնակցել է 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմին: Ծառայել է 39-րդ հրետանային բրիգադում:

1898-1910 թվականներին ղեկավարել է 20-րդ հրետանային բրիգադի 1-ին դիվիզիոնի մարտկոցը:

1910-1916 թվականներին ղեկավարել է 20-րդ հրետանային բրիգադի 1-ին դիվիզիոնը:

1916 թվականից ղեկավարել է 6-րդ հրետանային բրիգադը:

1910 թվականի օգոստոսի 1-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1917 թվականի նոյեմբերից ծառայել է որպես հայկական բանակային կորպուսի հրետանու պետ:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է **«Սուրբ Գեորգիի»** IV աստիճանի շքանշանով (13 մայիսի, 1918), Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** II աստիճանի (1898) և II աստիճանի (սրերով, 1917), **«Սուրբ Աննայի»** II աստիճանի (1902), **«Սուրբ Վլադիմիրի»** III աստիճանի (1912) շքանշաններով:



**ԽՍՐԱՅԵԼ ԱՂԱՊԱՐՈՒՆԻ ՍԱՆՋԱՆՈՎ**
**(04.06.1835 - 1920)**

**ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ (17.06.1899)**

Ծնվել է Թիֆլիսի նահանգում:

1853 թվականին ավարտել է 2-րդ կադետական կորպուսը:

Մասնակցել է 1853-1856 թվականների Ղրիմի (Արևելյան) և 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմներին:

1858-1859 թվականներին ծառայել է որպես կովկասյան գծի աջ թևի հրետանու պետի ավագ ադյուտանտ:

1867-1874 թվականներին ղեկավարել է Կովկասյան 21-րդ հրետանային բրիգադի 1-ին մարտկոցը:

1876 թվականի օգոստոսի 30-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1874-1875 թվականներին ղեկավարել է 39-րդ հրետանային բրիգադի 6-րդ մարտկոցը:

1875-1888 թվականներին ղեկավարել է Կովկասյան գրենադերների բրիգադի 6-րդ մարտկոցը:

**1888 թվականի օգոստոսի 30-ին նրան շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում:**

1888-1889 թվականներին ղեկավարել է 21-րդ հրետանային բրիգադը (Թեմիր-Խան-Շուրայում), դուրս է եկել զինվորական ծառայությունից:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** III աստիճանի (սրերով և ժապավենով, 1858), II աստիճանի (սրերով) և I աստիճանի (1892), **«Սուրբ Աննայի»** III աստիճանի (սրերով և ժապավենով, 1861),

II աստիճանի (սրերով, 1864), II աստիճանի (կայսերական թագով, 1870) և I աստիճանի, **«Սուրբ Վլադիմիրի»** III աստիճանի (սրերով, XXV-ամյա անբասիր ծառայության համար, 1879) շքանշաններով:

Պարգևատրվել է նաև Բուխարայի **«Ոսկե աստղի»** I աստիճանի շքանշանով (1896):

Մահացել և թաղվել է Թիֆլիսում: Թաղման վայրն անհայտ է (*հեղինակային ծանոթագրություն*):



**ԻՎԱՆ ՀՈՎՍԵՓԻ ՍԻՄՈՆՈՎ**
**(ՍԻՄՈՆՅԱՆ)**
**(10.01.1849 - 1911 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (04.07.1911)**

Ծնվել է Թիֆլիսում:

Ավարտել է Թիֆլիսի դասական գիմնազիան, Նիկոլաևյան ինժեներական դպրոցը և Նիկոլաևյան ինժեներական ակադեմիան:

1869-1880 թվականներին ծառայել է բանակում, եղել է Կովկասյան սակրավորների 1-ին գումարտակում:

Մասնակցել է 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմին: 1880-1888 թվականներին ծառայել է Կովկասյան ռազմական օկրուգի ինժեներների պետի ենթակայության ներքո:

1888-1890 թվականներին ծառայել է Պետերբուրգի ռազմական օկրուգի ինժեներների պետի ենթակայության ներքո:

1890-1894 թվականներին ծառայել է Կովկասյան ռազմական օկրուգի ինժեներների պետի ենթակայության ներքո:

1894-1899 թվականներին ծառայել է որպես շտաբի սպա Վիբորգի պահակային ինժեներական բաժնում:

1899-1911 թվականներին ծառայել է գլխավոր ինժեներական վարչության ենթակայության ներքո:

1899 թ. ապրիլի 8-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում: 1911 թ. մունդիրով և թոշակով դուրս է եկել զինվորական ծառայությունից: Մարտական վաստակի համար պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** III (սրերով և ժապավենով, 1879) և II աստիճանների (1892), **«Սուրբ Աննայի»** III (1885) և II աստիճանների (1895), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (ժապավենով, XXV-ամյա անբասիր ծառայության համար, 1911) շքանշաններով:



**ԴՄԻՏՐԻ ԲՈԳԴԱՆԻ ՏԵՐ-ԱՍԱՏՈՒՐՈՎ**
**(20.03.1836 - 1897)**

**ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ (30.08.1886)**

Գեներալ Ն. Բ. Տեր-Ասատուրովի ավագ եղբայրն է: Ծնվել է Թիֆլիսում, հոգևորականի ընտանիքում: Սովորել է մասնավոր ուսումնական հաստատությունում: 1852 թվականից ծառայել է բանակում:

Մասնակցել է 1853-1856 թվականների Ղրիմի (Արևելյան) և 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմներին:

1869-1870 թվականներին ղեկավարել է լեյբ-գվարդիայի հուսարական գնդի պահեստազորային 3-րդ հեծելավաշտը:

1870-1873 և 1877-1883 թվականներին ծառայել է Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարի մոտ:

1873-1877 թվականներին ղեկավարել է Դաղստանի անկանոն հեծելազորը:

1883-1884 թվականներին ղեկավարել է Կովկասյան հեծելազորի 2-րդ դիվիզիայի 2-րդ բրիգադը:

1884-1890 թվականներին եղել է 11-րդ հեծելազորային դիվիզիայի պետ:

1870 թվականի ապրիլի 17-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

**1879 թվականի մայիսի 29-ին նրան շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում:**

Լեռնաբնակների դեմ մարտերից մեկի ժամանակ նա ծանր վիրավորվել է, ինչի պատճառով կայսեր հատուկ հրամանագրով նրան թույլատրվել է աջ ձեռքի համար օգտագործել համազգեստի վրա ամրացված հատուկ կախոց:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է **«Ոսկե զենք»**-ով (արիության համար, 1873), Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** III աստիճանի (1862), II աստիճանի (1868), II աստիճանի (կայսերական թագով, 1871) և I աստիճանի (սրերով, 1879), **«Սուրբ Աննայի»** III աստիճանի (սրերով, 1863) և I աստիճանի (1884), **«Սուրբ Վլադիմիրի»** III աստիճանի (1873) շքանշաններով:

Պարգևատրվել է նաև պարսկական **«Առյուծի և արևի»** II աստիճանի (աստղով, 1874) շքանշանով:

Մահացել է Վիլնո քաղաքում (*ներկայումս՝ Վիլնյուս, հեղինակային ծանոթագրություն*): Թաղվել է Թիֆլիսում, Վանքի հայոց տաճարի տարածքում 1897 թվականի հուլիսի 12-ին:


Жена съ дѣтьми, братья и сестра генералъ-лейтенанта

**Дмитрія Богдановича Теръ-Асатурова,**

скончавшагося въ гор. Вильнѣ, просятъ родныхъ и знакомыхъ пожаловать на погребеніе покойнаго въ оградѣ Ванкскаго собора въ субботу, 12-го іюля. Тѣло прибудетъ на станц. Тифлисъ з. ж. д. въ 10 часовъ утра. 417 1.

Գեներալ-լեյտենանտ Դ. Բ. Տեր-Ասատուրովի մահազդը «Կավկազ» թերթից



**ՆԻԿՈԼԱՅ ԲՈԳԴԱՆԻ ՏԵՐ-ԱՍԱՏՈՒՐՈՎ**
**(10.09.1854 - 1910 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (05.10.1910)**

Գեներալ Դ. Բ. Տեր-Ասատուրովի կրտսեր եղբայրն է: Ծնվել է Թիֆլիսում, հոգևորականի ընտանիքում: Ավարտել է Թիֆլիսի մասնավոր գիմնազիան:

1873 թվականից ծառայել է բանակում:

Մասնակցել է 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմին: Եղել է հեծելավաշտի հրամանատար:

1905-1910 թվականներին ղեկավարել է Սմոլենսկի 8-րդ վիշապազունդը:

1905 թվականի հոկտեմբերի 5-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** III աստիճանի (սրերով և ժապավենով, 1878), II աստիճանի (1894), **«Սուրբ Աննայի»** IV աստիճանի (արիության համար, 1877), II աստիճանի (սրերով և ժապավենով, 1880) և II աստիճանի, **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (ժապավենով, 1891) շքանշաններով:



**ԱՐՇԱՍ ԱՐՏԵՄԻ**
**ՏԵՐ-ՂՈՒԿԱՍՈՎ**
**(1819 - 08.01.1881)**

**ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ (06.12.1874)**

Ծնվել է Թիֆլիսում, հոգևորականի ընտանիքում: Սովորել է հաղորդակցության ճանապարհների կորպուսի ինժեներական ինստիտուտում, որն ավարտել է 1837 թվականին:

1837-1839 թվականներին նրան պահել են ինստիտուտում հետագա ուսման մեջ խորանալու համար:

1839-1841 թվականներին ծառայել է Սանկտ Պետերբուրգի տարանցիկ երկաթուղու 1-ին տնօրինությունում:

1841-1852 թվականներին ծառայել է Կովկասի ռազմական հաղորդակցման տնօրինությունում:

1852 թվականին զորակոչվել է բանակ՝ որպես մայոր և նշանակվել է Ապշերոնյան 81-րդ հետևակային գնդի 3-րդ գումարտակի հրամանատար:

Մասնակցել է 1853-1856 թվականների Ղրիմի (Արևելյան) պատերազմին:

1859-1865 թվականներին գնդապետի կոչումով ղեկավարել է Ապշերոնյան 81-րդ հետևակային գունդը:

Մասնակցել է Արևելյան և Արևմտյան Կովկասի նվաճման, Աուլ Գունիբի գրավման և Շամիլին գերեվարելու ռազմական գործողություններին:

**1865 թվականի օգոստոսի 5-ին արժանացել է գեներալ-մայորի զինվորական կոչման** և նշանակվել է 19-րդ հետևակային դիվիզիայի ղեկավարի օգնական: Միաժամանակ ընդգրկվել է Ապշերոնյան 81-րդ հետևակային գնդի ցուցակներում, ինչը չափազանց պատվաբեր նշանակում է համարվել:

1868 թվականի օգոստոսի 25-ին նշանակվել է Թերեքի մարզի միջին բաժնի վարիչ: Եղել է Գրոզնոյի լեռնաբնակների տարրական դպրոցի կազմակերպիչ ու պատվավոր խնամակալ:

1869-1870 թվականներին ղեկավարել է 38-րդ հետևակային դիվիզիան:

1870-1876 թվականներին ղեկավարել է Կովկասյան II բանակային կորպուսը:

1876 թվականին նշանակվել է ռուսական զորքերի Երևանյան զորաջոկատի հրամանատար:

Մասնակցել է 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմին:

1877 թվականի ապրիլի 18-ին նա առանց կռվի գրավում է Բայազետի բերդը և այն ազատագրում է թուրքերից: Բայազետը գրավելուց հետո այնտեղ է թողնում մի փոքրիկ կայազոր, ու ինքը արշավում է դեպի Էրզրում:

1877 թվականի մայիսի 28-ին գրավում է Ալաշկերտը, իսկ հունիսի 9-ին՝ Դայարը: Հոկտեմբերի 18-ին թուրքերը ծանր պարտություն են կրում Դևեբոյնի ճակատամարտում:

1878 թվականին նշանակվել է Կովկասյան գրենադերների դիվիզիայի պետ և Ալեքսանդրապոլ-Ախալքալաքի գավառներում տեղակայված զորքերի հրամանատար:

1879 թվականին նրա ենթակայությանն են հանձնվել Անդրկասպյան զորքերը, սակայն հիվանդության պատճառով նա հրաժարվել է այդ պաշտոնից և նշանակվել է Կովկասի II բանակային կորպուսի հրամանատար:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է **«Ոսկե զենք»**-ով (արիության համար, 1859), **«Սուրբ Գեորգիի»** IV աստիճանի (8 սեպտեմբերի, 1859, «Առլ Գունիբի գրավման համար») և III աստիճանի (22 հուլիսի, 1878, «1877 թվականի հունիսին Բայազետի գրավման և Բայազետի կայազորի շրջափակումը վերացնելու ժամանակ ցուցաբերած արիության և անձնազոհության համար») շքանշաններով, Ռուսաստանի **«Սպիտակ արծիվ»** (սրերով, 1878), **«Սուրբ Ստանիսլավի»** II (1842) և I աստիճանների, **«Սուրբ Աննայի»** III (1874), II (1879), I (սրերով, 1870) և I աստիճանների (կայսերական թագով), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (1860), III աստիճանի (սրերով, 1862) և II աստիճանի (1877) շքանշաններով:

Ստացել է նաև արտասահմանյան երկրների պարգևներ, այդ թվում՝ Պրուսիայի **«Պատվո շքանշան»** (1878), **Մեքլենբուրգ-Շվերինյան գրիֆի** II աստիճանի շքանշան (1878) և **Մարտական վաստակի** համար II աստիճանի շքանշան:

Մահացել է Թիֆլիսում, թաղվել է 1881 թվականի հունվարի 11-ին Վանքի հայոց տաճարի տոհմական դամբարանում (*այժմ՝ Աթոնելի փողոց, 1936 թվականին տաճարի ապամոնտաժման ընթացքում նրա աճյունը և տապանաքարը տեղափոխվել են Թբիլիսիի Սուրբ Գևորգ հայոց առաջնորդանիստ եկեղեցու բակ: Շիրիմը պահպանվում է պետության կողմից: Հեղինակային ծանոթագրություն*):

Ժամանակակիցների հիշում են. «**Ա. Ա. Տեր-Ղուկասովն իր միջոցների մեծ մասն օգտագործել է կարիքավոր հայ երեխաների դաստիարակության համար: Նա չի սիրել խոսել իր արժանիքների մասին, և եթե ինչ-որ մեկը փորձել է այդ մասին խոսել, նա պատասխանել է, որ դժվար չէ լավ զորահրամանատարի անուն վաստակել այն դեպքում, երբ հրամանատարը շրջապատված է այնպիսի արժանավոր զինվորներով ու սպաներով, որոնցով լի է ռուսական բանակը: Նա բացարձակապես չի ունեցել այնպիսի կապեր, որոնք ճանապարհ կբացեին նրան դեպի ծառայողական կարիերա, և չնայած այս կապերի բացակայությանը, նա բարձր պաշտոնների է հասել բացառապես իր անձնական արժանիքների շնորհիվ: Նա ուշադրությամբ ու հոգատարությամբ է վերաբերվել ենթականերին, պողպատե կամքի ուժ է ունեցել, ծառայության մեջ պահանջկոտ է եղել, բայց առավել պահանջկոտ է եղել իր նկատմամբ: Լինելով կիրթ ու զարգացած անձնավորություն, կարողացել է վաստակել իր զինվորների սերն ու հարգանքը: Տեր-Ղուկասովը կովկասյան դպրոցի հերոսների տիպիկ ներկայացուցիչներից է: Իր ողջ ծառայությունը նա անցկացրել է Կովկասում և, լինելով տարածաշրջանի բնիկ, հիանալի տիրապետել է տեղի ավանդույթներին**»:



8-го января скончался командиръ 2-го армейскаго Кавказскаго корпуса, **генералъ-лейтенантъ Арзасъ Артемьевичъ Тергукасовъ.** Погребеніе покойнаго имѣетъ быть 11-го января, въ оградѣ Ванкскаго собора, послѣ заупокойной литургіи, которая начнется въ 10 ч. утра.

Գեներալ Ա. Ա. Տեր-Ղուսակովի մահազդը «Կավկազ» թերթից






Գեներալ Ա. Ա. Տեր-Ղուսակովի շիրիմը Վանքի տաճարի տարածքում (մինչև 1936 թվականը) և այսօր Սուրբ Գևորգ եկեղեցու բակում



**ՍՏԵՓԱՆ ՀՈՎՍԵՓԻ ՔԻՇՄԻՇԵՎ**
**(10.06.1833 - 12.08.1897)**

**ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ (30.08.1888)**

Ծնվել է Թիֆլիսում, հայ ազնվականի ընտանիքում:

Մոսկվայի համալսարանն ավարտելուց հետո, 1860 թվականին ավարտել է Գլխավոր շտաբի ակադեմիան: Զինվորական ծառայության է անցել 1850 թվականից:

Մասնակցել է 1853-1856 թվականների Ղրիմի (Արևելյան), 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմներին, ռուսական բանակի արշավանքներին Միջին Ասիայում:

1872 թվականի դեկտեմբերի 6-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1870-1877 թվականներին ղեկավարել է Անդրկովկասում զորքերի տեղաշարժը երկաթուղով և ծովով:

**1877 թվականի նոյեմբերի 8-ին նրան շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում:**

1878-1879 թվականներին եղել է Էրզրումի օկրուգի պետ:

1879-1885 թվականներին ծառայել է Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարի ենթակայության ներքո:

1885-1887 թվականներին եղել է Կովկասյան ռազմական օկրուգի զորքերի կազմում:

1887-1897 թվականներին ղեկավարել է Թիֆլիսի տեղական բրիգադը:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է **«Ոսկե զենք»**-ով (արիության համար, 1877), Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** II աստիճանի (1868) և I աստիճանի

(սրերով, 1879), **«Սուրբ Աննայի»** II աստիճանի (1870) և I աստիճանի (1888), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (1864, սրերով՝ 1868), III աստիճանի (1874) և II աստիճանի (1886) շքանշաններով:

Մի շարք գիտական աշխատությունների հեղինակ է:

Մահացել է Թիֆլիսում: Թաղվել է Վանքի հայոց տաճարի տարածքում (*այժմ՝ Աթոնելի փողոց, 1936 թվականին, տաճարի ապամոնտաժման ժամանակ նրա աճյունն ու տապանաքարը չեն պահպանվել: Հեղինակային ծանոթագրություն*):



Послѣ непродолжительной, но тяжкой болѣзни 8-го августа, въ 8 часовъ вечера, скончался начальникъ 24 тифлисской мѣстной бригады генералъ-лейтенантъ

**Степанъ Іосифовичъ Кишмишевъ.**

Братья и сестры покойнаго съ глубокимъ прискорбіемъ извѣщая родныхъ, знакомыхъ и сослуживцевъ, покорнѣйше просятъ пожаловать на выносъ тѣла усопшаго изъ его дома, Ртищевская улица, № 10, во вторникъ, 12-го августа, въ 10 часовъ утра, въ Ванкскій соборъ, въ оградѣ котораго будетъ предано землѣ тѣло усопшаго. Панихиды будутъ совершены въ воскресенье и понедѣльникъ, 10-го и 11-го августа, въ 7 часовъ вечера.

454 (3) 1.

Գեներալ-լեյտենանտ Ս. Հ. Քիշմիշևի մահազդը «Կավկազ» թերթից



**ԿՈՆՍՏԱՆԴԻՆ ՆԻԿՈԼԱՅԻ ՇԱԳՈՒԲԱՏՈՎ**
**(11.01.1845 - 1920 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (1901)**

Ծնվել է Թիֆլիսում:

1863 թվականից ծառայել է բանակում՝ որպես սպա:

Մասնակցել է 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմին: Պատերազմի ընթացքում ծառայել է Պերեյասլավի 18-րդ վիշապազնդում:

1879 թվականից ծառայել է Կովկասյան 2-րդ բանակային կորպուսի 2-րդ հեծելազորային դիվիզիայում:

1890-1892 թվականներին ծառայել է որպես Կովկասի հեծելազորային պահեստազորի կադրային վերապատրաստման ծառայության պետ:

1894-1895 թվականներին նմանատիպ ծառայության պետ է եղել հեծելազորի պահեստային բրիգադների վերապատրաստման տեսչական բաժնում:

1895 թվականի հունվարի 13-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1901 թվականին մունդիրով և թոշակի ապահովմամբ դուրս է եկել զինվորական ծառայությունից:

Մարտական վաստակի համար պարգևատրվել է **«Ոսկե զենք»**-ով (արիության համար, 1878), Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** II աստիճանի (1877), **«Սուրբ Աննայի»** II աստիճանի (սրերով, 1879), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (սրերով և ժապավենով, 1877) շքանշաններով:



**ՆԻԿՈԼԱՅ ՇԱՆՇԻԱՅԻ ՇԱՆՇԻԵՎ**
**(24.01.1862 - 1933 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (05.10.1913)**

Ծնվել է Թիֆլիսում:

Սովորել է Մոսկվայի զինվորական 2-րդ գիմնազիայում: Զինվորական ծառայության է անցել 1880 թվականին:

1882 թվականին ավարտել է Ալեքսանդրովյան 3-րդ ռազմական ուսումնարանը և նույն թվականից ծառայել է Երևանի լեյբ-գրենադերների 13-րդ գնդում: Վաշտի հրամանատար է եղել 9 տարի:

1913 թվականի հոկտեմբերի 5-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

Մասնակցել է 1914-1918 թվականների Առաջին համաշխարհային պատերազմին: Իր գնդի կազմում, Կովկասյան գրենադերների դիվիզիայի հետ ակտիվորեն մասնակցել է 1914 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Արևելյան Պրուսիայում (մասնավորապես՝ 1914 թվականի սեպտեմբերի 21-ին Գանչի ճակատամարտում ղեկավարել է իր գնդի գործողությունները), Վարշավայի ուղղությամբ (1914 թվականի նոյեմբերին) և Պրասնիշի մոտ (1915 թվականի մարտին) մղված մարտերին:

1915 թվականի ապրիլի 2-ին նշանակվել է Երևանի լեյբ-գրենադերների 13-րդ գնդի հրամանատար:

1915-1917 թվականներին ղեկավարել է Էստլանդի 8-րդ հետևակային գունդը:

1917 թվականի մարտի 13-ին նշանակվել է 193-րդ հետևակային դիվիզիայի պետ:

1917 թվականի վերջերին գտնվել է Ռումինիայի ռազմաճակատում:

1917 թվականի դեկտեմբերին ռազմաճակատից ուղիղ մեկնել է Թիֆլիս, որտեղ իր ընտանիքի հետ ապրել է մինչև 1918 թվականի փետրվար:

1919 թվականի մայիսից ծառայել է «Կամավորական բանակի» գլխավոր հրամանատարի շտաբում:

1920 թվականի հոկտեմբերի 30-ին թողել է Ղրիմը և վտարանդի է դարձել:

1922-1924 թվականներին ապրել է Պաչիր քաղաքում (Սերբիա), հիվանդության ու ծայրահեղ աղքատության մեջ: Աշխատել է որպես պահակ շաքարի գործարանում:

1933 թվականից հետո նրա ճակատագիրն անհայտ է (*հեղինակային ծանոթագրություն*):

Մարտական վաստակի համար պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** II աստիճանի (1906), **«Սուրբ Աննայի»** II աստիճանի (1907, սրերով՝ 1916), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (1912), III աստիճանի (1915) շքանշաններով:



**ԱՐԿԱԴԻ ԿԱՐԱՊԵՏԻ**
**ԽԱՆԴԱՄԻՐՈՎ**
**(ՄԱՀԱՑԵԼ Է 28.12.1892 Թ.)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (08.11.1882)**

Ծնվել է Թիֆլիսում:

Ծառայել է լեյբ-գվարդիայի Երևանյան 13-րդ գնդում: Ողջ կյանքի ընթացքում ծառայել է Կովկասում:

Մասնակցել է 1853-1856 թվականների Ղրիմի (Արևելյան) և 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմներին:

1882 թվականին զինվորական ծառայությունից անցել է թոշակի մունդիրով և լրիվ թոշակի ապահովմամբ:

Թաղվել է Թիֆլիսում, Վերեի գերեզմանոցում:



**ԹԱՐԽԱՆ ԱՂԱՄԱԼԻ**
**ԽՈՋԱՄԻՆԱՍՈՎ, ԻՇԽԱՆ**
**(28.05.1825 - 1909)**

**ԻՆԺԵՆԵՐ- ԳԵՆԵՐԱԼ (24.02.1897)**

Ծնվել է Թիֆլիսում: 1843 թվականին ավարտել է գլխավոր ինժեներական ուսումնարանը, 1845 թվականին՝ գլխավոր ինժեներական ուսումնարանի սպայական դասարանը:

1845 թվականին հաշվառվել է ինժեներական կորպուսում և ծառայության է նշանակվել Թիֆլիսում: Երկար ժամանակ ծառայել է Կովկասում: Եղել է հայտնի ռազմական ինժեներ:

Մասնակցել է 1853-1856 թվականների Ղրիմի (Արևելյան) պատերազմին: 1839 թվականից ծառայել է բանակում, 1849 թվականից եղել է սպա:

1857-1865 թվականներին եղել է Կովկասյան առանձին կորպուսի Գլխավոր շտաբի ինժեներական բաժնի վարիչ:

1864 թվականի ապրիլի 9-ին արժանացել է գնդապետի զինվորական կոչման:

**1875 թվականի օգոստոսի 30-ին նրան շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում:**

1865-1875 թվականներին եղել է Կովկասյան ռազմական օկրուգի ինժեներական բաժնի տեսուչ:

**1882 թվականի օգոստոսի 30-ին ստացել է գեներալ-լեյտենանտի զինվորական կոչում:**

1875-1897 թվականներին հաշվառվել է Կովկասյան ռազմական օկրուգի զորքերի և ինժեներական կորպուսի կազմում:

1897 թվականին տարիքի բերումով, մունդիրով և թոշակի ապահովմամբ դուրս է եկել զինվորական ծառայությունից:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** II աստիճանի (կայսերական թագով, 1859) և I աստիճանի (1879), **«Սուրբ Աննայի»** III աստիճանի (1852), II աստիճանի (կայսերական թագով, 1866) և I աստիճանի (1884), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (սրերով և ժապավենով, XXV-ամյա անբասիր ծառայության համար, 1869), III աստիճանի (1872) և II աստիճանի (1890), **«Սպիտակ արծիվ»** (1893) շքանշաններով:

# ՀԱՎԵԼՎԱԾ I

## ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ, ՈՐՈՆՔ ՇՆՈՐՀՎԵԼ ԵՆ ԾԱԳՈՒՄՈՎ ՎՐԱՍՏԱՆՅԻ ՀԱՅԱԶԳԻ ԳԵՆԵՐԱԼՆԵՐԻՆ




«Սուրբ Անդրեաս Նախավկայի» շքանշան




«Սուրբ Ալեքսանդր Նևսկու» շքանշան




**«Սուրբ Գեորգիի» շքանշանի II, III, IV աստիճանի խաչեր**




**«Սուրբ Գեորգիի» շքանշանի IV աստիճանի խաչ**
**(XXV-ամյա անբասիր ծառայության համար)**



**«Սուրբ Գեորգիի» II (ձախ կողմում), III (մեջտեղում) և IV (աջ կողմում) աստիճանի շքանշանները կրելու կարգը**




**XV, XXV, XXX, XL և L տարվա անբասիր ծառայության համար տրվող կրծքանշաններ «Սուրբ Գեորգիի» շքանշանի ժապավենի վրա**



**Ռուսական կայսրության բարձրագույն շքանշանները կրելու կարգը**



«Սուրբ  Վլադիմիրի» շքանշան




«Սպիտակ արծիվ» շքանշան



«Սուրբ Աննայի» շքանշան



«Գեորգիևյան ոսկե զենք» արիության համար (ձախ կողմում)
«Սուրբ Ստանիսլավի» շքանշան (մեջտեղում)
«Սուրբ Աննայի զենք» արիության համար (աջ կողմում)



Արիության համար տրվող «Սուրբ  Գեորգիի» շքանշան և
Գեորգիևյան ոսկե զենքից կախվող ժապավեն




**Հետևազորի գեներալների ուսադիրներ**




**Հրետազորի  գեներալների ուսադիրներ**




**Ինժեներական ծառայության գեներալների ուսադիրներ**



**Գլխավոր շտաբի պաշտոնաթող գեներալի (ձախ կողմում), Նիկոլայ I-ի շքախմբի գեներալ-ադյուտանտի (մեջտեղում) և Նիկոլայ II-ի շքախմբի գեներալ-մայորի (աջ կողմում) ուսադիրներ**



**Գեներալ-մայորի (ձախ կողմում) և գեներալ-լեյտենանտի էպոլետներ (1911)**





# ՄԱՍ II

# ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# (1917)



## ԳԵՈՐԳԻ ԴԱՎԻԹԻ ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ-ԴՈԼԳՈՐՈՒԿՈՎ (ԱՐՂՈՒԹՅԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿ), ԻՇԽԱՆ

**(18.11.1873 - 07.02.1949)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (26.08.1917)**

Ծնվել է Թիֆլիսում, պաշտոնաթող գեներալ-լեյտենանտ Դավիթ Լուարսաբի Արգուտինսկի-Դոլգորուկովի (1853-1910) որդին է:

Ընդհանուր կրթությունը ստացել է Նեպլյուևի կադետական կորպուսում (1892):

1894 թվականին ավարտել է Նիկոլաևյան հեծելազորային ուսումնարանը: Զինվորական ծառայությունը սկսել է 1893 թվականից 25-րդ վիշապազգնդում՝ որպես կոռնետ, ավելի ուշ տեղափոխվել է Գրոդնոյի լեյբ-գվարդիական հուսարական գունդ՝ գվարդիական կոռնետի կոչումով (1894): Նրան հաջորդաբար շնորհվել են պորուչիկի (1898), շտաբսռոտմիստրի (1902) և ռոտմիստրի (1906) զինվորական կոչումներ:

1912 թվականի օգոստոսի 26-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

Մասնակցել է 1914-1918 թվականների Առաջին համաշխարհային պատերազմին:

1916 թվականի ապրիլի 15-ին նշանակվել է Նովոռոսիյսկի 3-րդ վիշապազգնդի հրամանատար:

1916 թվականի դեկտեմբերի 7-ին հիվանդության պատճառով ազատվել է զբաղեցրած պաշտոնից և ծառայության է կոչվել Օդեսայի ռազմական օկրուգի շտաբի անձնակազմի պահեստազորում:

1917 թվականին ժամանակավոր կառավարության կողմից ազատվել է բանակից հիվանդության պատճառով:

1918 թվականի սկզբին եկել է Թիֆլիս: 1921 թվականից որպես վտարանդի ապրել է Ֆրանսիայում:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է **«Սուրբ Գեորգիի ոսկե զենք»**-ով (25.08.1916), Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** III աստիճանի (1907), III աստիճանի (սրերով և ժապավենով, 1917), II աստիճանի (սրերով, 1914), **«Սուրբ Աննայի»** III աստիճանի (1911), II աստիճանի (սրերով, 1914), III աստիճանի (սրերով և ժապավենով, 1915), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (սրերով և ժապավենով, 1915) և III աստիճանի (սրերով, 1915) շքանշաններով:

Մահացել է Նիցցայում: Թաղված է Կոկադի գերեզմանոցում (իշխան Արգուտինսկի-Դոլգորուկովների № 6, 8 դամբարանում):



**ՊԱՎԵԼ ԴԱՎԻԹԻ**
**ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ-ԴՈԼԳՈՐՈՒԿՈՎ**
**(ԱՐՂՈՒԹՅԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿ),**
**ԻՇԽԱՆ**
**(18.08.1872 - 1943)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (27.07.1917)**

Ծնվել է Թիֆլիսում: Պաշտոնաթող գեներալ-լեյտենանտ Դավիթ Լուարսաբի Արգուտինսկի-Դոլգորուկովի (1853-1910) որդին և գեներալ-մայոր Գ. Դ. Արգուտինսկի-Դոլգորուկովի ավագ եղբայրն է:

Սովորել է Նիկոլաևյան կադետական կորպուսում (1892):




Գեներալ-մայոր Պ. Դ. Արգուտինսկի-Դոլգորուկովի տապանաքարը

1894 թ. ավարտել է Նիկոլաևյան հեծելազորային ուսումնարանը, ծառայել է լեյբ-գվարդիայի Գրոդնոյի հուսարական գնդում: Ղեկավարել է 7-րդ վիշապագունդը:

1914 թ. նոյեմբերի 11-ից ընդգրկվել է Կիևի ռազմական օկրուգի շտաբի անձնակազմի ցուցակում:

Մահացել է Նիցցայում: Թաղված է Կոկադի գերեզմանոցում (իշխան Արգուտինսկի-Դոլգորուկովների № 6, 8 դամբարանում):



**ՄԻԽԱՅԻԼ ՎԱՍԻԼԻԻ**
**ԱՐԵՇԵՎ (ԱՐԵՇՅԱՆ)**
**(05.09.1876 - 1919)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (20.09.1917)**

Ծնվել է Թիֆլիսում: Թիֆլիսի կադետական կորպուսի 6-րդ դասարանն ավարտելուց հետո սովորել է Թիֆլիսի յունկերների հետևակային ուսումնարանում, որն ավարտել է 1894 թվականին (2-րդ աստիճանով): Այնուհետև սովորել է սպայական հրաձգության դպրոցում: Զինվորական ծառայության է անցել 1894 թվականին: Ծառայել է որպես պոդպորուչիկ Ազովի 45-րդ հետևակային գնդում:

1900-1908 թվականներին ծառայել է վրաց գրենադերների 14-րդ գնդում:

Մասնակցել է 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմին:

1908-1913 թվականներին ղեկավարել է 63-րդ պահեստազորային հետևակային բրիգադի Մայկոպի 249-րդ պահեստազորային գումարտակը:

1913-1916 թվականներին ծառայել է Կովկասյան 3-րդ հրաձգային գնդում:

Մասնակցել է 1914-1918 թվականների Առաջին համաշխարհային պատերազմին: Ղեկավարել է նույն գնդի գումարտակը:

1916-1917 թվականներին ղեկավարել է Կովկասյան 3-րդ հրաձգային գունդը:

1916 թվականի ապրիլի 17-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1917 թվականին Ռուսաստանի ժամանակավոր կառավարության կողմից նշանակվել է Կովկասյան 1-ին հրաձգային դիվիզիայի բրիգադի հրամանատար:

1917-1918 թվականներին ղեկավարել է Հայկական կամավորական կորպուսի 1-ին դիվիզիան, որը հրամանատարելով 1918 թվականի մայիսին դիմակայել է թուրքական ներխուժմանը Ալեքսանդրապոլ:

Պարտությունից հետո, 1918 թվականի մայիսի 15-ին ազատվել է զբաղեցրած պաշտոնից: Հետագայում ծառայել է հայկական բանակում՝ ղեկավարելով Ղարաքիլիսայի ջոկատը:

1919 թվականին, որպես հայկական պատվիրակության ռազմական խորհրդական, գործուղվել է Փարիզ՝ մասնակցելու Փարիզի խաղաղության վեհաժողովին: Հետագա ճակատագիրն անհայտ է:

Ծառայության մեջ ցուցաբերած մարտական հաջողությունների և վաստակի համար պարգևատրվել է **«Սուրբ Գեորգիի»** IV աստիճանի (31 մայիսի, 1915), **«Գեորգիևյան զենք»**-ով (7 նոյեմբերի, 1915), Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** II աստիճանի (1909), **«Սուրբ Աննայի»** IV աստիճանի (արիության համար, սրերով, 1905) և III աստիճանի (սրերով և ժապավենով, 1905), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (սրերով և ժապավենով, 1905) շքանշաններով:



**ՀԱԿՈԲ ԳԵՐԱՍԻՄԻ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ**
**(25.08.1879 - 23.12.1943)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (30.08.1917)**

Ծնվել է Թիֆլիսի նահանգի Ախալցիխե քաղաքում, հայ ազնվականի ընտանիքում:

1898 թվականին **Ոսկե մեդալով** ավարտել է Թիֆլիսի արական գիմնազիան, ապա՝ 1900 թվականին, Կիևի ռազմական ուսումնարանը (առաջիններից է եղել շրջանավարտների մեջ, ում անունը գերազանց առաջադիմության համար փորագրվել է մարմարե Պատվո սալատախտակին), իսկ 1907 թվականին ավարտել է Նիկոլաևյան Գլխավոր շտաբի ակադեմիան:

1900 թվականին որպես պոդպորուչիկ ծառայել է Ավստրիայի Կեկսհոլմի կայսերական գնդում: Նույն շրջանում նրան հանձնարարվում է Պարսկաստանում կատարել ռազմաքաղաքական հատուկ առաջադրանք, որը փայլուն հաջողությամբ ավարտում է իր բնատուր ռազմաքաղաքագիտական տաղանդի և արևելյան լեզուների իմացության շնորհիվ:

1904 թվականից եղել է պորուչիկ: Նույն թվականից սովորել է Գլխավոր շտաբի ռազմական ակադեմիայում, սակայն Ճապոնիայի հետ պատերազմի պատճառով ընդհատել է ուսումը և մեկնել է ռազմաճակատ, որտեղ ղեկավարել է Արևելյան Սիբիրի 19-րդ գնդի վաշտը:

1905 թվականի փետրվարի 25-ին Պուխե գյուղի մոտ տեղի ունեցած մարտերում վիրավորվել է ձախ ձեռքից և փշրտող արկի պայթյունի հետևանքով ստացել է սալջարդ: Չնայած ծանր վերքերին և սալջարդին՝ նա չի լքել դիրքերը, օգնել է վիրավորներին, շարունակել է ղեկավարել մարտը:

Նրա անձնվիրությունը բազմիցս արտացոլվել է մանջուրյան բանակի գլխավոր հրամանատարի հրամանագրերում:

1907 թվականին ստացել է շտաբս-կապիտանի զինվորական կոչում և ղեկավարել է լեյբ-գվարդիայի Կեկսհոլմի գնդի վաշտը:

1908 թվականի նոյեմբերի 26-ին նրան շնորհվել է կապիտանի զինվորական կոչում և նշանակվել է Թուրքեստանի ռազմական օկրուգի շտաբի գլխավոր ադյուտանտի օգնական: Այնուհետև ղեկավարել է օկրուգի շտաբի 4-րդ (հետախուզական) վարչությունը: Գաղտնի ռազմագիտական և գործնական առաջադրանքներ է կատարել Մոնղոլիայում, Տիբեթում, Աֆղանստանում, Կորեայում, Միջին Ասիայում՝ Բուխարայում, Կաշգարում, Քերմիշում, Կուշկայում, Մերվում, բացահայտել է պանթուրքական էմիսարների դավադրությունը Տաշքենդում և Թուրքեստանի այլ քաղաքներում: Այս առաջադրանքը փայլուն կատարելու համար ժամկետից շուտ նրան շնորհվել է փոխգնդապետի զինվորական կոչում:

Մասնակցել է 1914-1918 թվականների Առաջին համաշխարհային պատերազմին: Պատերազմի ժամանակ ծառայել է Թուրքեստանի I բանակային կորպուսի շտաբում՝ որպես հանձնարարությունների գծով շտաբի սպա:

1914 թվականի հոկտեմբերից մինչև 1915 թվականի հունվար ժամանակավորապես զբաղեցրել է Թուրքեստանի I բանակային կորպուսի շտաբի ղեկավարի պաշտոնը:

1915 թվականի հունվարից մինչև 1916 թվականի նոյեմբեր եղել է 76-րդ հետևակային դիվիզիայի շտաբի ղեկավար, Թուրքեստանի 2-րդ հրաձգային բրիգադի շտաբի ղեկավար, Թուրքեստանի 2-րդ հրաձգային հրետանային բրիգադի շտաբի ղեկավար:

1915 թվականի դեկտեմբերի 6-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1916 թվականի նոյեմբերի 22-ին նշանակվել է Թուրքեստանի հրաձգային 8-րդ գնդի հրամանատար:

Ռուսաստանում 1917 թվականի Փետրվարյան հեղափոխությունից հետո աջակցել է բանակի ժողովրդավարական բարեփոխումների կողմնակիցներին:

1917 թվականի մայիսին ընտրվել է Պետրոգրադի Համառուսական սպայական համագումարի պատվիրակ:

1917 թվականի հունիսից ծառայել է Ռուսաստանի ռազմական նա-

խարար Ա. Կերենսկու (1881-1970) կաբինետում: Ամուսնացել է Ա. Կերենսկու քրոջ՝ Աննայի հետ (1879-1946) *(հեղինակային նշում)*:

1917 թվականի հուլիսի 12-ին նշանակվել է Պետրոգրադի ռազմական օկրուգի շտաբի ղեկավար:

Ռուսական բանակում հայկական ստորաբաժանումների ստեղծման կազմակերպիչներից է եղել:

1917 թվականի հունվարին ընտրվել է հայոց զինվորական կոմիսար և Հայկական ռազմական խորհրդի նախագահ: Ակտիվորեն զբաղվել է հայկական բանակային կորպուսի կազմավորմամբ:

Նախքան բոլշևիկների իշխանության գալը նա միջոցներ է ձեռնարկել ժամանակավոր կառավարությանը հավատարիմ ստորաբաժանումների համակենտրոնացման համար, Հյուսիսային ճակատի շտաբին հրամայել է հատուկ զինվորական ջոկատ ուղարկել Պետրոգրադ (հրամանը չի իրականացվել ճակատի հրամանատարության կողմից): Արդյունքում Բագրատունին միայն սուղ ռազմական ուժ է կարողացել հավաքել:

1917 թվականի հոկտեմբերին Ժամանակավոր կառավարության նախարար Ն. Կիշկինը (1864-1930), ստանալով քաղաքում կարգուկանոնը վերականգնելու լիազորություն, գնդապետ Գ. Պոլկովնիկովին ազատում է Պետրոգրադի ռազմական օկրուգի զորքերի գլխավոր հրամանատարի պաշտոնից և նրա փոխարեն նշանակում է ավելի եռանդուն գեներալ Բագրատունուն, սակայն վերջինս նույնպես չի կարողանում հակադարձել բացասական իրավիճակի զարգացմանը:

Օկրուգի շտաբը բոլշևիկներին հանձնելուց հետո նա հրաժարական է տալիս և ձերբակալվում է Ձմեռային պալատի մոտ: Բանտարկված է եղել Պետրոպավլովյան ամրոցում:

1917 թվականի դեկտեմբերի 15-ին ազատ է արձակվել, իսկ հաջորդ օրը շարունակել է իր գործունեությունը՝ որպես հայկական զինվորական կոմիսար:

1917 թվականի վերջին և 1918 թվականի սկզբին շարունակել է աշխատել բանակային կորպուսի կազմավորման և Կովկասում հայ զինծառայողների համակենտրոնացման ուղղությամբ:

1918 թվականի մարտին նա ժամանել է Բաքու, որտեղ մարտի 15-ին մահափորձ է արվել նրա դեմ, ինչը հանգեցրել է նրա ոտքի անդամահատման:

Չնայած ծանր վերքերին՝ ադրբեջանական «Մուսավաթի» կուսակցության կազմակերպած ապստամբության ժամանակ մասնակցել է Բաքվի հայկական թաղամասերի պաշտպանության կազմակերպմանը, իսկ 1918 թվականի աշնան սկզբին մասնակցել է թուրքական և ադրբեջանական միավորված ուժերից Բաքվի պաշտպանությանը:

1918 թվականի օգոստոսից Բաքվի ռուսական զորքերի հրամանատարն է եղել՝ ղեկավարելով Բաքվի պաշտպանությունը: Թուրքական զորքերի հարձակման պայմաններում, 1918 թվականի սեպտեմբերի 16-ին հայկական զինված կազմավորումների ու փախստականների հետ ստիպված է եղել թողնել Բաքուն և մեկնել Էնզելի (Հյուսիսային Պարսկաստան):

Թուրքական զորքերի՝ Բաքվից հեռանալուց և 1918 թվականի նոյեմբերին անգլիական զորքերի՝ քաղաք մտնելուց հետո նա կրկին վերադարձել և ընտրվել է հայկական պատվիրակության ռազմական խորհրդական Փարիզի Խաղաղության վեհաժողովում:

1919 թվականի օգոստոսից եղել է ԱՄՆ-ում՝ որպես Հայաստանի Հանրապետության ռազմական առաքելության ղեկավար: Առաքելությունն ուղղված էր ԱՄՆ-ի հետ պաշտպանության ոլորտում համագործակցության բանակցություններին:

1919 թվականի նոյեմբերին պատվիրակությունը ժամանել է Նյու Յորք: Գեներալ Բագրատունին հանդիպել է բազմաթիվ ամերիկացի քաղաքական և հասարակական գործիչների, մասնակցել հանրահավաքների, խնդրել է Հայաստանին օգնություն ցուցաբերել և պաշտոնապես ճանաչել հայկական պետությունը:

Չնայած այն բանին, որ 1919 թվականի դեկտեմբերից մինչև 1920 թվականի հունվար Բագրատունին ընդունվում է ԱՄՆ-ի ռազմական նախարարի և պետքարտուղարի կողմից, այնուամենայնիվ ամերիկյան իշխանությունները հրաժարվում են ռազմական օգնություն ցուցաբերել երկրին, որը պաշտոնապես ճանաչված չէր:

Պատվիրակության առաքելության ավարտից հետո վերադարձել է Ֆրանսիա:

1920 թվականին նշանակվել է Հայաստանի Հանրապետության դեսպան Անգլիայում, որտեղ ապրել է մինչև մահ:

Մահացել է Լոնդոնում: Թաղված է Լոնդոնի Բրոմտոնի գերեզմանոցում:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է **«Գեորգիևյան զենք»**-ով (21 մայիսի, 1915), **«Սուրբ Գեորգիի»** IV աստիճանի (Պրասնիշի առման համար, 23 հունիսի, 1917) շքանշանով, Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** III աստիճանի (սրերով և ժապավենով, 1907), II աստիճանի (1914) և II աստիճանի (սրերով, 1915), **«Սուրբ Աննայի»** IV աստիճանի (արիության համար, 1905), III աստիճանի (1912) և II աստիճանի (սրերով, 1916), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (սրերով և ժապավենով, 1914) և III աստիճանի (սրերով, 1915) շքանշաններով:




Գեներալ-մայոր Հ. Բագրատունու շիրմաքարը Լոնդոնի Բրոմտոնի գերեզմանոցում



**ՎԱՍԻԼԻ ԳՐԻԳՈՐԻ ԲԵԲՈՒԹՈՎ**
**(ԲԵՀԲՈՒԹՅԱՆ), ԻՇԽԱՆ**
**(15.12.1864 - 1939)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (1917)**

Ծնվել է Թիֆլիսում: Գեներալ Դավիթ Բեբութովի եղբայրն է:

Ավարտել է Բաքվի ռեալական ուսումնարանը և Սանկտ Պետերբուրգի Կոնստանդինյան 2-րդ ռազմական ուսումնարանը:

Զինվորական ծառայության է անցել 1885 թվականից: Ծառայել է Վարշավայի պահակային հրետանու կազմում:

1908-1910 թվականներին ծառայել է որպես Կովկասյան լեռնահրետանային 1-ին դիվիզիոնի 2-րդ մարտկոցի հրամանատար:

1910-1913 թվականներին եղել է 39-րդ հրետանային բրիգադի 2-րդ մարտկոցի հրամանատար:

1913-1914 թվականներին եղել է 39-րդ հրետանային բրիգադի հրետանային շարժապահեստի ղեկավար:

1914 թվականի մայիսի 6-ին ստացել է գնդապետի զինվորական կոչում:

Մասնակցել է 1914-1918 թվականների Առաջին համաշխարհային պատերազմին:

1918 թվականի դեկտեմբերին հաշվառման է կանգնել Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական առաքելությունում:

Ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** I աստիճանի (1906), **«Սուրբ Աննայի»** II աստիճանի (1913) շքանշաններով:



**ԳԱԲՐԻԵԼ ԳՐԻԳՈՐԻ**
**ԿՈՐԳԱՆՈՎ (ՂՈՐՂԱՆՅԱՆ)**
**(03.05.1880 – 08.01.1954)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (21.11.1917)**

Ծնվել է Թիֆլիսում, գեներալ Գրիգոր Կորգանովի (Ղորղանյան) (1844-1914) որդին է: 1897 թվականին ավարտել է Թիֆլիսի կադետական կորպուսը, 1900 թվականին՝ Միխայիլովյան հրետանային ուսումնարանը, 1905 թվականին՝ Գլխավոր շտաբի ակադեմիան: Ռազմական կրթություն ստանալուց հետո, 1899 թվականին ծառայել է 6-րդ հեծելազորային-հրետանային մարտկոցում:

1908-1909 թվականներին եղել է Կովկասի I բանակային կորպուսի շտաբի ավագ ադյուտանտ:

1909-1913 թվականներին եղել է Կովկասյան հեծելազորային դիվիզիայի շտաբի ավագ ադյուտանտ:

Մասնակցել է 1914-1918 թվականների Առաջին համաշխարհային պատերազմին (ռազմական գործողությունների կովկասյան կովաբեմում):

34 տարեկան հասակում, 1914 թվականի դեկտեմբերի 6-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում: 1914-1915 թվականներին եղել է 39-րդ հետևակային դիվիզիայի շտաբի պետ:

1915-1916 թվականներին եղել է հեծելազորի Կովկասյան դիվիզիայի շտաբի պետ:

1916-1917 թվականներին ղեկավարել է Պերեյասլավի 15-րդ վիշապազունդը:

1917 թվականի սեպտեմբերի 10-ին նշանակվել է հեծելազորի 15-րդ դիվիզիայի շտաբի պետ:

1917 թվականի հոկտեմբերի 5-ին նշանակվել է Կովկասյան ռազմաճակատի զորքերի գլխավոր հրամանատարի շտաբի հերթապահ

գեներալ: Ճակատի լուծարումից հետո միացել է Հայաստանի Հանրապետության բանակին, եղել է Փարիզի միջազգային վեհաժողովի հայկական պատվիրակության ռազմական խորհրդական:

1920 թվականի վերջից վտարանդի է եղել: 1929 թվականին հիմնադրել, իսկ 1930-1934 թթ. եղել է «1914-1921 թվականների նախկին հայ սպա-մարտականների միության» պատվավոր նախագահը և Ֆրանսիայի «Մեծ Արևելք» մասոնական օթյակի *«France-Armenie»*-ի անդամ:

1947-1949 թվականներին մասոնական «Լոտոս» օթյակում հանդես է եկել զեկույցներով և քննարկումներով: *«Участие армян в Мировой войне на кавказском фронте»* (1914-1918) գրքի հեղինակն է (Փարիզ, 1927 թվական, ֆրանսերեն):

Պարգևատրվել է Ֆրանսիայի «**Պատվո լեգեոնի**» շքանշանով:

Մահացել է Փարիզում, թաղված է Փարիզի «Պեր Լաշեզ» գերեզմանոցում:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** III աստիճանի (1911), **«Սուրբ Վլադիմիրի»** III աստիճանի (սրերով, 1917) շքանշաններով:








## ՀՈՎՍԵՓ ԱՐՏԵՄԻ ՔԻՇՄԻՇԵՎ
**(06.08.1881 - 28.03.1962)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (1917)**

Գեներալ Ստեփան Քիշմիշևի եղբոր որդին է: Ծնվել է Թիֆլիսում, հայ ազնվականական ընտանիքում:

Ավարտել է Թիֆլիսի կադետական կորպուսը, այնուհետև՝ Ալեքսեևյան ռազմական ուսումնարանը և Ալեքսանդրովյան ռազմաիրավական ակադեմիան:

1898 թվականին, ռազմական ուսումնարանն ավարտելուց հետո ծառայել է բանակային հեծելազորին կից լեյբ-գվարդիայի Լիտվայի գնդում:

1908 թվականին առաջադրվել է զինվորական դատավորի պաշտոնի թեկնածու:

1909 թվականից եղել է Սանկտ Պետերբուրգի օկրուգային զինվորական դատարանի զինվորական դատավորի թեկնածու:

1911 թվականին Վարշավայի օկրուգային զինվորական դատարանի զինվորական դատախազի օգնականի պաշտոնից ազատվել և նշանակվել է Կովկասի օկրուգային զինվորական դատարանի զինվորական դատախազի օգնականի պաշտոնում:

1915 թվականի դեկտեմբերի 6-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1916-1917 թվականներին եղել է Կովկասի օկրուգային զինվորական դատարանի զինվորական դատախազի օգնական:

1918-1920 թվականներին ծառայել է Հայաստանի Հանրապետության բանակում:

1919 թվականին եղել է Վրաստանում Հայաստանի դիվանագիտական առաքելության ռազմական ներկայացուցիչ (*ռազմական կցորդ: Հեղինակային նշում*):

1920 թվականին տեղափոխվել է Լեհաստան:

Ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** III աստիճանի շքանշանով (1910):

Մահացել և թաղվել է Վարշավայում:



**ԳՐԻԳՈՐ ԱՐՏԵՄԻ ՇԵԼԿՈՎՆԻԿՈՎ (ՄԵՏԱՔՍՅԱՆ)**
**(28.07.1867 - 1920 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (30.09.1917)**

Ծնվել է Թիֆլիսում:

Սովորել է Թիֆլիսի կադետական կորպուսում, 1885 թվականից ծառայել է բանակում:

Ավարտել է Պավլովսկի 1-ին ռազմական ուսումնարանը:

1886 թվականից ծառայել է Տամանի 150-րդ հետևակային գնդում:

1912 թվականի դեկտեմբերի 6-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

Մինչև 1914 թվականը ծառայել է Կաբարդայի 80-րդ հետևակային գնդում:

1914 թվականից ծառայել է Երևանի լեյբ-գվարդիայի 13-րդ գնդում:

Մասնակցել է 1914-1918 թվականների Առաջին համաշխարհային պատերազմին:

1915 թվականին նշանակվել է Կովկասի 9-րդ հրաձգային գնդի հրամանատար: Նույն թվականի դեկտեմբերի 7-ին նշանակվել է Վալույսկի 290-րդ հետևակային գնդի հրամանատար:

1918-1920 թվականներին ծառայել է հայկական բանակում:

Հայաստանի խորհրդայնացումից հետո, 1921 թվականի փետրվարին ձերբակալվել է: Դրանից հետո ճակատագիրն անհայտ է:

Մարտական վաստակի համար պարգևատրվել է **«Սուրբ Գեորգիի»** IV աստիճանի շքանշանով (7 հունվարի, 1916), Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** II աստիճանի (1910), **«Սուրբ Աննայի»** III աստիճանի (1905), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (1915) և III աստիճանի (սրերով, 1916) շքանշաններով:



# ՄԱՍ III

# ԳԵՆԵՐԱԼ Պ. ՎՐԱՆԳԵԼԻ «ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿ»

# (1920)



## ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԻՄՈՆԻ ՕՍԻՊՈՎ
**(29.10.1872 - 04.12.1953)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (1918)**

Ծնվել է Թիֆլիսի նահանգի Դուշեթի ավանում:

1898 թվականին ավարտել է Թիֆլիսի հետևակային յունկերական ուսումնարանը:

Ծառայել է Ապշերոնյան 81-րդ հետևակային գնդում:

Մասնակցել է 1914-1918 թվականների Առաջին համաշխարհային պատերազմին:

Փոխգնդապետ լինելու ընթացքում պարգևատրվել է **«Սուրբ Գեորգիի»** IV աստիճանի շքանշանով (1 հունվարի, 1915):

1918 թվականին արժանացել է գնդապետի զինվորական կոչման:

Հյուսիսային Կովկասի մարտերից հետո, 1920 թվականի գարնանը Սպիտակ բանակի ստորաբաժանումների հետ նահանջել է դեպի Վրաստան, ապա՝ Ղրիմ, որտեղ մնացած ստորաբաժանումների հետ մնացել է մինչև 1920 թվականի նոյեմբերը:

1920 թվականին Ղրիմից գաղթել է Ֆրանսիա:

Փարիզում հիմնել է Ապշերոնյան 81-րդ հետևակային գնդի վետերանների ասոցիացիան և գնդի փառքի թանգարան-եկեղեցին, որոնք այսօրվա դրությամբ գտնվում են Նյու Յորքում:

Մահացել է Փարիզում: Թաղված է Սեն-Ժենևիվ-դե-Բուայի գերեզմանոցում:





# ՄԱՍ IV

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## (1918 - 1920)



**ՊԱՎԵԼ ՊԵՏՐՈՍԻ ԲԵԺԱՆԲԵԳՈՎ**
**(ԲԵԺԱՆԲԵԿՅԱՆ)**
**(29.01.1869 - 1962)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (1918)**

Ծնվել է Թիֆլիսում, կոլեգիայի խորհրդականի ընտանիքում:

Սովորել է Թիֆլիսի կադետական կորպուսում, Կոնստանդինյան 2-րդ ռազմական ուսումնարանում և 1896 թվականին՝ Նիկոլաևյան Գլխավոր շտաբի ռազմական ակադեմիայում (1-ին աստիճանով):

Զինվորական ծառայության է անցել 1887 թվականից:

Ծառայել է Կովկասի 4-րդ հրաձգային գումարտակում, Թիֆլիսի հետևակային յունկերական ուսումնարանում՝ որպես դասակի հրամանատար և նույն ուսումնարանում՝ որպես ուսուցիչ: Մասնակցել է ռուս-ճապոնական պատերազմին (1904-1905):

1905-1908 թվականներին եղել է Կովկասյան հեծելազորային բրիգադի վարչակազմի ավագ ադյուտանտ:

1908-1910 թվականներին ծառայել է Կուրինյան 79-րդ հետևակային գնդում:

1912 թվականի դեկտեմբերի 6-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1913-1914 թվականներին ծառայել է Կովկասյան հրաձգային 1-ին գնդում:

Մասնակցել է 1914-1918 թվականների Առաջին համաշխարհային պատերազմին: Պատերազմի ժամանակ եղել է Կովկասյան 4-րդ հրաձգային բրիգադի շտաբի պետ և Կովկասյան կամավորական 1-ին բրիգադի շտաբի պետ:

1916 թվականից ղեկավարել է 1-ին հրաձգային հայկական գումարտակը և Կովկասյան 22-րդ հրաձգային գունդը:

Ռուսաստանում 1917 թվականի Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ծառայել է Հայաստանի Հանրապետության բանակում: Ղեկավարել է հայկական հրաձգային բրիգադը:

1918 թվականի մարտին, հայ-թուրքական պատերազմի ժամանակ մասնակցել է Էրզրումի մոտ տեղի ունեցած մարտերին:

Հայաստանի խորհրդայնացումից հետո, 1920 թվականից ծառայել է Հայաստանի Կարմիր բանակում՝ որպես ակումբային բաժնի հրահանգիչ, զինվորական նվագախմբի ղեկավար, Կովկասի առանձին բանակի շտաբի հեծելազորային կազմի հաշվառման բաժնի վարիչ և շտաբի զորահավաքի բաժնի պետի օգնական:

1922-1923 թվականներին աշխատել է շտաբի հանրային ծառայության բաժնի պետի ենթակայության ներքո՝ որպես հանձնակատար: Հետագայում ընտանիքի հետ ապրել է Կենտրոնական Ասիայի Ֆերգանա քաղաքում, որտեղ աշխատել է ուսումնական հաստատություններում: Ստալինի մահից հետո, 1953 թվականին տեղափոխվել է Թբիլիսի, որտեղ էլ մահացել է (*թաղման վայրը հայտնի չէ: Հեղինակային ծանոթագրություն*):

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Աննայի»** IV աստիճանի (1906), III աստիճանի (սրերով և ժապավենով, 1904) և II աստիճանի (սրերով, 1905), **«Սուրբ Ստանիսլավի»** II աստիճանի (սրերով, 1905), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (սրերով և ժապավենով, 1911) շքանշաններով:



### ԿՈՆՍՏԱՆԴԻՆ ՄԻԽԱՅԵԼԻ ԳԱՄԱԶՈՎ (ՍԱԱՌՈՒՆԻ) (ՂԱՄԱԶՅԱՆ)
**(29.03.1866 - 19.06.1928)**

**ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ (28.05.1919)**

Ծնվել է Թիֆլիսում:

Ավարտել է Թիֆլիսի կադետական կորպուսը, Միխայիլովյան հրետանային ուսումնարանը և սպայական հրետանային դպրոցը:

Զինվորական ծառայության է անցել 1884 թվականից: Ծառայել է 39-րդ հրետանային բրիգադում:

Մասնակցել է 1904-1905 թվականների ռուս-ճապոնական պատերազմին:

1907 թվականից ղեկավարել է 21-րդ հրետանային բրիգադի 3-րդ մարտկոցը:

Մասնակցել է 1914-1918 թվականների Առաջին համաշխարհային պատերազմին:

1914 թվականի հոկտեմբերի 25-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1915 թվականին նշանակվել է Կովկասյան բանակի շտաբի հրետանային ստորաբաժանման պետ:

1916 թվականին նշանակվել է Կովկասյան ականանետային հրետանային 1-ին դիվիզիոնի հրամանատար:

1918-1920 թվականներին ծառայել է Հայկական ազգային կորպուսում:

Ղարաքիլիսայի ճակատամարտում ղեկավարել է 1-ին հրաձգային գունդը:

**1918 թվականին նրան շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում:**

Հայաստանի խորհրդայնացումից հետո, 1921 թվականի փետրվարին ձերբակալվել է Երևանում և տեղափոխվել է Ռյազանի գերիների համակենտրոնացման ճամբար: Ավելի ուշ ազատ է արձակվել:

Ապրել է Թիֆլիսում, իր տանը: Այստեղ էլ մահացել է: Թաղվել է Վերեի հին գերեզմանոցում:

Մարտական վաստակի համար պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Աննայի»** II աստիճանի (1905), **«Սուրբ Ստանիսլավի»** II աստիճանի (1900), **«Սուրբ Վլադիմիրի»** III աստիճանի (1915) շքանշաններով:



**ԿՈՆՍՏԱՆԴԻՆ ԲԵԳԼԱՐԻ ԴՈԼՈՒԽԱՆՈՎ (ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ)**
**(24.10.1871 - 02.11.1958)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (25.05.1918)**

Ծնվել է Թիֆլիսում: Ընդհանուր կրթությունը ստացել է Թիֆլիսի կադետական կորպուսում: Զինվորական ծառայության է անցել 1890 թվականից: Ավարտել է Սանկտ Պետերբուրգի Կոնստանդինյան ռազմական ուսումնարանը:

1891 թվականից ծառայել է Կարսի բերդի հրետանում:

1912 թվականին նշանակվել է 31-րդ հրետանային բրիգադի 1-ին մարտկոցի հրամանատար:

1912-1916 թվականներին եղել է 19-րդ հրետանային բրիգադի 6-րդ մարտկոցի հրամանատար:

Մասնակցել է 1914-1918 թվականների Առաջին համաշխարհային պատերազմին: 1916 թվականի հունվարի 1-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում: Պատերազմի ողջ ընթացքում ղեկավարել է 49-րդ ծանր հրետանու առանձին դիվիզիոնը:

1919 թվականից մասնակցել է «Սպիտակ շարժմանը», ծառայել է «Կամավորական բանակի» շտաբում: 1920 թվականին արտագաղթել է: Ապրել և մահացել է Հարավսլավիայում:

Մարտական վաստակի համար պարգևատրվել է **«Սուրբ Գեորգիի»** IV աստիճանի (13.01.1915) շքանշանով, **«Գեորգիևյան ոսկե զենք»**-ով (11.12.1916), Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** II աստիճանի (1911), **«Սուրբ Աննայի»** IV աստիճանի (արիության համար, 1916), III աստիճանի (1907) և II աստիճանի (սրերով, 1915), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (սրերով և ժապավենով, 1915) և III աստիճանի (սրերով, 1916) շքանշաններով:



**ԳԵՈՐԳԻ ԵՍԱՅՈՒ ԽԱՆԿԱԼԱՄՈՎ (ԽԱՆՔԱԼԱՄՅԱՆ)**
**(18.04.1867 - 1922 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (1918)**

Ծնվել է Թիֆլիսում, վաճառականի ընտանիքում:

Ավարտել է Թիֆլիսի կադետական կորպուսը և Ալեքսանդրովյան 3-րդ ռազմական ուսումնարանը:

1886 թվականից ծառայել է Կուբանի հետևակային 155-րդ գնդում, Մինգրելսկու գրենադերների 16-րդ գնդում (1891), Վլադիկավկազի հետևակային 152-րդ գնդում (1892-1893) և Թիֆլիսի գրենադերների 15-րդ գնդում: Զբաղեցրել է գումարտակի ադյուտանտի և գնդային դատարանի գործավարի պաշտոնները:

1901-1902 թվականներին ծառայել է Կրասնովոդսկի պահեստային 8-րդ գումարտակում:

1902-1905 թվականներին ղեկավարել է նույն գումարտակի վաշտը:

1905 թվականին նշանակվել է Կարա-Կալինի գավառապետ (Միջին Ասիայում) և տեղի լազարետի վարիչ:

1905-1910 թվականներին եղել է Ֆորտ-Ալեքսանդրովսկու կայազորի պետ, ռազմական տեսուչ և տեղի լազարետի վարիչ:

1911 թվականին ավարտել է սպայական հրաձգության դպրոցը:

1912 թվականին գործուղվել է Պարսկաստան:

1914 թվականին նշանակվել է Թուրքեստանի 19-րդ հրաձգային գնդի 2-րդ գումարտակի հրամանատար:

Մասնակցել է 1914-1918 թթ. Առաջին համաշխարհային պատերազմին, կռվել է կովկասյան ռազմական գործողությունների կռվաբեմում:

1916 թվականի հունվարի 20-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

Մարտական վաստակի համար պարգևատրվել է **«Սուրբ Գեորգիի»** IV աստիճանի (07.01.1916) շքանշանով և **Գեորգիևյան ոսկե զենքով** (08.08.1916):

1916-1917 թվականներին ղեկավարել է Թուրքեստանի 18-րդ հրաձգային գունդը:

1917 թվականի Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո հաստատվել է Երևանում: 1918 թվականից կռվել է Հայաստանի ազգային կորպուսի կազմում:

1920 թվականի օգոստոսից ղեկավարել է Կարսի 2-րդ բրիգադը:

Պարգևատրվել է Ռուսաստանի **«Սուրբ Ստանիսլավի»** III աստիճանի (1906), II աստիճանի (1911), II աստիճանի (սրերով, 1915), **«Սուրբ Աննայի»** III աստիճանի (1909), II աստիճանի (1912), II աստիճանի (սրերով, 1915), **«Սուրբ Վլադիմիրի»** IV աստիճանի (սրերով և ժապավենով, 1915) և III աստիճանի (1916) շքանշաններով:

Ստացել է նաև Բուխարայի **«Ծագող արևի»** II աստիճանի (1903) շքանշան:






# ՄԱՍ V

# ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

# (1940 – 1991)



**ԲԱԳՐԱՏ ՆԻԿՈԼԱՅԻ ԱՐՈՒԹՅՈՒՆՈՎ**
**(31.10.1889 - 24.01.1953)**

**ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՌԱՆԳԻ ՓՈԽԳԵՆԵՐԱԼ-ՏՆՕՐԵՆ***

**ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՐՈՍ (05.11.1943)**

---

** **Հաղորդակցության ճանապարհների I ռանգի փոխգեներալ-տնօրեն** - երկաթուղային տրանսպորտի աշխատավորների հատուկ անձնական կոչում, որը գործել է Խորհրդային Միությունում 1943-1954 թթ., այն համազոր էր բանակի գեներալի զինվորական կոչմանը (հեղինակային ծանոթագրություն):*

Ծնվել է Թիֆլիսում, արհեստավորի ընտանիքում: Ավարտել է տեղի 2-ամյա ծխական դպրոցը, ապա՝ քաղաքային ուսումնարանը և 1907 թվականին՝ Թիֆլիսի արհեստագործական ուսումնարանի մեխանիկա-փականագործական բաժանմունքը: Այնուհետև սկսել է աշխատել մեխանիկական գործարանում՝ որպես փականագործ:

1909 թվականին աշխատանքի է անցել արհեստագործական ուսումնարանում (որտեղ ինքն է սովորել) որպես արհեստավորի օգնական՝ ենթավարպետ:

1925 թվականի մայիսին նշանակվել է փաբրիկա-գործարանային ուսումնարանի վարիչ: Հաստատությունը հետագայում վերակազմավորվել, դարձել է որպես արհեստագործական ուսումնարան:

1928-1931 թվականներին աշխատել է արհմիությունում: Եղել է կրթության աշխատավորների միության պատասխանատու քարտուղար, ապա՝ Վրաստանի արհմիությունների խորհրդի պատասխանատու քարտուղար:

1931 թվականին Անդրկովկասյան շրջկոմի որոշմամբ Արությունովը նշանակվել է Թիֆլիսի շոգեքարշների նորոգման գործարանի ղեկավար:

1933 թվականին ընտրվել է Վրաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի անդամ և նշանակվել է Ճիաթուրայի Մանգանտրեստի կառավարիչ: Պաշտոնը շատ պատասխանատու էր, քանի որ Ճիաթուրան այն ժամանակ Խորհրդային Միության գրեթե միակ շահագործվող հանքավայրն էր: Արությունովը փորձում է արդարացնել իր նկատմամբ ցուցաբերվող վստահությունը, և քանի որ նա իր ոլորտի մասնագետ չէր, մանրամասն սկսում է ուսումնասիրել մետաղագործական արտադրությունը:

1937 թվականի հոկտեմբերին Արությունովը նշանակվում է Անդրկովկասյան երկաթուղու ղեկավար: Այս պաշտոնում նա դրսևորում է իր ողջ եռանդն ու վարչական կարողությունները:

Նրա նախաձեռնությամբ երկաթուղի են ներմուծվել Պյոտր Կրիվոնոսովի (1910-1980) աշխատանքային մեթոդները, որոնք բարելավել են շոգեքարշների աշխատանքը, բեռնաշրջանառությունը մեծացնելու և շոգեքարշների օրական վազքը ավելացնելու հնարավորություն են տվել: Թբիլիսի-Խաշուրի ամենաբարդ հատվածում կիրառվել են էլեկտրաքարշներ: Արությունովը մեծ ուշադրություն է դարձրել նորարարների աշխատանքին: Հենց այդ ժամանակ մեծ համբավ են ձեռք բերում մեքենավարներ **Գելաձեն**, **Ծիկլաուրին**, **Խաչատրյանը**, ովքեր

1943 թվականին արժանում են սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման:

1939 թվականի ապրիլի 1-ին Արությունովը նշանակվել է Խորհրդային Միության հաղորդակցության ճանապարհների ժողովրդական կոմիսարի տեղակալ, իսկ նույն թվականի վերջին հաստատվել է ժողովրդական կոմիսարի 1-ին տեղակալի պաշտոնում: Զբաղված լինելով քաղբյուրոյի գծով գործունեությամբ, միաժամանակ նա կատարել է նավթարդյունաբերության, ապա՝ վառելանյութային արդյունաբերության ժողովրդական կոմիսարի պարտականությունները:

1941 թվականի հունիսի 22-ին Ստալինի հետ արտակարգ հանդիպումից հետո Արությունովը և ժողովրդական կոմիսարի այլ տեղակալներ սելեկտորային կապով պարզում էին սահմանամերձ ճանապարհների վրա ստեղծված իրավիճակը, նախանշում հրատապ միջոցներ պատերազմի պայմաններում երկաթուղային տրանսպորտի անցման համար:

1941 թվականի հուլիսին Արությունովը Հաղորդակցության ճանապարհների նախարարության միջոցով ընդգրկվել է նորաստեղծ էվակուացիոն խորհրդի կազմում: Պատերազմի ժամանակ, բացի հաղորդակցության ճանապարհների շոգեքարշների և վագոնային վարչություններից, Արությունովը վերահսկել է երկաթուղային տրանսպորտի գործարանների աշխատանքը և պատասխանատու է եղել այդ գործարաններում զինամթերքի արտադրության համար: Պաշտպանության պետական կոմիտեի որոշմամբ նա պատասխանատվություն է կրել ռազմաճակատ ու պաշտպանական արդյունաբերություն նավթամթերքի մատակարարման համար: Արությունովը կիրառել է Անդրկովկասյան երկաթուղում ձեռք բերած փորձառությունը: Երկաթուղին ողջ պատերազմի ընթացքում ամբողջ Խորհրդային Միությանը մատակարարում էր վառելիք, կերոսին, մազութ և այլ նյութեր:

1941 թվականի հոկտեմբերին Արությունովին վստահվեցին Հաղորդակցության ճանապարհների ժողովրդական կոմիսարիատի ապարատի տարհանման աշխատանքների ղեկավարությունը և օպերատիվ կապը բոլոր ժողովրդական կոմիսարիատների և երկաթուղիների հետ:

1942 թվականի փետրվարի 14-ին Պաշտպանության պետական կոմիտեին կից Ստալինի ղեկավարությամբ ստեղծվում է տրանսպորտի կոմիտե: Կոմիտեի կազմում ընդգրկվում է նաև Արությունովը: Արությունովի՝ որպես իր ոլորտում մեծ հեղինակություն ունեցող մասնա-

գետի մասին վկայում է այն փաստը, որ երբ Խրուլյովը նշանակվում է հաղորդակցության ճանապարհների ժողովրդական կոմիսար, քաղբյուրոյի անդամներից մեկը հարց է բարձրացնում, թե՝ Խրուլյովը երկաթուղային չէ, ինչպե՞ս կարելի է նրան նշանակել հաղորդակցության ճանապարհների ժողովրդական կոմիսար, ի պատասխան որի Ստալինը տեղից ասում է. **«Հետո ի՞նչ, չէ՞ որ այնտեղ է Արությունովը»**: Խրուլյովն ինքը պետական գործչի մեծ փորձառություն ունենալով, ուսումնասիրել է երկաթուղային տրանսպորտի աշխատանքի բոլոր մանրամասները, հարցրել ոչ միայն Արությունովին, այլև ոլորտի մյուս մասնագետներին և ղեկավարին, բայց նրա առաջին օգնականը Արությունովն է եղել, և ոչ միայն պաշտոնապես:

Ժողովրդական կոմիսարի տեղակալ նշանակվելով Արությունովը բազմիցս գործուղվել է երկաթուղային գծի ամենաբարդ հատվածներ ու տեղում որոշել անհետաձգելի հարցերը:

Այդպես եղավ 1942 թվականի հուլիսին Ստալինգրադի մոտ և Հյուսիսային Կովկասում, երբ անհրաժեշտ էր արագացնել հացի պաշարների դուրսբերումը Ստալինգրադի օկրուգից, դեպի ուր շարժվում էր թշնամին, պետք է որոշվեին Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի և նավթավերամշակման գործարանների համար նավթամթերքի տեղափոխման հարցերը, արագացվեր Ղզլար-Աստրախան երկաթուղային գծի կառուցումը: Տարհանված բեռները, մանգանը և նավթը Կրասնովոդսկ և Կասպից ծովի արևելյան ափ փոխադրելու աշխատանքներն ավելի լավ կազմակերպելու համար Արությունովը Դաղստանից գալիս է Բաքու: Ամեն օր նրա ստորագրությամբ հրահանգներ ու գործառնական հրամանագրեր են գնում ճանապարհների ղեկավարներին: Արությունովը ղեկավարում է երկաթուղային տրանսպորտի ձեռնարկությունների և կազմակերպությունների աշխատանքը:

**Խորհրդային Միության Գերագույն խորհրդի 1943 թվականի նոյեմբերի 5-ի հրամանագրով Ռազմաճակատի և ժողովրդական տնտեսության համար փոխադրումների ապահովման գործում ունեցած բացառիկ վաստակի, ինչպես նաև ռազմական իրավիճակի ամենադժվար պայմաններում երկաթուղային տնտեսության վերականգնման գործում ունեցած վաստակի համար Բագրատ Արությունովին շնորհվում են Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում, Լենինի շքանշան և «Մուրճ ու մանգաղ» Ոսկե մեդալ:**

Պատերազմից հետո, 1946 թվականի հունվարին Արությունովը

նշանակվում է Կովկասյան օկրուգի (որը ներառում էր Հյուսիսային Կովկասի, Օրջոնիկիձեի և Անդրկովկասյան մայրուղիները) երկաթուղային ճանապարհների ղեկավար:

1951 թվականին նա նշանակվել է սև մետալուրգիայի փոխնախարար տրանսպորտի բնագավառում:

Իր ոլորտի զարգացման գործում ունեցած բացառիկ վաստակի, կառավարության և ռազմական հրամանատարության առաջադրանքները կատարելու համար նա պարգևատրվել է **«Լենինի»** (1939, 1942, 1943), **«Կուտուզովի»** I աստիճանի (1945), **Հայրենական պատերազմի** I աստիճանի (1945), **Անդրկովկասի Ֆեդերացիայի Աշխատանքային Կարմիր դրոշի** (1932) շքանշաններով:

Մահացել է Մոսկվայում, թաղված է Մոսկվայի Նովոդևիչյան գերեզմանոցում (2-րդ տեղամաս, 38-րդ շարք, 13-րդ գերեզման):




Բ. Ն. Արությունովի շիրմաքարը
Մոսկվայի Նովոդևիչյան գերեզմանոցում



Բ. Ն. Արությունովը շքերթի մունդիրով



**ՄԻԽԱՅԻԼ ՆԻԿՈԼԱՅԻ**
**ԱՐՈՒԹՅՈՒՆՈՎ**
**(19.09.1906 - 1995)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (18.02.1958)**

Ծնվել է Թիֆլիսի նահանգի Սիղնաղի գյուղում, գինեգործի ընտանիքում:

1923 թվականին Սիղնաղիից տեղափոխվել է Թիֆլիս, որտեղ սկսել է աշխատել արտադրական ոլորտում: Զուգահեռաբար սովորել է Թիֆլիսի 2-րդ միջնակարգ դպրոցում: Դպրոցն ավարտելուց հետո աշխատանքի է անցել Վրաստանի կոմերիտմիության տարածաշրջանային կոմիտեում՝ որպես ֆիզկուլտուրայի և սպորտի հրահանգիչ:

1927 թվականին ընդունվել է Անդրկովկասյան հետևակային դպրոց: Դպրոցն ավարտելուց հետո ծառայել է Կովկասյան հրաձգային 3-րդ դիվիզիայի Լոռիի Կարմրադրոշ լեռնահրաձգային 7-րդ գնդում:

1935 թվականին նշանակվել է հակաօդային-գնդացրային գնդի գումարտակի հրամանատար և ուղարկվել է Մոսկվա՝ Կարմիր բանակի հակաօդային-գնդացրային հրամանատարական կազմի վերապատրաստման դասընթացներին մասնակցելու նպատակով:

1939 թվականին տեղափոխվել է Սոխումիի (Աբխազական ԻԽՍՀ) հրաձիգների և գնդացրորդների ուսումնարան՝ որպես ուսումնական ստորաբաժանման պետ և կուրսանտների գումարտակի հրամանատար:

Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմի (1941-1945) սկզբից ևեթ Արությունովը կազմել է 834-րդ հրաձգային գունդը, որը մտել է 400-րդ հրաձգային դիվիզիայի կազմում: Մարտերից մեկի ժամանակ հակառակորդի հակահարվածը հետ մղելիս նա ծանր վիրավորվել է:

1942 թվականին մայոր Արությունովը նշանակվել է Վորոնեժի ռազմաճակատի 60-րդ բանակի 107-րդ հրաձգային դիվիզիայի 516-րդ հրաձգային գնդի հրամանատար՝ ծանր մարտեր մղելով Վորոնեժի հյուսիս-արևելյան մատույցներում: Ծանր մարտերի ժամանակ Արությունովը կրկին վիրավորվում է ականի բեկորից:

1943 թվականի փետրվարին նրան շնորհվել է փոխգնդապետի զինվորական կոչում: Ծանր վիրավորվել է Կուրսկի ճակատամարտի ժամանակ: Բժիշկները մի ամբողջ տարի պայքարել են նրա կյանքը փրկելու համար:

1944 թվականի սկզբին Արությունովը վերադառնում է շարքեր և շարունակում է կռվել հակառակորդի դեմ: Շուտով նա նշանակվում է 261-րդ հրաձգային դիվիզիայի 876-րդ հրաձգային գնդի հրամանատար: Նրա ողջ հետպատերազմական զինվորական ծառայությունն անցել է Անդրկովկասի ռազմական օկրուգում: Երկար ժամանակ գնդի հրամանատար է եղել:

1952 թվականին գնդապետ Արությունովն ավարտել է Մ. Ֆրունզեի անվան պետական ռազմական ակադեմիային կից ակադեմիական դասընթացները, որից հետո նշանակվել է նախ մոտոհրաձգային զորամիավորման հրամանատարի տեղակալ, ապա՝ հրամանատար:

1962 թվականին գեներալ-մայոր Արությունովը առողջական պատճառներով անցնում է պահեստազոր:

Մարտական վաստակի համար պարգևատրվել է **«Լենինի»** երկու, **«Կարմիր դրոշի»** երկու, **«Կարմիր աստղի»**, **«Հայրենական պատերազմի»** I աստիճանի (1985) շքանշաններով:



**ՄԿՐՏԻՉ ԱՇՈՏԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**
**(18.12.1939 - 11.01.2008)**

**ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ (17.10.1997)**

Ծնվել է Ախալքալաքի քաղաքում (Վրացական ԽՍՀ):

1958-1992 թվականներին ծառայել է Խորհրդային Միության զինված ուժերում՝ անցնելով լեյտենանտից մինչև գեներալ-մայոր ճանապարհը:

1962 թվականին ավարտել է Չերեպովեցի Կապի ռազմական ուսումնարանը, իսկ 1976 թվականին՝ Կապի ակադեմիայի դասընթացները:

1985 թվականին ավարտել է Վորոշիլովի անվան Գլխավոր շտաբի ռազմական ակադեմիան:

**1991 թվականին նրան շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում:**

1992 թվականից ծառայել է Հայաստանի Հանրապետության զինված ուժերում: Նույն թվականին նշանակվել է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի Գլխավոր շտաբի ղեկավարի 1-ին տեղակալ, ապա՝ պաշտպանության փոխնախարար:

1995 թվականին պաշտպանության նախարարի հրամանագրով նշանակվել է Պաշտպանության նախարարության աղմինիստրատիվ վարչության ղեկավար, հանձնարարությունների գծով գեներալ:

2000 թվականին նշանակվել է պաշտպանության նախարարի խորհրդական, ապա՝ գլխավոր ռազմական տեսչի 1-ին տեղակալ: 2002 թվականին անցել է պահեստազոր:

Պարգևատրվել է Խորհրդային Միության «**Կարմիր աստղի**» և Հայաստանի Հանրապետության շքանշաններով:



Գեներալ-լեյտենանտ Մ. Ա. Աբրահամյանի
շիրմաքարը Երևանի Թոխմախի
գերեզմանատանը



**ՄԻԽԱՅԻԼ ԻՎԱՆԻ ԱՂԱՅԱՆՑ**
**(21.12.1906 - 21.08.1959)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (21.12.1954)**

Ծնվել է ուսուցչի ընտանիքում, Թիֆլիսում, որտեղ անցկացրել է մանկության տարիները, ապա ընտանիքը տեղափոխվել է Ելիզավետպոլ (այժմ՝ Գյանջա՝ Գանձակ):

1920-1923 թվականներին ծառայել է ադրբեջանական դիվիզիայի 3-րդ հրաձգային գնդում (որտեղ հաշվառվել է որպես գնդի «որդեգիր», քանի որ 14 տարեկան է եղել):

1923 թվականին ավարտել է Խորհրդային կուսակցական դպրոցի դասընթացները: 1923-1927 թվականներին զբաղվել է պիոներական և կոմերիտմիության աշխատանքներով:

1927-1928 թվականներին աշխատել է Հայաստանի պետական քաղաքական վարչությունում՝ որպես ավագ գործավար:

1928 թվականին զորակոչվել է բանակ և մինչև 1929 թվականը ծառայել է Ադրբեջանի 2-րդ հրաձգային գնդում՝ որպես գրող և գնդի զինկոմիսարի քարտուղար:

1929-1930 թվականներին եղել է Ադրբեջանի օկրուգային կոմիտեի քարտուղար:

1930 թվականին նշանակվել է Գյանջայի (Գանձակ) կարագի արտադրամասի հատուկ բաժնի վարիչ, բազմիցս գործուղվել է հատուկ առաքելություններով, եղել է ավազակախմբերի վերացման հատուկ ջոկատների կազմում, մասնակցել է հացի արտադրությանը:

1930 թվականից աշխատել է Մոսկվայի «Կոմետա» գործարանում՝ որպես կադրերի բաժնի վարիչ, գործերի կառավարիչ:

1932-1959 թվականներին ծառայել է Մոսկվայի անվտանգության

համակարգի կենտրոնական ապարատում, որտեղ մինչև 1954 թվականը զբաղեցրել է պետական անվտանգության հակահետախուզության վարչության պետի տեղակալի պաշտոնը:

1944 թվականի դեկտեմբերի 12-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1954-1959 թվականներին եղել է Հայկական ԽՍՀ Պետական անվտանգության կոմիտեի նախագահի տեղակալ:

1959 թվականին առողջական վիճակի բերումով անցել է պահեստազոր և ապրել է Մոսկվայում:

Մահացել է Մոսկվայում: Թաղված է Նովոդևիչյան գերեզմանատանը:

Արժանացել է «Հայկական ԽՍՀ պատվավոր քաղաքացու» կոչման:

Պարգևատրվել է **«Կարմիր դրոշի»** (1950), **«Կարմիր աստղի»** (1944), **«Հայրենական պատերազմի»** II աստիճանի (1945, 1945), I աստիճանի և **«Պատվո նշանի»** (1943) շքանշաններով, **«Արիության համար»** (1940) մեդալով, **«Պատվավոր չեկիստ»** (1938) և **«Պետական անվտանգության պատվավոր աշխատակից»** (1957) կրծքանշաններով:



Գեներալ-մայոր Մ. Ի. Աղայանցի շիրմաքարը Մոսկվայի Նովոդևիչյան գերեզմանոցում



## ԶԱՐՄԱՅՐ ՄԱՄԻԿՈՆԻ ԱՐՎԱՆՈՎ
**(15.04.1915 - 01.02.1997)**

**ԿՈՆՏՐ-ԱԴՄԻՐԱԼ (07.05.1960)**

Ծնվել է Թիֆլիսում, երկաթուղային բանվորի ընտանիքում:

Թիֆլիսի 41-րդ աշխատանքային դպրոցի 7-րդ դասարանն ավարտելուց հետո ուսումը շարունակել է ֆաբրիկա-գործարանային ուսումնարանում, որտեղ ստացել է 9 դասարանի կրթություն և փականագործ-գործիքագործի մասնագիտություն:

1932-1933 թվականներին աշխատել է Թիֆլիսի շոգեքարշների վերանորոգման գործարանի գործիքային արտադրամասում, որտեղ եղել է «Օսոավիաքիմի» ռազմական կազմակերպիչը:

1933 թվականին կոմերիտմիության Անդրկովկասի տարածաշրջանային կոմիտեի ուղեգրով մեկնել է Լենինգրադ, սովորել Մ. Ֆրունզեի անվան բարձրագույն ռազմածովային ուսումնարանում:

1938 թվականին ավարտել է ուսումնարանը 1-ին աստիճանով և ծառայության է անցել Կրոնշտադտում՝ որպես սուզանավային բրիգադի «С-1» սուզանավի խմբի հրամանատար:

1942 թվականի հուլիսի 19-ին կապիտան-լեյտենանտ Արվանովը նշանակվել է հայտնի «К-21» սուզանավի խմբի հրամանատարի օգնական: Հենց առաջին մարտական արշավում նավը ոչնչացրել է հակառակորդի 3 պահակային նավ: Նա 7 մարտական արշավ է կատարել Կարմրադրոշ «К-21» սուզանավով, նախ՝ որպես սուզանավի խմբի հրամանատարի ավագ օգնական, իսկ 1943 թվականից՝ որպես հրամանատար:

1945 թվականին III ռանգի կապիտան Արվանովը նշանակվել է հատուկ ջոկատում, որը Մեծ Բրիտանիայի ռազմածովային ուժերից

պետք է ստանար Անգլիային հանձնված գերմանական նավատորմի սուզանավերը:

1951 թվականին նշանակվել է ստորաբաժանման շտաբի պետի տեղակալ, ապա՝ Բալթյան նավատորմի շտաբի պետի օգնական:

1953 թվականին I ռանգի կապիտան Արվանովը գլխավորել է նավատորմի մեծ ուսումնական ստորաբաժանումը, որը նախապատրաստում էր Խորհրդային Միության ռազմածովային ուժերի անձնակազմին:

1960 թվականին կոնտր-ադմիրալ Արվանովը նշանակվել է Լենինգրադի Ձերժինսկու անվան բարձրագույն ռազմածովային ինժեներական ուսումնարանի ղեկավարի 1-ին տեղակալ:

1963 թվականին առողջական խնդիրների պատճառով կոնտր-ադմիրալ Արվանովը անցել է պահեստազոր:

1963-1992 թվականներին եղել է Նավաշինական արդյունաբերության նախարարության պլանավորման և նախագծման բյուրոյի ինժեներական բաժնի վարիչ:

1992 թվականից առողջական վիճակի բերումով շարունակել է աշխատել այնտեղ հասարակական հիմունքներով:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է **«Կարմիր դրոշի»** (1943, 1944), **«Կարմիր աստղի»** երկու, **«Նախիմովի»** II աստիճանի (1944), **«Հայրենական պատերազմի»** I աստիճանի (1985) շքանշաններով:

Թաղված է Սանկտ Պետերբուրգի Բոգոսլովսկոյե գերեզմանոցում:



**ՄԵՍՐՈՊ ՀԱԲԵԹԻ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ**
**(1923 - 1981 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ)**

**ԻՆԺԵՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ**
**(23.02.1981)**

Ծնվել է Թիֆլիսում, արհեստավորի ընտանիքում:

Մասնակցել է 1941-1945 թվականների Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմին:



**ԵՎԳԵՆԻ ԶԱՔԱՐԻ ԱՍԱՏՈՒՐՈՎ**
**(29.12.1913 - 21.04.1985)**

**ԻՆԺԵՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ**
**(09.05.1961)**

Ծնվել է Թիֆլիսում:

1938 թվականին ավարտել է Թբիլիսիի էլեկտրակապի ինժեներական ինստիտուտը:

Մասնակցել է Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմին (1941-1945), Ուկրաինայի, Մոլդավայի, Ռումինիայի և Չեխոսլովակիայի ազատագրմանը:

Ետպատերազմյան շրջանում պատասխանատու պաշտոններ է զբաղեցրել Պաշտպանության նախարարության կենտրոնական ապարատում, աշխատել է բարձրագույն ինժեներական հրամանատարական ուսումնարանում:

Մարտական վաստակի համար պարգևատրվել է **«Կարմիր աստղի»** և **«Հայրենական պատերազմի»** I և II աստիճանի շքանշաններով և Չեխոսլովակիայի մարտական Խաչով:

Մահացել և թաղվել է Մոսկվայում:



**ԳՐԻԳՈՐ ԱԿԻՄԻ ԲԵԺԱՆՈՎ**
**(1897 - 14.05.1965)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (09.07.1945)**

Ծնվել է Թիֆլիսում, դերձակի ընտանիքում:

1917 թվականին ավարտել է Թիֆլիսի առևտրային առաջին ուսումնարանը: 1918 թվականին ընդունվել է Թիֆլիսի համալսարանի բժշկական ֆակուլտետ:

1929 թվականին Թիֆլիսի տրանսպորտի ինժեներական ինստիտուտում էքստեռն հանձնել է 4 կուրսի քննությունները (երկաթուղու շահագործման ինժեների մասնագիտությամբ):

1918-1919 թվականներին որպես առաքիչ աշխատել է Թիֆլիսի «Дым» ծխախոտի գործարանում:

1919-1920 թվականներին ծառայել է Հայաստանի բանակի 11-րդ լեռնային մարտկոցում՝ որպես մոբիլիզացման բնագավառի գործավար (Երևանի նահանգի Կամարլի գյուղում):

1920 թվականից ծառայել է Հայաստանի Կարմիր բանակում, եղել է Երևանի զինվորական հոսպիտալի վերահսկիչ:

1923 թվականից աշխատել է Համառուսաստանյան արտակարգ հանձնաժողովում՝ որպես ճանապարհատրանսպորտային արտակարգ հանձնաժողովի օպերատիվ կետի ղեկավար (ք. Թիֆլիս):

1923-1924 թվականներին եղել է Անդրկովկասյան երկաթուղու ռազմական պաշտպանության տեսուչ:

1924-1931 թվականներին եղել է Անդրկովկասյան երկաթուղու վարչության փոխտնօրեն և զորահավաքային բաժնի վարիչ:

1931 թվականից ծառայել է Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի համակարգում:

1931-1934 թվականներին եղել է Անդրկովկասյան երկաթուղու Ներքին գործերի ժողկոմի Լենինականի (Գյումրի) կայարանի ճանապարհատրանսպորտային բաժնի վարիչ:

1934-1935 թվականներին եղել է Անդրկովկասյան երկաթուղու Ներքին գործերի ժողկոմի պետանվտանգության գլխավոր վարչության ճանապարհատրանսպորտային ենթաբաժնի վարիչ:

1935-1937 թվականներին աշխատել է Անդրկովկասյան դաշնության Ներքին գործերի ժողկոմի պետանվտանգության վարչության տրանսպորտային բաժնի ենթաբաժնի վարիչ:

1937-1938 թվականներին եղել է Աբխազական ԻԽՍՀ Ներքին գործերի ժողկոմի պետանվտանգության վարչության 3-րդ ենթաբաժնի վարիչ:

1938-1939 թվականներին եղել է Աբխազական ԻԽՍՀ Ներքին գործերի ժողկոմի տեղակալ:

1939-1940 թվականներին աշխատել է Լենինգրադի օկրուգի Ներքին գործերի ժողկոմի վարչության ջրային տրանսպորտի բաժանմունքի պետի տեղակալ և Անդրկովկասյան երկաթուղու Ներքին գործերի ժողկոմի ճանապարհատրանսպորտային բաժանմունքի պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար:

1940-1941 թվականներին եղել է Լենինգրադի օկրուգի Ներքին գործերի ժողկոմի վարչության գաղտնի-քաղաքական բաժնի (քաղաքի) վարիչ և Լենինգրադի օկրուգի Ներքին գործերի ժողկոմի վարչության ջրային տրանսպորտի բաժանմունքի պետ:

1941-1942 թվականներին եղել է Ներքին գործերի ժողկոմի Հոկտեմբերյան երկաթուղային տրանսպորտի բաժանմունքի պետ:

1942-1943 թվականներին եղել է Լենինգրադի օկրուգի Ներքին գործերի ժողկոմի վարչության գաղտնի-քաղաքական բաժնի վարիչ:

1943 թվականի փետրվարի 14-ին նրան շնորհվել է «Պետական անվտանգության գնդապետի» կոչում:

**1944 թվականի հուլիսի 12-ին նրան շնորհվել է «Պետական անվտանգության կոմիսարի» հատուկ կոչում:**

1943-1944 թվականներին եղել է Ստավրոպոլի շրջանի Ներքին գործերի ժողկոմի վարչության պետի տեղակալ:

1944-1947 թվականներին եղել է Կաբարդայի ԻԽՍՀ պետական անվտանգության ժողովրդական կոմիսար (նախարար), իսկ 1945-1947 թվականներին՝ Թյուրինգիայի երկրամասի (Գերմանիա) Ներքին գործերի ժողկոմի օպերատիվ սեկտորի ղեկավար:

1947 թվականի դեկտեմբերի 10-ին ձերբակալվել է:

1951 թվականի հոկտեմբերի 17-ին դատապարտվել է 10 տարվա ազատազրկման: Նույն թվականի հոկտեմբերի 30-ին Նախարարների խորհրդի որոշմամբ «պաշտոնեական դիրքը չարաշահելու և սոցիալիստական ունեցվածքը յուրացնելու համար» զրկվել է «գեներալ-մայորի» կոչումից:

1953 թվականի հուլիսի 20-ին ազատ է արձակվել: Նույն թվականի օգոստոսի 15-ին ԽՍՀՄ Գերագույն դատարանի զինվորական կոլեգիայի որոշմամբ, գործի կարճմամբ և ամբողջական ռեաբիլիտացիայով վերականգնվել է նրա գեներալ-մայորի կոչումը: ՆԳՆ մարմնից ազատվել է 1953 թվականի օգոստոսի 1-ին հիվանդության պատճառով:

Մարտական վաստակի համար պարգևատրվել է **«Լենինի»** (1945), **«Կարմիր դրոշի»** (1944, 1944, 1944), **«Հայրենական պատերազմի»** II աստիճանի (1944), **«Կարմիր աստղի»** (1942), **«Պատվո նշանի»** (1943) շքանշաններով:

Ստացել է Ներքին գործերի ժողկոմի վաստակավոր աշխատողի կրծքանշան (1942) և ոսկե ժամացույց՝ «Խորհրդային իշխանության առաջադրանքների գերազանց կատարման համար» մակագրությամբ (1932):

Մահացել և թաղվել է Թբիլիսիում:



**ԳՈՒՐԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԴԱԼԻԲԱԼԹԱՅԱՆ**
**(05.06.1926 - 01.09.2015)**

**ԳԵՆԵՐԱԼ-ԳՆԴԱՊԵՏ (04.06.1996)**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ**
**(2021, ՀԵՏՄԱՀՈՒ)**

Ծնվել է Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի Մեծ Արազյալ (*այժմ՝ Նինոծմինդայի շրջան, հեղինակային ծանոթագրություն*) գյուղում, աշխատավորի ընտանիքում:

1944 թվականին, միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ծառայել է խորհրդային բանակում, սովորել է Մախաչկալայի հետևակային ուսումնարանում:

1947-1951 թվականներին եղել է Անդրկովկասյան ռազմական օկրուգի 89-րդ Տամանյան Կարմրադրոշ հրաձգային դիվիզիայի 526-րդ առանձին գնդի դասակի հրամանատար (ք. Էջմիածին):

1951-1956 թվականներին եղել է նույն գնդի ուսումնական վաշտի հրամանատար:

1956-1957 թվականներին եղել է Անդրկովկասյան ռազմական օկրուգի 73-րդ մեխանիզացված դիվիզիայի 34-րդ հրաձգային գնդի վաշտի հրամանատար (ք. Երևան):

1957-1958 թվականներին նույն տեղում ծառայել է որպես գումարտակի շտաբի պետ:

1961 թվականին ավարտել է Մ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան:

1961-1963 թվականներին եղել է Անդրկովկասյան ռազմական օկրուգի 295-րդ մոտոհրաձգային դիվիզիայի 135-րդ գնդի գումարտակի հրամանատար (ք. Պրիշիբ, Ադրբեջանական ԽՍՀ):

1963-1965 թվականներին եղել է Անդրկովկասյան ռազմական օկրուգի 60-րդ հրաձգային դիվիզիայի գնդի հրամանատարի տեղակալ:

1965-1967 թվականներին եղել է նույն գնդի հրամանատար:

1967-1969 թվականներին եղել է Անդրկովկասյան ռազմական օկրուգի 23-րդ մոտոհրաձգային դիվիզիայի հրամանատարի տեղակալ (ք. Կիրովաբադ, Ադրբեջանական ԽՍՀ):

1968 թվականի օգոստոսի 2-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1969 թվականին ավարտել է Մ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայի հրամանատարական կազմի վերապատրաստման բարձրագույն ակադեմիական դասընթացները:

1969-1975 թվականներին եղել  է Սիբիրյան ռազմական օկրուգի 242-րդ մոտոհրաձգային դիվիզիայի հրամանատար  (ք. Աբական):

**1971 թվականի դեկտեմբերի 22-ին ստացել է գեներալ-մայորի զինվորական կոչում:**

1975-1980 թվականներին եղել է Հարավային զորախմբի շտաբի պետի առաջին տեղակալ (ք. Բուդապեշտ):

1978 թվականին դարձել է Գլխավոր շտաբին կից բարձրագույն ակադեմիական դասընթացների ունկնդիր:

1980-1987 թվականներին եղել է Հյուսիսկովկասյան ռազմական օկրուգի զորքերի հրամանատարի տեղակալ մարտական պատրաստության գծով (ք. Դոնի Ռոստով):

1987-1991 թվականներին եղել է պահեստազորում: 1991 թվականից եղել է Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդին առընթեր պաշտպանության կոմիտեի Գլխավոր շտաբի պետ:

1991-1993 թվականներին եղել է Հայաստանի զինված ուժերի Գլխավոր շտաբի պետ, ՀՀ պաշտպանության նախարարի 1-ին տեղակալ:

**1992 թվականի մայիսի 29-ին նրան շնորհվել է գեներալ-լեյտենանտի զինվորական կոչում:**

1993-2007 թվականներին եղել է ՀՀ նախագահի խորհրդական, գլխավոր ռազմական տեսուչ: Մինչև 2007 թվականը զբաղեցրել է ՀՀ պաշտպանության նախարարի գլխավոր խորհրդականի պաշտոնը: 2007 թվականին տարիքի բերումով դուրս է եկել զինծառայությունից:

Մարտական վաստակի համար պարգևատրվել է **«Կարմիր դրոշի»**, **«Կարմիր աստղի»**, **«ԽՍՀՄ զինված ուժերում ծառայության համար»** III աստիճանի, ՀՀ **«Մարտական խաչի»** I աստիճանի (1998), **«Ներսես Շնորհալի»** շքանշաններով:

2001 թվականին արժանացել է Երևանի պատվավոր քաղաքացու կոչման:

Թաղված է Երևանում, Եռաբլուրի հուշահամալիր-պանթեոնում:



**ՍՈՂՈՄՈՆ ՍՏԵՓԱՆԻ ԵՐԱՄՅԱՆ**
**(17.06.1909 - 12.10.1987)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (1958)**

Ծնվել է Թիֆլիսում:

1931 թվականից ծառայել է բանակում, հակաօդային պաշտպանության ուժերում, օդային դիտորդական և կապի ուժերում (ВНОС):

Բանակում ծառայել է մինչև 1961 թվականը:

1961 թվականին անցել է թոշակի:

Պարգևատրվել է **«Լենինի»** (1956), **«Կարմիր դրոշի»** (1951), **«Կարմիր աստղի»** (1946), **«Հայրենական պատերազմի»** (1944, 1985) շքանշաններով և **«Մարտական վաստակի համար»** մեդալով:

Մահացել և թաղվել է Կիև քաղաքում:



## ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԻՍԱԿԻ ՎԱՐԴԱՆՈՎ (ՎԱՐԴԱՆՅԱՆ)
**(23.01.1923 - 22.09.2019)**

**ԻՆԺԵՆԵՐ-ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ (1984)**

Ծնվել է Թիֆլիսում:

1941 թվականին ավարտել է Բույնակսկի հետևակային ուսումնարանը, 1955 թվականին՝ ռազմատրանսպորտային ակադեմիան:

1939 թվականից ծառայել է Խորհրդային բանակում: Մասնակցել է Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմին (1941-1945):

Պատերազմի ավարտին արդեն ուկրաինական 2-րդ ռազմաճակատի 141-րդ հրաձգային դիվիզիայի ավտոծառայության պետ է եղել:

1980-1984 թվականներին ծառայել է Աֆղանստանի Դեմոկրատական Հանրապետությունում (խորհրդային զորքերի սահմանափակ թվակազմում), Պաշտպանության նախարարության օպերատիվ խմբի կազմում: Զբաղվել է ինչպես 40-րդ բանակի, այնպես էլ աֆղանական բանակի ավտոմոբիլային տեխնիկայի վերանորոգման կազմակերպման հարցերով:

1984-1986 թվականներին եղել է Պաշտպանության նախարարության գլխավոր ավտոմոբիլային բաժնի պետի տեղակալ, գլխավոր տեխնիկական բաժնի գլխավոր ինժեներ:

1986 թվականի սեպտեմբերին անցել է պահեստազոր:

Մարտական վաստակի համար պարգևատրվել է **«Կարմիր աստղի»** երկու, **«Հայրենական պատերազմի»** I աստիճանի (1985), **«Աշխատանքային Կարմիր դրոշի»**, **«Պատվո նշանի»** երկու շքանշաններով, Ռուսաստանի Դաշնության **«Պատվո նշանի»**, Բուլղարիայի **«9 սեպտեմբերի»** (սրերով) շքանշաններով:



**ՍԵՐԳԵՅ ԱԼՖՐԵԴԻ**
**ՎԱՐԴԱՆՈՎ (ՎԱՐԴԱՆՅԱՆ)**
**(12.06.1932 - 07.06.1990)**

**ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ**
**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (19.02.1982)**

Ծնվել է Թիֆլիսում:

1951 թվականին ավարտել է Թբիլիսիի 43-րդ արական միջնակարգ դպրոցը, նույն թվականին ընդունվել է Լենինգրադի Կիրովի անվան ռազմաբժշկական ակադեմիա: Ակադեմիան ավարտելուց հետո ծառայել է որպես ռազմական բժիշկ:

1966 թվականին ավարտել է Լենինգրադի Կիրովի անվան ռազմաբժշկական ակադեմիայի բժիշկների մասնագիտացման ֆակուլտետը (վարակիչ հիվանդությունների գծով):

1966-1975 թվականներին եղել է 114-րդ շրջանային զինվորական հոսպիտալի ինֆեկցիոն բաժանմունքի վարիչ:

1975-1979 թվականներին եղել է 114-րդ շրջանային զինվորական հոսպիտալի պետ:

1979-1986 թվականներին աշխատել է Մոսկվայի հակաօդային պաշտպանության Մոսկվայի շրջանային բժշկական ծառայության պետ:

1986 թվականին անցել է պահեստազոր:

Ունեցել է բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Թաղված է Մոսկվայում:

Պարգևատրվել է «**Պատվո նշանի**» շքանշանով:



**ԼԵՎՈՆ ՄԿՐՏԻՉԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ**
**(14.04.1924 - 2013)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ**

Ծնվել է Թիֆլիսում:

1929 թվականից ընտանիքի հետ ապրել է Լենինական քաղաքում:

1942 թվականին, ավարտելով միջնակարգ դպրոցը, սովորել է Օրջոնիկիձեի Ներքին գործերի ժողկոմի աշխատակիցների վերապատրաստման դպրոցում: Դպրոցն ավարտելուց հետո ծառայել է Լենինականում՝ որպես արտաքին հսկողության հետախույզ, 1943-1944 թվականներին սովորել է Թբիլիսիի Ներքին գործերի ժողկոմի հատուկ դպրոցում:

1944-1954 թվականներին ծառայել է Հյուսիսային Օսեթիայի ԻԽՍՀ Պետական անվտանգության ժողովրդական կոմիսարիատում:

1954-1957 թվականներին սովորել է Պետական անվտանգության կոմիտեի բարձրագույն դպրոցում:

1957-1971 թվականներին աշխատել է Ալթայի մարզի Պետական անվտանգության կոմիտեի վարչությունում՝ որպես լիազորի տեղակալ:

1971-1974 թվականներին եղել է ԽՍՀՄ Պետական անվտանգության կոմիտեի տեսչական վարչության ավագ տեսուչ:

1974-1979 թվականներին եղել է նույն վարչության 3-րդ բաժանմունքի պետ:

1979-1983 թվականներին եղել է նույն վարչության պետի տեղակալ: 1983 թվականին անցել է թոշակի:

Թաղված է Մոսկվայում, Տրոեկուրովոյի գերեզմանոցում:

Պարգևատրվել է «**Կարմիր աստղի**» երկու շքանշաններով, Պետական անվտանգության պատվավոր աշխատակցի կրծքանշանով (1976):



**ԻՎԱՆ ԴԱՎԻԹԻ ՎԵՔԻԼՈՎ**
**(06.12.1894 - 16.06.1953)**

**ՀՐԵՏԱՆՈՒ ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ**
**(15.07.1943)**

Ծնվել է Թիֆլիսի նահանգի Ցարսկի կոլոդեց գյուղում (*այժմ՝ Դեդոփլիսծղարո, հեղինակային ծանոթագրություն*):

1912 թվականին ավարտել է Թիֆլիսի կադետական կորպուսը:

1914 թվականին ավարտել է Պետրոգրադի հրետանային ուսումնարանը:

Մասնակցել է 1914-1918 թվականների Առաջին համաշխարհային պատերազմին, Սարիղամիշի ճակատամարտին, Կովկասյան ռազմական գործողություններին:

1918 թվականից ծառայել է Կարմիր բանակում:

1925 թվականին ավարտել է Մոսկվայի բարձրագույն հրետանային ուսումնարանը:

1925-1930 թվականներին եղել է Հայաստանի Հանրապետության լեռնահրաձգային դիվիզիայի գնդի հրամանատար:

1939-1940 թվականներին մասնակցել է խորհրդա-ֆիննական պատերազմին:

Մասնակցել է ԽՍՀՄ Հայրենական մեծ պատերազմին (1941-1945):

1941 թվականին ծառայել է որպես Հարավային ճակատի հրետանու շտաբի պետ:

**1942 թվականի հունվարի 10-ին նրան շնորհվել է հրետանու գեներալ-մայորի զինվորական կոչում:** Մասնակցել է Օդեսայի պաշտպանությանը, Ստալինգրադի ճակատամարտին, Բելոռուսիայի, Կորսուն-Շևչենկովսկիի, Վիսլա-Օդերի և Պոմերանիայի ռազմական գործողություններին:

Մասնակցել է նաև Սևաստոպոլի, Բոբրույսկի, Լյուբլինի, Հունգարիայի մի շարք քաղաքների, Վերին Սիլեզիայի մարտերին և Բեռլինի գրավմանը: Ծառայել է որպես ճակատային հրետանու պետի տեղակալ, Կարմիր բանակի շտաբի պետի տեղակալ:

1943 թվականի հունիսից ծառայել է որպես Կարմիր բանակի հրետանային մարտական պատրաստության բաժնի պետ:

1946 թվականից դասախոսություններ է կարդացել Գլխավոր շտաբի ակադեմիայում:

1952 թվականին ավարտել է Վորոշիլովի անվան Գլխավոր շտաբի ռազմական ակադեմիան:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է **«Լենինի»**, **«Կարմիր դրոշի»** երեք, **«Սուվորովի»** III աստիճանի, **«Կուտուզովի»** III աստիճանի, **«Բոգդան Խմելնիցկու»** III աստիճանի շքանշաններով:

Մահացել է Մոսկվայում, թաղված է այնտեղ:



**ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍԻ ՈՍԿԱՆՅԱՆ**
**(1920 - 1981 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ)**

**ՆԵՐՔԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ**
**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (1964)**

Ծնվել է Թելավի քաղաքում: 1939 թվականին ավարտել է միջնակարգ դպրոցը Թբիլիսիում:

Մասնակցել է 1939-1940 թվականների խորհրդա-ֆիննական պատերազմին և Խորհրդային Միության 1941-1945 թվականների Հայրենական մեծ պատերազմին: 900 օր անցկացրել է շրջափակված Լենինգրադում:

Մինչև 1946 թվականը ծառայել է բանակում:

1947-1960 թվականներին եղել է խորհրդային կուսակցական աշխատանքների բնագավառում, աշխատել է որպես Երևանի քաղկոմի հրահանգիչ, Հայաստանի Հանրապետության Կենտկոմի պատասխանատու կազմակերպիչ, Երևանի քաղկոմի բաժնի վարիչ:

1949 թվականին հեռակա կարգով ավարտել է Համամիութենական իրավաբանական ինստիտուտը:

1960-1969 թվականներին եղել է Հայկական ԽՍՀ ներքին գործերի նախարարի 1-ին տեղակալ:

1971-1980 թվականներին եղել է Հայկական ԽՍՀ ավտոմոբիլային տրանսպորտի փոխնախարար:

1981 թվականից եղել է Հայկական ԽՍՀ ավտո և մոտոսիրահարների կամավորական ընկերության պրեզիդիումի նախագահ:

Մարտական վաստակի համար արժանացել է **«Կարմիր աստղի»** երկու, **«Հայրենական պատերազմի»** I աստիճանի շքանշանների:



**ՀԱՅԿ (ԳԱՅ) ՂԱԶԱՐԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ**
**(12.05.1901 - 20.11.1971)**

**ՏԱՆԿԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ (19.04.1945)**

Ծնվել է Թիֆլիսում: 1917 թվականին ավարտել է Թիֆլիսի արական գիմնազիայի հինգերորդ դասարանը:

1924 թվականից ծառայել է Կարմիր բանակում: Զբաղեցրել է տարբեր պաշտոններ, այդ թվում՝ զինվորական կոմիսարի օգնական, լեռնականների հեծելազորի ազգային դպրոցի զինվորական կոմիսար, 61-րդ հեծելազորային գնդի հրամանատարի քաղաքական մասով օգնական, խաղաղօվկիանոսյան դիվիզիայի 3-րդ գնդի գումարտակի հրամանատար:

1920-ական թվականների սկզբին ավարտել է Մոսկվայի Ի. Սվերդլովի անվան կոմունիստական համալսարանը:

1929 թվականին գերազանցությամբ ավարտել է Մ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայի արևելագիտության ֆակուլտետը: Մասնակցել է Չինաստանի արևելյան երկաթուղու մարտական գործողություններին:

1930-1935 թվականներին աշխատել է Կարմիր բանակի շտաբի հետախուզական վարչության տնօրինության ներքո:

1935-1936 թվականներին աշխատել է Հարբին քաղաքում (Չինաստան), Խորհրդային Միության հյուպատոսությունում: Եղել է հյուպատոսության 1-ին քարտուղարը, 1935 թվականից՝ հատուկ հանձնարարություններով ծառայող, իսկ 1936 թվականի փետրվարից՝ Կարմիր բանակի հետախուզական վարչության «A» հատուկ բաժնի վարիչ:

**1935 թվականի նոյեմբերի 23-ին նրան շնորհվել է բրիգադի կոմիսարի զինվորական կոչում:** Իսպանական պատերազմի ժամա-

նակ եղել է Հանրապետական բանակի ռազմական խորհրդական:

1940 թվականին նշանակվել է Ռազմաինժեներական ակադեմիայի կոմիսար:

**1940 թվականի հունիսի 19-ին նրան շնորհվել է դիվիզիայի կոմիսարի զինվորական կոչում**:

Մասնակցել է խորհրդա-ֆիննական պատերազմին:

**1942 թվականի դեկտեմբերի 6-ին նրան շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում:**

1941-1945 թվականների ԽՍՀՄ Հայրենական մեծ պատերազմի սկզբից ևեթ նշանակվել է հյուսիս-արևմտյան ուղղությամբ ներկայացուցիչ: Մինչև 1942 թվականի ապրիլ ամիսը եղել է 2-րդ գվարդիական հրաձգային կորպուսի զինվորական կոմիսար:

1943 թվականից եղել է 2-րդ տանկային կորպուսի զինվորական կոմիսար (Խորհրդային Միության հերոս գեներալ Ա. Լիզյուկովի հրամանատարությամբ): Ա. Լիզյուկովի՝ 5-րդ բանակի հրամանատար նշանակվելուց հետո, գեներալի խնդրանքով, նրա հետ տեղափոխվել է նաև գեներալ Թումանյանը: 5-րդ տանկային բանակի հետ Ստալինգրադի մոտ գեներալ Ֆրիդրիխ Պաուլյուսի հրամանատարությամբ մասնակցել է գերմանական բանակի ջախջախմանը: Ստալինգրադի հակագրոհից առաջ գեներալ Թումանյանի հետ կապված տհաճ դեպք է տեղի ունեցել. խոսքակռվի ժամանակ նա հարվածել է հրամանատարին, որը ձգձգել է հրամանը կատարելը: Կարմիր բանակի գլխավոր քաղաքական վարչության պետ Շչերբակովը զեկուցել է այդ մասին Ստալինին և կարծիք հայտնել, որ Թումանյանի գործը պետք է փոխանցվի զինվորական դատարան, սակայն Ստալինն ասել է. **«Ես ճանաչում եմ Թումանյանին, հանգիստ թողեք նրան»**:

1944 թվականի հունվարի 24-ին նշանակվել է 6-րդ տանկային բանակի ռազմական խորհրդի անդամ: Պատերազմից հետո 6-րդ տանկային բանակի հետ ուղարկվել է Հեռավոր Արևելք, որտեղ մասնակցել է ճապոնական բանակի դեմ մարտերին: Մոսկվա վերադառնալուց հետո ծառայել է խորհրդային բանակում, եղել է Ստալինի անվան զրահատանկային զորքերի ռազմական ակադեմիայի քաղաքական բաժնի պետ, ապա՝ ՊՆ ռազմաօդային ուժերի գլխավոր վարչության քաղաքական բաժնի պետ:

1956 թվականին նրան շնորհվել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1969 թվականին տարիքի բերումով դուրս է եկել զինվորական ծառայությունից:

1969-1971 թվականներին աշխատել է Մոսկվայի ավիացիոն ինստիտուտում:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է **«Լենինի»** երկու, **«Կարմիր դրոշի»** վեց, **«Սուվորովի»** II աստիճանի, **«Կուտուզովի»** I աստիճանի, **«Բոգդան Խմելնիցկու»** I աստիճանի, **«Աշխատանքային Կարմիր դրոշի»** և **«Կարմիր աստղի»** շքանշաններով:



Գեներալ-լեյտենանտ Հ. Ղ. Թումանյանի շիրմաքարը
Մոսկվայի Նովոդևիչյան գերեզմանոցում



**ԻՎԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՅԱՐԱՄԻՇԵՎ**
**(11.01.1906 - 1979)**

**ԻՆԺԵՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ**
**(23.02.1952)**

Ծնվել է Թիֆլիսում: Ավարտել է Դերբենդի քաղաքային ռեալական ուսումնարանը: 1920 թվականից ծառայել է Կարմիր բանակում:

1924-1926 թվականներին սովորել է Լենինգրադի ռազմատեխնիկական ուսումնարանում: Ուսումնարանն ավարտելուց հետո զինվորական ծառայության է կոչվել Նիկոլաև քաղաքում (Ուկրաինա): Շուտով նրան տեղափոխել են Սևաստոպոլ՝ որպես Սևծովյան նավատորմի ավիացիայի 60-րդ էսկադրիլիայի բորտ-տեխնիկ:

1928-1933 թվականներին հաջորդաբար ծառայել է որպես ավագ տեխնիկ, ջոկատի կրտսեր ինժեներ, էսկադրիլիայի ավագ ինժեներ և խմբի ինժեներ:

1935 թվականին, ավարտելով Լենինգրադի ռազմաօդային ուժերի ինժեներական կուրսերը, վերադարձել է Սևաստոպոլ և նշանակվել է Կարմրադրոշ Սևծովյան նավատորմի ավիաէսկադրիլիայի ավագ ինժեներ:

1941-1945 թվականների ԽՍՀՄ Հայրենական մեծ պատերազմի առաջին ամիսներին նրա վերահսկողության տակ գտնվող Սևծովյան ավիացիայի վերանորոգման ծառայություններն ամեն ինչ արել են վնասված մեքենաները ժամանակին համակարգ վերադարձնելու համար: Աշխատանքը հատկապես դժվարացել է, երբ գերմանացիները հարձակում են գործել Սևաստոպոլի ուղղությամբ:

Նավատորմի ավիացիան փակել էր քաղաքի և նավահանգստի ելքերը: Դժվարագույն պայմաններում վերանորոգվել և գործարկվել են մարտերում խոցված շատ ինքնաթիռներ: Ինժեներ-գնդապետ

Յարամիշևին հաջողվել է կազմակերպել այս ամբողջ աշխատանքը՝ հենվելով ոչ միայն իր գիտելիքների, այլև այլ նավատորմերի արդարացված փորձառության և նորարարության վրա: Պատերազմից հետո նա պատասխանատու պաշտոններ է զբաղեցրել նավատորմի ռազմաօդային ուժերում:

1949 թվականին ավարտել է Ժուկովսկու անվան ռազմաինժեներական ակադեմիային կից ինժեներների մասնագիտական վերապատրաստման դասընթացները:

1968 թվականին դուրս է եկել զինվորական ծառայությունից: Նրան շնորհվել է հերոս-քաղաք Սևաստոպոլի պատվավոր քաղաքացու կոչում:

Մարտական վաստակի համար պարգևատրվել է «**Լենինի**» երեք, «**Կարմիր դրոշի**» երեք, «**Կարմիր աստղի**» երեք շքանշաններով:



**ՔՐԻՍՏԱՓՈՐ ԻՎԱՆԻ ԻՎԱՆՅԱՆ**
**(20.12.1920 - 30.08.1999)**

**ՀՐԵՏԱՆՈՒ ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ**
**(1993)**

Ծնվել է Թիֆլիսում: 1940 թվականին ավարտել է Թբիլիսիի հրետանավորների ուսումնարանը և սկսել է զինվորական ծառայությունը՝ որպես դասակի հրամանատար Հյուսիսային Կովկասի ռազմական օկրուգում:

Ակտիվ մասնակցել է 1941-1945 թվականների ԽՍՀՄ Հայրենական մեծ պատերազմին: Պատերազմի ավարտին եղել է Չեխոսլովակիայում:

1941-1942 թվականներին ղեկավարել է 59-րդ գնդի թեթև հրետանին:

1942-1943 թվականներին ղեկավարել է 36-րդ բանակի ծովային հետևակայինների 76-րդ բրիգադը:

1943-1944 թվականներին ղեկավարել է լեռնաականանետային 195-րդ գունդը:

1944 թվականին նշանակվել է լեռնահրաձգային 318-րդ դիվիզիայի գնդի հրամանատար:

1944-1945 թվականներին ղեկավարել է 128-րդ հրաձգային դիվիզիան:

1946-1949 թվականներին սովորել է Մ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայում:

1949-1952 թվականներին ծառայել է որպես հրետանային կորպուսի մարտական պատրաստության բաժնի վարիչ:

1952-1955 թվականներին ղեկավարել է 280-րդ գվարդիական կործանիչ հակատանկային գունդը (Գերմանիայի խորհրդային զորքերի կազմում):

1955-1956 թվականներին սովորել է Գլխավոր շտաբի ռազմական ակադեմիայում:

1956-1958 թվականներին ղեկավարել է առանձին գվարդիական կործանիչ հակատանկային բրիգադը:

1958-1961 թվականներին ղեկավարել է Օդեսայի պետական համալսարանի ռազմական ամբիոնը:

1962 թվականին ավարտել է Լենինգրադի հրետանային ակադեմիային կից դասընթացները:

1962-1968 թվականներին ղեկավարել է Օդեսայի ռազմական օկրուգի 52-րդ հրաձգային բրիգադը:

**1968 թվականի փետրվարի 23-ին նրան շնորհվել է հրետանու գեներալ-մայորի զինվորական կոչում:**

1968-1973 թվականներին եղել է Օդեսայի ռազմական օկրուգի 14-րդ բանակի հրթիռային զորքերի և հրետանու պետ:

1973-1978 թվականներին եղել է Անդրկովկասյան ռազմական օկրուգի հրթիռային զորքերի և հրետանու պետի տեղակալ: 40 տարվա զինվորական ծառայությունից հետո, 1978 թվականին Անդրբայկալի ռազմական օկրուգի հրթիռային զորքերի և հրետանու հրամանատարի պաշտոնից անցել է պահեստազոր:

1978-1992 թվականներին թոշակի է եղել և ապրել է Լենինգրադում:

1992 թվականի հուլիսից ծառայել է Հայաստանի զորքերում:

1995-1996 թվականներին ղեկավարել է նորաստեղծ լեռնահրետանային բրիգադը:

1997 թվականին առողջական պատճառներով մեկնել է Սանկտ Պետերբուրգ, որտեղ բուժման ինտենսիվ կուրս է անցել: Մահացել է այնտեղ: Գեներալ Իվանյանն անձամբ է վերահսկել ռազմական շինարարությունը և խստագույնս պատժել է նրանց, ովքեր չեն կատարել իր հրահանգները:

Գեներալ Իվանյանն օգտագործել է 1941-1945 թվականների ԽՍՀՄ Հայրենական մեծ պատերազմում ձեռք բերած փորձառությունը, ռազմական հնարքները, որոնց օգնությամբ ռազմի դաշտում զոհերի թիվը կտրուկ կրճատվել է: Նա անձամբ մասնակցել է մարտական գործողություններին (մի քանի անգամ ծանր վիրավորվել է, այդ թվում՝ երբ ականի վրա պայթել է իր ավտոմեքենան), ստեղծել է հրետանային ուսումնական կենտրոն, որի շուրջ համախմբվել են հազարավոր զինվորներ և սպաներ:

Գեներալ-լեյտենանտ Իվանյանը որոշ ժամանակ ղեկավարել է Հայաստանի բանակի բրիգադներից մեկը: Նա Հայաստանի բանակի ամենատարեց սպան էր: 1997 թվականին, 77 տարեկան հասակում դուրս է եկել զինվորական ծառայությունից:

2000 թվականին նրա անունով են կոչվել Ստեփանակերտի ռազմամարզական վարժարանը և ռազմական ուսումնարանը:

2000 թվականի սեպտեմբերի 1-ին բացառիկ վաստակի, արիության և անձնական նվիրումի համար հետմահու պարգևատրվել է **«Ոսկե արծիվ»** շքանշանով: Բացի այդ նա արժանացել է I աստիճանի **«Մարտական խաչի»** շքանշանի:

1941-1945 թվականների ԽՍՀՄ Հայրենական մեծ պատերազմում ունեցած մարտական վաստակի համար պարգևատրվել է **«Լենինի»**, **«Կարմիր դրոշի»**, **«Սուվորովի»** III աստիճանի, **«Կարմիր աստղի»** երեք շքանշաններով:



Գեներալ-լեյտենանտ Ք. Ի. Իվանյանի գերեզմանը Սանկտ Պետերբուրգի Սմոլենսկի հայկական գերեզմանոցում



**ԱՇՈՏ ՎԱՂԱՐՇԱԿԻ ՂԱԶԱՐՅԱՆ**
**(11.07.1921 - 18.10.1995)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (29.04.1970)**
**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍ**
**(24.03.1945)**

Ծնվել է Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի Չիֆթքիլիսա գյուղում:

1935 թվականին ավարտել է Խաչկոյ գյուղի միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանը, իսկ 1938 թվականին՝ միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանը Թբիլիսիում: Կարմիր բանակ է զորակոչվել Թբիլիսիի զինկոմիսարիատի կողմից:

1939 թվականից ծառայել է խորհրդային բանակում, եղել է հետևակային ստորաբաժանումներում (Լենինգրադի ռազմական օկրուգ):

Մասնակցել է խորհրդա-ֆիննական պատերազմին (1939-1940):

1940 թվականի հունվար-մարտ ամիսներին ծառայել է որպես հրաձգային 286-րդ գնդի գնդացրորդ:

1940 թվականին ավարտել է գնդային դպրոցը: Եղել է հետևակային դասակի հրամանատար (Մերձբալթյան ռազմական օկրուգում):

1941-1945 թվականներին մասնակցել է ԽՍՀՄ Հայրենական մեծ պատերազմին:

1941 թվականի հունիս-օգոստոս ամիսներին մասնակցել է պաշտպանական մարտերին Բալթյան տարածաշրջանում և Լենինգրադի հեռավոր մատույցներում:

1941 թվականի օգոստոսի 12-ին ձախ թիակի ծանր վիրավորում է ստացել և մինչև 1941 թվականի դեկտեմբեր գտնվել է Լենինգրադի և Սոկոլի (Վոլոգդայի շրջան) զինվորական հոսպիտալներում:

1942 թվականին ավարտել է կրտսեր լեյտենանտների դասընթացները:

1941 թվականի հուլիսից մինչև 1944 թվականի հունվար ղեկավարել է առանձին տանկային 196-րդ բրիգադի թեթև տանկերի դասակը և վաշտը, եղել է տանկի հրամանատար (Կալինինի և արևմտյան ճակատներ): Մասնակցել է Ռժևի ուղղությամբ մղվող մարտերին, Ռժև-Վյազմայի, Օրյոլի և Սմոլենսկի հարձակողական գործողություններին:

1942 թվականի օգոստոսի 31-ին և 1943 թվականի օգոստոսի 13-ին վիրավորվել է, սակայն մնացել է շարքերում:

1944 թվականի հունվար-օգոստոսին եղել է թիկունքում գործող տանկային գումարտակի հրամանատարի տեղակալ, 1944 թվականի օգոստոս-դեկտեմբերին՝ Խարկովի տանկային ուսումնարանի կուրսային գումարտակի հրամանատարի տեղակալ:

1944 թվականի դեկտեմբերից մինչև 1945 թվականի ապրիլ ղեկավարել է 3-րդ բելառուսական ճակատի 117-րդ տանկային բրիգադի տանկային գումարտակը: Մասնակցել է Արևելյան Պրուսիայի ռազմական գործողությանը:

1945 թվականի հունվարի 20-ին վիրավորվել է, սակայն մնացել է շարքերում:

1945 թվականի հունվարի 17-ից մինչև հունվարի 23-ը նրա հրամանատարության տակ գտնվող տանկիստները մարտերում անցել են 150 կմ, ազատագրել են տասնյակ բնակավայրեր, ոչնչացրել են մեծ քանակությամբ հակառակորդի տեխնիկա և կենդանի ուժ, գերեվարել են շուրջ 1000 հիտլերականի:

**1945 թվականի մարտի 24-ի հրամանագրով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պրեզիդիումը մարտերում ցուցաբերած անձնվիրության և խիզախության համար գվարդիայի կապիտան Աշոտ Ղազարյանին շնորհել է «Խորհրդային Միության հերոսի» կոչում, պարգևատրել նրան «Լենինի» շքանշանով և «Ոսկե աստղի» մեդալով:**

1949 թվականին ավարտել է զրահատանկային և մեքենայացված զորքերի ռազմական ակադեմիան: Ծառայել է որպես տանկային գնդի շտաբի պետ և տանկային գնդի հրամանատար (Անդրկովկասյան ռազմական օկրուգում), տանկային դիվիզիայի հրամանատարի տեղակալ և տանկային դիվիզիայի հրամանատար (Խորհրդային բանակի հյուսիսային խմբում և Ուրալի ռազմական օկրուգում):

1969-1987 թվականներին եղել է Հայկական ԽՍՀ զինվորական կոմիսար:

1987 թվականին տարիքի բերումով դուրս է եկել զինվորական ծառայությունից: Ապրել է Երևանում: Թաղված է Երևանի Թոխմախի գերեզմանոցում:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է **«Լենինի»** (1945), **«Կարմիր դրոշի»** (1942, 1943), **«Հայրենական պատերազմի»** I աստիճանի (1985), **«Աշխատանքային Կարմիր դրոշի»**, **«Կարմիր աստղի»** (1955), **«ԽՍՀՄ զինված ուժերում ծառայության համար»** III աստիճանի շքանշաններով:

Ստացել է նաև Հայկական ԽՍՀ պետական մրցանակ (գրականության ասպարեզում): Նրա գրչին են պատկանում *«Четверть века на танках»* (Եր., 1972), *«Война, люди, судьбы»* (Եր., 1975), *«Присяга на всю жизнь»* (Մ., 1988) գրքերը:




Գեներալ-մայոր Ա.Վ.Ղազարյանի շիրմաքարը
Երևանի Թոխմախի գերեզմանոցում

**ԳԱԲՐԻԵԼ ՍՏԵՓԱՆԻ ԿԱՄՈԵՎ**
**(01.02.1910 - 18.03.1960)**

**ՀՐԵՏԱՆՈՒ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ**
**(23.02.1958)**



Ծնվել է Բաթոմիի (այժմ՝ Բաթումի) մարզում, կայսերական բանակի կապիտանի ընտանիքում:

1922 թվականին զորագրվել է Կարմիր բանակի շարքերում՝ որպես երաժշտական խմբի սան: Շուտով հետագա ծառայությունը շարունակելու համար տեղափոխվել է Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան միացյալ զինվորական դպրոց:

1926 թվականի հոկտեմբերին, իսկական ծառայության ժամկետն ավարտելուց հետո մնացել է բանակում՝ որպես գերզինվոր:

1927 թվականի սեպտեմբերին հաշվառվել է Մոսկվայի ռազմահրետանային դպրոցի հրամանատարական միջին կազմում: 1931 թվականին 1-ին աստիճանով ավարտել է դպրոցը և նշանակվել է հրետանային 74-րդ գնդի դասակի հրամանատար:

1934 թվականին Կամոևն ավարտել է ֆիզկուլտուրայի պետական կենտրոնական ինստիտուտի ռազմական ֆակուլտետը և նշանակվել է Հյուսիսկովկասյան ռազմական օկրուգի Տամանի 74-րդ հրաձգային դիվիզիայի ֆիզիկական պատրաստման հրահանգիչ:

1938 թվականին Կամոևը նշանակվել է հրետանային դիվիզիոնի հրամանատարի պաշտոնում: Շուտով նա դարձել է 182-րդ հրետանային գնդի շտաբի պետ:

Ակտիվ մասնակցել է 1941-1945 թվականների ԽՍՀՄ Հայրենական մեծ պատերազմին:

1941-1943 թվականներին մայոր Կամոևը ղեկավարել է 22-րդ ռազմական դիվիզիայի հրետանային 157-րդ գունդը:

Դիվիզիայի կազմում նրա գունդը մասնակցել է խորհրդա-գերմանական ճակատի տարբեր հատվածներում մղվող մարտերին: Պատերազմի վերջին օրերին եղել է հրաձգային դիվիզիայի հրետանու հրամանատար:

1947 թվականին, 37 տարեկան հասակում նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում և նշանակվել է հրետանային ստորաբաժանման հրամանատար:

1950 թվականին հեռակա կարգով ավարտել է Մ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայի լրիվ դասընթացը:

1955 թվականին գնդապետ Կամոևը **Ոսկե մեդալով** ավարտել է ԽՍՀՄ Գլխավոր շտաբի ռազմական ակադեմիայի հիմնական դասընթացները և նշանակվել է ռազմական օկրուգի հրետանու շտաբի պետ:

1958-1960 թվականներին գեներալ Կամոևը ծառայել է որպես ռազմական օկրուգի հրթիռային զորքերի և հրետանու հրամանատար:

Մարտական վաստակի համար պարգևատրվել է **«Լենինի»** երեք, **«Կարմիր դրոշի»** երեք, **«Կարմիր աստղի»** շքանշաններով:



**ԱՆԴՐԵՅ ԽՈՐԵՆԻ ԿԵԺՈՅԱՆ**
**(14.01.1922 - 21.12.1979)**

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ 3-ՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ (10.01.1977)**

Ծնվել է Բաթոմի (այժմ՝ Բաթումի) քաղաքում:

Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, 1940 թվականին զորակոչվել է բանակ:

Ծառայել է Վրացական ԽՍՀ զինկոմիսարիատում:

Մասնակցել է Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմին (1941-1945): Կռվել է 38-րդ պահեստազորային հրաձգային բրիգադի շտաբում: Եղել է Անդրկովկասյան ռազմաճակատի 296-րդ հրաձգային դիվիզիայի շտաբի բաժնի պետ:

1946 թվականին, զորացրվելուց հետո սովորել է Սարատովի իրավաբանական ինստիտուտում:

1950-1952 թվականներին աշխատել է դատախազական օրգաններում՝ որպես Կրասնոդարի երկրամասի Ստալինի և Կիրովի շրջանների դատախազության քննիչ և շրջանային դատախազության ավագ քննիչ:

1952-1979 թվականներին աշխատել է համամիութենական դատախազության կենտրոնական ապարատում՝ որպես քննչական վարչության քննիչ, ԽՍՀՄ գլխավոր դատախազին կից հատուկ գործերի քննիչ:

Ունեցել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (1971) և Ռուսաստանի Դաշնության վաստակավոր իրավաբանի կոչում:

Պարգևատրվել է «**Պատվո նշանի**» շքանշանով:



**ՍՏԵՓԱՆ ԵՂԻԱՅԻ ԿԻՆՈՍՅԱՆ (ԳԻՆՈՍՅԱՆ)**
**(09.11.1900 - 29.09.1965)**

**ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ (19.04.1945)**

Ծնվել է Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի Սաթխա գյուղում, աշխատավորի ընտանիքում: Գյուղի դպրոցն ավարտելուց հետո սովորել է Ախալքալաքիի տարրական ուսումնարանում: 1918 թվականին ծնողների հետ տեղափոխվել է Թիֆլիսի գավառի Ծալկա ավան:

1920 թվականին միացել է Կարմիր բանակին:

1923 թվականին ղեկավարությունը նրան ուղարկել է Մոսկվայի Համառուսաստանյան Կենտգործկոմի անվան Կարմիր բանակի 1-ին խորհրդային միացյալ ռազմական դպրոցում սովորելու: Դպրոցը նա բարձր առաջադիմությամբ ավարտել է երկու տարում և մնացել է այնտեղ՝ որպես նույն դպրոցի ուսումնական դասակի հրամանատար: Նա մեծ աշխատանք է տարել հրամանատարական կադրերի ուսման ու դաստիարակության ուղղությամբ:

1926 թվականի գարնանը փոխադրվել է Երևանի հայկական ռազմական դպրոց, իսկ ազգային դպրոցների միավորումից հետո տեղափոխվել է Թիֆլիսի Անդրկովկասյան ռազմական դպրոց: Այստեղ նա վեց տարի է անցկացրել: Եղել է վաշտի հրամանատարի օգնական, կուրսանտների վաշտի հրամանատար, դպրոցի ուսումնական բաժնի պետի օգնական:

1933 թվականին Կինոսյանը դարձել է Մ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայի հիմնական ֆակուլտետի ունկնդիր:

1936 թվականի նոյեմբերին 1-ին աստիճանի դիպլոմով ավարտել է ակադեմիան և նշանակվել է 48-րդ հրաձգային դիվիզիայի շտաբի 1-ին զորամասի պետ:

Մեկ տարուց ավելի Կինոսյանը համատեղել է նաև դիվիզիայի շտաբի պետի պաշտոնը: Նա կարողացել է արժանապատվորեն կատարել իրեն վերապահված պարտականությունները: Այս ընթացքում նա տաղանդավոր կազմակերպչի անուն է վաստակել, ով փայլուն տիրապետել է շտաբի աշխատանքներին:

1939 թվականի ամռանը նշանակվել է Կիևի հատուկ ռազմական օկրուգի շտաբի բաժանմունքի պետի օգնական: Այս պաշտոնում նա ընդլայնել ու խորացրել է իր օպերատիվ-մարտավարական տեսահորիզոնը, հիմնովին տիրապետել է բանակային ապարատի աշխատանքին, ինչպես նաև գործողությունների պլանավորմանը: Նա հաճախ է եղել զորքերում՝ հմտորեն համատեղելով բարձր հրամանատարության պահանջները, առօրյա հոգատարությունը և մարդկանց նկատմամբ ուշադրությունը: Ստորադասների և ավագ հրամանատարների շրջանում նա արդարացիորեն փորձառու և բազմակողմանիորեն պատրաստված սպայի հեղինակություն է վաստակել:

1939 թվականին Կինոսյանը կորպուսի հեծելազորային-մեքենայացված խմբի կազմում, որպես շտաբի պետ մասնակցել է Արևմտյան Բելառուսի ազատագրմանը:

1939-1940 թվականներին գնդապետ Կինոսյանը մասնակցել է խորհրդա-ֆիննական պատերազմին: Ձմեռային դաժան և հակառակորդի ուժեղ դիմակայության պայմաններում մարտական գործողությունները եղել են մարտական հմտությունների կատարելագործման փայլուն դպրոց: Այստեղ լիովին բացահայտվել են Կինոսյանի հրամանատարական ձիրքն ու անձնական մարտական հատկանիշները:

1940 թվականի դեկտեմբերին նշանակվել է Մերձբալթյան հատուկ ռազմական օկրուգի շտաբի օպերատիվ վարչության 1-ին ենթաբաժնի պետ:

1941-1945 թվականներին ԽՍՀՄ Հայրենական մեծ պատերազմի սկզբից ևեթ նշանակվել է 33-րդ բանակի (որը ստեղծվել էր Մոսկվայի ռազմական օկրուգում 1941 թվականի հուլիսին) շտաբի օպերատիվ բաժնի պետ:

**1942 թվականի նոյեմբերի 17-ին նրան շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում:** Հետագա զինվորական ծառայությունը նա շարունակել է 49-րդ բանակում: Մասնակցել է Բելառուսի ռազմական գործողությանը, Լեհաստանի և Գերմանիայի ազատագրմանը: 12 անգամ արժանացել է գերագույն գլխավոր հրամանատար Ի. Ստալինի

շնորհակալությանը: Պատերազմից հետո եղել է մի շարք ռազմական օկրուգների շտաբի պետ:

1950 թվականին, Կ. Վորոշիլովի անվան Գլխավոր շտաբն ավարտելուց հետո մնացել է ակադեմիայում՝ որպես գիտական աշխատող: Հայրենական մեծ պատերազմի տարիներին ծառայելով որպես բանակի շտաբի պետ, իսկ պատերազմից հետո՝ ռազմական օկրուգի շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Կինոսյանը ձեռք է բերել ռազմական գործողություններում զորքերի կառավարման կազմակերպման գործնական հարուստ փորձ: Նա անընդմեջ աշխատել է ինքնակատարելագործման ուղղությամբ, 1956 թվականին պաշտպանել է թեկնածուական թեզ և ստացել ռազմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1964 թվականին գեներալ Կինոսյանը հիվանդության պատճառով դուրս է եկել զինվորական ծառայությունից:

Թաղված է Մոսկվայում, Վագանկովյի գերեզմանոցում:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է **«Լենինի»** (1945), **«Կարմիր դրոշի»** (1940, 1942, 1944, 1945, 1950), **«Սուվորովի»** II աստիճանի (1943), **«Կուտուզովի»** I և II աստիճանների (1943), **«Բոգդան Խմելնիցկու»** I աստիճանի (1944) շքանշաններով:

Ստացել է լեհական **«Virtuti militari»** (1945) և **«Գրյունվալդի խաչի»** II աստիճանի (1945) շքանշաններ:




Գեներալ-լեյտենանտ
Ս. Ե. Կինոսյանի
շիրմաքարը Վագանկովյի
գերեզմանատանը



**ԿՈՆՍՏԱՆԴԻՆ ԱՐԿԱԴԻԻ ԼԱԶԱՐԵՎ**
**(20.03.1903 - 29.01.1979)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (1949)**

Ծնվել է Թիֆլիսում: 1920 թվականից հաշվառվել է Կարմիր բանակում: Կռվել է Հյուսիսային Կովկասում (Դաղստան): Ծառայել է երկաթուղային զորքերում՝ որպես դասակի, վաշտի հրամանատար, երկաթուղային ուսումնական գնդի հրամանատարի օգնական:

1926 թվականին ավարտել է Լենինգրադի Կապի ռազմական բարձրագույն ուսումնարանը, 1941 թվականին՝ Մ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան, 1950 թվականին՝ բարձրագույն ակադեմիական դասընթացները:

1941-1945 թվականների ԽՍՀՄ Հայրենական մեծ պատերազմի ժամանակ եղել է Անդրբայկալի ռազմաճակատի բանակի շտաբի պետ, ապա՝ հրետանային բրիգադի հրամանատար: 1942 թվականի փետրվարից ղեկավարել է կուրսանտների առանձին հրաձգային բրիգադը, իսկ 1943 թվականի հունիսից մինչև 1945 թվականի նոյեմբեր՝ հրաձգային դիվիզիան: Մասնակցել է Հեռավոր Արևելքի մարտական գործողություններին: 1950 թվականին ավարտել է Գլխավոր շտաբի ակադեմիան:

1954-1956 թվականներին եղել է Նովոսիբիրսկի բարձրագույն ուսումնարանի ղեկավար:

1956-1960 թվականներին եղել է Սուվորովի անվան զինվորական ուսումնարանի պետ:

1960 թվականին անցել է պահեստազոր:

Մարտական վաստակի համար արժանացել է **«Լենինի»**, **«Կարմիր դրոշի»** երեք, **«Կարմիր աստղի»** երկու շքանշանների:



**ՎԻԿՏՈՐ ԲՈԳԴԱՆԻ ԼԻՍԻՆՈՎ (ԼԻՍԻՆՅԱՆ)**
**(23.11.1896 - 09.10.1971)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (1943)**

Ծնվել է Թիֆլիսում:

1915-1917 թվականներին ծառայել է կայսերական բանակում, Թիֆլիսի 218-րդ պահեստազորային գումարտակում: 1915 թվականին ավարտել է Գորիի պրապորշչիկների դպրոցը: Դպրոցն ավարտելուց հետո ստացել է պրապորշչիկի կոչում և նշանակվել է Աստրախան քաղաքի 156-րդ պահեստազորային հետևակային գումարտակի դասակի հրամանատար:

1915 թվականի վերջին տեղափոխվել է գործող բանակ, Կովկասյան հրաձգային 3-րդ դիվիզիայի Կովկասյան 10-րդ հրաձգային գունդ` որպես դասակի հրամանատար: Կռվել է արևմտյան և հյուսիս-արևելյան ճակատներում:

1917 թվականի հոկտեմբերից հետո վերադարձել է Թիֆլիս:

1918-1919 թվականներին զորակոչվել է վրացական բանակ, որտեղ ծառայել է որպես դասակի հրամանատար:

Վրաստանի խորհրդայնացումից հետո, 1921 թվականից ծառայել է Կարմիր բանակում, Բաթումիում (այժմ` Բաթումի) և նշանակվել է 1-ին վրացական զնդի վաշտի հրամանատարի օգնական:

1922 թվականին ավարտել է վրացական միացյալ ռազմական դպրոցի հրամանատարական կազմի կրկնակի դասընթացները և մնացել է ուսումնական հաստատությունում, որտեղ ծառայել է որպես դասակի, վաշտի և գումարտակի հրամանատար:

Դպրոցների միավորումից հետո, 1927 թվականին նշանակվել է գումարտակի հրամանատար Աջարիայի ԿԳԿ-ի անվան Կովկասի 1-ին

հրաձգային դիվիզիայում, իսկ 1929 թվականից ստանձնել է Կովկասի 4-րդ հրաձգային գնդի շտաբի պետի պաշտոնը (Գյանջա՝ Գանձակ քաղաքում):

1930 թվականին Ադրբեջանի տարածքում, Կեդաբեկի (Գետաբեկ) շրջանում Յագուբլինի հանցախմբի դեմ գործողության ընթացքում, որպես ջոկատի ղեկավար, գերազանցել է իր իրավունքներն ու պարտականությունները և հանձնվել է Կովկասյան բանակի ռազմական տրիբունալի դատին:

1931 թվականի հունվարին կառավարական հանձնաժողովի կողմից վաղաժամկետ ազատվել և նշանակվել է «Օսոավիաքիմի» Անդրկովկասյան խորհրդում մարտական պատրաստության տեսուչ և հրաձգության կոմիտեի քարտուղար:

1931-1934 թվականներին եղել է պահեստազորում:

1934 թվականին նշանակվել է Անդրկովկասյան միլիցիայի վարչության ավագ տեսուչ:

1935 թվականին նշանակվել է Ներքին գործերի ժողկոմի բանվորագյուղացիական միլիցիայի Անդրկովկասյան (Թիֆլիսի) դպրոցի ուսումնական բաժնի վարիչ:

1941 թվականի հոկտեմբերին իր խնդրանքով միլիցիայից տեղափոխվել է Կարմիր բանակ և նշանակվել է անդրկովկասյան ռազմաճակատի 44-րդ բանակի 400-րդ հրաձգային դիվիզիայի շտաբի պետի օգնական թիկունքի բաժնում, և 5-րդ բաժնի վարիչ:

1942 թվականի փետրվարին նշանակվել է 217-րդ բանակային պահեստային հրաձգային գնդի շտաբի պետ և մասնակցել է Կերչի թերակղզու մարտերին՝ հետագայում ղեկավարելով նույն գունդը:

1943 թվականի փետրվարից ղեկավարել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի կուրսանտների 103-րդ առանձին հրաձգային բրիգադը: Նույն թվականին ստանձնել է 56-րդ բանակի լեռնահրաձգային 242-րդ դիվիզիայի հրամանատարությունը:

Դիվիզիան մասնակցել է Նովոռոսիյսկ-Տամանի հարձակողական գործողությանը:

1943 թվականի հոկտեմբերի 9-ին դիվիզիան ստացել է «Տաման» անվանումը և մտել է առափնյա առանձին բանակի կազմի մեջ:

1944 թվականի հունվարին անցել է Կերչի նեղուցը, զորքի մի մասի հետ պաշտպանել է Կերչի զինադաշտը և մյուս ուժերի հետ պաշտպանել է Ազովի մերձափնյա տարածքները:

Մասնակցել է Լեհաստանի և Չեխոսլովակիայի ազատագրմանը:

Պատերազմից հետո եղել է դիվիզիայի առաջնորդ Մերձկարպատյան ռազմական օկրուգում:

1946-1951 թվականներին եղել է 38-րդ բանակի մարտական և ֆիզիկական նախապատրաստման բաժնի վարիչ:

1951 թվականին առողջական պատճառներով դուրս է եկել զինվորական ծառայությունից:

Պարգևատրվել է «**Լենինի**» (1951), «**Կարմիր դրոշի**» (1943, 1944, 1946), «**Սուվորովի**» II աստիճանի (1945), «**Կարմիր աստղի**» (1942) շքանշաններով, «**Մարտական վաստակի համար**» (1944) մեդալով:

Ստացել է նաև Չեխոսլովակիայի «**Սպիտակ առյուծ**» շքանշան և «**Զինվորական խաչ**»:

Թաղված է Թբիլիսիում, Սաբուրթալոյի գերեզմանոցում:



**ՌՈՒԲԵՆ ԳՐԻԳՈՐԻ ՄԱՂԱԼՈՎ**
**(07.01.1935 - 04.12.2016)**

**ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ (09.05.1984)**

Ծնվել է Թիֆլիսում:

1952 թվականին, միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո սովորել է Թբիլիսիի հետևակային ուսումնարանում, որն ավարտել է 1955 թվականին:

Ծառայել է Անդրկովկասյան ռազմական օկրուգի ստորաբաժանումներում՝ որպես դասակի հրամանատար, վաշտի հրամանատարի տեղակալ, վաշտի հրամանատար: Ավարտել է Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան: Եղել է գումարտակի, գնդի, դիվիզիայի հրամանատար:

**1979 թ. մայիսի 8-ին ստացել է գեներալ-մայորի զինվորական կոչում:**

1986 թ. ապրիլի 26-ին Չեռնոբիլի ատոմակայանի 4-րդ էներգաբլոկում տեղի ունեցած պայթյունից հետո 10 օր գեներալ Մաղալովը և նրա զորամասերը մասնակցել են վթարի լիկվիդացման աշխատանքներին:

1988 թ. դեկտեմբերին նմանատիպ հանձնարարությամբ նա Սպիտակում էր՝ ավերիչ երկրաշարժի հետևանքների լիկվիդացման նպատակով:

Մինչև 1991 թվականը եղել է Կենտրոնական Ասիայի ռազմական օկրուգի հրամանատարի տեղակալ՝ առանց բարձրագույն ռազմական հաստատությունների ռազմական պատրաստության ոլորտում:

1991-1995 թթ. ծառայել է Ռուսաստանի փրկարարական ծառայությունում: 1995 թվականին տարիքի բերումով անցել է պահեստազոր:

Պարգևատրվել է **«Կարմիր աստղի»**, **«ԽՍՀՄ զինված ուժերում ծառայության համար»** III աստիճանի շքանշաններով, Փրկարարական ծառայության գերատեսչական պարգևներով:

Ապրել է Դոնի Ռոստովում: Մահացել է այնտեղ: Կտակի համաձայն՝ անյունն ամփոփվել է Թբիլիսիի Դամպալոյի գերեզմանոցում:



**ՍՏԵՓԱՆ ՍՈՂՈՄՈՆԻ**
**ՄԱՄՈՒԼՈՎ (ՄԱՄՈՒԼՅԱՆ)**
**(1902 - 26.09.1976)**

**ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ (09.07.1945)**

Ծնվել է Թիֆլիսում, վաճառականի ընտանիքում:

1920 թվականին ավարտել է Թիֆլիսի №4 արական գիմնազիան, 1931 թվականին՝ Համամիութենական պլանային ակադեմիան:

1917-1919 թվականներին աշխատել է որպես թիթեղագործ Թիֆլիսի մասնավոր ձեռնարկություններից մեկում:

1921-1922 թվականներին աշխատել է Թիֆլիսի 10-րդ շրջանի միլիցիայի կոմիսարիատում:

1922 թվականից որպես շարքային ծառայել է Կարմիր բանակում, այնուհետև եղել է 3-րդ վրացական հրաձգային դիվիզիայի կուսակցական բյուրոյի քարտուղար և զինվորական կոմիսար:

1922-1923 թվականներին եղել է վրացական հրաձգային 1-ին դիվիզիայի քաղաքական բաժնի կազմակերպչական ենթաբաժնի վարիչ:

1923-1924 թվականներին եղել է Վրաստանի կենտկոմի Աբխազիայի մարզկոմի հրահանգիչ:

1924 թվականին եղել է «Трудовая Абхазия» (Աշխատավոր Աբխազիա) թերթի խմբագրական խորհրդի անդամ և նույն թերթի պատասխանատու խմբագրի տեղակալ:

1924-1925 թվականներին եղել է Աբխազիայի Կրթության աշխատողների միության նախագահ:

1925-1926 թվականներին եղել է Վրաստանի կենտկոմի Սոխումիի քաղկոմիտեի պատասխանատու քարտուղար:

1926 թվականին նշանակվել է Վրաստանի կենտկոմի Աբխազիայի մարզկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ:

1926-1927 թվականներին աշխատել է Սոխումիի գավառի պատասխանատու քարտուղար:

1927-1928 թվականներին եղել է Վրաստանի կենտկոմի հրահանգիչ:

1928 թվականին նշանակվել է Վրաստանի կենտկոմի տեղեկատվական ենթաբաժնի վարիչ:

1928-1929 թվականներին եղել է Վրաստանի կենտկոմի հրազեկիչ:

1929-1930 թվականներին աշխատել է որպես Վրաստանի կենտկոմի պատասխանատու քարտուղարի օգնական:

1930-1931 թվականներին եղել է Վրաստանի կենտկոմի կազմակերպչական բաժնի կուսակցաշինության սեկտորի վարիչ և կազմակերպչական բաժանմունքի պետի տեղակալ:

1931-1932 թվականներին եղել է Ղազախական ԽՍՀ շրջկոմի 1-ին քարտուղարի օգնական:

1932-1933 թվականներին եղել է «Казахстанская правда» թերթի պատասխանատու քարտուղարի տեղակալ և Պրիբալխաշի (Ղազախական ԽՍՀ) շրջկոմի պատասխանատու քարտուղար:

1933-1934 թվականներին աշխատել է Ուկրաինական ԽՍՀ-ում, եղել է Դնեպրոպետրովսկ քաղաքի Պետրովսկու անվան մետաղագործական գործարանի կուսակցական կոմիտեի հանրային-ագիտացիոն բաժնի ղեկավար և կուսակցական կոմիտեի քարտուղարի տեղակալ:

1934-1936 թվականներին աշխատել է Անդրկովկասի շրջկոմի խորհրդային առևտրի վարչության պետի տեղակալ:

1936 թվականին նշանակվել է Վրաստանի կենտկոմի ղեկավար կուսակցական աշխատողների վարչության պետի տեղակալ:

1936-1937 թվականներին եղել է Վրաստանի կենտկոմի ղեկավար կուսակցական աշխատողների վարչության պետ:

1937-1938 թվականներին աշխատել է Վրաստանի կենտկոմի Թբիլիսիի քաղաքային կոմիտեի 3-րդ քարտուղար:

1938 թվականին նշանակվել է Վրաստանի կենտկոմի գյուղատնտեսական բաժնի վարիչ:

1939 թվականից ծառայել է Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի համակարգում:

1939 թվականին նշանակվել է ԽՍՀՄ Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի քարտուղարության պետի 1-ին տեղակալ:

Մինչև 1946 թվականը զբաղեցրել է ՆԳՆ քարտուղարության պետի պաշտոնը:

**1943 թվականի փետրվարի 14-ին նրան շնորհվել է «III ռանգի պետական անվտանգության կոմիսարի» կոչում:**

1946-1953 թվականներին աշխատել է ԽՍՀՄ ՆԳՆ փոխնախարար, եղել է ՆԳՆ կոլեգիայի անդամ:

1953 թվականի հունիսի 30-ին ձերբակալվել է «Բերիայի գործով», 1954 թվականի սեպտեմբերի 28-ին դատապարտվել 14 տարվա ազատազրկման:

1968 թվականի հունիսի 28-ին ազատվել է բանտից: Պատիժը կրել է Վլադիմիրի բանտում: Չի ռեաբիլիտացվել:

Պարգևատրվել է **«Լենինի»** (1949, 1952), **«Կարմիր դրոշի»** (1940, 1943), **«Կարմիր աստղի»** (1944, 1951), **«Հայրենական պատերազմի»** I աստիճանի (1945) շքանշաններով:

Ստացել է Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի վաստակավոր գործչի կրծքանշան (1942):



**ՊՅՈՏՐ ԻՎԱՆԻ ՄԱՆՍՎԵՏՈՎ**
**(1910 - 1967 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ)**

**ՆԵՐՔԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ**
**ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ**

Ծնվել է Յարոսլավլի մարզում:

1940 թվականից ծառայել է բանակում:

Մասնակցել է 1941-1945 թվականների Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմին: Ծառայել է Դոնի ռազմաճակատի 164-րդ տանկային բրիգադում:

1955-1959 թվականներին եղել է Ստավրոպոլի տարածաշրջանի քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ:

1964 թվականի դեկտեմբերից մինչև 1967 թվականի փետրվար եղել է Լենինգրադի օկրուգի քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ:

Մարտական վաստակի համար պարգևատրվել է **«Կարմիր դրոշի»** երեք (1943, 1944, 1945), **«Աշխատանքային Կարմիր դրոշի»**, **«Հայրենական պատերազմի»** I աստիճանի երկու (1944, 1945), **«Կարմիր աստղի»** երկու (1942, 1954) շքանշաններով:



**ԳԵՈՐԳԻ ՀՈՎՍԵՓԻ ՄԱՐՏԻՐՈՍՈՎ**
**(01.05.1906 - 21.02.1977)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (09.07.1945)**

Ծնվել է Թիֆլիսում, թիթեղավաճառի ընտանիքում:

1919 թվականին ավարտել է դպրոցը Թիֆլիսում:

1922 թվականից ծառայել է անվտանգության մարմիններում:

1922-1923 թվականներին եղել է Ադրբեջանի արտակարգ հանձնաժողովի հատուկ բաժանմունքի առաքիչ:

1923-1926 թվականներին աշխատել է հատուկ հանձնաժողովի 2-րդ դիվիզիայի հատուկ բաժանմունքի գործավար (ք. Բաքու):

1926-1929 թվականներին եղել է պետական քաղաքական վարչության 3-րդ դիվիզիայի հատուկ բաժանմունքի լիազորի օգնական (ք. Լենինական):

1929 թվականին նշանակվել է 3-րդ հեծելազորային դիվիզիայի գնդի հատուկ բաժնի լիազոր (Մանգլիսի ավան, Վրացական ԽՍՀ):

1929-1930 թվականներին սովորել է Միավորված պետական քաղաքական վարչության սահմանապահների բարձրագույն դպրոցում:

1930-1932 թվականներին ծառայել է որպես Պետական քաղաքական վարչության 3-րդ դիվիզիայի հատուկ բաժանմունքի լիազոր (ք. Լենինական):

1932-1935 թվականներին աշխատել է որպես Անդրկովկասի Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի Միավորված պետական քաղաքական վարչության հատուկ բաժանմունքի լիիրավ ներկայացուցչի ավագ օպեր-լիազոր:

1935-1937 թվականներին ծառայել է որպես Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի Գագրայի սահմանային պարետ:

1937-1939 թվականներին ծառայել է որպես Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի Գագրայի բաժանմունքի 3-րդ ստորաբաժանման պետ:

1939 թվականին նշանակվել է Անդրկովկասյան երկաթուղու Բաքվի կայարանի Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի ճանապարհատրանսպորտային բաժնի պետ:

1939-1940 թվականներին ծառայել է որպես Բելառուսի երկաթուղու Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի ճանապարհատրանսպորտային բաժնի վարիչ:

1940-1941 թվականներին եղել է Լատվիայի երկաթուղու Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի ճանապարհատրանսպորտային բաժնի վարիչ: Քաղբյուրոյի որոշմամբ Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի կողմից հաստատվել է որպես Հայկական ԽՍՀ-ում օդանավակայանների կառուցման լիազոր անձ:

1941-1943 թվականներին եղել է Հայկական ԽՍՀ ներքին գործերի ժողովրդական կոմիսար:

**1943 թվականի փետրվարի 14-ին նրան շնորհվել է «Պետական անվտանգության կոմիսարի» կոչում:**

1943-1945 թվականներին ծառայել է որպես Հայկական ԽՍՀ պետական անվտանգության ժողովրդական կոմիսար:

1945-1947 թվականներին եղել է Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի Ներքին գործերի նախարարության պետանվտանգության օպերատիվ հատվածի ղեկավար Գերմանիայում (Սաքսոնիա և Հալլե նահանգներում), միաժամանակ՝ 1947-1951 թվականներին, եղել է Գորկու մարզի Պետանվտանգության նախարարության վարչության պետի տեղակալ:

1951-1952 թվականներին եղել է Գորկու մարզի Պետանվտանգության նախարարության վարչության պետ:

1952-1953 թվականներին եղել է Հայկական ԽՍՀ Պետանվտանգության նախարար:

1953-1954 թթ. եղել է Հայկական ԽՍՀ ներքին գործերի նախարար:

1954-1955 թվականներին եղել է Արխանգելսկի մարզի պետական անվտանգության կոմիտեի վարչության պետ:

1955 թվականից ծառայել է ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր պետական անվտանգության կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության տնօրինության ներքո:

1955 թվականի մայիսի 23-ին ծառայողական անհամապատասխանության պատճառով ազատվել է աշխատանքից: Մեծ հեղինակություն է վայելել անվտանգության մարմինների աշխատակիցների շրջանում, բնավորությամբ մի փոքր խիստ է եղել, բայց արդարացի, մշտապես աջակցել է իր աշխատակիցներին: Անձամբ է վերահսկել հետախուզական ծառայությունը, տիրապետել է հետախուզության տեխնոլոգիական գործընթացին, կարողացել է ուշադիր լսել մարդկանց, չի հանդուրժել շողոքորթներին ու խաբեբաներին:

Պարգևատրվել է **«Լենինի»** (1950), **«Կարմիր դրոշի»** (1943, 1944), **«Կարմիր աստղի»** (1941) շքանշաններով: Ստացել է «Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի վաստակավոր գործչի» կրծքանշան (1942):

Թաղված է Արխանգելսկի Սոլոմբալայի գերեզմանոցում:



**ՍԵՐԳԵՅ ԱՐԿԱԴԻԻ ՄԻԱՆՍԱՐՈՎ**
**(1916 - 1966)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (03.08.1953)**

Ծնվել է Թիֆլիսում: Մայրը իշխան **Իոսելիանիի** դուստրն է եղել:

Ավարտել է Թբիլիսիի շինարարական տեխնիկական ուսումնարանը: Աշխատել է Թբիլիսիի շինարարական օբյեկտներում, Թբիլիսիի խորհրդի նախագծային արտադրամասում, հեռակա սովորել է Անդրկովկասի արդյունաբերական ինստիտուտում:

1936 թվականին դարձել է Թբիլիսիի հրետանային ուսումնարանի կուրսանտ:

1940 թվականին, ուսումնարանն ավարտելուց հետո ծառայել է Սոխումիի հետևակային ուսումնարանում, որտեղ հաջորդաբար ծառայել է որպես դասակի հրամանատար, վաշտի հրամանատար և ուսումնական գումարտակի հրամանատարի տեղակալ: Ակտիվորեն մասնակցել է 1941-1945 թվականների ԽՍՀՄ Հայրենական մեծ պատերազմին:

1943 թվականին նշանակվել է 1-ին ուկրաինական ռազմաճակատի 13-րդ բանակի հետախուզության պետի ավագ օգնական:

1944 թվականին նշանակվել է 13-րդ բանակի տեղեկատվական-հետախուզական բաժնի պետ, իսկ ավելի ուշ՝ 13-րդ բանակի 24-րդ հրաձգային կորպուսի հետախուզության պետ: Պատերազմից հետո ծառայել է Անդրկովկասյան ռազմական օկրուգում:

1949-1951 թվականներին եղել է ստորաբաժանման շտաբի պետ:

1951-1956 թվականներին ծառայել է որպես հայկական հրաձգային դիվիզիայի հրամանատար:

1951 թվականի փետրվարի 23-ին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1958 թվականին **Ոսկե մեդալով** ավարտել է Գլխավոր շտաբի ակադեմիայի բարձրագույն ակադեմիական կուրսերը:

Ընտրվել է Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր:

1962 թվականին հիվանդության պատճառով դուրս է եկել զինվորական ծառայությունից: Մահացել է երկարատև ծանր հիվանդությունից հետո:

Պարգևատրվել է «**Կարմիր դրոշի», «Ալեքսանդր Նևսկու», «Կարմիր աստղի**» և «**Հայրենական պատերազմի**» I աստիճանի շքանշաններով:



**ԱՐՏԵՄ (ԱՆՈՒՇԱՎԱՆ) ԻՎԱՆԻ ՄԻԿՈՅԱՆ**
**(23.07.1905 - 09.12.1970)**

**ԻՆԺԵՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ԳՆԴԱՊԵՏ**
**(27.10.1967)**
**ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՐՈՍ**
**(1956, 1957)**

Ծնվել է Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի Սանահին գյուղում (*ներկայումս՝ Հայաստանի Հանրապետության Ալավերդիի շրջան: Հեղինակային ծանոթագրություն*):

1918 թվականին ընտանիքը տեղափոխվել է Թիֆլիս:

1923 թվականին ընտանիքը կրկին ստիպված է եղել փոխել բնակության վայրը և հաստատվել Դոնի Ռոստովում, որտեղ Արտեմ Միկոյանը սովորել է «Կրասնի Ակսայ» գործարանի գործարանային ուսումնարանում և աշխատել է որպես փականագործի աշակերտ:

1924 թվականին աշխատանքի է անցել «Դոնի Ռոստով» երկաթուղային դեպոյի գլխավոր արտադրամասերում:

1925 թվականի նոյեմբերին տեղափոխվել է Մոսկվա, որտեղ աշխատել է «Դինամո» գործարանում՝ որպես փականագործ:

1927 թվականին աշխատանքի է անցել Մոսկվայի Օկտյաբրի շրջանի տրամվայի պարկում:

1928 թվականի դեկտեմբերից ծառայել է Կարմիր բանակում:

1929 թվականի օգոստոսից Մոսկվայի ռազմական օկրուգի քաղաքական վարչության կողմից ուղարկվել է Իվանովո-Վոզնեսենսկ քաղաք՝ Մ. Ֆրունզեի անվան ռազմական դպրոցում սովորելու:

1930 թվականի դեկտեմբերին անցել է պահեստազոր և սկսել է աշխատել Մոսկվայի «Կոմպրեսոր» գործարանում:

1931 թվականին վերադարձել է Կարմիր բանակ և սկսել է սովորել Ն. Ժուկովսկու անվան ռազմաօդային ակադեմիայում: Այստեղ համակուրսեցիների խմբի հետ ակադեմիայի ունկնդիր Արտեմ Միկոյանը ստեղծում է իր առաջին՝ «Օկտյաբրյոնոկ» ինքնաթիռը:

1937 թվականի հոկտեմբերի 22-ին պետական քննական հանձնաժողովի որոշմամբ Ա. Միկոյանին շնորհվում է «ռազմաօդային ուժերի ինժեներ-մեխանիկի» կոչում և նա նշանակվում է ռազմական ներկայացուցիչ Մոսկվայի Օսոավիաքիմի №1 ավիացիոն գործարանում, իսկ 1938 թվականից՝ Ն. Պոլիկարպովի կոնստրուկտորական բյուրոյի վարիչ՝ սերիական կործանիչների բնագավառում:

1939 թվականի մարտից Միկոյանը աշխատել է Օսոավիաքիմի №1 գործարանի կոնստրուկտորական բյուրոյի պետի տեղակալ, իսկ նույն թվականի դեկտեմբերից Մ. Գուրևիչի հետ ղեկավարել է Օսոավիաքիմի №1 գործարանի փորձնական-կոնստրուկտորական բաժնի կոնստրուկտորների խումբը:

1940 թվականին Միկոյանի գլխավորությամբ (Մ. Գուրևիչի հետ) ստեղծվեցին մեծ բարձրությունների վրա աշխատելու համար նախատեսված, ժամանակի ամենաարագ՝ «ՄիԳ-1» սերիական կործանիչը և դրա մոդիֆիկացիան՝ «ՄիԳ-3»-ը: «ՄիԳ-1»-ի առաջին փորձարկումը մեծ իրադարձություն դարձավ ԽՍՀՄ Կենտրոնական աերոդինամիկ ինստիտուտի «T-101» կայանում:

1940 թվականի ապրիլի 5-ին «ՄիԳ-1» ինքնաթիռը կատարեց իր առաջին թռիչքը:

1940 թվականի ամռանը «ՄիԳ-1»-ը մոդիֆիկացվեց և վերածվեց «ՄիԳ-3»-ի: Նույն թվականին սկսվեց Միկոյանի և Գուրևիչի նախաձեռնության՝ «ՄիԳ-3» կործանիչների սերիական արտադրությունը:

1940 թվականին Միկոյանը նշանակվում է «Օսոավիաքիմի» №1 գործարանի գլխավոր կոնստրուկտոր: 1941 թվականի սկզբին խորհրդային ավիացիոն մի խումբ կոնստրուկտորների հետ Միկոյանը գործուղվում է Գերմանիա՝ տեղում գերմանական ավիացիոն տեխնիկային և ավիացիոն արդյունաբերությանը ծանոթանալու համար:

1940-1941 թվականներին «ՄիԳ-3» ինքնաթիռներն արդեն թողարկվում էին մեծ քանակությամբ և հաջողությամբ կիրառվում էին ԽՍՀՄ Հայրենական մեծ պատերազմի (1941-1945) սկզբնական շրջանի մարտական գործողություններում:

«ՄիԳ-3»-ը լավ անուն վաստակեց նաև երկրի հակաօդային պաշտպանության համակարգում:

1941-1945 թվականների ԽՍՀՄ Հայրենական մեծ պատերազմի սկսվելուց հետո, 1941 թվականի օգոստոսին, Մոսկվայից տարհանվում է Միկոյանի և Գուրևիչի կոնստրուկտորական բյուրոն:

1942 թվականի մարտին Միկոյանը նշանակվում է փորձարարական գործարանի տնօրեն և գլխավոր կոնստրուկտոր: Նույն թվականի ապրիլին ի ուրախություն բոլորի կոստրուկտորական բյուրոն տարհանումից վերադառնում է Մոսկվա:

1942-1944 թվականներին ամբողջ աշխատանքային թիմն անխոնջ աշխատում է նոր՝ «Ի-211», «Ի-220», «Ի-222», «Ի-224» փորձնական կործանիչների վրա: 1945 թվականի մարտին սկսեցին փորձարկել Միկոյանի կոնստրուկցիայով ստեղծված «Ի-250» կործանիչը, որը բաղկացած էր աերոռեակտիվ շարժիչներից, իսկ 1945 թվականի մայիսին տեղի ունեցավ թևավոր այս մեքենայի առաջին թռիչքը: Արտեմ Միկոյանը Խորհրդային Միության ռեակտիվ ավիացիայի առաջամարտիկներից էր:

**1946 թվականին նրան շնորհվել է ինժեներատեխնիկական ծառայության գեներալ-մայորի զինվորական կոչում:**

Հետպատերազմյան շրջանում արտադրվել են առաջնագծի արագ և գերարագ ռեակտիվ ինքնաթիռներ (դրանցից շատերը արտադրվել են մեծ քանակությամբ և երկար ժամանակ եղել են խորհրդային ռազմաօդային ուժերի զինանոցում): Դրանցից էին «ՄիԳ-9»-ը, «ՄիԳ-15»-ը, «ՄիԳ-17»-ը (որոնք հասնում էին ձայնի արագությանը), «ՄիԳ-19»-ը (առաջին սերիական հայրենական գերձայնային կործանիչը), «ՄիԳ-21»-ը (որը երկու անգամ գերազանցում էր ձայնի արագությունը):

**ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը նոր ավիացիոն տեխնիկայի ստեղծման գործում ունեցած բացառիկ վաստակի համար 1956 թվականի ապրիլի 20-ին Արտեմ Միկոյանին շնորհում է «Սոցիալիստական աշխատանքի հերոսի» կոչում՝ պարգևատրելով նրան «Լենինի» շքանշանով և «Մուրճ և մանգաղ» Ոսկե մեդալով:**

Նույն՝ 1956 թվականին ավարտին են հասնում «ՄիԳ-19» կործանիչ ինքնաթիռի ստեղծման աշխատանքները:

1956 թվականի դեկտեմբերի 20-ին Միկոյանը նշանակվում է «ՄիԳ» կոնստրուկտորական բյուրոյի գլխավոր կոնստրուկտոր:

**ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը նոր ռեակտիվ ավիացիոն տեխնիկայի ստեղծման գործում ունեցած բացառիկ վաստակի համար 1957 թվականի հուլիսի 12-ին Արտեմ Միկոյանին շնորհում է «Սոցիալիստական աշխատանքի հերոսի» կոչում՝ երկրորդ անգամ պարգևատրելով նրան «Լենինի» շքանշանով և «Մուրճ և մանգաղ» Ոսկե մեդալով:**

**1957 թվականին նրան շնորհվում է ինժեներատեխնիկական ծառայության գեներալ-լեյտենանտի զինվորական կոչում:**

1968 թվականի նոյեմբերի 26-ին ընտրվել է ԽՍՀՄ ԳԱ իսկական անդամ:

Միկոյանի ղեկավարությամբ ստեղծված վերջին ինքնաթիռները «ՄիԳ-21» (ԽՍՀՄ-ի առաջին ինքնաթիռը, որի թևն ամբողջությամբ փոխվում էր օդում թռիչքի ժամանակ) և «ՄիԳ-25» (որի արագությունը երեք անգամ գերազանցում էր ձայնի արագությանը) կործանիչներն էին: Միկոյանի ղեկավարությամբ ստեղծված ինքնաթիռներով 60-ից ավելի համաշխարհային ռեկորդներ են գրանցվել: Նա հիմնեց ավիաշինության իր դպրոցը, պատրաստեց բազմաթիվ հմուտ մասնագիտացված կոնստրուկտորների:

1950-1970 թվականներին ընտրվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր:

Ապրել է Մոսկվայում, մահացել է այնտեղ, թաղվել է Նովոդևիչյան գերեզմանոցում (տեղամաս №1):

Պարգևատրվել է **«Լենինի»** (1940, 1955, 1956, 1965), **«Հոկտեմբերյան հեղափոխության», «Կարմիր դրոշի», «Հայրենական պատերազմի»** I աստիճանի, **«Կարմիր աստղի»** երկու շքանշաններով: Արժանացել է **Լենինյան** (1962) և **Ստալինյան** (1941, 1947, 1948, 1949, 1952, 1953) մրցանակների:










Գեներալ-գնդապետ Ա. Ի. Միկոյանի շիրմաքարը
Մոսկվայի Նովոդևիչյան գերեզմանոցում և հոբելյանական արծաթե
100-դրամանոց մետաղադրամ (2005 թ.)



**ՍՏԵՓԱՆ ԱՆԱՍՏԱՍԻ ՄԻԿՈՅԱՆ**
**(12.07.1922 - 24.03.2017)**

**ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ**
**(1980)**
**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍ**
**(03.04.1975)**

Ծնվել է Թիֆլիսում, խորհրդային նշանավոր պետական գործիչ Անաստաս Իվանի Միկոյանի (1895-1978) ընտանիքում:

Մինչև 1926 թվականը ընտանիքն ապրել է Դոնի Ռոստով քաղաքում, 1926 թվականին տեղափոխվել են Մոսկվա: 10-րդ դասարանը Ս. Միկոյանն ավարտել է Մոսկվայում:

1940 թվականից ծառայել է Կարմիր բանակում: 1941 թվականին ավարտել է Կաչայի օդաչուների ռազմաավիացիոն դպրոցը: Ծառայել է ռազմաօդային ուժերի շարային զորամասերում:

1941 թվականի դեկտեմբերից որպես կործանիչ օդաչու մասնակցել է ԽՍՀՄ Հայրենական մեծ պատերազմին (1941-1945): Կռվել է 11-րդ ավիացիոն կործանիչ գնդի կազմում, որը պաշտպանում էր Մոսկվան: Նրա ինքնաթիռը 13-րդ մարտական թռիչքի ժամանակ սխալմամբ խոցվել է խորհրդային մեկ այլ կործանիչի կողմից, և ընկնելիս նա կոտրել է ոտքը: Հոսպիտալից վերադառնալուց հետո 32-րդ գվարդիական ավիացիոն գնդի կազմում կռվել է Ստալինգրադի և հյուսիս-արևմտյան ռազմաճակատներում, ապա՝ Մոսկվայի հակաօդային պաշտպանության 12-րդ գվարդիական ավիացիոն գնդում:

1951 թվականին ավարտել է Ն. Ժուկովսկու անվան ռազմաօդային ինժեներական ակադեմիան և անցել է թռիչքային փորձարկման աշխատանքի:

1951 թվականից աշխատել է որպես Վ. Չկալովի անվան ռազմաօդային ուժերի կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի փորձարկող օդաչու:

1959 թվականից եղել է Վ. Չկալովի անվան ռազմաօդային ուժերի կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի փորձարկման վարչության ղեկավար:

1965 թվականից եղել է Վ. Չկալովի անվան ռազմաօդային ուժերի կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի տնօրենի առաջին տեղակալ:

**1972 թվականին նրան շնորհվել է ավիացիայի գեներալ-մայորի զինվորական կոչում:**

**1975 թվականի ապրիլի 3-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը նոր ավիացիոն տեխնիկայի յուրացման գործում ունեցած ներդրման և աչքի ընկնող խիզախության համար ավիացիայի գեներալ-մայոր Ստեփան Անաստասի Միկոյանին շնորհել է «Խորհրդային Միության հերոսի» կոչում՝ նրան պարգևատրելով «Լենինի» շքանշանով և «Ոսկե աստղ» մեդալով:**

Թռիչքներ գործել է մինչև 1978 թվականը: 1978 թվականին անցել է պահեստազոր:

1978 թվականից եղել է «Մոլնիա» գիտաարտադրական միավորման գլխավոր տնօրենի տեղակալ՝ թռիչքային փորձարկումների գծով, մասնակցել է հանրահայտ «Բուրան» տիեզերանավի ստեղծմանը և փորձարկմանը, ղեկավարել է «Բոր-4» ուղեծրային թռչող մոդելի աշխատանքները:

1992 թվականից թոշակի է անցել: Ապրել է Մոսկվայում: 1963 թվականից եղել է ԽՍՀՄ վաստակավոր փորձարկող օդաչու, 1980 թվականից՝ տեխնիկական գիտությունների թեկնածու:

Մարտական վաստակի համար պարգևատրվել է **«Լենինի»** (1975), **«Կարմիր դրոշի»** (1942), **«Հայրենական պատերազմի»** առաջին աստիճանի (1985), **«Կարմիր աստղի»** (1944, 1956, 1957, 1966) շքանշաններով:



**ԳԵՈՐԳԻ ՍՏԵՓԱՆԻ ՆԱՐԻՄԱՆՈՎ (ՆԱՐԻՄԱՆՅԱՆ)**
**(13.02.1922 - 10.10.1983)**

**ԻՆԺԵՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ**
**(1968)**

Ծնվել է Թիֆլիսում, հայկական ընտանիքում:

1948 թվականին ավարտել է Ժուկովսկու անվան ռազմաօդային ինժեներական ակադեմիան:

1950 թվականին հեռակա կարգով ավարտել է Մոսկվայի պետական համալսարանը:

1948 թվականից անցել է ծառայության Պաշտպանության նախարարության 4-րդ գիտահետազոտական ինստիտուտում, եղել է առաջատար ինժեների օգնական, առաջատար ինժեներ, լաբորատորիայի վարիչ, բաժնի վարիչ, ինստիտուտի՝ հատուկ տեխնիկայի ուղղությամբ փոխտնօրեն և 1962-1965 թվականներին՝ ինստիտուտի գիտական գծով փոխտնօրեն:

1965 թվականին աշխատանքի է անցել Ընդհանուր մեքենաշինության նախարարությունում, եղել է գիտատեխնիկական խորհրդի փոխնախագահ:

1971 թվականից եղել է Տիեզերական հետազոտությունների ինստիտուտի փոխտնօրեն:

1983 թվականից եղել է ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Մեքենագիտական ինստիտուտի փոխտնօրեն: Նշանավոր մասնագետ է եղել դեֆորմացված առարկաների դինամիկայի և տիեզերական թռիչքների մեխանիկայի բնագավառում:

Նրա գործունեության հիմնական ուղղությունները կապված են դինամիկայի տեսական հետազոտությունների, համակարգերի շարժման կայունության, հեղուկ և պինդ նյութերի, տիեզերական

սարքերի և հրթիռների, ինչպես նաև տիեզերական տարածության հետազոտությունների ընդհանուր խնդիրների հետ: 50-ական թվականներին անցկացված հետազոտությունների ընթացքում նա հանգել է գիտական բացառիկ հետևությունների պինդ մարմինների և բաղկացուցիչ հեղուկների միասնական տատանումների բնագավառում, ինչը կարևոր նշանակություն է ունեցել մեծ հեռավորության վրա հրթիռների մեքենայացված կառավարման և գործնական խնդիրների լուծման հարցում:

Մասնակցել է պոլիգոնային և հրամանատարական չափիչ համալիրների ստեղծմանը և դրանց բալիստիկ հիմնավորմանը:

Հետագայում ղեկավարել է մի շարք հայրենական տիեզերական խոշոր նախագծեր, մասնակցել է «Ինտերկոսմոս» միջազգային գիտահետազոտական ծրագրի ԽՍՀՄ-Ֆրանսիա հետազոտություններին, Հնդկաստանի և Ֆրանսիայի արբանյակների արձակմանը (խորհրդային հրթիռային կայաններով), ԽՍՀՄ-ԱՄՆ «Սոյուզ-Ապոլլոն» նախագծին:

Նրա մասնակցությամբ է իրականացվել «Կոսմոս»-ի և «Պրոգնոզ»-ի սերիաների ավտոմատ ունիվերսալ ուղեծրային կայանների և «Վերտիկալ» հետազոտական հրթիռի հաջող արձակումը տիեզերք:

Զգալի ներդրում է ունեցել ծրագրով նախատեսված «Լունա-16» կայանի միջոցով լուսնային հողը Երկիր հասցնելու գործում և տիեզերագնացության պատմության մեջ առաջին ուղեծրային «Սալյուտ» գիտական կայանի ավտոմատ և օդաչուով ղեկավարվող երկարաժամկետ և փորձնական ռեժիմով թռիչքներում:

Աշխատել է Միջազգային տիեզերագնացության ֆեդերացիայի հետազոտական խմբում (Ֆրանսիա) գեոստացիոնար ուղեծրերի օգտագործման հարցերով:

Խորհրդային պատվիրակությունների կազմում մասնակցել է Միջազգային տիեզերագնացության ֆեդերացիայի XXIV և XXX համագումարներին Հարավսլավիայում և Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում:

Տարիներ շարունակ եղել է «Земля и вселенная» (Երկիր և տիեզերք) ամսագրի խմբագրական խորհրդի անդամ և «Машиностроение» (Մեքենաշինություն) հրատարակչության խմբագրական խորհրդի տիեզերագնացության բաժնի նախագահը:

Արժանացել է ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի (1959) և պրոֆեսորի (1962) կոչման: Լենինյան մրցանակի դափնեկիր է եղել (1957): Պարգևատրվել է **«Լենինի»** (1961) և **«Աշխատանքային Կարմիր դրոշի»** (1976) շքանշաններով:

Մահացել և թաղվել է Մոսկվայում:




Գեներալ Գ. Ս. Նարիմանովի շիրիմը Մոսկվայի
Կունցևոյի գերեզմանոցում (10-րդ տեղամաս)



**ԱՌԱՔԵԼ ԿԱՐԱՊԵՏԻ ՕԳԱՆԵԶՈՎ**
**(03.03.1907 - 23.05.1971)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (1953)**

Ծնվել է Թիֆլիսում, կոշկակարի ընտանիքում:

Աշխատանքային դպրոցն ավարտելուց հետո սովորել է շինարարական տեխնիկումում: Երեք տարի բետոնագործ է եղել Բաքվի նոր շենքերի շինարարական աշխատանքներում:

1928-1931 թվականներին սովորել է Անդրկովկասյան ռազմահետևակային ուսումնարանում:

1931 թվականից, ուսումնարանն ավարտելուց հետո ծառայել է որպես 22-րդ հրաձգային դիվիզիայի 65-րդ հրաձգային գնդի դասակի հրամանատար, վաշտի հրամանատարի օգնական:

1938-1939 թվականներին մասնակցել է Խասան լճի և Խալխին-Գոլ գետի (Մոնղոլիա) մոտ մղված մարտերին:

Մասնակցել է Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմին (1941-1945):

1945 թվականի օգոստոսին նրա հրամանատարության տակ գործող դիվիզիան ազատագրել է Մանջուրիայի մի շարք քաղաքներ և գյուղեր:

Մարտական վաստակի համար արժանացել է «**Կարմիր դրոշի**» երկու և «**Կարմիր աստղի**» շքանշանների:




Գեներալ-մայոր Ա. Կ. Օգանեզովի շիրմաքարը
Սոչիի հին գերեզմանոցում



**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԵԴՐԱԿԻ ՕՎԱՆՕՂԼՅԱՆ**
**(1901 - 28.06.1958)**

**ՀՐԵՏԱՆՈՒ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ**
**(03.08.1953)**

Ծնվել է Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի գյուղում, գինու խանութի սեփականատիրոջ ընտանիքում:

1919 թվականին բարձր առաջադիմությամբ ավարտել է Թիֆլիսի հայոց Ներսիսյան հոգևոր դպրոցը և տեղափոխվել է Ալեքսանդրապոլ (Երևանի նահանգ, այժմ՝ Գյումրի), որտեղ սկսել է աշխատել երկաթուղային հեռագրատանը:

1920-1921 թվականներին մասնակցել է Բաքվի հրամանատարական դասընթացներին: Զինվորական ծառայությունը սկսել է որպես դասակի հրամանատար:

1922-1924 թվականներին ծառայել է Սևծովյան առափնյա պաշտպանության հրետանային ստորաբաժանումներում:

1924-1926 թվականներին ծառայել է որպես Բալթիկ ծովի առափնյա պաշտպանության գնդի առանձին հրետանային մարտկոցի հրամանատար:

1927-1931 թվականներին սովորել է Լենինգրադի Ձերժինսկու անվան հրետանային ակադեմիայում:

1932-1934 թվականներին ծառայել է որպես հայկական հրետանային գնդի շտաբի պետ:

1934-1935 թվականներին ծառայել է որպես հրետանային գնդի հրամանատար:

1935-1939 թվականներին ծառայել է որպես հակաօդային պաշտպանության բրիգադի շտաբի պետ՝ գնդապետի կոչումով:

1939 թվականին տեղափոխվել է Մոսկվա՝ որպես Կարմիր բանակի հրաձգային-տեխնիկական կոմիտեի ղեկավար:

Այս պաշտոնում նա դրսևորել է գիտահետազոտական աշխատանքի հմտություն, հակաօդային պաշտպանության զորքերի մարտական պատրաստվածությունը, առաջավոր փորձը տեսնելու և ճիշտ գնահատելու կարողություն: Զենիթային կրակի տեսության և պրակտիկայի բնագավառում մի շարք աշխատությունների հեղինակ է: Օվանօղլյանի առաջարկներն ու մշակումները հաջողությամբ կիրառվել են ԽՍՀՄ Հայրենական մեծ պատերազմի մարտական գործողությունների ժամանակ: Հետպատերազմյան շրջանում, 1948 թվականից աշխատել է թեկնածուական ատենախոսության վրա, որը վերաբերում էր զենիթային հրետանու որակական թարմացման հարցերին:

1950-ական թվականների սկզբին զենիթային հրետանին սկսեց զինվել նոր զենիթահրթիռային համալիրներով, կառավարման ժամանակակից սարքերով և զենքի հարվածային կայաններով:

1951 թվականին հաջողությամբ պաշտպանել է թեզը և ստացել է ռազմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: **Նրա անձնական և անմիջական մասնակցությամբ մշակվել են զենիթային հրետանու կրակի տեսության և պրակտիկայի վերաբերյալ մի շարք գիտահետազոտական աշխատանքներ, որոնք արդյունավետ գործնական կիրառություն են գտել ԽՍՀՄ Հայրենական մեծ պատերազմում (1941-1945):**

1956 թվականին հիվանդության պատճառով դուրս է եկել զինվորական ծառայությունից:

Մարտական վաստակի համար պարգևատրվել է **«Լենինի»**, **«Կարմիր դրոշի»** և **«Կարմիր աստղի»** երկու շքանշաններով:



**ԲՈՐԻՍ ԱՐՏԵՄԻ ՊԱՊԻՆՅԱՆ**
**(19.07.1913 - 1993)**

**ԻՆՏԵՆԴԱՆՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (22.02.1963)**

Ծնվել է Ախալցիխեում, արհեստավորի ընտանիքում:

1928 թվականին ավարտել է միջնակարգ դպրոցը:

1931 թվականին ավարտել է Անդրկովկասի հիդրոտեխնիկական տեխնիկումը:

1931-1934 թվականներին աշխատել է Ախալցիխեի սահմանապահ ջոկատում՝ որպես սահմանային անցակետերի շինարարական աշխատանքների ղեկավար:

1934 թվականից ծառայել է Կարմիր բանակում: Ծառայել է վրացական 1-ին հրաձգային գնդում (Թիֆլիսում):

1935 թվականից ծառայել է Ախալցիխեի զինկոմիսարիատում, ապա՝ Վրաստանի մոբիլիզացման ծառայությունում (Թիֆլիս), որը 1938 թվականին վերանվանվել է Վրացական ԽՍՀ զինկոմիսարիատ:

1940 թվականին տեղափոխվել է Անդրկովկասյան ռազմական օկրուգի շտաբ:

1941-1945 թվականների ԽՍՀՄ Հայրենական մեծ պատերազմի սկզբից ևեթ մասնակցել է 89-րդ հայկական, 414-րդ և 276-րդ վրացական հրաձգային դիվիզիաների կազմավորմանը:

Մինչև 1954 թվականը ծառայել է Անդրկովկասյան ռազմական օկրուգի շտաբում:

1954-1964 թվականներին ծառայել է Գերմանիայում, խորհրդային զորքերի կազմում:

1964-1967 թվականներին ծառայել է որպես Հյուսիսային Կովկասի ռազմական օկրուգի շտաբի պետի տեղակալ:

Գեներալ-մայոր Պապինյանը տարիներ շարունակ ինտենդանտական ծառայության նշանավոր աշխատակիցներից է եղել, մեծ սեր ու հեղինակություն է վայելել մի շարք ռազմական օկրուգների զորքերում: Նա զինվորական հատուկ պատրաստվածություն չի ունեցել, բայց կարողացել է ինքնուրույն ձեռք բերել խորը մասնագիտական իմացություններ, տիրապետել է ինտենդանտական ծառայության բոլոր մանրամասներին:

1967 թվականին անցել է պահեստազոր:

Պարգևատրվել է **«Կարմիր դրոշի»**, **«Կարմիր աստղի»** երկու, **«Հայրենական պատերազմի»** II աստիճանի (1985) շքանշաններով և «Մարտական վաստակի համար» մեդալով:



**ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐԱՄԻ ՍԱԳՈՅԱՆ**
**(16.01.1904 - 17.10.1971)**

**ԿՈՆՏՐ-ԱԴՄԻՐԱԼ**

Ծնվել է Ախալցիխե քաղաքում:

1922 թվականից ծառայել է ռազմածովային ուժերում:

1924 թվականին ավարտել է Բաթոմիի (այժմ՝ Բաթումի) ռազմածովային ուսումնարանը, 1927 թվականին՝ Մ. Ֆրունզեի անվան բարձրագույն ռազմածովային ուսումնարանը, 1931 թվականին՝ Կարմիր բանակի ռազմածովային ուժերի հրամանատարական կազմի հատուկ կարգի հրետանային ֆակուլտետը:

Ծառայել է Վոլգայի և Դնեպրի ռազմական նավատորմիղի տարբեր նավերի վրա:

1941 թվականին ավարտել է Կ.Վորոշիլովի անվան ռազմածովային ակադեմիայի հրետանային ֆակուլտետը, որից հետո ծառայել է որպես Բալթյան նավատորմի թեթև ուժերի ջոկատի նավատորմապետի հրետանավոր:

Մասնակցել է Խորհրդային Միության 1941-1945 թվականների Հայրենական մեծ պատերազմին:

Տալլինի պաշտպանության ժամանակ ղեկավարել է Տալլինի բոլոր գրոհային նավերի հրետանային պատրաստությունը: 1941 թվականի օգոստոսի 28-ին նրա ջոկատը կարողացել է կասեցնել Նարովա գետի վրա գերմանական ստորաբաժանումների գրոհը: Մարտի ժամանակ ծանր վիրավորվել է:

Լենինգրադի շրջափակման ողջ ընթացքում եղել է Բալթյան նավատորմի նավախմբի շտաբի պետ մարտական և օպերատիվ աշխատանքներում: Անձամբ ղեկավարել է նավատորմի նավերի հրետանու

մարտական կիրառումը, մասնակցել է Բալթիկայի բազմաթիվ մարտական գործողությունների:

Լենինգրադի շրջափակման վերջնական վերացման ժամանակ ղեկավարել է 2-րդ խմբի նավերի հրետանին, հաջողությամբ մշակել է գործողության պլանը և անձամբ ղեկավարել է հրետանային հարձակումը:

Հետպատերազմյան շրջանում ծառայել է ռազմածովային նավատորմում:

1947-1951 թվականներին ծառայել է որպես ռազմածովային ուժերի գլխավոր հրետանավոր:

1951-1953 թվականներին ծառայել է որպես ռազմածովային ուժերի № 2 ինստիտուտի պետի տեղակալ:

1953-1956 թվականներին եղել է Ա. Կռիլովի անվան նավաշինության և սպառազինության ռազմածովային ամբիոնի ավագ ուսուցիչ:

1954 թվականին պաշտպանել է թեկնածուական թեզը և ստացել է ռազմածովային գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Գիտական աշխատությունների հեղինակ է:

1959 թվականին անցել է պահեստազոր:

Մահացել է Մոսկվայում: Թաղված է Նովոդևիչյան գերեզմանոցում:

Պարգևատրվել է «**Լենինի**» (1947), «**Կարմիր դրոշի**» չորս (1942, 1944, 1944, 1956), «**Նախիմովի**» II աստիճանի (1944) և «**Հայրենական պատերազմի**» I աստիճանի (1946) շքանշաններով:





**ԲՈՐԻՍ ԿՈՆՍՏԱՆԴԻՆԻ**
**ՍԱԼԱՄԲԵԳՈՎ**
**(12.12.1907 - 01.07.1978)**

**ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ I ՌԱՆԳԻ ԳԵՆԵՐԱԼ-ՏՆՕՐԵՆ* (1949)**

**ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՐՈՍ (05.11.1943)**

Ծնվել է Թիֆլիսում:

Ավարտել է բանվորական ֆակուլտետը (բանֆակ):

1926 թվականից աշխատել է երկաթուղային տրանսպորտում, նախ եղել է Թիֆլիսի շոգեքարշների դեպոյի մեքենավարի աշակերտ, այնուհետև՝ մեքենավար:

1930 թվականին քննություններ է հանձնել Լենինգրադի երկաթուղային տրանսպորտի ինժեներական ինստիտուտում, որը հաջողությամբ ավարտել է 1935 թվականին՝ «շոգետրանսպորտային ինժեներ-մեխանիկի» մասնագիտությամբ և նույն թվականին աշխատանքի է անցել Հոկտեմբերյան երկաթուղու Լենինգրադ-Մոսկվա ուղևորային գծում, որտեղ աշխատել է որպես տեխնիկական բյուրոյի ինժեներ, վարպետ, դեպոյի պետի տեղակալ:

Արդեն 1937 թվականին նշանակվել է Հոկտեմբերյան երկաթուղու Լենինգրադ-Մոսկվա ուղևորային կայանի դեպոյի պետ (փոխարինել է բռնադատված իր նախորդին): Այնտեղ նա դրսևորել է իրեն՝ որպես տրանսպորտի հետ կապված նախաձեռնություններ ցուցաբերող հնարագետ ղեկավար: Նրա մասնակցությամբ դեպոյում մշակվել և ներդրվել է շոգեքարշների վերանորոգման նոր ռացիոնալ տեխնոլոգիական գործ-

---

* ***Հաղորդակցության ճանապարհների I ռանգի գեներալ-տնօրեն*** *- երկաթուղային տրանսպորտի աշխատավորների հատուկ անձնական կոչում, որը շնորհվել է Խորհրդային Միությունում 1943-1954 թթ.: Այն համազոր է եղել գեներալ-գնդապետի զինվորական կոչմանը (հեղինակային ծանոթագրություն):*

ընթաց, որի արդյունքում լոկոմոտիվների շարքից դուրս գալու դեպքերը կրճատվել են չորս անգամ:

1939 թվականին Սալամբեգովը նշանակվել է Հոկտեմբերյան երկաթուղու պետի տեղակալ: Այս պաշտոնին է նա եղել Հայրենական մեծ պատերազմի սկզբին:

Հաջողություններ է դրսևորել 1941 թվականին, հակառակորդի հարձակման ամենադժվար պայմաններում, երբ երկաթուղային կազմով ապահովել է ձեռնարկությունների և բնակչության տարհանումը, գործող բանակի՝ զորքերով և նյութական ռեսուրսներով ապահովումը:

1942 թվականի փետրվարին նշանակվել է Հոկտեմբերյան երկաթուղու պետ: Այս պաշտոնում նա հաջողություններ է դրսևորել 1942 թվականին Լադոգայի նավահանգստի մոտ, «Մեծ երկրում», Լադոգայի ափերից մինչև շրջափակված Լենինգրադ երկաթուղային գծերի կառուցման ժամանակ: Գործնականում առանց ներկրվող շինանյութերի, տեղական ռեսուրսների հաշվին ամենակարճ ժամկետներում կառուցված այս գծերը զգալիորեն մեծացրել են շրջափակված քաղաքի բեռնաշրջանառությունը:

Երբ 1944 թվականի հունվարին Լենինգրադի շրջափակումը ճեղքվեց Լադոգա լճի նեղ միջանցքով, շտապ անցկացվեց նոր երկաթուղային գիծ, և Բորիս Սալամբեգովն անձամբ կազմակերպեց գնացքների տեղաշարժը:

Այս ճանապարհը նմանը չունի աշխարհի պատմության մեջ. երկաթգծի գրեթե 20 կմ մայրուղին անցնում էր առաջնագծին զուգահեռ, ճահիճների միջով, հակառակորդի դաշտային հրետանու տեսադաշտում, էլ չենք խոսում հակառակորդի հեռահար զենքի ու ավիացիայի մասին: Գծերը վնասվում էին ամեն օր: Դրանց երկայնքով կայանված էին հակառակորդի ջախջախված գնացքներն ու վագոնները: Հոկտեմբերյան մայրուղու երկաթուղայինները երկաթուղային զորքերի մարտիկների հետ միասնաբար անմիջապես վերացնում, վերականգնում էին բոլոր վնասվածքները:

Սալամբեգովն առաջարկեց երկաթուղային գծով երթևեկության նոր եղանակ. մեկ գիշերվա ընթացքում գնացքները շարժվում էին Լենինգրադի ուղղությամբ՝ միմյանցից 100-200 մետր հեռավորության վրա, և նույն շարքով վերադառնում էին ետ: Սովորական պայմաններում, հյուսիսային կարճ ամառային գիշերվա ընթացքում նման գծով կարող էր երթևեկել 3-4 գնացք, սակայն իրականում 30-35 գնացք էր աշխատում:

ճանապարհի երկայնքով լապտերներով և ռադիոհաղորդիչ սարքերով կանգնած էին կենդանի սեմաֆոր-երկաթուղայինները, որոնք ազդանշան էին ուղարկում գնացքների յուրաքանչյուր բրիգադին՝ կախված իրավիճակից: Նրանցից շատերը մահացել են հենց դիրքերում:

Այն ժամանակ այս կարճ գիծը Հոկտեմբերյան մայրուղու գլխավոր հատվածն էր, և Սալամբեգովը շաբաթներ շարունակ գնդակոծության ու կրակոցների տակ ապրում էր այդտեղ՝ ոչ միայն առաջնորդելով իր ենթականերին, այլև խիզախության օրինակ դառնալով նրանց համար: Նրա աշխատակիցներից ոչ ոք չգիտեր նրա անձնական ողբերգության մասին. շրջափակված Լենինգրադում զոհվել էր նրա կինը: Մայրուղու մյուս հատվածներում ևս աշխատանքները հեշտ չէին ընթանում, գործնականում այն ամբողջովին գտնվում էր հակառակորդի ավիացիայի գործողության գոտում:

Հիտլերականները քաջ գիտակցում էին երկաթուղու ռազմավարական նշանակությունը: Հոկտեմբերյան երկաթուղին ապահովում էր ռազմական բեռների առաքումը ռազմաճակատի 5 ուղղություններով (Լենինգրադ, Կարելիա, Վոլխով, Կալինին, հյուսիս-արևմտյան և արևմտյան հատվածներ): Այդ բեռները «լենդ-լիզով» գալիս էին Մուրմանսկից և Արխանգելսկից կենտրոնական և հարավային ռազմավարական ճանապարհներով: Կայանների, կազմավորումների և երկաթուղային ծածկույթի ռմբակոծությունները չէին դադարում, բայց գնացքները անխաթար շարունակում էին աշխատել: Սալամբեգովի հմուտ ղեկավարության և երկաթուղայինների խիզախության շնորհիվ թշնամին չկարողացավ շարքից դուրս բերել ճանապարհը:

**1943 թվականի նոյեմբերի 5-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը «Ռազմաճակատի և ժողովրդական տնտեսության համար բեռնափոխադրումների ապահովման և պատերազմական ծանրագույն պայմաններում երկաթուղային տնտեսության վերականգնման գործում ունեցած բացառիկ վաստակի համար» Բորիս Կոնստանդինի Սալամբեգովին շնորհել է «Սոցիալիստական աշխատանքի հերոսի» կոչում՝ պարգևատրելով «Լենինի» շքանշանով և «Մուրճ և մանգաղ» Ոսկե մեդալով:**

1943 թվականին ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների խորհրդի հրամանագրով նրան շնորհվել է **«Հաղորդակցության II ռանգի գեներալ-տնօրենի»** հատուկ անձնական կոչում (որը համարժեք էր գեներալ-լեյտենանտի զինվորական կոչմանը):

Լենինգրադի ազատագրումից հետո փորձառու առաջնորդը նոր առաջխաղացումներ է ունենում:

1946-1947 թվականներին ղեկավարել է երկաթուղու հյուսիս-արևմտյան օկրուգը:

1947-1950 թվականներին ղեկավարել է երկաթուղու Մերձվոլգյան օկրուգը:

Սակայն 1950 թվականին Սալամբեգովը ազատվում է պաշտոնից: Պատճառն այն էր, որ այլ մեղադրյալների հետ նրա անունը հիշատակվում էր այսպես կոչված «Լենինգրադի գործով» բազմաթիվ հարցաքննությունների արձանագրություններում: Սալամբեգովին մի քանի աստիճանով իջեցնում և տեղափոխում են Մոսկվա-Կիև երկաթուղի՝ որպես գերատեսչությունների բաժանմունքներից մեկի գլխավոր ինժեներ:

Միայն Ստալինի մահից հետո, 1953 թվականին նրա պաշտոնը կրկին բարձրացրին:

1954-1957 թվականներին աշխատել է որպես Օմսկի երկաթուղու պետի 1-ին տեղակալ, իսկ 1957 թվականից՝ Օմսկի երկաթուղու պետ:

1959-1961 թվականներին եղել է Կրասնոյարսկի երկաթուղու պետ, իսկ դրա ընդլայնումից հետո՝ 1961 թվականից, Արևելք-Սիբիր երկաթուղու ղեկավար (ճանապարհային վարչությունը գտնվում էր Իրկուտսկում): Հենց այդ շրջանում է տեղի ունենում Տրանսսիբիրյան մայրուղու տեխնիկական լայնածավալ համալրումն ու էլեկտրաֆիկացումը: Ելնելով նրանից, որ Սալամբեգովը ստացել էր «շոգեքարշային» կրթություն, նոր խնդիրներին բազմակողմանիորեն տիրապետելու համար նա հեռակա ավարտում է Երկաթուղային տրանսպորտի համամիութենական ինստիտուտը՝ «ճանապարհային տնտեսության ինժեներ-էլեկտրամեխանիկ» մասնագիտությամբ: Սալամբեգովի ղեկավարությամբ «Արևելք-Սիբիր» երկաթուղին աշխատանքի բարձր ցուցանիշներով անշեղորեն պահպանում էր իր առաջատար դերը ԽՍՀՄ մյուս երկաթուղիների շարքում և համարվում էր ԽՍՀՄ լավագույն երկաթուղին: Կարելի է ասել, որ նույնիսկ 40 տարի անց Բորիս Սալամբեգովի անունը հայտնի է «Արևելք-Սիբիր» մայրուղու յուրաքանչյուր երկաթուղայինի:

1964-1968 թվականներին եղել է ԽՍՀՄ Հաղորդակցության ճանապարհների նախարարության վագոնային արդյունաբերության գլխավոր վարչության պետ:

1968 թվականին թոշակի է անցել: Մինչև 1978 թվականը աշխատել է Երկաթուղային տրանսպորտի համամիութենական գիտահետազոտական ինստիտուտում՝ որպես գիտաշխատող: Ապրել է Մոսկվայում: Մահացել է այնտեղ: Թաղված է Կունցևյան գերեզմանոցում (տեղամաս 10):

Պարգևատրվել է **«Լենինի»** երեք, **«Հայրենական պատերազմի»** I աստիճանի, **«Աշխատանքային Կարմիր դրոշի»** երկու և **«Պատվո նշանի»** շքանշաններով: Ստացել է պատվավոր երկաթուղայինի 3 կրծքանշան:

1946-1950 թվականներին ընտրվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր:

Նրա հիշատակին նվիրված հուշատախտակներ են փակցված Արևելյան Սիբիրի երկաթուղային վարչության շենքի պատին (քաղաք Իրկուտսկ):

Կոլոմենսկի գործարանի կողմից թողարկված արագընթաց էլեկտրաքարշների նոր շարքը 2004 թվականից կրում է Բորիս Սալամբեգովի անունը՝ ТЭП70 БС:

1999 թվականին թողարկվել է Կրասնոյարսկի երկաթուղու 100-ամյակին նվիրված հատուկ թղթադրամների շարք: 100-ռուբլիանոց թղթադրամի վրա պատկերված է Բորիս Սալամբեգովի դեմքը:

2007 թվականին Ռուսաստանում հանդիսավոր կերպով նշվեց Բորիս Սալամբեգովի 100-ամյակը:










Բ.Կ. Սալամբեգովի կիսանդրին Մոսկվայում, Կունցևյան գերեզմանատանը

Բ.Ս. Սալամբեգովի հուշարձանը, որը բացվել է 2013 թվականի դեկտեմբերի 25-ին, Սանկտ Պետերբուրգ-Մոսկվա մարդատար կայանի գործառնական-լոկոմոտիվային դեպոյի կայանի վարչական մասնաշենքի մոտ (Դնեպրոպետրովսկի փողոց, քանդակագործ՝ Սալավաթ Շչերբակով, բրոնզ, գրանիտ)

Բ.Կ. Սալամբեգովի հուշատախտակը Օմսկի երկաթուղու նախկին վարչության շենքի պատին




Կոլոմենսկի գործարանի կողմից թողարկված արագընթաց էլեկտրաքարշների նոր շարքը 2004 թվականից կրում է Բորիս Սալամբեգովի անունը՝ ТЭП70 БС:






100-ռուբլիանոց թղթադրամ Բ. Կ. Սալամբեգովի նկարով



**ՀՐԱՅՐ ԳԵՎՈՐԳԻ ՍԻՄՈՆՅԱՆ**
**(01.01.1919 - 29.06.2000)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (1970)**

Ծնվել է Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի Կուշչի գյուղում, աշխատավորի ընտանիքում: Ավարտել է Մոսկվայի հետևակային ուսումնարանը:

1939 թվականից ծառայել է որպես հրաձգային դասակի հրամանատար (ք. Ուման, Ուկրաինական ԽՍՀ):

1940 թվականի հունիսից եղել է Մ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայի ունկնդիր (ավարտել է 1952 թվականին):

1941-1945 թվականների ԽՍՀՄ Հայրենական մեծ պատերազմի սկզբին նշանակվել է գումարտակի շտաբի պետ:

1942-1943 թվականներին աշխատել է Մ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայում:

1943 թվականին մասնակցել է Կուրսկի ճակատամարտին: 1944 թվականին եղել է շտաբի սպա, մասնակցել է բելառուսական ռազմաճակատի հարձակողական գործողություններին:

1945 թվականին նրան ժամկետից շուտ՝ 26 տարեկան հասակում, շնորհվել է փոխգնդապետի զինվորական կոչում, իսկ 1950 թվականին՝ 31 տարեկան հասակում, գնդապետի զինվորական կոչում:

1956 թվականին դարձել է Կ. Վորոշիլովի անվան Գլխավոր շտաբի ռազմական ակադեմիայի ունկնդիր: Ակադեմիան ավարտելուց հետո ծառայել է որպես ռազմական օկրուգներից մեկի շտաբի պետի տեղակալ:

1960-1968 թվականներին եղել է Մ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայի ամբիոններից մեկի վարիչ:

Ստացել է ռազմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան (1968) և պրոֆեսորի (1970) կոչում:

Մարտական վաստակի և ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է **«Կարմիր դրոշի»** երկու, **«Հայրենական պատերազմի»** I և II աստիճանների, **«Կարմիր աստղի»** երկու, **«ԽՍՀՄ զինված ուժերում մատուցած ծառայության համար»** III աստիճանի շքանշաններով: Ստացել է նաև Լեհաստանի **«Արիության խաչ»**:



**ՌՈՒԲԵՆ ՏԻԳՐԱՆԻ**
**ՏԵՐ-ՍԱՀԱԿՈՎ**
**(1906 - 1996 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ)**

**ԿԱՊԻ ԶՈՐՔԵՐԻ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ**
**(18.02.1958)**

Ծնվել է Թիֆլիսում:

1921 թվականին աշխատանքի է անցել Թիֆլիսի շոգեքարշների գլխավոր արհեստանոցներում՝ որպես ներկարարի աշակերտ: Միաժամանակ սովորել է բանֆակում և աշխատել է «Իզվեստյա» թերթի Թիֆլիսի բաժանմունքում՝ որպես թերթի առաքիչ:

1925 թվականին ընդունվել է Թիֆլիսի կապի տեխնիկում, սակայն 1926 թվականին, տեխնիկումի լուծարման հետ կապված, ուսումը շարունակելու համար տեղափոխվել է Մոսկվայի կապի տեխնիկում:

1928 թվականից, ավարտելով տեխնիկումը աշխատանքի է նշանակվել Խարկովում, հետագայում աշխատել է Թիֆլիսի կապի հանգույցում:

1930 թվականին կապի ինստիտուտում սովորելու նպատակով մեկնել է Մոսկվա:

1932 թվականին Մոսկվայի կապի ինստիտուտի հիման վրա ստեղծվել է կապի ինժեներատեխնիկական ակադեմիան:

1935 թվականին Տեր-Սահակովն ավարտել է այս ակադեմիայի ռազմական ֆակուլտետը:

III ռանգի ռազմական ինժեների կոչումով նա նախ նշանակվել է ավիացիոն ջոկատի հեռահաղորդակցման պետ, ապա՝ Անդրկովկասյան ռազմական օկրուգի ավիացիոն գնդի կապի ավտոմատ միացման սարքավորումների, ազդանշանների համակարգի, օդային դիտարկման և կապի ինժեներ:

1941-1945 թվականների ԽՍՀՄ Հայրենական մեծ պատերազմի

սկզբում Տեր-Սահակովի ուշադրությունը կենտրոնացած էր ռազմական կապի տեխնիկայի ապահովման և համապատասխան մասնագետների պատրաստման վրա:

1943 թվականի մարտին նա նշանակվում է հակաօդային պաշտպանության զորքերի, կապի վերանորոգման և ապահովման բաժնի պետ: Պատերազմից հետո նա անցել է առաջատար մասնագետից մինչև հակաօդային պաշտպանության զորքերի օկրուգի կապի զորքերի պետ ճանապարհը: Անձամբ մշակել է հակաօդային պաշտպանության զորքերի շրջանի, կապի հանգույցների սարքավորման և կազմակերպման մի քանի նախագծեր: Նրա նախագծերից մեկը հաստատվել և ներդրվել է հակաօդային պաշտպանության զորքերի հրամանատարական կետի կազմակերպման գործում:

1949 թվականի մայիսին նրան շնորհվել է ինժեներ-գնդապետի զինվորական կոչում:

1953 թվականի հոկտեմբերին նշանակվել է օկրուգի կապի զորքերի պետ:

1960 թվականին առողջական վիճակի պատճառով անցել է պահեստազոր:

Պարգևատրվել է «**Կարմիր դրոշի**» և «**Կարմիր աստղի**» շքանշաններով:



**ՄԱՐԻՈՒՍ ԱՐԱՄԻ ՅՈՒԶԲԱՇՅԱՆ**
**(03.04.1924 - 21.07.1993)**

**ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ (1985)**

Ծնվել է Բաթումիում (այժմ՝ Բաթումի, Աջարիայի ԻԽՍՀ):

1941 թվականին ընտանիքը տեղափոխվել է Թբիլիսի:

1943 թվականից ծառայել է պետական անվտանգության մարմիններում:

1943-1944 թվականներին սովորել է Թբիլիսիի Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի դպրոցում:

1941-1945 թվականների ԽՍՀՄ Հայրենական մեծ պատերազմի ընթացքում, 1943-1944 թվականներին եղել է հակառակորդի թիկունքում գործող մի շարք պարտիզանական ջոկատների փոխհրամանատար:

1945-1988 թվականներին ծառայել է պետական անվտանգության մարմիններում: Ծառայության է անցել Անդրկարպատիայի օկրուգի ՆԳԺԿ-ի վարչությունում՝ որպես օպերլիազորի օգնական:

1960-1967 թվականներին եղել է Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունում ԽՍՀՄ Պետական անվտանգության կոմիտեի ներկայացուցչության 3-րդ վարչության պետի տեղակալ:

1972-1978 թվականներին եղել է ԽՍՀՄ Պետական անվտանգության կոմիտեի 1-ին գլխավոր վարչության (արտաքին հետախուզություն) պետի տեղակալ:

1978-1988 թվականներին եղել է Հայկական ԽՍՀ Պետական անվտանգության կոմիտեի նախագահ:

**1978 թվականին նրան շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում:**

1988 թվականի հոկտեմբերին ազատվել է պաշտոնից:

Սպանվել է Երևանում, Կոմիտասի անվան պանթեոնի տարածքում ատրճանակի երեք կրակոցով, առավոտյան մարզանքի ընթացքում: Սպանությունն առ այսօր բացահայտված չէ:

Թաղված է Մոսկվայում:

Պարգևատրվել է «**Հոկտեմբերյան հեղափոխության**», «**Կարմիր դրոշի**», «**Հայրենական պատերազմի**» I և II աստիճանների, «**Կարմիր աստղի**» երկու շքանշաններով:



**ՀՄԱՅԱԿ ԶԱՔԱՐԻ ՔՈԲՈՒԼՈՎ**
**(1906 - 26.02.1955)**

**ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ (09.07.1945)**

Ծնվել է Թիֆլիսում, դերձակի ընտանիքում: Գեներալ Բ. Քոբուլովի կրտսեր եղբայրն է: 1916 թվականին ավարտել է Թիֆլիսի առևտրային դպրոցի 5-րդ դասարանը, 1925 թվականին՝ Կենտկոմի կոոպերացիոն դասընթացները, 1926 թվականին՝ Անդրկովկասյան կոմունիստական համալսարանի կոոպերացիոն դասընթացները:

1921 թվականից որպես շարքային ծառայել է Աղստաֆա (Ադրբեջանական ԽՍՀ) կայարանի 237-րդ ուղենշային հատվածում:

1923-1924 թվականներին եղել է Ախալցիխեի շրջանի ժողովրդական դատարանի քարտուղար:

1924-1925 թվականներին եղել է Բորջոմիի շրջգործկոմի գանձապահ:

1925 թվականին եղել է բանվորների կոոպերատիվի հաշվապահ-հրահանգիչ:

1926-1927 թվականներին աշխատել է Բորջոմիի ապակու գործարանում՝ որպես վիճակագիր:

1927 թվականին աշխատել է Թիֆլիսի 26 կոմիսարների անվան գործարանում՝ որպես հաշվապահ:

1927 թվականից ծառայել է Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի համակարգում:

1927-1928 թվականներին եղել է Վրացական ԽՍՀ պետական քաղաքական վարչության ֆինանսական բաժնի հաշվապահ:

1928-1929 թվականներին եղել է Անդրկովկասյան դաշնությունում Վրացական ԽՍՀ պետական քաղաքական վարչության ֆինանսական բաժնի լիիրավ ներկայացուցիչ:

1929-1930 թվականներին եղել է Անդրկովկասյան դաշնությունում Վրացական ԽՍՀ պետական քաղաքական վարչության տնտեսական բաժնի լիիրավ ներկայացուցիչ:

1930-1931 թվականներին աշխատել է Վրացական ԽՍՀ պետական քաղաքական վարչության տնտեսական բաժնի լիիրավ ներկայացուցչի 1-ին բաժանմունքի լիազոր և ավագ լիազոր Անդրկովկասյան դաշնությունում:

1934-1935 թվականներին եղել է Անդրկովկասյան դաշնության Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի պետանվտանգության վարչության տնտեսական բաժնի օպերլիազոր:

1935-1937 թվականներին եղել է Վրացական ԽՍՀ Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի վարչության տնտեսական բաժնի 4-րդ բաժանմունքի պետ:

1937 թվականին նշանակվել է Վրացական ԽՍՀ Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի վարչության տնտեսական բաժնի 4-րդ բաժանմունքի 3-րդ ենթաբաժնի վարիչ և Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի պետանվտանգության վարչության 1-ին բաժանմունքի 2-րդ ենթաբաժնի վարիչ:

1937-1938 թվականներին եղել է Ախալցիխեի շրջանի Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի պետ:

1938 թվականին նշանակվել է Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի Գագրայի շրջանային բաժնի պետ և Աբխազական ԻԽՍՀ ներքին գործերի ժողովրդական կոմիսարի պաշտոնակատար:

1938-1939 թվականներին եղել է Ուկրաինական ԽՍՀ ներքին գործերի ժողովրդական կոմիսարի 1-ին տեղակալ:

1938 թվականին ընտրվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր:

1939-1941 թվականներին եղել է Գերմանիայում ԽՍՀՄ լիազոր ներկայացուցչի խորհրդական:

1941-1945 թվականներին եղել է Ուզբեկական ԽՍՀ պետանվտանգության ժողովրդական կոմիսար:

**1943 թվականի փետրվարի 14-ին նրան շնորհվել է պետանվտանգության III ռանգի կոմիսարի կոչում:**

1945 թվականին նշանակվել է ԽՍՀՄ ՆԳԺԿ ռազմական գույքի գլխավոր վարչության օպերատիվ բաժնի պետ:

1945-1951 թվականներին եղել է ԽՍՀՄ Ներքին գործերի ժո-

ղովրդական կոմիսարիատի, ՆԳՆ-ի ռազմական գույքի գլխավոր վարչության, օպերատիվ վարչության պետ:

1951-1953 թվականներին եղել է ՆԳՆ ռազմական գույքի գլխավոր վարչության պետ, ճամբարների գլխավոր վարչության պետի 1-ին տեղակալ:

1953 թվականի մայիս-հունիսին եղել է ՆԳՆ վերահսկողական տեսչության պետի տեղակալ:

1953 թվականի հունիսի 27-ին կալանավորվել է «Բերիայի գործով»:

1954 թվականի հոկտեմբերի 1-ին դատապարտվել է պատժի ամենախիստ տեսակին՝ մահապատժի, և գնդակահարվել է: Չի ռեաբիլիտացվել:

Պարգևատրվել է **«Կարմիր դրոշի»** (1944, 1944), **«Կարմիր աստղի»** (1944), **«Կուտուզովի»** II աստիճանի (1945), **«Աշխատանքային Կարմիր դրոշի»** շքանշաններով, ինչպես նաև «Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի պատվավոր աշխատակցի» (1937) և «ՆԳՆ վաստակավոր աշխատակցի» (1948) կրծքանշաններով:



**ԲՈԳԴԱՆ (ԲԱԽՇՈ) ԶԱՔԱՐԻ ՔՈԲՈՒԼՈՎ**
**(01.03.1904 - 23.12.1953)**

**ԳԵՆԵՐԱԼ-ԳՆԴԱՊԵՏ (09.07.1945)**

Ծնվել է Թիֆլիսում, դերձակի ընտանիքում: Գեներալ Ա. Քոբուլովի ավագ եղբայրն է: 1922 թվականին ավարտել է Թիֆլիսի գիմնազիան:

1921 թվականից ծառայել է Կարմիր բանակում՝ որպես ուսումնական-կադրային գնդի շարքային:

1921-1922 թթ. ծառայել է 66-րդ հեծելազորային բրիգադում:

Մասնակցել է Թիֆլիսի քաղկոմի, 26 կոմիսարների անվան ջոկատի ստեղծման գործին, եղել է ջոկատի առաջնորդներից մեկը:

1922 թվականից ծառայել է Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի համակարգում:

1922-1923 թվականներին ծառայել է Վրացական ԽՍՀ արտակարգ հանձնաժողովում:

1923-1924 թվականներին եղել է Ախալցիխեի գավառի արտակարգ հանձնաժողովի քաղբյուրոյի աշխատակից:

1924-1925 թվականներին եղել է Վրաստանի արտակարգ հանձնաժողովի տեղեկատվական կետի աշխատակից Բորջոմիում:

1925 թվականին եղել է արտակարգ հանձնաժողովի տեղեկատվական կետի աշխատակից Ախալքալաքի քաղաքում:

1926 թվականին եղել է արտակարգ հանձնաժողովի տեղեկատվական կետի աշխատակից Մանգլիսի ավանում:

1926 թվականից ծառայել է Անդրկովկասի և Վրաստանի միավորված քաղաքական վարչություններում:

Մինչև 1931 թվականը եղել է Անդրկովկասի միավորված քաղաքական վարչության գաղտնի բաժնի ավագ օպերլիազոր:

1931-1932 թվականներին աշխատել է Վրացական ԽՍՀ միավորված քաղաքական վարչության գաղտնի-քաղաքական բաժնի 1-ին ենթաբաժնի պետ:

1932-1934 թվականներին եղել է Վրացական ԽՍՀ միավորված քաղաքական վարչության գաղտնի-քաղաքական բաժնի պետի օգնական:

1934-1935 թվականներին եղել է Անդրկովկասյան դաշնության Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի պետանվտանգության վարչության և Վրացական ԽՍՀ Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի վարչության աշխատակից:

1935 թվականին գործուղվել է Իրան:

1935-1936 թվականներին աշխատել է Անդրկովկասյան դաշնության Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի պետանվտանգության վարչության գաղտնի-քաղաքական բաժնի պետի տեղակալ:

1936 թվականին նշանակվել է Անդրկովկասյան դաշնության Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի պետանվտանգության վարչության և Վրացական ԽՍՀ Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի վարչության տնտեսական բաժնի պետ:

1937 թվականին նշանակվել է Վրացական ԽՍՀ Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի պետանվտանգության վարչության 4-րդ բաժնի պետի օգնական:

1937-1938 թվականներին եղել  է Վրացական ԽՍՀ ներքին գործերի ժողովրդական կոմիսարի տեղակալի պաշտոնակատար:

1938 թվականին նշանակվել է Վրացական ԽՍՀ ներքին գործերի ժողովրդական կոմիսարի տեղակալ և ԽՍՀՄ Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի 1-ին վարչության 4-րդ բաժնի պետ:

**1938 թվականի դեկտեմբերի 28-ին նրան շնորհվել է պետական անվտանգության III ռանգի կոմիսարի կոչում:**

1938-1939 թվականներին եղել է ԽՍՀՄ Ներքին գործերի ժողկոմի պետանվտանգության գլխավոր վարչության 2-րդ բաժնի պետ, Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի պետանվտանգության գլխավոր վարչության պետի տեղակալ և Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի քննչական բաժնի պետ:

1939-1941 թվականներին եղել է Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի գլխավոր տնտեսական վարչության ղեկավար:

1941 թվականին նշանակվել է Պետական անվտանգության ժողկոմի տեղակալ:

1941-1943 թվականներին եղել է ԽՍՀՄ Ներքին գործերի նախարարության ժողովրդական կոմիսարի տեղակալ:

**1943 թվականի փետրվարի 4-ին նրան շնորհվել է պետական անվտանգության II ռանգի կոմիսարի կոչում:**

1943-1945 թվականներին եղել է ԽՍՀՄ պետական անվտանգության ժողովրդական կոմիսարի 1-ին տեղակալ:

1946-1947 թվականներին ծառայել է որպես ԽՍՀՄ Արտաքին առևտրի նախարարությանը կից Արտասահմանում խորհրդային գույքի գլխավոր վարչության նախագահի՝ Գերմանիայի գծով տեղակալ:

1947-1951 թվականներին եղել է Նախարարների խորհրդին կից խորհրդային գույքի գլխավոր վարչության նախագահի տեղակալ, միաժամանակ, 1947-1949 թվականներին եղել է Գերմանիայում խորհրդային ռազմական վարչակազմի գլխավոր ղեկավարի տեղակալ՝ Գերմանիայում խորհրդային բաժնետիրական ձեռնարկությունների գործունեության հարցերով:

1948 թվականին ընտրվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր:

1949 թվականից եղել է Գերմանիայում խորհրդային վերահսկիչ հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ բաժնետիրական ընկերությունների գործերով:

1951-1953 թվականներին եղել է նախարարների խորհրդին կից Խորհրդային գույքի գլխավոր վարչության պետի 1-ին տեղակալ:

1953 թվականի մարտ-հունիս ամիսներին աշխատել է որպես ԽՍՀՄ ներքին գործերի նախարարի առաջին տեղակալ:

1953 թվականի հունիսի 27-ին եղբոր հետ ձերբակալվել է «Բերիայի գործով»:

1953 թվականի դեկտեմբերի 23-ին դատապարտվել է պատժի ամենախիստ տեսակին՝ մահապատժի: Գնդակահարվել է: Ռեաբիլիտացված չէ:

Պարգևատրվել է Վրացական ԽՍՀ «**Աշխատանքային Կարմիր դրոշի**» (1931), «**Լենինի**» (1937, 1946, 1949), «**Կարմիր դրոշի**» (1940, 1943, 1944, 1944, 1951), «**Սուվորովի**» I աստիճանի (1944), «**Կուտուզովի**» I աստիճանի (1945), «**Հայրենական պատերազմի**» I աստիճանի (1944), «**Աշխատանքային Կարմիր դրոշի**» (1948) շքանշաններով, ինչպես նաև՝ Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի պատվավոր աշխատակցի (1932) կրծքանշանով:



**ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐԻ ՔՅՈՒՉԱՐՅԱՆՑ**
**(13.01.1889 - 22.06.1962)**

**ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (21.04.1943)**

Ծնվել է Թիֆլիսում, բժշկի և բալետի պարուհու ընտանիքում:

1914 թվականին ավարտել է Սուրբ Վլադիմիրի համալսարանի (Կիև) բժշկական ֆակուլտետի լրիվ դասընթացը, սակայն ավարտական քննությունները հանձնել է 1916 թվականին և անմիջապես ստացել է բուժող բժշկի դիպլոմ:

Մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին (1914-1916) հյուսիս-արևմտյան ռազմաճակատում: 1916 թվականին մասնակցել է Բրյուսիլովյան հայտնի բեկմանը: Երկու ծանր սալջարդի և վերքերի պատճառով բժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա ծառայության է նշանակվել Պետրոգրադի պահեստային գնդում (Կրասնոյե Սելո գյուղում):

1917 թվականին մասնակցել է ժամանակավոր կառավարության դեմ ցույցերին:

Նույն թվականին միացել է Կարմիր գվարդիայի գումարտակին, որի կազմում հետագայում միացել է Կարմիր բանակին:

1917 թվականին ավարտել է Պետրոգրադի հնագիտական ինստիտուտը: Զբաղեցրել է մի շարք պաշտոններ Կարմիր բանակի ռազմասանիտարական հաստատությունում:

1919 թվականին մասնակցել է Պետրոգրադի վրա գրոհած գեներալ Յուդենիչի զորքերի դեմ մարտական գործողություններին, 1921 թվականին՝ Կրոնշտադտի ապստամբության ճնշմանը:

1922 թվականին մասնակցել է Խորհրդային Կարելիայի պաշտպանությանը սպիտակ ֆիններից:

1924-1926 թվականներին մասնակցել է բասմաչների դեմ մղվող մարտերին Արևելյան Բուխարայում:

1929 թվականին, հակամարտության լիկվիդացման ժամանակ ղեկավարել է Արևելք-Չինաստան երկաթուղու սանիտարական ապահովումը (Հեռավոր Արևելքի Կարմրադրոշ առանձին բանակի կազմում):

1929-1930 թվականներին եղել է Սիբիրյան ռազմական օկրուգի սանիտարական վարչության պետ:

1930-1934 թվականներին եղել է Մոսկվայի ռազմական օկրուգի սանիտարական վարչության պետ:

1934-1940 թվականներին եղել է Կիրովի անվան ռազմաբժշկական ակադեմիայի ղեկավար:

Մինչև 1937 թվականը եղել է նույն ակադեմիայի զինվորական կոմիսար: Ղեկավարել է Ռազմական և ռազմասանիտարական առարկաների ամբիոնը: Ստեղծել է հատուկ հոսպիտալ, որը Ֆինլանդիայի հետ պատերազմի ժամանակ գործել է առաջնային դիրքերում, և անձամբ ղեկավարել է այս հոսպիտալը:

1941-1944 թվականներին Լենինգրադի շրջափակման ժամանակ աշխատել է որպես Կարմիր բանակի բժշկական անձնակազմի վերապատրաստման դասընթացների ղեկավար, որտեղ հրավիրված է եղել քաղաքի պրոֆեսորական կազմը: Դասընթացները կազմակերպվել են մեծ հոսպիտալներից մեկի հիմքի վրա, որը նա անձամբ է ղեկավարել:

**1935 թվականի նոյեմբերի 23-ին նրան շնորհվել է դիվիզիայի բժշկի զինվորական կոչում:**

**1938 թվականի փետրվարի 22-ին նրան շնորհվել է կորպուսի բժշկի զինվորական կոչում:**

1946 թվականին պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Ալիմենտար դիստրոֆիայի ժամանակ ավշային օրգանների հիստոմորֆոլոգիան» թեմայով:

1947 թվականից եղել է Կիրովի անվան ռազմաբժշկական ակադեմիայի ռազմաբժշկական պատրաստության ամբիոնի դոցենտ:

1949-1957 թվականներին եղել է Լենինգրադի մանկաբուժական ինստիտուտի ռազմաբժշկական պատրաստության ամբիոնի վարիչ:

1957 թվականին թոշակի է անցել:

Մահացել է Լենինգրադում:

Թաղված է Բոգոսլովսկի գերեզմանոցի ակադեմիական տեղամասում:

Հեղինակ է մի շարք աշխատությունների, այս թվում՝ *«Работа мощного эвакогоспиталя в условиях блокировочного города Ленинграда»* (1942), *«Работа фронтового госпиталя для легко раненных (ФГЛР)»* (1943), *«Гистоморфология лимфатической системы при алиметарной дистрофии»* (1943):

Մարտական վաստակի համար պարգևատրվել է **«Լենինի»**, **«Կարմիր դրոշի»** երկու, **«Կարմիր աստղի»** շքանշաններով և **Պատվո անվանական Ոսկե զենքով**:




Գեներալ-մայոր Ա. Գ. Քյուչարյանցի շիրիմը

# ՀԱՎԵԼՎԱԾ 2

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՇՔԱՆՇԱՆՆԵՐ, ՈՐՈՆՑՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ ԵՆ ԾԱԳՈՒՄՈՎ ՎՐԱՍՏԱՆՑԻ ՀԱՅ ԳԵՆԵՐԱԼՆԵՐԸ ԵՎ ԱԴՄԻՐԱԼՆԵՐԸ



**Խորհրդային Միության հերոսի «Ոսկե աստղ» մեդալ**
**(հիմնադրվել է 01.08.1939 թ.)**

**Սոցիալիստական աշխատանքի հերոսի «Մուրճ և մանգաղ» Ոսկե մեդալ**
**(հիմնադրվել է 22.05.1940 թ.)**



**«Լենինի» շքանշան (հիմնադրվել է 05.05.1930 թ.)**
**«Կարմիր դրոշի» շքանշան (հիմնադրվել է 16.09.1918 թ.)**
**«Աշխատանքային Կարմիր դրոշի» շքանշան (հիմնադրվել է 07.09.1928 թ.)**
**«Պատվո նշանի» շքանշան (հիմնադրվել է 25.11.1935 թ.)**
**«Հոկտեմբերյան հեղափոխության» շքանշան (հիմնադրվել է 31.10.1967 թ.)**



**«Կարմիր աստղի» շքանշան (հիմնադրվել է 05.05.1930 թ.)**
**«Ալեքսանդր Նևսկու» շքանշան (հիմնադրվել է 29.07.1942 թ.)**
**«Հայրենական պատերազմի» I և II աստիճանի շքանշաններ**
**(հիմնադրվել են 20.05.1942 թ.)**




**«Հայրենական պատերազմի» I և II  աստիճանի շքանշաններ (1985)**




**«Սուվորովի» I, II, III աստիճանի շքանշաններ**
**(հիմնադրվել են 29.07.1942 թ.)**




**«Կուտուզովի» I, II, III աստիճանի շքանշաններ**
**(հիմնադրվել են 29.07.1942 թ.)**




**«Բոգդան Խմելնիցկու» I, II, III աստիճանի շքանշաններ**
**(հիմնադրվել են 10.10.1943 թ.)**




**«Նախիմովի» II աստիճանի շքանշան (հիմնադրվել է 03.03.1944 թ.)**



**Վրացական ԽՍՀ «Աշխատանքային Կարմիր դրոշի» շքանշան (1931)**




**Խորհրդային Միության զինված ուժերում ծառայության համար**
**III աստիճանի շքանշան (հիմնադրվել է 28.10.1974 թ.)**




**Կրծքանշաններ «XV ВЧК-ГПУ» 1917-1932 (1932),**
**«ՆԳԺԿ վաստակավոր աշխատակից» (1940),**
**«ՆԳՆ վաստակավոր աշխատակից» (1968),**
**«Անվտանգության վաստակավոր աշխատակից» (1957)**



**Անվտանգության III, II և I ռանգի կոմիսարի ուսադիրներ**



**Գեներալ-մայորի, գեներալ-լեյտենանտի, գեներալ-գնդապետի և**
**կոնտր-ադմիրալի ուսադիրներ (1943)**





# ՄԱՍ VI

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



**ԷՆՐԻԿՈ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԱՊՐԻԱՄՈՎ**
**(ԾՆՎ. 14.03.1954)**

**ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ (2007)**

Ծնվել է Թբիլիսիում (Վրացական ԽՍՀ):

1971 թվականին ավարտել է միջնակարգ դպրոցը և ընդունվել է Թբիլիսիի հրետանային ուսումնարան:

1975 թվականից ծառայել է որպես դասակի հրամանատար, մարտկոցի հրամանատար, շտաբի պետ, դիվիզիոնի հրամանատարի տեղակալ, հրթիռային հրետանու դիվիզիոնի հրամանատար, հակատանկային հրետանու դիվիզիոնի հրամանատար:

1992 թ. հոկտեմբերին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով նշանակվել է Հայաստանի զինված ուժերի հակատանկային հրետանային գնդի հրամանատար: 1996 թ. հունվար-հուլիս ամիսներին ղեկավարել է հյուսիս-արևելյան ուղղությունը: 1996 թ. հուլիսից մինչև 2000 թ. մարտ ղեկավարել է բանակային կորպուսը: 2000 թ. մարտի 14-ին Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով նշանակվել է Գլխավոր շտաբի պետի տեղակալ: 2000 թ. մայիսի 30-ին Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով նշանակվել է Գլխավոր շտաբի պետի 1-ին տեղակալ: Ավարտել է Ռուսաստանի Դաշնության Զինված ուժերի Գլխավոր շտաբի ակադեմիային կից բարձրագույն ակադեմիական դասընթացները:

**1997 թվականի հոկտեմբերի 13-ին նրան շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում:**

Մարտական վաստակի համար պարգևատրվել է **«Պատվո նշան»** (ԽՍՀՄ) շքանշանով և ՀՀ II աստիճանի **Մարտական խաչով**:



**ՎԱՂԱՐՇԱԿ ՎԱՌՆԱԶԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**(ԾՆՎ. 28.04.1956)**

**ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ (20.09.1996)**

Ծնվել է Ախալքալաքի քաղաքում (Վրացական ԽՍՀ):

Գեներալ Վյաչեսլավ Հարությունյանի կրտսեր եղբայրն է:

1978 թվականին ավարտել է Կասպյան բարձրագույն ռազմածովային ուսումնարանը:

1991 թվականին ավարտել է Ն. Կուզնեցովի անվան ռազմածովային ակադեմիան Լենինգրադում:

1998 թվականին ավարտել է Ռուսաստանի Դաշնության Գլխավոր շտաբի ակադեմիան:

Մինչև 1990 թվականը ծառայել է Հեռավոր Արևելքում:

1991-1992 թվականներին եղել է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի փոխնախարար, Պաշտպանության կոմիտեի նախագահի 1-ին տեղակալ:

1992-1994 թվականներին եղել է ԱՊՀ զինված ուժերի միացյալ գլխավոր հրամանատարության շտաբի պետի տեղակալ:

**1994 թվականին նրան շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում:**

1994-1999 թվականներին եղել է Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ ԱՊՀ մասնակից երկրների պաշտպանության նախարարների խորհրդում:

1999-2000 թվականներին եղել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար:

2002 թվականին անդամագրվել է ընդդիմադիր «Հանրապետական» կուսակցությանը, Հայաստանի Հանրապետության նախագահի

հրամանագրով զինվորական կոչումը վարկաբեկելու և սպայի բարձ-րագույն կոչումը տապալելու համար զրկվել է գեներալ-լեյտենանտի զինվորական կոչումից:

2019 թվականին վերականգնել է զինվորական կոչումը:

2020 թվականին նշանակվել է Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավոր ռազմական խորհրդական:

2020-2021 թվականներին եղել է պաշտպանության նախարար:

2021 թվականի հուլիսի 20-ին թողել է պաշտոնը:

2022 թվականին նշանակվել է Հայաստանի Հանրապետության ար-տակարգ և լիազոր դեսպան Ռուսաստանի Դաշնությունում:



**ՎՅԱՉԵՍԼԱՎ ՎԱՌՆԱԶԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**(10.08.1948 - 27.02.2009)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (26.02.1992)**

Ծնվել է Ախալքալաքի քաղաքում (Վրացական ԽՍՀ):

Գեներալ Վաղարշակ Հարությունյանի ավագ եղբայրն է:

1968-1973 թվականներին սովորել է Կուբանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում:

1979-1987 թվականներին ծառայել է Աֆղանստանի Դեմոկրատական Հանրապետությունում, խորհրդային բանակի սահմանափակ ռազմական թվակազմում:

1987-1991 թվականներին աշխատել է Հայկական ԽՍՀ Ազգային անվտանգության ծառայությունում:

1991-1993 թվականներին եղել է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության նախարարի 1-ին տեղակալ:

1993-1997 թվականներին եղել է Հայաստանի Հանրապետության վարչապետի խորհրդական:

1997-2002 թվականներին եղել է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարար:

Թաղված է Մոսկվայում, Խովանսկիի գերեզմանոցում:



**ԱՐԱՐԱՏ ՍՄԲԱՏԻ ՄԱՀՏԵՍՅԱՆ**
**(ԾՆՎ. 1951)**

**ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ**
**ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ (2007)**

Ծնվել է Ախալքալաքի շրջանում:

**Ոստիկանության գեներալ-մայոր է (23.08.2001):**

2007 թվականից աշխատում է որպես Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի տեղակալ:

**ԱՐԿԱԴԻ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ**
**ՏԵՐ-ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**
**(22.05.1939 - 31.03.2021)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (25.05.1992)**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ**
**ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ**
**(08.05.2021)**



Ծնվել է Թբիլիսիում (Վրացական ԽՍՀ):

Միջնակարգ դպրոցը ավարտել է Թբիլիսիում, այնուհետև սովորել է Բաքվի համազորային հրամանատարական ուսումնարանում և Լենինգրադի թիկունքի և տրանսպորտի ռազմական ակադեմիայում: Ակադեմիան ավարտելուց հետո ծառայել է Աֆղանստանի Դեմոկրատական Հանրապետությունում, խորհրդային բանակի սահմանափակ ռազմական թվակազմում, այնուհետև՝ Գերմանիայում, Չեխոսլովակիայում և Բելառուսում, իսկ 1987 թվականից՝ Հայաստանում:

1988 թվականից ակտիվորեն մասնակցել է կամավորականների վերապատրաստմանը:

1990 թվականին դարձել է «Սասունցի Դավիթ» կամավորական ջոկատի անդամ: Ջոկատը պաշտպանում էր սահմանամերձ հայկական գյուղերը:

1991 թվականի մայիսի 6-ին նշանակվել է Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր առաջին պետական ռազմական գերատեսչության՝ Պաշտպանության կոմիտեի արտազինվորական պատրաստության բաժնի պետ, որը քաղաքական ծանր պայմաններում նպատակաուղղված աշխատանք էր տանում հանրապետության ուսումնական հաստատություններում, նախկին ԴՕՍԱԱՖ-ում և այլ կազմակերպություններում, ուսումնասիրում էր պետությունների փորձառությունն այս ուղղությամբ:

1991 թվականի հուլիսի 13-ից գնդապետ Ա. Տեր-Թադևոսյանը զբաղվել է կամավորականների զինվորական վերապատրաստմամբ:

Աֆղանստանում նրան «Լեռնային աղվես» անունն են տվել և բարձր են գնահատել լեռնային կռիվներում դրսևորած նրա մարտարվեստը: Հայրենիքում իր անձնակազմի հատուկ պատրաստման գործում ներդրած առանձնահատուկ մեթոդի համար նրան անվանել են «Կոմանդոս»: Նա իր գիտելիքներն ու հարուստ փորձառությունը շարունակել է օգտագործել Պաշտպանության նախարարության կադրերի հետ տարվող աշխատանքների վարչության պետի, ապա՝ նախարարի օգնականի պաշտոններում, իսկ 2002 թվականից աշխատել է նախկին ԴՕՍԱԱՖ-ում:

Մարտական վաստակի համար պարգևատրվել է **«Կարմիր դրոշի»**, **«Պատվո նշանի»** (ԽՍՀՄ) և Հայաստանի **«Մարտական խաչի»** I աստիճանի շքանշաններով:

Եղել է Երևանի պատվավոր քաղաքացի (1998):



**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՂԱՐՇԱԿԻ ՈՒՆԱՆՅԱՆ**
**(ԾՆՎ. 10.06.1952 Թ.)**

**ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ (2003)**

Ծնվել է Ախալքալաքի քաղաքում (Վրացական ԽՍՀ):

1970-1975 թվականներին սովորել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում:

1975 թվականից աշխատել է Հայկական ԽՍՀ Ներքին գործերի նախարարության ապարատում:

1975-1977 թվականներին աշխատել է Սպանդարյանի շրջանի Ներքին գործերի բաժնում, անչափահասների գործերով տեսչությունում՝ որպես ավագ տեսուչ: 1977-1983 թվականներին նույն բաժնում աշխատել է որպես քրեական հետախուզության տեսուչ, ապա՝ ավագ տեսուչ:

1983 թվականին նշանակվել է ՆԳՆ քրեական հետախուզության Երևանի բաժանմունքի գլխավոր տեսուչ:

1983-1984 թվականներին զբաղեցրել է Սպանդարյանի շրջանի ՆԳ բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետի պաշտոնը:

1984-1991 թվականներին եղել է Օրջոնիկիձեի շրջանի ՆԳ բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերլիազոր, այնուհետև՝ ավագ օպերլիազոր:

1991-1993 թվականներին նույն բաժնում աշխատել է՝ որպես քրեական հետախուզության բաժանմունքի պետ, ապա՝ բաժնի պետի տեղակալ:

1993-1994 թվականներին եղել է Շահումյանի շրջանի Ներքին գործերի բաժնի պետ:

1994 թվականին եղել է Երևանի Ներքին գործերի վարչության պետի տեղակալ:

1994-1996 թվականներին եղել է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի փոխնախարար:

1996-1997 թվականներին նորից նշանակվել է Շահումյանի Ներքին գործերի բաժնի պետ:

1997 թվականին նրան շնորհվել է ոստիկանության գեներալ-մայորի կոչում:

1997-2003 թվականներին վերահաստատվել է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի փոխնախարարի պաշտոնին:

2003 թվականին նշանակվել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի ավագ տեղակալ:

Արժանացել է «Ռուսաստանի Դաշնության ՆԳՆ վաստակավոր աշխատակցի» (2001), «Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության վաստակավոր աշխատակցի» (2002), «Հայաստանի Հանրապետության ՆԳՆ վաստակավոր աշխատակցի» (2003) կոչումների:

Ծառայողական գերազանցության համար պարգևատրվել է **«Հայրենիքին մատուցած ծառայությունների համար»** (2001) և **«Մարշալ Բաղրամյան»** շքանշաններով:



## ՅՈՒՐԻ ԳՐԻԳՈՐԻ ԽԱՉԱՏՈՒՐՈՎ
**(ԾՆՎ. 01.05.1952 Թ.)**

**ԳԵՆԵՐԱԼ-ԳՆԴԱՊԵՏ (15.04.2008)**

Ծնվել է Թեթրիծղարո քաղաքում (*Վրացական ԽՍՀ, նախկինում՝ Բելի Կլյուչ, հեղինակային ծանոթագրություն*), ծառայողի ընտանիքում:

1969 թվականին, ավարտելով Թեթրիծղարոյի միջնակարգ դպրոցը, ընդունվել է Թբիլիսիի հրետանային հրամանատարական Կարմրադրոշ զինվորական ուսումնարան, որը գերազանցությամբ ավարտել է 1974 թվականին:

Ուսումնարանն ավարտելուց հետո նշանակվել է Հեռավոր Արևելքի ռազմական օկրուգի մոտոհրաձգային դիվիզիայի հրետանային գնդի կրակային դասակի հրամանատար:

1976-1982 թվականներին զբաղեցրել է մարտկոցի հրամանատարի, հրետանային դիվիզիոնի հրամանատարի տեղակալի, շտաբի պետի, Հեռավորարևելյան ռազմական օկրուգի առանձին հակատանկային հրետանային դիվիզիոնի հրամանատարի պաշտոնները:

1982-1985 թվականներին սովորել է Լենինգրադի Մ. Կալինինի անվան ռազմական հրետանային ակադեմիայի հրամանատարական ֆակուլտետում:

Ակադեմիան ավարտելուց հետո նշանակվել է Բելառուսի ռազմական օկրուգի տանկային դիվիզիայի, հրթիռային զորքերի և հրետանու շտաբի պետ:

1987 թվականից մինչև 1989 թվականի փետրվար ծառայել է Աֆղանստանի Դեմոկրատական Հանրապետությունում՝ որպես 40-րդ բանակի 5-րդ գվարդիական մոտոհրաձգային դիվիզիայի հրթիռային զորքերի և հրետանու շտաբի պետ:

1989 թվականի հոկտեմբերին Աֆղանստանում զինվորական ծառայությունն ավարտելուց հետո նշանակվել է Բելառուսի ռազմական օկրուգի տանկային բանակի առանձին հրետանային բրիգադի հրամանատար:

1992 թվականի ապրիլին Բելառուսի Հանրապետության պաշտպանության նախարարի հատուկ հրամանագրով գործուղվել է Հայաստանի Հանրապետություն՝ պաշտպանության նախարարի տնօրինության ներքո աշխատելու, և նշանակվել է 2-րդ մոտոհրաձգային գնդի հրամանատար: Ակտիվորեն մասնակցել է Հայաստանի Հանրապետության պետական սահմանի պաշտպանությանը:

1992 թվականի սեպտեմբերին նշանակվել է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հրամանատարի տեղակալ և սահմանապահ զորքերի վարչության պետ: Եղել է Գորիսի մոտոհրաձգային գնդի, Տավուշի մոտոհրաձգային բրիգադի, I և IV բանակային կորպուսների ստեղծման և կազմավորման նախաձեռնողներից: Երկար ժամանակ ղեկավարել է այդ զորամասերը, ստորաբաժանումներն ու միավորումները: Նաև զբաղեցրել է օպերատիվ ուղղության հրամանատարի և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի Գլխավոր շտաբի պետի տեղակալի պաշտոնները:

**1995 թվականին նրան շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում:**

**2000 թվականին ստացել է գեներալ-լեյտենանտի զինվորական կոչում:**

2000 թվականի մարտի 21-ին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանագրով նշանակվել է պաշտպանության փոխնախարար:

2008 թվականի ապրիլի 15-ին Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով նշանակվել է զինված ուժերի Գլխավոր շտաբի պետ:

Մարտական վաստակի համար պարգևատրվել է «**Կարմիր աստղի**» երկու և «**ԽՍՀՄ զինված ուժերում մատուցած ծառայության համար**» III աստիճանի, «**Աստղի**» (Աֆղանստան) շքանշաններով, Հայաստանի Հանրապետության «**Մարտական խաչով**», Հայ Առաքելական Եկեղեցու «**Ներսես Շնորհալի**» և «**Վարդան Մամիկոնյան**» շքանշաններով:






# ՄԱՍ VII

# ՎՐԱՍՏԱՆ



**ՍԵՐԳԵՅ ՄԱՐԿՈՍԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ**
**(ԾՆՎ. 26.02.1958 Թ.)**

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ (17.08.2001)**

Ծնվել է Թբիլիսիում:

1991-1994 թվականներին եղել է Վրաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության վարչության ղեկավար:

1994 թվականից աշխատել է Վրաստանի Արդարադատության նախարարության բաժնի ղեկավար:

Ներկայումս ապրում է ԱՄՆ-ում:

# ՄԱՍ VIII

# ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԲԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՅ ԳԵՆԵՐԱԼՆԵՐ ՎՐԱՍՏԱՆԻՑ





# ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ



**ԿՈՆՍՏԱՆԴԻՆ ՀԱԿՈԲԻ**
**ԱՂԱՋԱՆՈՎ**
**(ԾՆՎ. 1945 Թ.)**

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ**
**III ԱՍՏԻՃԱՆԻ**
**ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ**
**(2000)**

Ծնվել է Ծալկայի շրջանում (Վրացական ԽՍՀ)։

Եղել է Ռյազանի մարզի Չուչկովյի շրջանի դատախազության քննիչ։

1977 թվականին տեղափոխվել է Վրաստան, Բոլնիսիի շրջան՝ որպես դատախազի օգնական։ Այնուհետև աշխատել է որպես Անդրկովկասի տրանսպորտային դատախազի ավագ օգնական, Մառնեուլիի շրջանի դատախազության գրասենյակի ղեկավար, դատախազի տեղակալ, Վրաստանի դատախազության քննչական վարչության, Ներքին գործերի նախարարության օրգաններում հետաքննության և քննչական հսկողության բաժնի ավագ դատախազ։

1993 թվականի ապրիլից աշխատել է Ռուսաստանի Դաշնության դատախազության համակարգում, եղել է շրջանային դատախազության քննիչ, Ռուսաստանի Դաշնության ՆԳՆ քննչական կոմիտեի, Հատուկ գործերի հետաքննության և վերահսկողության վարչության դատախազ։

1999 թվականի դեկտեմբերին նշանակվել է վարչության պետի տեղակալ, Ռուսաստանի գլխավոր դատախազության հատուկ գործերի հետաքննության և վերահսկողության բաժնի պետ։

Պարգևատրվել է «Ռուսաստանի Դաշնության դատախազության պատվավոր աշխատողի» կրծքանշանով (1998)։



**ԳԵՎՈՐԳ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԻՍԱԽԱՆՅԱՆ**
**(ԾՆՎ. 27.05.1960)**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ (2004)**
**ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍ**
**(28.06.2000)**

Ծնվել է Թեթրիծղարոյում (*Վրացական ԽՍՀ, նախկինում՝ Բեյի Կլյուչ, հեղինակային ծանոթագրություն*): Միջնակարգ դպրոցն ավարտել է այնտեղ: 1977 թվականին զորակոչվել է Խորհրդային Միության զինված ուժեր:

1981 թվականին ավարտել է Ռյազանի ռազմադեսանտային հրամանատարական բարձրագույն ուսումնարանը: Ծառայել է Անդրկովկասյան ռազմական օկրուգի ստորաբաժանումներում: Ղեկավարել է պարաշյուտադեսանտային դասակը, եղել է պարաշյուտադեսանտային վաշտի փոխհրամանատար և հրամանատար:

1987 թվականից ծառայել է Աֆղանստանում, Խորհրդային Միության սահմանափակ ռազմական թվակազմում՝ որպես պարաշյուտադեսանտային գումարտակի շտաբի պետ: Մասնակցել է ռազմական գործողություններին մինչև Աֆղանստանից խորհրդային զորքերի ամբողջական դուրսբերումը (1989 թվականի փետրվար): Խորհրդային Միությունն վերադառնալուց հետո ղեկավարել է պարաշյուտադեսանտային գումարտակը Բելառուսի և Մոսկվայի ռազմական օկրուգներում:

Մասնակցել է նախկին ԽՍՀՄ տարածքում զինված հակամարտությունների տեղայնացմանը:

1993 թվականին ավարտել է Մ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան: Եղել է պարաշյուտադեսանտային գնդի հրամանատար:

Մասնակցել է 1994-1996 թվականների առաջին չեչենական պատերազմին:

1996-1997 թվականներին մասնակցել է Բոսնիայի և Հերցեգովինայի (նախկին Հարավսլավիա) խաղաղապահ գործողությանը՝ որպես պարաշյուտադեսանտային բրիգադի շտաբի պետ:

1998 թվականի փետրվարին նշանակվել է 76-րդ գվարդիական օդադեսանտային դիվիզիայի 234-րդ գվարդիական պարաշյուտադեսանտային գնդի (քաղաք Պսկով) հրամանատար:

1999 թվականի օգոստոսից մինչև 2000 թվականի փետրվար իր գնդի գլուխն անցած կռվել է Չեչնիա և Դաղստան ներխուժած Շ. Բասաևի և Հաթաբի ավազակախմբերի դեմ, ապա մասնակցել Չեչնիայի երկրորդ պատերազմի մարտերին: Նրա գնդի բոլոր մարտական գործողություններն առանձնանում էին մանրակրկիտ պատրաստվածությամբ և դրան մասնակցող զորքերի տեսակների խիստ փոխհամագործակցությամբ: Կես տարվա մարտական գործողությունների ընթացքում նրա գնդում 10-ից քիչ զինվոր է զոհվել:

**Ռուսաստանի Դաշնության նախագահի 2000 թվականի հունիսի 28-ի հրամանագրով Հյուսիսային Կովկասում հակաահաբեկչական գործողության ժամանակ ցուցաբերած խիզախության և նվիրումի համար 76-րդ գվարդիական օդադեսանտային դիվիզիայի 234-րդ գվարդիական պարաշյուտադեսանտային գնդի հրամանատար, գվարդիայի գնդապետ, Սեծովյան, «Կուտուզովի» անվան III աստիճանի և «Սուրբ Ալեքսանդր Նևսկու» անվան շքանշանակիր Գևորգ Անուշավանի Իսախանյանին շնորհվել է Ռուսաստանի Դաշնության հերոսի կոչում՝ Պատվո հատուկ նշանի՝ «Ոսկե աստղ» մեդալի պարգևատրմամբ:**

2000 թվականի դեկտեմբերից եղել է Պսկովի ռազմաօդային ուժերի դիվիզիայի շտաբի պետ:

2002 թվականի մայիսից աշխատել է որպես Ռուսաստանի Դաշնության ռազմաօդային ուժերի մարտական պատրաստության ղեկավար:

2006 թվականի հունվարից գեներալ-մայոր Իսախանյանը ծառայում է որպես Սվերդլովսկի օկրուգի «Ռուսաստանի պաշտպանության մարզատեխնիկական կազմակերպության» (РОСТО) ղեկավար:

Մարտական վաստակի համար պարգևատրվել է **«Կարմիր աստղի»** երկու, **«Պատվո նշանի»** (ԽՍՀՄ) և **«Արիության համար»** (Ռուսաստանի Դաշնություն) շքանշաններով:



**ՊԵՏՐՈՍ ՎԱՐԱԶԴԱՏԻ ՂԱՐԻԲՅԱՆ**
**(ԾՆՎ. 18.04.1947 Թ.)**

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ III ԱՍՏԻՃԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ (10.01.2008)**

Ծնվել է Բոգդանովկայի (այժմ՝ Նինոծմինդա, Վրացական ԽՍՀ) շրջանի Գանձա գյուղում, ծառայողի ընտանիքում:

1972-1977 թվականներին սովորել է Կուբանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում:

1986-1996 թվականներին աշխատել է Երևանի դատախազությունում՝ որպես դատախազ-քրեագետ:

1996 թվականից Ռուսաստանի Դաշնության քաղաքացի է, աշխատում է Մոսկվայի շրջանային դատախազությունում՝ որպես հատուկ գործերով քննիչ:

1998-1999 թվականներին աշխատել է ավստրիական «East Petroleum Handelsges» նավթային ընկերության գործերի կառավարիչ Եվգենի Ռիբինի դեմ երկու հարձակումների գործով:

2001 թվականից աշխատում է որպես Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազության հատուկ գործերի քննիչ:

2004 թվականի հուլիսից ղեկավարում է Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազության քննչական խմբերից մեկը, որը հետաքննում է Ռուսաստանում «Forbes» ամսագրի գլխավոր խմբագիր Պոլ Խլեբնիկովի սպանությունը:

2011 թվականին Ռուսաստանի Դաշնության նախագահի կողմից նշանակվել է Քննչական կոմիտեի նախագահին կից հատուկ գործերի ավագ քննիչ:

### ՎԼԱԴԻՄԻՐ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ՉՈԲԱՆՅԱՆ
**(ԾՆՎ. 10.02.1938 Թ.)**



**ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ (1995)**

Ծնվել է Բոգդանովկայի (այժմ՝ Նինոծմինդա, Վրացական ԽՍՀ) շրջանի Խոջաբեկ գյուղում: Միջնակարգ դպրոցն ավարտել է **Արծաթե մեդալով**:

1955 թվականից ծառայել է զինված ուժերում: 1960 թվականին ավարտել է Խարկովի բարձրագույն ավիացիոն ինժեներական ուսումնարանը:

1960-1970 թվականներին ծառայել է ռազմավարական նշանակման հրթիռային զորքերի ստորաբաժանումներում և զորամիավորումներում: Գործողության միջին շառավղով խմբային բազավորման, հրթիռային համալիրների մարտական հերթապահության ստեղծման առաջամարտիկներից է (քաղաք Մախաչկալա, Դաղստանի ԻԽՍՀ):

1971-1989 թվականներին եղել է ԽՍՀՄ Պաշտպանության նախարարության 4-րդ կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի նախ կրտսեր, ապա՝ ավագ գիտաշխատող, լաբորատորիայի վարիչ, գիտական բաժնի ղեկավար:

1985 թվականին գնդապետ Վ. Չոբանյանը հաջողությամբ պաշտպանել է դոկտորական թեզը և ստացել է տեխնիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, իսկ 1990 թվականին՝ պրոֆեսորի կոչում:

1989-1992 թվականներին եղել է Ֆ. Ձերժինսկու անվան հրետանային ակադեմիայի հրթիռային զենքի շահագործման ամբիոնի վարիչ:

**1992 թվականին նրան շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում:**

1992-1999 թվականներին եղել է  նույն ակադեմիայի փոխտնօրեն ուսումնական և գիտական աշխատանքների գծով:

2002 թվականին Ռուսաստանի Դաշնության զինված ուժերից թոշակի անցնելուց հետո նա ստեղծել և ղեկավարում է Պետրովսկի հրթիռատիեզերական խնդիրների գիտական կենտրոնը: Միաժամանակ նա «Սիստեմպրոմ» կոնցեռնի գլխավոր կոնստրուկտորն ու փոխտնօրենն է գիտական աշխատանքի ոլորտում: Կոնցեռնը ստեղծում է ռազմական տեխնիկայի և զենքի կառավարման ավտոմատացված համակարգեր:

Գեներալ-լեյտենանտ Վ. Չոբանյանը 250 գիտական աշխատությունների, 7 գյուտի, 4 մենագրության և 3 դասագրքի հեղինակ է:

Պարգևատրվել է **«ԽՍՀՄ Զինված ուժերում ծառայության համար»** III աստիճանի շքանշանով (1988): Նինոծմինդայի պատվավոր քաղաքացի է:



# ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ



**ՄԻՔԱՅԵԼ ԴԵՐԵՆԻԿԻ ԹԱՇՉՅԱՆ**
**(1925 - 1971 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ)**

**ԲՐԻԳԱԴԻ ԳԵՆԵՐԱԼ (01.10.1973)**

Ծնվել է Բինգհեմփթոն քաղաքում (Նյու Յորքի նահանգ, ԱՄՆ), Բաթոմիի (այժմ՝ Բաթումի) օկրուգի Արտվին քաղաքից (այն ժամանակ ընդգրկված էր Քութաիսիի նահանգի մեջ) ԱՄՆ գաղթած ընտանիքում:

1944 թվականին նա գերազանցությամբ ավարտել է միջնակարգ դպրոցը և ընդունվել Ուեսթ Փոյնթի ռազմական ակադեմիա, իսկ 1948 թվականին ստացել է գերազանցության դիպլոմ և ռազմաօդային ուժերի լեյտենանտի զինվորական կոչում:

1952 թվականին ավարտել է ԱՄՆ-ի բանակի պատերազմի կառավարման քոլեջը, գերազանցությամբ ավարտել է Հարվարդի բիզնեսի կառավարման բարձրագույն դպրոցի ծրագիրը և ստացել է ռազմաօդային ուժերի մայորի կոչում: Հետագայում մասնակցել է Օհայոյի նահանգի ռազմաօդային ուժերի ինստիտուտի հատուկ վերապատրաստման դասընթացներին: Նրա առաջին հանձնարարություններից էր Ռայթ-Պատերսոն ռազմաօդային բազայի՝ ինքնաթիռի շարժիչներով ապահովումը:

1953-1958 թվականներին Թաշչյանը ղեկավարել է Կալիֆոռնիայի նահանգի Փասադենա քաղաքում տեղակայված 132-րդ ավիախումբը:

1955 թվականին նրան շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

1958 թվականից գնդապետ Թաշչյանը գործուղումների է մեկնել եվրոպական երկրներ, որտեղ զբաղեցրել է օդային կառավարման կենտրոններից մեկի որակի վերահսկման բաժնի ղեկավարի (Հաագա քաղաքում), ինչպես նաև «Air Logistics»-ի Լոնդոնի գրասենյակի բաժիններից մեկի ղեկավարի պաշտոնները: ԱՄՆ վերադառնալուն

պես, 1958 թվականի օգոստոսին նա սկսել է վերապատրաստվել «North American Aviation» ռազմական հաստատությունում (Լոս Անջելես, Կալիֆոռնիա), մեկ տարի անց նշանակվել է «Richmond Air» ընկերության բաժնի պետ (Վիրջինիայի նահանգ):

1961-1968 թվականներին Թաշչյանը ծառայել է որպես ռազմաօդային ուժերի հրամանատարության կետերից մեկի (Մայամի, Ֆլորիդայի նահանգ) ղեկավար: Հետագայում նա զբաղեցրել է Զինված ուժերի մատակարարման գործադիր տնօրենի պաշտոնը (Ալեքսանդրիա, Վիրջինիայի նահանգ):

1971 թվականի օգոստոսին նա տեղափոխվել է ԱՄՆ-ի ռազմաօդային ուժերի Գլխավոր շտաբ՝ որպես շտաբի պետի տեղակալ և գնումների քաղաքականության փոխտնօրեն:

Ողջ կարիերայի ընթացքում Թաշչյանը գումարային միջոցներով ամեն կերպ օժանդակել է հայկական համայնքներին հայկական դպրոցներ ու եկեղեցիներ կառուցելու գործում: Բացի այդ, գեներալ Թաշչյանը օգնել է զինվորական կարիերայի ձգտող հայ երիտասարդներին:

Ծառայողական գերազանցության համար ստացել է **«Վաստակավոր լեգիոնի»**, **«Ռազմաօդային ուժերի»**, **«Անբասիր զինվորական ծառայության համար»** I աստիճանի, **«Կոնգրեսի»** (ԱՄՆ ռազմաօդային ուժերի զարգացման գործում ունեցած բացառիկ վաստակի համար, 1968 թ.) մեդալներ:

## ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

### I

1. Արտեմ Դավիթի Աբամելիքով (Աբամելիք)
2. Դավիթ Սիմոնի Աբամելիքով (Աբամելիք)
3. Սիմոն Դավիթի Աբամելիքով (Աբամելիք)
4. Իվան Սիմոնի Աբամելիքով (Աբամելիք)
5. Սողոմոն Հովսեփի Աբամելիքով (Աբամելիք)
6. Վասիլի Դավիթի Աբելով
7. Վլադիմիր Նիկոլայի Ակիմով (Ավակիմով)
8. Ալեքսանդր Իվանի Արգուտինսկի-Դոլգորուկով (Արղության-Երկայնաբազուկ)
9. Ալեքսանդր Ռոմանի Արգուտինսկի-Դոլգորուկով (Արղության-Երկայնաբազուկ)
10. Դավիթ Լուարսաբի Արգուտինսկի-Դոլգորուկով (Արղության-Երկայնաբազուկ)
11. Մովսես Զաքարի Արգուտինսկի-Դոլգորուկով (Արղության-Երկայնաբազուկ)
12. Տիգրան Դանիելի Արությունով
13. Փիլիպ Արտեմի Արությունով
14. Երեմիա Գևորգի Արծրունի
15. Ալեքսանդր Եսայու Ախվերդով (Հախվերդյան)
16. Նիկոլայ Ալեքսանդրի Ախվերդով (Հախվերդյան)
17. Վլադիմիր Նիկոլայի Ախվերդով (Հախվերդյան)
18. Նիկոլայ Նիկոլայի Ախվերդով (Հախվերդյան)
19. Ֆյոդոր Եսայու Ախվերդով (Հախվերդյան)
20. Նիկոլայ Ֆյոդորի Ախվերդով (Հախվերդյան)
21. Նիկոլայ Եսայու Ախվերդով (Հախվերդյան)
22. Դմիտրի Իվանի Ախշարումով

23. Բենիամին Իվանի Ախշարումով
24. Արսեն Իվանի Բեբութով (Բեհբության)
25. Դավիթ Գրիգորի Բեբութով (Բեհբության)
26. Վասիլի (Բարսեղ) Հովսեփի Բեբութով (Բեհբության)
27. Դավիթ Հովսեփի Բեբութով (Բեհբության)
28. Նիկոլայ Վասիլիի Բեբութով (Բեհբության)
29. Իսահակ Աբրահամի Եվանգուլով (Եվանգուլյան)
30. Արտեմ Սողոմոնի Վարդանով
31. Միխայիլ Նիկոլայի Զուրաբով
32. Վասիլի Միխայիլի Թամամշև (Թամամշյան)
33. Իսահակ Արտեմի Թոխաթելով
34. Սիմոն Գրիգորի Կարտաշով
35. Գեորգի Ալեքսանդրի Կեթխուդով
36. Ադամ Սողոմոնի Կորգանով (Ղորղանյան)
37. Ալեքսանդր Ալեքսանդրի Կորգանով (Ղորղանյան)
38. Գաբրիել Իվանի Կորգանով (Ղորղանյան)
39. Գրիգոր Գաբրիելի Կորգանով (Ղորղանյան)
40. Հովսեփ Իվանի Կորգանով (Ղորղանյան)
41. Սողոմոն Իվանի Կորգանով (Ղորղանյան)
42. Գեորգի Ռաֆայելի Կուզանով
43. Ալեքսանդր Իվանի Լազարև
44. Իվան Եգորի (Գեորգիի) Լոռիս-Մելիքով
45. Միխայիլ Տարիելի Լոռիս-Մելիքով
46. Պավել Դավիթի Մանուչարով
47. Ալեքսանդր Հակոբի Մարդանով
48. Վլադիմիր Լազարի Մարդանով
49. Պյոտր Իվանի Մանսվետով
50. Աբեսալոմ (Աբել) Իվանի Մղեբրով
51. Ավետիս Գերասիմի Մելիքով
52. Իսահակ Հովսեփի Մելիք-Հայկազով

53. Սիմոն Ռոմանի Մելիք-Մնացականով
54. Թովմաս Իվանի Նազարբեգով
55. Դմիտրի Անդրեյի Օզանեզով
56. Կոնստանդին Անդրեյի Պիրադով
57. Գեորգի Ավետիքի Պոզոն
58. Լեոն Ավետիքի Պոզոն
59. Ռուբեն Ավետիքի Պոզոն
60. Իսրայել Աղապարունի Սանջանով
61. Իվան Հովսեփի Սիմոնով (Սիմոնյան)
62. Դմիտրի Բոգդանի Տեր-Ասատուրով
63. Նիկոլայ Բոգդանի Տեր-Ասատուրով
64. Արզաս Արտեմի Տեր-Ղուկասով
65. Ստեփան Հովսեփի Քիշմիշև
66. Կոնստանդին Նիկոլայի Շագուբատով
67. Նիկոլայ Շանշիայի Շանշիև
68. Արկադի Կարապետի Խանդամիրով
69. Թարխան Աղամալի Խոջամինասով

**II**

1. Գեորգի Դավիթի Արգուտինսկի-Դոլգորուկով (Արղության-Երկայնաբազուկ)
2. Պավել Դավիթի Արգուտինսկի-Դոլգորուկով (Արղության-Երկայնաբազուկ)
3. Միխայիլ Վասիլիի Արեշև (Արեշյան)
4. Հակոբ Գերասիմի Բագրատունի
5. Վասիլի Գրիգորի Բեբութով (Բեհբության)
6. Գաբրիել Գրիգորի Կորգանով (Ղորղանյան)
7. Հովսեփ Արտեմի Քիշմիշև
8. Գրիգոր Արտեմի Շելկովնիկով (Մետաքսյան)

## III

1. Հովհաննես Սիմոնի Օսիպով

## IV

1. Պավել Պետրոսի Բեժանբեգով (Բեժանբեկյան)
2. Կոնստանդին Միխայիլի Գամազով (Սահառունի) (Ղամազյան)
3. Կոնստանդին Բեգլարի Դոլուխանով (Դոլուխանյան)
4. Գեորգի Եսայու Խանկալամով (Խանքալամյան)

## V

1. Բագրատ Նիկոլայի Արությունով
2. Միխայիլ Նիկոլայի Արությունով
3. Մկրտիչ Աշոտի Աբրահամյան
4. Միխայիլ Իվանի Աղայանց
5. Զարմայր Մամիկոնի Արվանով
6. Մեսրոպ Հաբեթի Արզումանյան
7. Եվգենի Զաքարի Ասատուրով
8. Գրիգոր Ակիմի Բեժանով
9. Գուրգեն Հարությունի Դալիբալթայան
10. Սողոմոն Ստեփանի Երամյան
11. Հովհաննես Միսակի Վարդանով (Վարդանյան)
12. Սերգեյ Ալֆրեդի Վարդանով (Վարդանյան)
13. Լևոն Մկրտիչի Վարդանյան
14. Իվան Դավիթի Վեքիլով
15. Սուրեն Սարգսի Ոսկանյան

16. Հայկ (Գայ) Ղազարի Թումանյան
17. Իվան Գրիգորի Ցարամիշև
18. Քրիստափոր Իվանի Իվանյան
19. Աշոտ Վաղարշակի Ղազարյան
20. Գաբրիել Ստեփանի Կամոև
21. Անդրեյ Խորենի Կեժոյան
22. Ստեփան Եղիայի Կինոսյան (Գինոսյան)
23. Կոնստանդին Արկադիի Լազարև
24. Վիկտոր Բոգդանի Լիսինով (Լիսինյան)
25. Ռուբեն Գրիգորի Մաղալով
26. Ստեփան Սողոմոնի Մամուլով (Մամուլյան)
27. Պյոտր Իվանի Մանսվետով
28. Գեորգի Հովսեփի Մարտիրոսով
29. Սերգեյ Արկադիի Միանսարով
30. Արտեմ (Անուշավան) Իվանի Միկոյան
31. Ստեփան Անաստասի Միկոյան
32. Գեորգի Ստեփանի Նարիմանով (Նարիմանյան)
33. Առաքել Կարապետի Օզանեզով
34. Հովհաննես Սեդրակի Օվանօղլյան
35. Բորիս Արտեմի Պապինյան
36. Արտավազդ Արամի Սագոյան
37. Բորիս Կոնստանդինի Սալամբեգով
38. Հրայր Գևորգի Սիմոնյան
39. Ռուբեն Տիգրանի Տեր-Սահակով
40. Մարիուս Արամի Յուզբաշյան
41. Հմայակ Զաքարի Քոբուլով
42. Բոգդան (Բախշո) Զաքարի Քոբուլով
43. Արթուր Գրիգորի Քյուչարյանց

## VI

1. Էնրիկո Ալեքսանդրի Ապրիամով
2. Վաղարշակ Վառնազի Հարությունյան
3. Վյաչեսլավ Վառնազի Հարությունյան
4. Արարատ Սմբատի Մահտեսյան
5. Արկադի Հովհաննեսի Տեր-Թադևոսյան
6. Հովհաննես Վաղարշակի Ունանյան
7. Յուրի Գրիգորի Խաչատուրով

## VII

1. Սերգեյ Մարկոսի Պետրոսյան

## VIII

1. Կոնստանդին Հակոբի Աղաջանով
2. Գևորգ Անուշավանի Իսախանյան
3. Պետրոս Վարազդատի Ղարիբյան
4. Վլադիմիր Արշալույսի Չոբանյան
5. Միքայել Դերենիկի Թաշչյան

# ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ



## ՄԱՄՈՒԿԱ ՋԵՄԱԼԻ ԳՈԳԻՏԻՁԵ
## (ԾՆՎ. 21.11.1963 Թ.)

**ԳՆԴԱՊԵՏ (2003)**

Ծնվել է Թբիլիսիում, ռազմական ծառայողի ընտանիքում:

2006 թվականից պատմական գիտությունների դոկտոր է:

Շուրջ 42 տարի ծառայում է ուժային կառույցներում, այս թվում՝ 28 տարի՝ պաշտպանության ուժերում: Պաշտպանության ուժերի վետերան է:

Վրաստանի և Կովկասի ռազմական պատմության հարցերով 22 մենագրության, այս թվում՝ 1 օժանդակ ձեռնարկի և 100-ից ավելի գիտական հոդվածների հեղինակ է:

2002-2005, 2008-2010 և 2018-2020 թվականներին զբաղվել է գիտական-մանկավարժական գործունեությամբ Դավիթ Շինարարի անվան պաշտպանության ազգային ակադեմիայում և սերժանտների նախապատրաստական դպրոցում, որտեղ վարել է Վրաստանի ռազմական արվեստի դասընթացները:

2013 թվականից Վրաստանի Գրողների ստեղծագործական միության անդամ է:

2015 թվականի դեկտեմբերի 29-ից Վրաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի ռազմագիտության խորհրդի անդամ է:

2017 թվականից առ այսօր Վրաստանի ռազմական պատմության ընկերության տնօրենն է:

Պարգևատրվել է **«Պատվո նշանի»** շքանշանով (2003) և Բագրատիոնիների թագավորական տան **«Էրեկլե II»**-ի թագավորական շքանշանով (2020):

**Անբասիր ծառայության համար** պարգևատրվել է Պաշտպանության նախարարության գերատեսչական մեդալներով (I-II աստիճաններ, 2008, 2020) և ՆԳՆ **«10 տարվա անբասիր ծառայության համար»** կրծքանշանով (2020):

Արժանացել է Վրաստանի Գրողների ստեղծագործական միության **Իլիա Ճավճավաձեի անվան մրցանակի** (2018), **«Վրացական մշակույթի երախտավորի»** (2018) և **«Խաղաղության երախտավորի»** (2022) կոչումների:

Վաստակաշատ ներդրում ունի Վրաստանի և Կովկասի ռազմական պատմության ուսումնասիրման և հանրայնացման գործում:



**ԳԻՈՐԳԻ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ**
**ԲԵԺԻՏԱՇՎԻԼԻ**
**(1966 - 2020)**

**ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ**

Ծնվել է Գուրջաանի քաղաքում, ծառայողի ընտանիքում:

2000 թվականին ավարտել է Թբիլիսիի մասնավոր համալսարանի իրավաբանական ֆակուլտետը:

1985-1987 թվականներին ծառայել է խորհրդային բանակում (Մոնղոլիայում):

1987-1992 թվականներին աշխատել է Գուրջաանիի շրջանի ժողովրդական տնտեսության օբյեկտներից մեկում:

1992-1993 թվականներին մասնակցել է Վրաստանի տարածքային ամբողջականության համար մղվող մարտերին:

1994-2000 թվականներին ծառայել է Վրաստանի Պաշտպանության նախարարությունում, պաշտպանության նախարարի ապարատում:

2000-2002 թվականներին եղել է «Գեորգիա» համալսարանի պրոռեկտոր:

2000-2007 թվականներին զբաղվել է գիտական-մանկավարժական գործունեությամբ Իլիա Ճավճավաձեի անվան ազգային համալսարանում, եղել է Վրաստանի ազգային համալսարանի դեկանի տեղակալ:

2007-2008 թվականներին ծառայել է որպես ցամաքային ուժերի հրամանատարի օգնական, հրամանատարության ապարատի պետ:

2008-2009 թվականներին ստանձնել է Բիզնեսի և արտաքին հարաբերությունների համալսարանի ռեկտորի պարտավորությունները:

2009 թվականից զբաղվել է գիտական-մանկավարժական գործունեությամբ Ռուսթավելու անվան ազգային համալսարանում, եղել է

բիզնեսի և կառավարման ֆակուլտետի դեկան: Մի քանի ձեռնարկների, մենագրությունների, ռազմական ոլորտի պատմական հետազոտությունների հեղինակ է: Նրա հոդվածները տպագրվել են ինչպես տեղական, այնպես էլ միջազգային պարբերական հանդեսներում:

2011 թվականին «Էդելվեյսի ավարտը» գրքի համար ստացել է Դավիթ Ծինարարի անվան մրցանակ:

2014 թվականի մարտին ընտրվել է Ռուսթավելու ազգային համալսարանի ներկայացուցիչ Պրագայի Կառլովի համալսարանում:

Դոկտորական թեզի թեման՝ «Վրաց ռազմական-քաղաքական վտարանդիները Եվրոպայում» (1921-1953 թթ.):

2017-2020 թվականներին եղել է Վրաստանի ռազմական պատմության ընկերության համահիմնադիր և փոխտնօրեն:

2018 թվականի դեկտեմբերին ստեղծագործական և հասարակական ակտիվ գործունեության համար Վրաստանի Գրողների ստեղծագործական միությունը նրան շնորհել է **«Մշակույթի երախտավորի»** կոչում:

2018 թվականի հոկտեմբերին «Վրաստանի 100 ճակատամարտ» գրքի համար (օժանդակ ձեռնարկ) և արգասավոր ստեղծագործական գործունեության համար ստացել է Վրաստանի Գրողների ստեղծագործական միության **Իլիա Ճավճավաձեի անվան մրցանակ**:

Ստացել է Վրաստանի Գրողների ստեղծագործական միության **Նիկո Նիկոլաձեի անվան մրցանակ** (2019) և Մանկավարժների ասոցիացիայի **Իակոբ Գոգեբաշվիլու անվան մրցանակ**:

Պարգևատրվել է Ռազմական պատմության ընկերության **«Սուրբ Գիորգիի»** նշանով (հետմահու, 2020):

Եղել է «Փազիս» աշխարհիկ ակադեմիայի ակադեմիկոս (2012) և Վրաստանի Գրողների ստեղծագործական միության անդամ (2012):

Ընտրվել է Ջումբեր Լեժավայի անվան Գիտությունների միջազգային բազմապրոֆիլ ակադեմիայի ակադեմիկոս և գիտնական քարտուղար (2012):

Մահացել է Թբիլիսիում անբուժելի հիվանդությունից, թաղված է Գուրջաանի քաղաքում:



**ՄԱՄԻԱ ՅՈՒՐԻԻ ԳՈԳՈԼԱՁԵ**
**(ԾՆՎ. 08.02.1969 Թ.)**

**ՓՈԽԳՆԴԱՊԵՏ (2007)**

Ծնվել է Թբիլիսիում, ծառայողի ընտանիքում:

1987-1989 թվականներին անցել է պարտադիր զինվորական ծառայության (Հայկական ԽՍՀ):

1989 թվականին գերազանցությամբ ավարտել է Վրաստանի պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկա-մեքենաշինական ֆակուլտետը:

1993-2007 թվականներին ծառայել է պաշտպանության ուժերի տարբեր պաշտոններում:

2004 թվականից մինչև օրս Ազգային անվտանգության խորհրդի ռազմատեխնիկական հարցերի մշտական միջգերատեսչական հանձնաժողովի փորձագիտական խմբի անդամ է:

2007 թվականից զբաղվում է հասարակական և բարեգործական գործունեությամբ:

Հեղինակ է 4 մենագրության: Մասնակցել է մի շարք միջազգային գիտաժողովների:

2017 թվականից մինչև օրս Վրաստանի ռազմական պատմության ընկերության ընդհանուր հարցերով փոխտնօրենն է:

2019 թվականին ընտրվել է Վրաստանի Գրողների ստեղծագործական միության անդամ:

Արժանացել է Վրաստանի Գրողների ստեղծագործական միության **Իլիա Ճավճավաձեի անվան մրցանակի** (2018), «**Վրացական մշակույթի երախտավորի**» (2018) և «**Խաղաղության երախտավորի**» (2022) կոչումների:

Պարգևատրվել է մի շարք մեդալներով:

Վաստակաշատ ներդրում ունի Վրաստանի և Կովկասի ռազմական պատմության ուսումնասիրման և հանրայնացման գործում:



**ԴԱՎԻԹ ՌՈԼԱՆԴԻ ՄՃԵԴԼԻՁԵ**
**(ԾՆՎ. 23.04.1968 Թ.)**

**ՓՈԽԳՆԴԱՊԵՏ (2001)**

Ծնվել է Թբիլիսիում, ծառայողի ընտանիքում:

1991-1996 թվականներին սովորել և ավարտել է Վրաստանի տեխնիկական համալսարանի ավտոմոբիլային տնտեսության ֆակուլտետը:

1991-1992 թվականներին եղել է Բոլնիսիի շրջանի զինվորական սեկտորի վարիչ:

1993-1996 թվականներին եղել է Բոլնիսիի շրջանի զինվորական բաժնի վարիչ:

1998-1999 թվականներին եղել  է Դմանիսիի շրջանի զինվորական կոմիսար:

1999-2000 թվականներին եղել է Բոլնիսիի շրջանի զինվորական կոմիսար:

2000-2003 թվականներին եղել է Պաշտպանության նախարարության գլխավոր զորահավաքային և կազմակերպչական վարչության սպա:

2003-2004 թվականներին եղել է Ազգային գվարդիայի արևելյան ուղղության զորահավաքային շտաբի ավագ սպա:

2004-2005 թվականներին եղել է Ազգային գվարդիայի զորահավաքային և կազմակերպչական շտաբի վարչության ավագ սպա:

2005-2010 թվականներին եղել է Ազգային գվարդիայի թեթև հետևակային գումարտակի հրամանատար:

1992-1993 և 2008 թվականներին մասնակցել է Վրաստանի տարածքային ամբողջականության համար մղվող մարտերին, պատերազմի և պաշտպանության ուժերի վետերան է:

Պարգևատրվել է Պաշտպանության նախարարության «**Անբասիր**

**ծառայության համար**» (II և III աստիճան) գերատեսչական մեդալներով:

2010 թվականից պահեստազորում է:

2018 թվականից զբաղվում է ակտիվ հասարակական և բարեգործական գործունեությամբ:

2023 թվականի հոկտեմբերի 6-ին նշանակվել է Վրաստանի ռազմական պատմության ընկերության փոխտնօրեն:

Մասնակցել է միջազգային գիտաժողովների, 2 մենագրության հեղինակ է:

Պարգևատրվել է Ռազմական պատմության ընկերության «**Սուրբ Գիորգիի**» նշանով:

2023 թվականի մարտի 22-ին ընտրվել է Ջումբեր Լեժավայի անվան Գիտությունների միջազգային ակադեմիայի ակադեմիկոս:

2023 թվականի օգոստոսին ընտրվել է Վրաստանի Գրողների ստեղծագործական միության անդամ:

Վաստակաշատ ներդրում ունի Վրաստանի և Կովկասի ռազմական պատմության ուսումնասիրման և հանրայնացման գործում:



**ԳԻԱ ԵՎԳԵՆԻԻ ՆԱԻՐԱՇՎԻԼԻ**
**(ԾՆՎ. 14.06.1964 Թ.)**

**ԳՆԴԱՊԵՏ (2001)**

Ծնվել է Թբիլիսիում, ծառայողի ընտանիքում:

1993-2011 թվականներին ծառայել է զինված ուժերում: Պատերազմի և պաշտպանության ուժերի վետերան է:

2011-2020 թվականներին զբաղվել է մանկավարժական գործունեությամբ Ռուսթավելու ազգային համալսարանում, եղել է դեկանի տեղակալ:

2020 թվականից գործում է Վրաստանի ռազմական պատմության ընկերության կազմում, նախ՝ որպես վարչակազմի ղեկավար, այնուհետև՝ որպես խորհրդատվական խորհրդի նախագահի և հասարակայնության հետ կապերի բաժնի փոխտնօրեն:

Պարգևատրվել է Պաշտպանության նախարարության «**Անբասիր ծառայության համար**» գերատեսչական մեդալով:

Վաստակաշատ ներդրում ունի Վրաստանի և Կովկասի ռազմական պատմության ուսումնասիրման և հանրայնացման գործում:



**ՄԱՄՈՒԿԱ ՌՈՒՆԻԻ ՍԱՄԽԱՐԱՁԵ**
**(ԾՆՎ. 18.11.1970 Թ.)**

**ԳՆԴԱՊԵՏ (2012)**

Ծնվել է Ռուսթավի քաղաքում:

Ավարտել է Ռուսթավիի 4-րդ հանրային դպրոցը:

1991-1996 թվականներին սովորել է Իվանե Ջավախիշվիլիի անվան Թբիլիսիի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում:

1996-1998 թվականներին զբաղվել է մանկավարժական գործունեությամբ:

1998 թվականից առ այսօր ծառայում է Վրաստանի Պաշտպանության նախարարությունում, տարբեր պաշտոններում:

2004-2020 թվականներին փոքր ընդմիջումով եղել է Թուրքիայի Հանրապետությունում Վրաստանի պաշտպանության կցորդի օգնական, կցորդի տեղակալ և կցորդ:

Ելնելով գործունեության բնույթից մասնակցել է Թուրքիայի Հանրապետության հետ ռազմական համագործակցության պլանավորման և իրականացման գործընթացներին, ինչպես նաև՝ ընթացող բանակցություններին:

2020-2021 թվականներին ծառայել է Պաշտպանության ուժերի Գլխավոր շտաբում:

2021 թվականից դասավանդում է Պաշտպանության ուժերի հրամանատարաշտաբային քոլեջում:

Զբաղվում է ակտիվ հասարակական գործունեությամբ, Վրաստանի Ռազմական պատմության ընկերության խորհրդատվական խորհրդի անդամ է:

Պարգևատրվել է Պաշտպանության նախարարության «**Անբասիր ծառայության համար**» գերատեսչական II և III աստիճանների մեդալներով, «**Գեներալ Մազնիաշվիլի**», «**Քաքուցա Չոլոդաշվիլի**» և «**Հայրենիքի նվիրյալ**» մեդալներով:

Վաստակաշատ ներդրում ունի Վրաստանի և Կովկասի ռազմական պատմության ուսումնասիրման և հանրայնացման գործում:

## ՌԵԶՅՈՒՄԵ

Աշխատության մեջ անդրադարձ է արվում Ռուսական կայսրության կայսերական բանակի (69), Ռուսաստանի Հանրապետության ժամանակավոր կառավարության (8), Ռուսաստանի «Սպիտակ բանակի» (1), Հայաստանի Դեմոկրատական Հանրապետության (4), Խորհրդային Միության բանակի և նավատորմի և դրանց կից անձանց (41 գեներալ և 2 կոնտր-ադմիրալ), ժամանակակից Հայաստանի Հանրապետության բանակի (7), Վրաստանի (1) և արտասահմանյան երկրների (5) ծագումով վրաստանցի հայ գեներալների և ադմիրալների կենսագրությանը, ընդհանուր առմամբ՝ 138 անձ:

## RESUME

The article discusses the army of the Tsar of the Russian Empire (68), the Provisional Government of the Russian Republic (8), the «White Army» of Russia - (1), the Army of the Democratic Republic of Armenia (1918-1920) - (4), Army and Navy of the Soviet Union and their equivalentst (41 generals and 2 rear admirals), the army of the modern Republic of Armenia (7), georgians 1 and generals of armenian nationality in foreign countries (5). There are 138 personnel in total.

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Абрамян Р. Родовой герб князей Бебутовых // Арагаст. М., 2005. № 1 (1).
2. Аветисян Г. Генерал Акоп Багратуни (1879-1943) // Армянский вестник. 1999. № 1-2.
3. Агаянц Л. М. Никто не забыт. Калуга, изд. «Фридгельм», 2011.
4. Аджимамудов В. Под сенью закона., Тб., 2002. Изд. «МАРЖЗ».
5. Акты, собранные Кавказской археографической комиссией: в 12 т. / под ред. Ад. Берже (т. т. I – X), Дм. Кобякова (т. XI), Е. Д. Фелицына и А. П. Наумова (т. XII). Тифлис: Тип. Глав. упр. наместника Кавказ-ского (т. т. I – IX); тип. Канц. главноначальствующего гражд. частью на Кавказе (т. т. X – XII), 1866 – 1904.
6. Арутюнян К. А., Погосян Г. Р. «Вклад армянского народа в победу в Великой Отечественной войне». М., НАНА., 2010.
7. Асадов Ю. А. Армянские офицеры – на царской службе. М.: Интер-Весы, 1999.
8. Асадов Ю. А. 1000 офицерских имен в армянской истории. Историко-биографические очерки. Пяти-горск. Фонд «Апакидриф». 2005.
9. Асадов Юрий, Чидилян Левон. Армянское кладбище Ходживанк в Тифлисе – вотчина князей Бебутовых // В альманахе «Бекский Дом» № 22. – Москва, 2015.
10. Армянский корпус против турецких войск (ноябрь 1917 г. – июль 1918 г.). Воспоминания генерала Ф. И. Назарбекова. Вестник архивов Армении, N3, 1992.
11. «Артиллерийский вестник» (журн.) – Белград, 1938, №20.
12. Ауский, С. Казаки. Особое сословие: документы, карты, фотографии. – М. – СПб.: Олма-Пресс, Нева, 2002.
13. Бахшян Р. Рождённые под знаком артогня – газ. Голос Армении 2009. № 126 (19917).
14. Брусилов, А. Мои воспоминания. – М.: РОССПЭН, 2001.
15. В память столетнего юбилея Императорского военного ордена Святого Великомученника и Победо-носца Георгия: (1769 – 1869) / сост. В. С. Степанов и Н. Н. Григорович. – СПб.: Тип. В. Д. Скарятина, 1869.
16. Послужной список подполковника 19-го Туркестанского стрелкового полка Ханкаламова. Составлен 14.01.1914. РГВИА, ф. 409, оп. 1, д. 48753.
17. Великая Отечественная война. 1941—1945. Военно-исторические

очерки. Книга первая. Суровые испы-тания. – М.: Наука, 1998. 544 с.
18. Вермишев, Ю. Х. Основы управления ракетами / Ю. Х. Вермишев. – М.: Оборонгиз, 1968.
19. Вермишев Ю. Х. Методы автоматического поиска решений при проектировании сложных технических систем / Ю. Х. Вермишев. – М.: Радио и связь, 1982.
20. «Военно-исторический журнал» 2002, №3 (27), ст. Пожарова А. «Руководители советских спецслужб как объект мифотворчества в истории органов госбезопасности Советского Союза».
21. Военачальники из Грузии / Л. Долидзе, 209 с. портр. 22 см, Тбилиси «Сабчота Сакартвело» 1986.
22. Военная энциклопедия: в 18 т. / под ред. В. Ф. Новицкого и др. – СПб.: Тип. Т-ва И. Д. Сытина, 1911 – 1915.
23. Военные врачи – участники Великой отечественной войны 1941–1945гг. Краткий биографический справочник. Часть первая. СПб., 1995.
24. Военный орден Святого Великомученика и Победоносца Георгия: именные списки 1769–1920: библио-граф. справочник / отв. сост. В. М. Шабанов. – М.: Русскiй мiръ, 2004.
25. Возрождение,, (журн.) – Париж, 1937, 17.12. №4110.
26. Волков, С. В. Русский офицерский корпус. – М.: Воениздат, 1993.
27. Волков, С. Генералитет Российской империи: энциклопед. словарь генералов и адмиралов от Петра I до Николая II: в 2 т. – М.: Центрполиграф, 2009.
28. Виноградов Р. И., Пономарёв А. Н. «Развитие самолётов мира»; М., изд. «Машиностроение», 1991.
29. Гветадзе Г. Шкатулка воспоминаний генерала, Тб., Изд. «Дамани» 2012, (на груз. яз.), 460 с.
30. Гевенян С. М. Мой Тифлис. Эчмиадзин 2002.
31. Генералами не рождаются: [Документально-литературный очерк] / Леван Долидзе; Ред. Валерий Какуев. – Тбилиси: Издательство “Сакартвело”, 1993 (Тип. изд-ва “Закавказские военные ведомости”). – 444 с.: фот.; 21 см. - 10000 экз.
32. Герои и деятели Русско-Турецкой войны 1877–1878 гг.: 20 худож.-исполн. портр. с подроб. биогр. и описанием выдающихся событий войны / Портр. рис. П. Ф. Брожем и грав. И. Матюшиным, Ю. Бара-новским и Ф. Герасимовым. – Санкт-Петербург: Турба, 1878.
33. Герои стальный магистралей. Книга 3 / Сост. Н. А. Галахов. – М.: ФАИР-

ПРЕСС, 2004. – 384 с.: ил.
34. Герои Советского Союза: Краткий биографический словарь / Пред. ред. коллегии Шкадова И.. – М.: Воениздат, 1987. – Т. 1 /Абаев – Любичев/.
35. Гогитидзе, М. Д. Военная элита Кавказа: в 2 т. – Т. I: Генералы и адмиралы из Грузии / ред. Н. Джава-хишвили. – Тбилиси: НИЦ ист. груз.-кавказ. отношений, 2007.
36. Гогитидзе М. Д., Бежиташвили Г. А., Военная элита Армении, Генералы-армяне уроженцы Грузии, Тб., 2014.
37. Гогитидзе М. Д., Бежиташвили Г.А., Генералы Коргановы на службе в русской армии. // История и культура – армяноведческий журнал (сборник научных статей) том III.
38. Егоров, Н. Д. Русский генералитет в годы революции и Гражданской войны: (материалы к биографиче-скому справочнику) [Электронный ресурс] // URL: 78. http://www.bfrz.ru/?mod=static&id=106.
39. Железнодорожные войска России. Кн. 3. – М.: Стэха, 2002.
40. Железнодорожники в Великой Отечественной войне 1941–1945», под редакцией министра путей сооб-щения СССР Н. С. Конарева, изд. «Транспорт», М., 1987.
41. Залесский, К. А. Кто был кто в Первой мировой войне: биограф. энциклопед. словарь. – М.: Астрель. АСТ, 2003.
42. Залесский К. А. Империя Сталина. Биографический энциклопедический словарь. Москва, Вече, 2000.
43. «Знамя труда» – газета – №№104-105 – 24.08.2011 – «Генерал железных дорог Б.К.Саламбеков».
44. Изотова, М. А. Все награды России и СССР: ордена, медали и нагрудные знаки: полн. энциклопед. ор-денов и медалей России / М. А. Изотова, Т. Б. Царева. – Ростов н/Д: Владис, 2008.
45. Кавалеры Императорского военного ордена Святого Великомученика и Победоносца Георгия I и II сте-пеней: (1769 – 1916) / авт.-сост. Ф. А. Талберг, Н. И. Подгорная. – Рига: Lotta Co. Ltd, 1993.
46. Кавказцы или подвиги и жизнь замечательных лиц, действовавших на Кавказе: период. изд. / под ред. С. Новоселова. – Вып. 1 – 47. – СПб.: Тип. Якова Трея, 1857–1859.
47. Кавтарадзе, А. Г. Военные специалисты на службе Республики Советов: 1917–1920. – М.: Наука, 1988.
48. Казарьян А. В. Четверть века на танках. Ереван, изд. «Айастан» 1970 г.
49. Казарьян А. В. Присяга на всю жизнь, М., Воениздат, 1988.

50. Казарян А. В. Война, люди, судьбы. Очерки. Ер., Айастан, 1975.
51. Календарь памятных дат российской военной истории / сост. Ю. А. Алексеев, В. Л. Голотюк, В. И. Жу-матий и др.; под общ. ред. В. А. Золотарева и Г. И. Кальченко; отв. ред. Ю. П. Квятковский. – 2-е изд., испр. и доп. – СПб.: Logos, 2002.
52. Корганов Г. Г. Участие армян в мировой войне на Кавказском фронте (1914-1918) с 19-ю схемами / Пер. с фр. Пирумяна Ю. Л., Долбакяне Э. Е. М., 2011.
53. Красный террор в годы гражданской войны. По материалам Особой следственной комиссии по рассле-дованию злодеяний большевиков. Редактор-составитель Ю. Г. Фельтишинский и Г. И. Чернявский. М., 2004.
54. Краткая Армянская энциклопедия. В 4 т. Т. 3, Ер., 1999. с. 321–322.
55. «Кто есть кто: армяне», Биографическая энциклопедия в 2 томах, т. 1, стр. 391, Ер., 2005.
56. Кто есть кто в Грузии в 2001–2002, Тб., Изд. Бакура Сулакаури (на груз. яз.)
57. Лобода В. Ф. Солдатская слава. М., 1967. Кн. 2.
58. Мамулов С. С. Удивительный народ из страны чудес. Книга 3. М., 2000.
59. Мамулов С. С. Армяне в Грузии. Книга вторая. Москва. 2002.
60. Материалы Википедии – свободной энциклопедии [Электронный ресурс] // URL: http://ru.wikipedia.
61. Материалы сайта «Русская армия в Первой мировой войне» [Электронный ресурс] // URL: http://www.grwar.ru.
62. Материалы сайта «Русская императорская армия» [Электронный ресурс] // URL: http://www.regiment.ru.
63. Материалы сайта Энциклопедия фонда «Хайазг» [Электронный ресурс] // URL: ru.Hayazg.info.
64. Мелуа А. И. «Ракетная техника, космонавтика и артиллерия. биографический справочник» (второе из-дание) Ракетная техника, космонавтика и артиллерия: биогр. ученых и специалистов / А. И. Мелуа. — Изд. 2-е, доп. — М.: СПб.: Гуманистика, 2005.
65. Меружанян А. Маршалы, генералы и адмиралы армянского происхождения в Санкт-Петербурге. – Санкт-Петербург: “Роза ветров”, 2013.
66. Микоян С. А. Мы — дети войны. — М.: Яуза, Эксмо, 2006.
67. Милорадович, Г. А. Список лиц свиты их величеств с царствования императора Петра I по 1886 г. по старшинству дня назначения: генерал-

адъютанты, свиты генерал-майоры, флигель-адъютанты, состоя-щие при особах, и бригад-майоры. – Киев: Тип. С. В. Кульженко, 1886.
68. Минасян Сергей. Боевой путь генерал-адъютанта М. З. Аргутинского-Долгорукого // Истори-ко-филологический журнал, Ер, ном. 1, 2004, стр. 110—132 (на арм. яз.).
69. Модзалевский, Б. Л. Кавказ Николаевского времени в письмах его воинских деятелей: (Из архива Б. Г. Чиляева) // Русский архив: ист.-лит. журнал. – М., 1904. – Кн. 1.
70. Муромцев С. А. В первые дни министерства гр. М. Т. Лорис-Меликова: Записка о полит. состоянии России весной 1880 г. / [Сост. С. Муромцевым при участии А. И. Чупрова, В. Ю. Скалона и др.]. — Ber-lin: B. Behr's Buchh. (E. Bock), 1881 (P. Stankiewicz Burchdr.). — [2], 45 с. [1].
71. Незабытые могилы. Российское зарубежье: некрологи 1917 – 1997 гг.: в 6 т. / РГБ; сост. В. Н. Чуваков. – М.: Пашков дом, 1999 – 2005.
72. Новожилов Г. В. и др. «Самолёты ОКБ имени С. В. Ильюшина» (Из истории советской авиации), М., изд. «Машиностроение», 1985.
73. Ноев Ковчег. Информационно-аналитическая газета армянской диаспоры стран СНГ. N8 (54) Сентябрь 2002 года.
74. Ноев Ковчег. Информационно-аналитическая газета армянской диаспоры стран СНГ. N10 (56) Ноябрь 2002 года.
75. Ноев Ковчег. Информационно-аналитическая газета армянской диаспоры стран СНГ. N3 (73) Март 2004 года.
76. Ноев Ковчег. Информационно-аналитическая газета армянской диаспоры стран СНГ. №11 (93) Ноябрь 2005 года.
77. Ноев Ковчег. Информационно-аналитическая газета армянской диаспоры стран СНГ. N03 (97) Март 2006.
78. Ноев Ковчег Информационно-аналитическая газета армянской диаспоры стран СНГ. № 05 (98) Апрель (1-15) 2006 года.
79. Ноев Ковчег Информационно-аналитическая газета армянской диаспоры стран СНГ. / N06 (99) Апрель (16-30) 2006 г.
80. Ноев Ковчег. Информационно-аналитическая газета армянской диаспоры стран СНГ, №8 (191) Май (1–15) 2012 года.
81. Ноев Ковчег. Информационно-аналитическая газета армянской диаспоры стран СНГ, №2 (208) февраль (1-15) 2013 г.
82. Островский М. А. История развития физиологии зрения в Российской Академии наук // Вестник РАН. — 2011. — Т. 81. — №3.
83. Памяти Л. Н. Исецкого. (Некролог) // Заря Востока (Тбилиси), 1946. № 9.

84. Парсамян В. «Мастер наступления» // Газета «Коктейль» №171 (9) от 10-16 марта 2000 г.).
85. Петров Н. В., Скоркин К. В. Кто руководил НКВД, 1934–1941: справочник / Под ред. Н. Г. Охотина и А. Б. Рогинского. – М.: Звенья, 1999. — 502 с.
86. Петров Н., Кто руководил органами госбезопасности, 1941-1954: справочник / Междунар. о-во «Мемо-риал» РГАСПИ, ГАРФ, ЦА ФСБ России, М.: О-во «Мемориал» «Звенья» 2010, 1008 с.
87. Поэзия ашугов (пер. В. Брюсова и др.), в кн.: Антология армянской поэзии, под ред. С. С. Арутюняна и В. Я. Кирпотина, М., 1940.
88. Португальский, Р. М. Военная элита Российской империи: 1700 – 1917: Энциклопед. справочник / Р. М. Португальский, В. А. Рунов. – М.: Вече, 2009.
89. Работы тбилисских художников-армян в коллекции Александра Пирадова. Тб., 2005.
90. Рафаел Исраелян / Л. М. Бабаян, Ю.С. Яралов // ЦНИИ теории и истории архитектуры. М., 1986.
91. Ронжин, С. Г. Артур Григорьевич Кючарианц: без гнева и пристрастия (к 50-летию Великой Победы) / С. Г. Ронжин, Г. И. Мендрина, Г. В. Землянухина // Сибирский медицинский журнал. - 2005. - Т. 20, N 1.
92. Российское зарубежье во Франции. 1919-2000: биогр. словарь: в 3 т. / под. общ. ред. Л. Мнухина, М. Авриль, В. Лосской. Наука: Дом-музей Марины Цветаевой, 2008-2010. 3 Т.
93. Саркисян А. Е. Разведка и контрразведка: армянский след (Биографические очерки о разведчиках и контрразведчиках). - Е., “Амарас”, 2005.
94. Саркисян А. Е. Армяне-военные ученые, конструкторы, производственники и испытатели XX века. Ер., Айастан, 1998.
95. Словарь кавказских деятелей: Прил. к справ. кн. старожила «Кавказ», N1 / [Туманов Г. М., Туманов К. М.]. Тифлис. 1890.
96. Торчинов В. А., Леонтюк А. М. Вокруг Сталина. Историко-биографический справочник. Санкт-Петербург, 2000.
97. Холмогорова, Е. С. Вице-император / Е. С. Холмогорова, М. К. Холмогоров. – М.: Армада, 1998.
98. Цкитишвили К. В., Чинчилакашвили Т. Г. Герои Советского Союза из Грузии. – Тб, Изд. «Сабчота Са-картвело», 1981.
99. Шишов, А. В. Полководцы кавказских войн. – М.: Центрполиграф, 2001.
100. Сергеев С. В., Долгов Е. И. Военные топографы русской армии. – М.: ЗАО «СиДи-Пресс», 2001.

101. Арзуманян А. М. Генеральный конструктор А. И. Микоян. М., 1961.
102. Арлазоров М. Артём Микоян. М., 1978.
103. Армянский биографический словарь «Кто есть кто». Ер., 2010.
104. С точным прицелом // Казарян А. В. Война, люди, судьбы. Очерки. Ер., 1975.
105. Амирханян М. Д. Армяне – Герои Советского Союза. Ер., 2005.
106. Наука побеждать // Казарян А. В. Война, люди, судьбы. Очерки. Ер., 1975.
107. Черушев Н. С., Черушев Ю. Н. Расстрелянная элита РККА (командармы 1-го и 2-го рангов, комкоры, комдивы и им равные). 1937-1941. Биографический словарь. М., 2012.
108. Энциклопедия секретных служб России. М., 2004.
109. Сводный перечень наград генерал-майора В. Б. Лисинова, находящийся на постоянном хранении в фондах НМГООС.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Եղբա՛յր, դու ուժեղ ես քո եղբորով................................................ 4

**ՄԱՍ I (1801-1917)** ........................................................................ 7

Հավելված 1 ....................................................................................... 137

**ՄԱՍ II (1917)** ................................................................................ 144

**ՄԱՍ III (1920)** ............................................................................... 161

**ՄԱՍ IV (1918-1920)** ....................................................................... 163

**ՄԱՍ V (1940-1991)** ........................................................................ 171

Հավելված 2 ....................................................................................... 271

**ՄԱՍ VI** ............................................................................................ 275

**ՄԱՍ VII** .......................................................................................... 287

**ՄԱՍ VIII** ......................................................................................... 289

Անձնանունների ցանկ ...................................................................... 300

Հեղինակների մասին ........................................................................ 306

Ռեզյումե ............................................................................................ 317

Գրականություն ................................................................................ 318

დაიბეჭდა შპს „მწიგნობარის“ სტამბაში

0102, ქ. თბილისი, კიევის ქ. №10; ტელ.: 294 05 71

www.mtsignobari.ge